# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

1–2 (95–96). 2018



## ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

## 100-ЛЕТИЕ ВОССТАНОВЛЕНИЯ НЕЗАВИСИМОЙ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

## THE 100TH ANNIVERSARY OF THE RESTORATION OF THE ARMENIAN NATIONAL INDEPENDENT STATEHOOD

## ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

## ВИДЕНИЕ РАЗВИТИЯ ВООРУЖЕННЫХ СИЛ РА

## THE RA ARMED FORCES DEVELOPMENT VISION

«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

# ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ռուսաստանի Դաշնության Նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի շրջանակներում

Սոչի, 2018 թ. մայիսի 14

Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ֆրանսիայի Հանրապետության Նախագահ Էմանուել Մակրոնի հանդիպումը ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում

Բրյուսել, 2018 թ. հուլիսի 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ **1–2** (95–96). **2018**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Քոթանջյան Հ. Ս.**
քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր, ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, հակաահաբեկչության գծով գիտնական-փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)

**Չիլինգարյան Դ. Ս.**
(գլխավոր խմբագիր)

**Ալեքսանյան Ա. Ջ.**
**Ալթունյան Գ. Ռ.**
**Այդինյան Ռ. Ա.**
**Այվազյան Լ. Գ.**
**Ապերյան Վ. Վ.**
**Բալայան Գ. Կ.**
**Գասպարյան Օ. Վ.**
**Դավթյան Ա. Մ.**
**Խաչատրյան Տ. Վ.**
**Հովհաննիսյան Գ. Մ.**
**Ղահրամանյան Ա. Բ.**
**Ղամբարյան Մ. Ա.**
**Մակարյան Ա. Ա.**
**Մարգարյան Վ. Հ.**
**Մարտիկյան Ա. Մ.**
**Մարտիրոսով Լ. Ա.**
**Յալանուզյան Ա. Կ.**
(գլխ. խմբագրի տեղակալ)
**Յոլչյան Ն. Ի.**
**Շահնազարյան Թ. Ն.**
**Շիրինյան Մ. Ա.**
**Պողոսյան Բ. Պ.**
**Սիմոնյան Ս. Վ.**
**Վարդանյան Ա. Գ.**
**Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
**Փախչանյան Դ. Բ.**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

*Վարչապետ Նիկոլ Փաշինյանի* շնորհավորական ուղերձը Հայաստանի Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակի առթիվ . . . . . 9

*Է. Գ. Մինասյան,* Հայոց անկախ պետականության վերականգնման ռազմաքաղաքական նախադրյալները . . . . . 13

*Ա. Գ. Ավագյան,* Հայկական պետականության վերականգնումը նոր հրապարակված փաստերի լույսով (1918 թ. մարտ–հոկտեմբեր) . . . . . 28

*Մ. Լ. Կարապետյան,* Հայաստանի Առաջին Հանրապետության Զինված ուժերի ակունքները . . 39

*Գ. Ա. Պողոսյան, Գ. Հ. Սաֆարյան,* Հայոց պետականության վերականգնման սոցիալ-իրավական առումները . . . . . 51

### ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

*Դ. Է. Տոնոյան,* ՀՀ Պաշտպանության համակարգի զարգացման տեսլականը . . . . . 63

*Ա. Մ. Դավթյան,* ՀՀ-ում խորհրդարանական կառավարման պայմաններում ռազմական կառավարման համակարգի կատարելագործման հեռանկարները առաջավոր միջազգային փորձի հաշվառմամբ . . . . . 73

*Գ. Վ. Տավարաձյան,* Հայաստանի Հանրապետության պաշտպանության ռազմավարական պլանավորումը որպես պաշտպանական համակարգի հետևողական զարգացման անհրաժեշտ գործիք . . . . . 96

*Ա. Պ. Պետրոսյան,* Հայաստանի Հանրապետությունում ռազմական արդյունաբերության՝ որպես պաշտպանության ամրապնդման կարևոր միջոցի հեռանկարային զարգացման հարցի շուրջ . . 104

*Ա. Լ. Դավթյան,* Բարձրագույն ռազմական կրթության համակարգի արդիականացման առաջնահերթ խնդիրները . . . . . 115
*Տ. Ս. Հարությունյան,* Միջազգային ռազմական համագործակցության դերը Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի արդիականացման գործում . . . . . 127
*Ա. Մ. Պետրոսյան, Գ. Բ. Ղուլյան,* Զինվորական ծառայության կազմակերպման որոշ խնդիրների այլընտրանքային լուծումներ և ակտիվ պահեստազորի ստեղծման ու կատարելագործման հարցեր . . . . . 135
*Ա. Ռ. Ավետիսյան,* ՀՀ Զինված ուժերում արդյունավետ կառավարման համակարգի ներդրման համար խոչընդոտները՝ ՀՀ Զինված ուժերի կայացման հոլովույթում . . . . . 150
*Ս. Զ. Առուշանյան, Էդ. Ռ. Հակոբյան,* Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի սոցիալական ապահովման համակարգի զարգացման առանձնահատկությունները . . . . . 160

## ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

*Ս. Լ. Սարգսյան,* Լեռնաանտառային տեղանքի ազդեցությունը զորամիավորման պաշտպանության վրա . . . . . 175
*Ա. Կ. Հովհաննիսյան,* Ռազմավարական օբյեկտներին օդային հարձակման միջոցներով հասցվող հարվածների արդյունավետության հարցի շուրջ . . . . . 185

## ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

*Ա. Ե. Դավթյան,* Ֆիզիկական պատրաստությունը և Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում դրա ապահովման որոշ խնդիրներ . . . . . 203

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

*Ա. Գ. Դավթյան,* ՀՀ ներդրումային նախագծերում կենսաթոշակային հիմնադրամների ներգրավման պրոբլեմները . . . . . 212

## ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

*Ա. Մ. Շահվերդյան,* «Սոցիալացանցային էկոլոգիա» հասկացությունը՝ որպես անվտանգային հետազոտությունների նոր ոլորտ . . . . . 221

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

*Ա. Գ. Վաղարշյան, Լ. Վ. Բարսեղյան,* Պաշտպանունակությունը որպես սահմանադրական կարգի հիմունք. նորմատիվ բովանդակությունը և հարաբերակցությունը պետական կառուցակարգի այլ սկզբունքների հետ . . . . . 232

## ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*Տ. Մ. Պետրոսյանց,* Անքերդի ամրոցը . . . . . 246

## ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

*Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ,* Համարի բառարան . . . . . 254

**«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)**
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**№ 1–2** (95–96)**. 2018**
Издается 4 раза в год

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

*Котанджян Г. С.*, доктор политических наук (РФ), профессор, действительный избранный член Академии военных наук РФ, научный эксперт по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Алексанян А. Дж.*, *Алтунян Г. Р.*, *Аперян В. В.*, *Балаян Г. К.*, *Варданян А. Г.*, *Гамбарян М. А.*, *Гаспарян О. В.*, *Давтян А. М.*, *Елчян Н. И.*, *Каграманян А. Б.*, *Маргарян В. Г.*, *Мартикян А. М.*, *Мартиросов Л. А.*, *Ованнисян Г. М.*, *Пахчанян Д. Б.*, *Погосян Б. П.*, *Симонян С. В.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Хачатрян Т. В.*, *Шахназарян Т. Н.*, *Ширинян М. А.*, *Яланузян А. К.* (зам. глав. ред.)

# СОДЕРЖАНИЕ

## 100-ЛЕТИЕ ВОССТАНОВЛЕНИЯ НЕЗАВИСИМОЙ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

Поздравительное послание *Премьер-министра Никола Пашиняна* по случаю 100-летия Республики Армения и героических Майских сражений . . . . . 9

*Э. Г. Минасян.* Военно-политические предпосылки восстановления независимой армянской государственности . . . . . 13 (23)*

*А. Г. Авагян.* Восстановление армянской государственности в свете вновь опубликованных фактов (март–октябрь 1918 г.) . . . . . 28 (36)

*М. Л. Карапетян.* Истоки Вооруженных сил Первой Республики Армения . . . . . 39 (46)

*Г. А. Погосян, Г. Г. Сафарян.* Социально-правовые аспекты восстановления армянской государственности . . . . . 51 (58)

## ВИДЕНИЕ РАЗВИТИЯ ВООРУЖЕННЫХ СИЛ РА

*Д. Э. Тоноян.* Видение развития системы обороны РА . . . . . 63

*А. М. Давтян.* Перспективы совершенствования системы военного управления в РА в условиях парламентского обустройства власти с учетом передового международного опыта . . . . . 73 (89)

*Г. В. Таварацян.* Стратегическое планирование обороны Республики Армения как необходимый инструмент последовательного развития оборонной системы . . . . . 96 (102)

*А. П. Петросян.* К вопросу о перспективе развития военной промышленности как важного средства повышения обороноспособности Республики Армения . . . . . 104 (112)

*А. Л. Давтян.* Первоочередные задачи модернизации системы высшего военного образования . . . . . 115 (125)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

*Т. С. Арутюнян.* Роль международного военного сотрудничества в деле модернизации ВС РА . . . . . 127 (133)

*А. М. Петросян, Г. Б. Гулян.* Альтернативные решения некоторых проблем организации военной службы и вопросы создания и совершенствования активного резерва . . . . . 135 (147)

*А. Р. Аветисян.* Препятствия к внедрению системы эффективного управления в ВС РА в разрезе становления Вооруженных сил РА . . . . 150 (157)

*С. З. Арушанян, Эд. Р. Акопян.* Особенности развития системы социального обеспечения ВС Республики Армения . . . . . 160 (172)

**ТАКТИКА**

*С. Л. Саргсян.* Влияние горно-лесистой местности на оборону соединения . . . . . 175 (199)

*А. К. Оганесян.* К вопросу об эффективности ударов, наносимых по стратегическим объектам воздушными средствами нападения . 185 (200)

**БОЕВАЯ ПОДГОТОВКА**

*А. Е. Давтян.* Физическая готовность и некоторые проблемы ее обеспечения в Вооруженных силах Республики Армения . . . . . 203 (209)

**ФИНАНСОВАЯ БЕЗОПАСНОСТЬ**

*А. Г. Давтян.* Проблемы вовлечения пенсионных фондов в инвестиционные проекты РА . . . . . 212 (219)

**ЭКОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ**

*А. М. Шахвердян.* Понятие «социально-сетевой экологии» как новая область безопасностных исследований . . . . . 221 (229)

**ВОЕННОЕ ПРАВО**

*А. Г. Вагаршян, Л. В. Барсегян.* Обороноспособность как основа конституционного строя: нормативное содержание и коррелированность с иными принципами государственного устройства . . . . . 232 (243)

**ВОЕННАЯ ИСТОРИЯ**

*Т. М. Петросянц.* Крепость Амберд . . . . . 246 (253)

**ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ**

*Д. С. Чилингарян и др.* Словарь номера . . . . . 254 (257)

**«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)**
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

**№ 1–2** (95–96)**. 2018**
Is published 4 times a year

**EDITORIAL BOARD**

*Kotanjian H. S.*, Doctor of Political Sciences (RF), Professor, Elected Member of the Academy of Military Sciences (RF), Counterterrorism Fellow (USA) (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J., Altunyan G. R., Aperyan V. V., Ayvazyan L. G., Balayan G. K., Davtyan A. M., Gasparyan O. V., Ghambaryan M. A., Hovhannisyan G. M., Idinyan R. A., Kaghramanyan A. B., Khachatryan T. V., Margaryan V. H., Martikyan A. M., Martirossov L. A., Pakhchanyan D. B., Poghosyan B. P., Shahnazaryan T. N., Shirinyan M. A., Simonyan S. V., Ter-Grigoryants N. G., Vardanyan A. G., Yalanuzyan A. K.* (Deputy Editor-in-Chief), *Yolchyan N. I.*

# CONTENTS

## THE 100TH ANNIVERSARY OF THE RESTORATION OF THE ARMENIAN NATIONAL INDEPENDENT STATEHOOD

*Prime Minister Nikol Pashinyan's* congratulatory remarks on the 100th Anniversary of the Republic of Armenia and the May heroic battles . . . . . 9

*E. G. Minasyan.* The military-political prerequisites for reconstructing the independent Armenian statehood . . . . . 13 (25)*

*A. G. Avagyan.* The restoration of the Armenian statehood in the light of the newly published facts (March–October, 1918) . . . . . 28 (37)

*M. L. Karapetyan.* The origins of the first Republic of Armenia's Armed Forces . . . . . 39 (47)

*G. A. Poghosyan, G. H. Safaryan.* The social and legal aspects of the restoration of the Armenian statehood . . . . . 51 (59)

## THE RA ARMED FORCES DEVELOPMENT VISION

*D. E. Tonoyan.* The vision of the RA defense system development . . . . 63

*A. M. Davtyan.* Perspectives of improving the military control system in the RA in terms of the parliamentary power setting on account of the advanced international experience . . . . . 73 (92)

*G. V. Tavaratsyan.* Defense strategic planning as a necessary tool for the consistent development of the Republic of Armenia's defense system . . . . . 96 (102)

*A. P. Petrosyan.* On the issue of the development perspective of the military industry as an important means to increase the defense capability of the Republic of Armenia . . . . . 104 (113)

* Numbers in brackets mean the page of the text in English.

*A. L. Davtyan.* The priority tasks of modernizing the system of higher military education . . . . . 115 (126)

*T. S. Harutyunyan.* The role of international military cooperation in the modernization of the RA Armed Forces . . . . . 127 (134)

*A. M. Petrosyan, G. B. Ghulyan.* Alternative solutions to some problems of organizing military service. Issues of forming and improving an active reserve . . . . . 135 (148)

*A. R. Avetisyan.* The obstacles to the introduction of the system of efficient management in the RA Armed Forces in the light of the formation of the RA Armed Forces . . . . . 150 (158)

*S. Z. Arushanyan, E. R. Hakobyan.* Peculiarities of developing the Republic of Armenia's Armed Forces social security system . . . . . 160 (173)

**TACTICS**

*S. L. Sargsyan.* The impact of the wooded upland on the defense of a unit . . . . . 175 (201)

*A. K. Hovhannisyan.* On the issue of the efficiency of strikes at strategic objects by air attack means . . . . . 185 (202)

**COMBAT TRAINING**

*A. E. Davtyan.* Physical readiness and some problems of ensuring it in the Armed Forces of the Republic of Armenia . . . . . 203 (210)

**FINANCIAL SECURITY**

*A. G. Davtyan.* The problems of involving pension funds in the RA investment projects . . . . . 212 (220)

**ECOLOGICAL SECURITY**

*A. M. Shahverdyan.* The concept of "social-network ecology" as a new field of security studies . . . . . 221 (230)

**MILITARY LAW**

*A. G. Vagharshyan, L. V. Barseghyan.* The defense capability as a basis for the constitutional law: normative content and correlation with other principles of the state structure . . . . . 232 (244)

**MILITARY HISTORY**

*T. M. Petrosyants.* The Amberd Fortress . . . . . 246 (253)

**MILITARY TERMINOLOGY**

*D. S. Chilingaryan and others.* Volume Dictionary . . . . . 254 (259)

# ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

# 100-ЛЕТИЕ ВОССТАНОВЛЕНИЯ НЕЗАВИСИМОЙ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

# THE 100TH ANNIVERSARY OF THE RESTORATION OF THE ARMENIAN NATIONAL INDEPENDENT STATEHOOD

# ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ժողովուրդ,

Հայաստանի Հանրապետության հպա՛րտ քաղաքացիներ,

Հայոց բանակի փառապա՛նծ զինվորներ և սպաներ,

Հայաստանի Հանրապետության մեծարգո՛ Նախագահ,

Արցախի Հանրապետության մեծարգո՛ Նախագահ,

Վեհափա՛ռ Տեր,

Ուղիղ 100 տարի առաջ այս օրը՝ 1918 թվականի մայիսի 28-ին, հայ ժողովրդի պատմության մեջ տեղի ունեցավ աննախադեպ մի իրադարձություն. մեր իրականության մեջ առաջին անգամ հիմնադրվեց պետություն, որտեղ իշխանությունը պատկանում է ոչ թե թագավորին, ոչ թե իշխաններին, այլ իշխանությունը պատկանում է ժողովրդին, քաղաքացիներին, և այդ պատճառով այդ պետությունը կոչվեց հանրապետություն՝ Հայաստանի Հանրապետություն: Ու քանի որ մեր ժողովրդի պատմության մեջ նման բան նախկինում երբեք չէր եղել, այդ պետությունը կոչում ենք նաև Առաջին Հանրապետություն:

Իր պատմության մեջ առաջին անգամ հայ ժողովուրդը ոչ թե հպատակ էր, այլ՝ քաղաքացի, ոչ թե ծառա էր, այլ՝ տեր: Եվ սա ճակատագրական շրջադարձ էր: Իհարկե, դա առայժմ միայն իրավական կարգավիճակի փոփոխություն էր, բայց այս կարգավիճակը հայ ժողովուրդը ոչ թե նվեր ստացավ ինչ-որ մեկից, այլ նվաճեց քրտինքով ու արյունով: Բաշ-Ապարանում և Սարդարապատում տարավ իր պատմության փառահեղ հաղթանակներից՝ ջախջախելով թուրքական զորամիավորումներին, և այդ հաղթանակի թագն ու պսակը դարձավ Առաջին Հանրապետության հռչակումը: Հերոսական այս ճակատամարտերի պատմությունն աներևակայելի է: Ինչպե՞ս, այդ ինչպե՞ս կարողացավ ցեղասպանության ենթարկված, սրի քաշված, թալանված ու ոչնչացման եզրին կանգնած հայ ժողովուրդը հաղթել թուրքական բանակին: Արդյո՞ք դրա համար կային սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական նախադրյալներ: Ո՛չ և երիցս ո՛չ: Պրագմատիզմի և սառը հաշվարկի տեսակետից հայ ժողովուրդը չուներ հաղթելու ոչ մի շանս, ոչ մի հնարավորություն, բայց մենք հաղթեցինք, որովհետև սթափեցնող մի արթնացումով հասկացանք, որ մեր էությունն անապատներ քշվելն ու կոտորվելը չէ, որ մեր

երակներով հոսում է Մեսրոպ Մաշտոցի արյունը, մեր երակներով հոսում է Արտաշես արքայի արյունը, մեր երակներով հոսում է Վարդան Մամիկոնյանի արյունը:

Հայ ժողովուրդը հաղթեց, որովհետև իր պատմության վերջին չորս հարյուր տարում առաջին անգամ հույսը դրեց ոչ թե ուրիշների, այլ ինքն իր վրա: Հայ ժողովուրդը հաղթեց, որովհետև հասկացավ, որ ազգային պետությունն է ինքնության ու արժանապատվության միակ երաշխիքը, որ մեզ՝ քաղաքացիներիս, պատկանող պետությունն է միայն, որ կարող է ապահովել մեր իրավունքը, մեր անվտանգությունն ու ապագան: Մենք հասկացանք, որ ազգային որևէ երազանք հնարավոր չէ ի կատար ածել առանց պետություն ունենալու, ինքնիշխանություն ունենալու, անկախություն ունենալու: Եվ անկախ պետությունը յուրաքանչյուր ազգային երազանք ի կատար ածելու առաջին անհրաժեշտ նախապայմանն է: Հայ ժողովուրդը հաղթեց, որովհետև ուներ Արամ Մանուկյանի պես նվիրյալ առաջնորդ, ով պատրաստ էր ոչ թե զոհել և վայելել իշխանության բարիքները, այլ կրել զրկանքներ և զոհվել հանուն սեփական ժողովրդի, ով պատրաստ էր հանուն իր ժողովրդի կռիվ տալ մինչև կյանքի վերջին վայրկյանները: Հայ ժողովուրդը հաղթեց, որովհետև ուներ այնպիսի զորահրամանատարներ, ինչպես Թովմաս Նազարբեկյանը, Դրոն, Մովսես Սիլիկյանը, Դանիել Բեկ-Փիրումյանը: Հայ ժողովուրդը հաղթեց, որովհետև որոշեց հաղթել: Հայ ժողովուրդը հաղթեց և դրանից հետո հայ ժողովուրդը հաղթել է բոլոր այն դեպքերում, երբ որոշել է, որ պետք է հաղթի, երբ հավատացել է ինքն իրեն, իր մտքին, իր բազկին, իր անցյալին և ապագային:

Սիրելի՛ բարեկամներ,

Սա է մեր ժողովրդի հաղթանակի բանաձևը՝ մենք հաղթել ենք և հաղթելու ենք բոլոր այն դեպքերում, երբ որոշենք հաղթել, երբ մեր հույսը դնենք մեր և ոչ թե ուրիշների վրա, երբ չընկրկենք որևէ դժվարության առաջ, երբ սիրենք, անսահման սիրենք մեր հայրենիքն ու միմյանց, երբ չփորձենք մեր նեղ անձնական շահերը կապել սեփական ժողովրդի և պետության վզին, երբ յուրաքանչյուր քաղաքացի գիտակցի, որ տեր է սեփական երկրում, ոչ թե հպատակ, երբ տիրոջ այդ զգացումն իրավունք չէ միայն, այլև պարտականություն, այլև պարտավորություն, երբ հայրենիքի ամեն անկյան վերաբերվենք խանդաղատանքով, երբ մեկս մյուսիս վերաբերվենք հարգանքով, համբերությամբ ու արժանապատվորեն:

Հենց այսպես Սարդարապատի հաղթանակից ուղիղ հարյուր տարի անց՝ 2018 թվականի ապրիլ-մայիսին, հայ ժողովուրդը տարավ իր հերթական փառահեղ հաղթանակը՝ սեփական իշխանությունը հաստատելով սեփական հայրենիքում: Այդ հաղթանակը նույնքան անհնար էր թվում, և շատերը մինչև օրս հարց են տալիս, թե ինչպես դա պատահեց և ինչու: Պատասխանը հետևյալն է՝ հայ ժողովուրդը հերթական անգամ հույսը դրեց իր և ոչ թե ուրիշների վրա, հայ ժողովուրդը հավատաց ինքն իրեն, վստահեց իր ուժե-

րին և ապագային: Հայ ժողովուրդը պիտի հաղթեր, որովհետև իր երակներում հոսում է Սարդարապատի ու Բաշ-Ապարանի հերոսների արյունը, Արամ Մանուկյանի արյունը, Թովմաս Նազարբեկյանի արյունը, Մովսես Սիլիկյանի արյունը, Դանիել Բեկ-Փիրումյանի արյունը:

Սիրելի՛ ժողովուրդ,

Առաջին Հանրապետությունն ընդամենը երկու տարվա կյանք ունեցավ, բայց Առաջին Հանրապետության հիմնադիր հայրերը անհեռանկար գործերով չէին զբաղվում, այլ հայոց նոր պետականության հիմքերն էին դնում: Միայն Առաջին Հանրապետության գոյության շնորհիվ էր, որ Հայաստանը Խորհրդային Միության կազմում ընդգրկվեց որպես լիարժեք միութենական հանրապետություն: Եվ միայն այս կարգավիճակի շնորհիվ էր, որ Հայաստանը կարողացավ անցնցում դուրս գալ ԽՍՀՄ կազմից և ստանալ միջազգայնորեն ճանաչված անկախ երկրի կարգավիճակ: Ասել է թե՝ Առաջին Հանրապետության հիմնադրումը պսակվեց Երրորդ Հանրապետության հռչակմամբ, փառավորվեց Արցախյան պատերազմում մեր ժողովրդի տարած հաղթանակով և աշխարհահռչակվեց ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխությամբ: Եվ ահա հայ ժողովուրդը, Հայաստանի քաղաքացին այսօր տոնում է Առաջին Հանրապետության 100-ամյակը: Եվ հայ ժողովուրդը, Հայաստանի քաղաքացին ապրում է քաղաքացիական պատմության ամենափառապանծ էջը, երբ երկրում հաստատված է ժողովրդի անշրջելի իշխանություն: Եվ այլևս երբեք, այլևս երբեք ոչ ոք չի համարձակվի բռնանալ ժողովրդի կամքի վրա, այլևս երբեք որևէ մեկը չի համարձակվի ժողովրդին նվաստացնել ընտրակաշառքի, վարչական հարկադրանքի կամ որևէ այլ միջոցով: Հայ ժողովրդի վերածնունդն ու թռիչքը կասեցնելու, ժողովրդի հույսն ու լավատեսությունը կոռուպցիայի ու ամենաթողության մեջ խեղդելու ցանկացած փորձ, ցանկացած փորձ կարժանանա ջախջախիչ հակահարվածի: Եվ Հայաստանի Հանրապետության հաղթական քաղաքացին այլևս երբեք թույլ չի տա պետականության կամ քաղաքացիության կորուստ, ինքնիշխանության և իրավունքի կորուստ, հավատի և լավատեսության կորուստ:

Հայաստանի Հանրապետությունը Երկիր մոլորակի վրա պետք է գոյություն ունենա հավիտյան, Հայաստանի դրոշը պետք է հավիտյան ծածանվի՝ խորհրդանշելով մեր ոգին ու հպարտությունը, մեր ազատությունն ու ինքնիշխանությունը: Եվ մեզ համար այսօր պատմական, աննախադեպ հնարավորություն է ստեղծվել դառնալ մեր ժողովրդի հազարամյա ցավերի դարմանողը, անփարատելի սգի ամոքիչը, դարավոր երազանքների իրականացնողը: Եվ ժամանակակից սերունդը՝ որպես Առաջին Հանրապետության հիմնադիր հայրերի, Բաշ-Ապարանի ու Սարդարապատի հերոսների ժառանգներ, պարտավոր է ստանձնել և ստանձնում է պատմական այդ առաքելությունը: Եվ ուրեմն՝

Կեցցե՛ հայ ժողովրդի հաղթանակների մայիսը,

Կեցցե՛ն Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի, Սարդարապատի հերոսները,

Կեցցե՛ն Առաջին Հանրապետության հիմնադիր հայրերը, և ուրեմն՝

Կեցցե՛ ազատությունը,

Կեցցե՛ Արցախի Հանրապետությունը,

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը,

Կեցցե՛նք մենք ու մեր երեխաները, որ ապրում ենք ու շարունակելու ենք ապրել ազատ և երջանիկ Հայաստանում:

Սիրելի՛ ժողովուրդ,

Սիրելի՛ զինվորներ, սպաներ,

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Առաջին Հանրապետության և Մայիսյան հերոսամարտի 100-ամյակի առիթով:

Փա՛ռք Հայաստանի Հանրապետությանը,

Փա՛ռք Հայաստանի զինված ուժերին:

Ուռա՛

# ՀԱՅՈՑ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

*Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, «Հայկական բանակ» հանդեսի գիտախորհրդատվական խորհրդի անդամ*

100 տարի առաջ՝ 1918 թ. մայիսի 22-ին, սկսվեց մեր նորագույն պատմության փառավոր հաղթանակներից մեկը՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտը, որը հայության համար դարձավ գոյատևման ու ազգապահպանության կարևոր խարիսխ:

Այդ շրջանում Ռուսաստանյան Կայսրությունն ապրեց խոր ցնցումներ՝ 1917 թ. Փետրվարյան ու Հոկտեմբերյան հեղափոխությունները, որոնք մեծ ազդեցություն գործեցին Կովկասում տիրող քաղաքական ու ռազմական իրադրության վրա: Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում իշխանության եկած ժամանակավոր կառավարությունն ի վիճակի չեղավ լուծելու պետությունում ծագած սոցիալ-քաղաքական, տնտեսական ու հոգևոր ճգնաժամը: Դեռ ավելին. թեև նա հայտարարեց, որ շարունակելու է պատերազմել Անտանտի կողմում, սակայն իր անհեռատեսական ու անտրամաբանական հրամաններով ու որոշումներով առանձնակի թափ հաղորդեց դեռ 1915 թ. սկսված՝ ռուսական բանակի քայքայմանը[1]: Այսպես. գեներալ բարոն Վրանգելը գրել է. «Երկու տարվա ընթացքում (խոսքը 1916 թ. մասին է.– *Է. Մ.*) բանակի կազմը հասցրեց էապես փոխվել, շարքից դուրս եկավ կադրային սպաների ու զինվորների մեծ մասը, հատկապես՝ հետևազորում: Նոր սպաները... արագ ընկճվում էին, նեղվում պատերազմից և միանգամայն անկարող էին բարձրացնելու ու պահելու իրենց զինվորների ոգին»[2]:

Տվյալ երևույթը առանձնակի մեծ թափ ստացավ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, երբ բոլշևիկյան իշխանությունները հռչակեցին հաշտության և հողի դեկրետները:

1917 թ. վերջերին Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի հեռանալուց հետո խիստ հրատապ հարց դարձավ ազգային զորամասերի կազմավորումը: Եվ 1917 թ. նոյեմբերի 16-ին Մոգիլյովի ռազմակայանը պաշտոնական հրաման արձակեց՝ ըստ ռուսաստանյան բանակային կորպուսների ձևավորման կանոնադրության կազմավորել ազգային կորպուսներ: Ուստի

[1] Տես, օրինակ, *А. И. Деникин.* Очерки русской смуты, т. I. Главы XX–XXI. М., 1991:

[2] «Воспоминания генерала барона П. Н. Врангеля», ч. 1–2. М., 1992, с. 5.

և Հայկական բանակային կորպուսի կազմավորման սկիզբ պետք է համարել այդ հրամանի տրման օրը՝ 1917 թ. նոյեմբերի 16-ը[3]: 1917 թ. նոյեմբերի 19-ին Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Պրժևալսկու կարգադրությամբ կորպուսի հրամանատար նշանակվեց գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանը (1855–1931):

Ծանր պայմաններում էր կազմավորվում Հայկական ազգային զորամիավորումը: Այն կազմավորվելու և թշնամուն դիմակայելու գործում իրենց ներդրումն ունեցան Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, Արևմտահայերի ազգային խորհուրդը և նրա ստեղծած ապահովության մարմինը, դեկտեմբերին ստեղծված Երևանի ազգային խորհուրդը, որը ղեկավարում էր Թիֆլիսից ժամանած Արամ Մանուկյանը: Կորպուսի կազմավորման համար ազգային խորհրդին առընթեր ստեղծվեց հատուկ կոմիտե, որի կազմում ընդգրկվեցին ազգային խորհրդի, հայ զինվորական միության, ազգային կուսակցությունների ներկայացուցիչներ[4]:

Ռուսաստանում տեղի ունեցած փոփոխությունները իրենց անդրադարձն ունեցան Կովկասում պետական-քաղաքական կազմակերպվածքի վրա: Փետրվարյան հեղափոխությունից հետո՝ 1917 թ. մարտի 9(22)-ին, ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասում որպես տեղական կառավարման մարմին 4-րդ Պետական դումայի պատգամավորներից կազմավորեց Անդրկովկասի հատուկ կոմիտեն (ՕԶԱԿՈՄ), որը փոխարինեց Կովկասյան փոխարքայությանը[5]:

1917 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում ստեղծվեց Անդրկովկասի կոմիսարիատը՝ որպես երկրամասի պետական իշխանության բարձրագույն գործադիր մարմին[6]: Այն փոխարինեց Անդրկովկասի Հատուկ կոմիտեին (ՕԶԱԿՈՄ): Անդրկովկասի կոմիսարիատում և ընդհանրապես երկրամասի քաղաքական կյանքում իշխում էին երեք քաղաքական ուժեր՝ վրաց մենշևիկները, Հայ հեղափոխական դաշնակցությունը և կովկասյան թաթարների (ապագա «ադրբեջանցիներ») «Մուսավաթ» կուսակցությունը: Թիֆլիսում ստեղծվեց պետական իշխանության բարձրագույն օրենսդիր ներկայացուցչական մարմինը՝ Անդրկովկասի սեյմը: Նրա առաջին նիստը տեղի ունեցավ Թիֆլիսում 1918 թ. փետրվարի 10-ին: Սեյմի նախագահ ընտրվեց վրաց մենշևիկ Ն.

---

[3] Տես *Ա. Նազարյան,* Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914–1918 թվականներ): Ե., 1999, էջ 150:

[4] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Мурад Карапетян.* Участие армян в Первой мировой войне (1914-1918 гг.). Е., 2014, *նույնի՝* Հայկական զինվորական կազմավորումները Կովկասյան ռազմաճակատում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: «ՀԲ», 1999, հմ. 2:

[5] Տես *А. Б. Николаев.* Комиссары Временного комитета Государственной думы в апреле 1917 года: персональный состав. «Из глубины веков» (СПб), 1917, № 8:

[6] Այդ մասին ավելի հանգամանորեն տես «Հայոց պատմություն», խմբ.՝ Հ. Սիմոնյան: Ե., 2012, էջ 506:

Չխեիձեն: 125 պատգամավորներից կազմված Սեյմում հիմնական քաղաքական ուժերը ներկայացված էին հետևյալ կերպ.

- սոցիալ-դեմոկրատներ (մենշևիկներ) – 33
- «Մուսավաթի» և անկուսակցական մահմեդականների բլոկ – 30
- «Դաշնակցություն» – 27
- սոցիալիստ մահմեդականների բլոկ – 7
- սոցիալիստ հեղափոխականներ (էսեռներ) – 5
- մահմեդական սոցիալ-դեմոկրատներ (նումմետ) – 4
- Ռուսաստանի մահմեդականներ (Իթթիհատ) – 3
- վրաց նացիոնալ-դեմոկրատներ – 1
- վրաց սոցիալ-ֆեդերալիստներ – 1
- սահմանադրական (կոնստիտուցիոն) դեմոկրատներ (կադետներ) – 1[7]:

Սկզբից ևեթ Սեյմը որդեգրեց հակաբոլշևիկյան, հակառուսական դիրքորոշում, որն ի վերջո հանգեցրեց Ռուսաստանից Անդրկովկասի փաստացի անջատմանը: 1918 թ. ապրիլի 9(22)-ին Սեյմը հռչակեց Անդրկովկասը որպես ինքնիշխան պետություն, ինչը տվյալ պահին ձեռնտու էր նրա դեմ հարձակում ձեռնարկած Օսմանյան կայսրությանը: Թե՛ Կոմիսարիատում, թե՛ Սեյմում քննարկվող ներքաղաքական ու հատկապես արտաքին քաղաքական հարցերում ՀՀԴ-ն և «Մուսավաթն» ունեին հիմնականում հակադիր դիրքորոշումներ: Թաթար ազգայնամոլների կուսակցությունը սկզբում սքողված, իսկ հետագայում ավելի ու ավելի բացահայտ կերպով վարում էր թուրքամետ և հակահայկական քաղաքականություն՝ Օսմանյան կայսրությունը դիտելով որպես իր հովանավորի: Վրաց մենշևիկները, արտաքնապես հանդես գալով հաշտարար միջնորդի դերում, իրականում նույնպես վարում էին հայավնաս քաղաքականություն՝ փնտրելով Գերմանիայի հովանավորությունը: Ցավոք, ստեղծված շատ բարդ ռազմաքաղաքական իրադրությունում ՀՀԴ-ն չկարողացավ արդյունավետորեն հակազդել մենշևիկ-մուսավաթական դաշինքին: Նրան պակասում էր քաղաքական փորձառությունը:

Հայտնի է, որ 1917 թ. դեկտեմբերի 9(22)-ին սկսվեցին Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցությունները: Գերմանիան Խորհրդային Ռուսաստանին վերջնագիր ներկայացրեց և խախտելով 7 օրվա զինադադարի մասին պայմանավորվածությունը՝ անցավ հարձակման:

Գերմանիայի հարձակման հետ միաժամանակ Կովկասյան ռազմաճակատում փետրվարի 12-ին, խախտելով զինադադարի մասին Երզնկայի համաձայնությունը, հարձակում սկսեցին թուրքերը:

Կատարելով Թուրքիայի կամքը՝ գերմանական հրամանատարությունը

[7] Տես *Richard G. Hovannisian.* Armenia on the Road to Independence, 1918. Berkeley and Los Angeles, 1969, PP. 126–127:

1918 թ. մարտի 1-ին Բրեստ-Լիտովսկում Ռուսաստանից պահանջեց զորքերը դուրս բերել Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերից:

Թուրքերի հետ Տրապիզոնում վարած բանակցություններում 1918 թ. մարտի 14-ին Սեյմի պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին հայտարարեց Երկրամասի «անկախության» մասին, ինչը հիմք դարձավ Անդրկովկասի հարցն առանց Ռուսաստանի լուծելու համար: Փաստորեն, 1918 թ. փետրվար–ապրիլ ամիսներին թուրքական զորքերը, անցնելով հարձակման, ոչ միայն իրար հետևից գրավեցին էրզրումը, Սարիղամիշը, Արդահանը, Կարսն ու Բաթումը, այլև այդ տարածքներն իրենց հատուկ մեթոդով «մաքրեցին» հայերից: Անդրկովկասյան սեյմի ղեկավարությունը ոչ մի քայլի չդիմեց թուրքերի առաջացումը կանխելու համար: Ընդունելով Կարսը հանձնելու թուրքերի պահանջը՝ նոր անդրկովկասյան կառավարության նախագահ Չխենկելին և ռազմական նախարար Օդիշելիձեն զորքերի հրամանատարությանը կարգադրեցին այն թողնել թուրքերին: Դրան առարկեց Առանձին Հայկական բանակային կորպուսի հրամանատար Թ. Նազարբեկյանը, որն այդ ժամանակ նաև ռազմաճակատի հրամանատարն էր: Նա պնդում էր, որ Կարսի ամրոցն ուներ պաշտպանվելու բոլոր հնարավորությունները՝ անհրաժեշտ զորք և զինամթերք: Սակայն 1918 թ. ապրիլին Չխենկելին երկրորդ անգամ տվեց Կարսը անհապաղ թուրքերին հանձնելու հրաման: Վրաստանին անհրաժեշտ էր պահել Բաթումը: Սակայն չհաջողվեց. ապրիլի 15-ին թուրքերը գրավեցին Բաթումը, իսկ ապրիլի 26-ին առանց կռվի մտան Կարս: Այնուհետև կնքվեց զինադադար, և Տրապիզոնի ընդհատված թուրք-անդրկովկասյան բանակցությունները վերսկսվեցին Բաթումում 1918 թ. մայիսի 11-ին:

1918 թ. ապրիլի 22-ին Ա. Ն. Չխենկելին ռազմական կոմիսար գեներալ-լեյտենանտ Օդիշելիձեի միջոցով հեռագրով տեղեկացրեց Վեհիբ փաշային, որ սկսած 1918 թ. ապրիլի 23-ին ժամը 17:00-ից Անդրկովկասյան կառավարությունը դադարեցնում է ռազմական գործողությունները[8]:

Թուրքերի ձեռնարկած փետրվար–ապրիլյան հարձակումից հետո հայերից դատարկվեցին Վանի, Խնուսի, Ալաշկերտի, Կարսի տարածքները: Այս վայրերի 70000-անոց բնակչությունը, հիմնականում՝ տարոնահայերը, Կարո Սասունու, Սասունցի Մուշեղի, Մանուկի, Չոլոյի, Նորեի և ուրիշների գլխավորությամբ միանում է դեպի Ալեքսանդրապոլ նահանջող Անդրանիկի ջոկատին: Կ. Սասունու և Երևանի ազգային խորհրդի նախագահ Արամ Մանուկյանի համատեղ ջանքերով որոշվում է գաղթական բնակչությանը, որը հասել էր Սարդարապատ, տեղավորել Արագածի և Երևանի շրջակայքում[9]: Սակայն դրան խիստ խոչընդոտում էր Ներքին Թալինի բերդում և շրջակա գյուղերում բնակվող մահմեդական (թուրք-թաթարական) բնակչությունը: Սասունցիների 1000-անոց հեծելաջոկատի մի մասը՝ Մորուք Կարապետի գլխավորությամբ, հյուսիսից հարձակվեց բերդի վրա, մյուս մասը՝ Փեթարա

[8] Տես *Մ. Ս. Կարապետյան,* Հայաստանը 1912-1920 թվականներին: Ե., 2003, էջ 214:

[9] Տես *Ռուբէն,* Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է: Թեհրան, 1983, էջ 106:

Մանուկի ու Չոլոյի ղեկավարությամբ, հարձակման անցավ հարավից, իսկ Սասունցի Մուշեղի հեծելաջոկատը՝ կենտրոնով: Չդիմանալով վճռական գրոհին՝ թուրքերը նահանջեցին բերդ, որի երեք հսկա դռներից մեկը խորտակեցին Մորուք Կարոն և Հզոն՝ նախապես պատրաստված գերաններով և երկաթե ձողերով: Խորտակված դռնից ներս խուժեցին մյուս հեծյալները: Այդ տեսնելով՝ թուրքերը հյուսիսային դռնից դիմեցին փախուստի՝ հայերին թողնելով բերդում կուտակված ռազմամթերքի, անասունների և պարենի հսկայական պաշարներ, որն էլ բաշխվեց գաղթականությանը[10]:

Ներքին Թալինի բերդի անկումից հետո երեք օրվա ընթացքում մաքրվեց Արագածի փեշերից մինչև Աշտարակի Ուրջան գյուղը սփռվող տարածքը՝ մոտ 70 կմ, որտեղ էլ տեղավորվեց մոտ 70 հազարի հասնող տարոնահայությունը, որը մինչ այդ կուտակված էր Սարդարապատի շրջանում: «Մի քանի օրից մաքրվեցին նաև Աշտարակի թաթարական ապստամբ շրջանները»[11]: Դրանով ոչ միայն լուծվեց գաղթականության տեղավորման խնդիրը, այլև վերացվեց Երևանի վրա կախված վտանգը, որն ավելի ակնառու էր դարձել Սարդարապատի ու Բաշ-Ապարանի կռիվների ժամանակ: Զարմանալի է, որ այս կարևոր փաստերը երկար ժամանակ դուրս են մնացել ուսումնասիրողների տեսադաշտից, մինչդեռ առանց վերոհիշյալ կարևոր ռազմավարական ամրոցի գրավման, ինչպես նաև Արագածոտնի թուրք-թաթարական գյուղերի ազատագրման ու դրանցում գաղթականության տեղավորման հնարավոր չէր լինի ապահովել թիկունքը և մայիսյան հերոսամարտի հաղթանակը:

Երկար ժամանակ պատմաբանների ուշադրությունից վրիպել են նաև Շիրակի բնակչության 1918 թ. մայիսյան գոյապայքարի հարցերը, որոնց առաջին անգամ անդրադարձել է պրոֆ. Հ. Մելիքյանը: Թվում է, թե թուրքական զորքերը Ալեքսանդրապոլը գրավելուց հետո գրեթե առանց դիմադրության, անարգել մոտեցել են Սարդարապատին, բայց իրականում այդպես չի եղել: Քննարկելով թուրք բարբարոսների դեմ Շիրակի բնակչության 1918 թ. գոյապայքարի հարցերը՝ Հ. Մելիքյանը հետևյալ եզրակացությանն է հանգում՝ գրելով, որ. «Սառնաղբյուրի (Սոգյութլիի) լեռներով շրջապատված գոգավորությունում պատսպարված շուրջ հարյուր հազար փախստական գաղթականներին կոտորածից փրկելու նպատակով, Արևմտյան Հայաստանի տարբեր մարզերից նրանց ուղեկցած մի շարք հայ անվանի ազգային գործիչների ջանքերով, Սոգյութլի–Մաստարա–Մուսլուղի–Բողազքյասան–Տաշղալա–Մոլլա-Գյոքչա–Շիրվանջուղ գյուղերի շրջանում, տեղական աչքի ընկած գյուղացիների ակտիվ աջակցությամբ, ստեղծվեց պաշտպանական ամուր պատնեշ, որի կենտրոնը՝ «շտաբը», գտնվում էր Սոգյութլիում»[12]:

---

[10] Տես *Է. Մինասյան,* Հայերի հայրենականը. Մայիսյան հերոսամարտերից դեպի անկախություն, 27.05.2008 (http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20080527_1&flag=am):

[11] Տես *Ա. Ներսիսյան,* Ռուբեն: Ե., 2007, էջ 275:

[12] *Հենրիկ Մելիքյան,* Մարալիկի հնագույն գերդաստաններից մեկի պատմությունը: Ե.,

Հայկական ազգային ազատագրական պայքարի կամավորական շարժման ժամանակ աչքի ընկած մի շարք խմբապետներ՝ Պանդուխտը, Սմբատը, Մակեդոնը, Բուլանըղցի Մուրադը, Չոլոն, Նորեն և ուրիշներ, որոնք Անդրանիկի մտերիմ զինակիցներն էին, անցնելով էրզրում–Կարս–Ալեքսանդրապոլ նահանջի ճանապարհով և իրենց հետ դեպի էջմիածին ու Երևան ուղեկցելով նաև Կարսի և Շիրակի փախստականներին, տեղափոխելով մեծ քանակությամբ զենք, Սառնաղբյուրի հանգուցային գոտում մի քանի օր կանգ առան, կազմակերպված հունի մեջ դրեցին գոյապայքարի ելած նաև Արևելյան Շիրակի մի շարք գյուղերի բնակչության պայքարը: Նրանք, միավորելով սարեր բարձրացած տղամարդկանց՝ շուրջ 3 հազար հոգու, զինելով ու վարժեցնելով իրենց հետ եկած զինյալ կամավորներին, նահանջող հայկական զորամասերի ցիրուցան եղած զինվորներին, նախքան Սարդարապատի հերոսամարտը կազմակերպեցին թուրքական զորաջոկատների ու նրանց միացած տեղական թաթար-քրդական խուժանի դեմ պայքար:

Թուրքերին չհաջողվեց այստեղ ևս իրագործել ցեղասպանության քաղաքականությունը թե՛ Սառնաղբյուրում և թե՛ հարևան գյուղերում պատսպարված, կուտակված փախստական-գաղթականների և տեղի բնակչության նկատմամբ: Բացառություն էր Ջիթհանքովի կոտորածը, որին զոհ գնացին շուրջ 3 հազար հայեր (միայն 3 մարագներում այրվեցին 450 հայեր)[13]: Կատաղի մարտեր տեղի ունեցան Սոգյութլիի, Տաշղալայի, Մոլլա-Գյոքչայի, Շիրվանջուղի սարերում ու դեպի Արարատյան դաշտ տանող ճանապարհներին: Սոգյութլիի և Շիրվանջուղի լեռնանցքներից բացի դիմադրական մարտեր տեղի ունեցան Մոլլա-Գյոքչայի շրջակայքում, որտեղ տեղի ունեցող մարտերն ու առանձին պաշտպանական գոտու կազմակերպումը նպատակ ունեին կանխելու Ալեքսանդրապոլից ու Հոռոմից դեպի Շիրվանջուղ–Սոգյութլի շարժվող թուրքական զորաջոկատների առաջխաղացումը: Դրա շնորհիվ հնարավոր եղավ մայիսի 17-ից 22-ը փախստականների ապահով անցումը դեպի էջմիածին–Երևան: Արևմտահայ կամավորների և Շիրակի հիշատակված գյուղերի բնակչության հերոսական գոյապայքարի շնորհիվ կոտորածից փրկվեց հայ ժողովրդի մի նշանակալից մասը և այդ թվում՝ տեղի բնակչությունը:

Կարսի գրավումից հետո ստեղծվել էր թուրքական «Կարս» բանակային խմբավորումը՝ Յաղուբ Շևքի փաշայի գլխավորությամբ, որի նպատակն էր գրավել ամբողջ Արևելյան Հայաստանը, Թիֆլիսը, Բաքուն, ապա Հյուսիսային Պարսկաստանը, այլ կերպ ասած՝ իրականացնել պանթուրքական ծրագիրը:

Մայիսի 15-ին վաղ առավոտյան թուրքական զորքերը հանկարծակիորեն հարձակվեցին Ալեքսանդրապոլի վրա: Քաղաքում գտնվող բոլոր զորամա-

2006, էջ 121: Ինքնապաշտպանական այդ մարտերին առաջին անգամ անդրադարձ է կատարել *Ռ. Ե. Գևորգյանը*՝ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի 2003 թ. 3-րդ համարում հրապարակված իր «1918 թվականի մայիսյան հերոսամարտերի մի նոր էջ» հոդվածում:

[13] Տես *Հենրիկ Մելիքյան,* Նշ. աշխ., էջ 113:

սերը մտան կռվի մեջ: Մի քանի ժամ անց թուրքական զորքերը գրավեցին քաղաքը՝ թալան ու սպանություններ կազմակերպելով բնակչության շրջանում: Ալեքսանդրապոլը գրավելուց հետո թուրքական զորքերի հրամանատարությունը կատարեց զորքերի վերադասավորում՝ ստեղծելով չորս զորախումբ:

Առաջին զորախումբը, որի հրամանատարն էր Մյուրսել բեյը, շարժվեց Վորոնցովկայի (Կալինինո, ապա՝ Տաշիր) ուղղությամբ: Նրա նպատակն էր Բոլնիս-Խաչենով դուրս գալ Թիֆլիս՝ այն գրավելու համար:

Երկրորդ զորախումբը, որի հրամանատարն էր Ձեմալ-Ձավիդ բեյը, գործում էր Համամլու (Սպիտակ), Ղարաքիլիսա (Վանաձոր) – Դիլիջան–Ելիզավետպոլ (Գանձակ) ուղղությամբ:

Հաջորդ երկու խմբավորումների առջև խնդիր էր դրված կարճ ժամանակում գրավել Երևանը, ամբողջ Արարատյան դաշտը, առաջ շարժվելով՝ բռնազավթել Նախիջևանը, Զանգեզուրը, Ղարաբաղը և ճանապարհ հարթել՝ դարձյալ Բաքու շարժվելու համար:

40 հրանոթով զինված 5000-անոց թուրքական 36-րդ հետևակային դիվիզիան մայիսի 21-ին գավթեց Սարդարապատ գյուղն ու երկաթուղային կայարանը: Թուրքերին դիմակայելու համար ստեղծվեց Երևանյան զորախումբը՝ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ: Բաշ-Ապարանի մատույցներում տեղակայվեց Դրաստամատ Կանայանի (Դրո) զորախումբը՝ Սպիտակի կողմից դեպի Երևան հնարավոր հարձակումը կասեցնելու համար: Գնդապետ Բաղդասարյանի 3-րդ հետևակային բրիգադի գլխավորած ուժերը պաշտպանական դիրքեր գրավեցին Նախիջևան–Շարուր ուղղությամբ: Փաստորեն, գեներալ Սիլիկյանի լավ մտածված ու կշռադատված որոշումների շնորհիվ հնարավոր եղավ ապահովել զորաթևերի անվտանգությունը[14]:

Անկախ քաղաքական համոզմունքներից՝ ժողովուրդը ոտքի կանգնեց կենաց ու մահու կռվի՝ հանուն Հայրենիքի, հանուն ազգային արժանապատվության: Դա հայերի Հայրենական պատերազմն էր, համաժողովրդական ինքնապաշտպանությունը՝ ֆիզիկական բնաջնջումից խուսափելու համար[15]: Իրավիճակն այնպիսին էր, որ նահանջի մասին մտածելն իսկ վտանգավոր էր. հաղթանակ կամ մահ: Սարդարապատի համաժողովրդական պատերազմին մասնակցում էին հայկական կանոնավոր զորամասերը, զինվորականությունը, գյուղացիությունը, բանվորներն ու արհեստավորները, հոգևորականությունն ու մտավորականությունը[16]:

Սարդարապատի հերոսամարտի մասնակից, հետագայում Խորհրդային Միության մարշալ Հ. Բաղրամյանը անձնական դիտողությունների և ռազմական ամփոփագրերի, նաև գեներալներ Նազարբեկյանի ու Սիլիկյանի հուշե-

[14] Տես *Սերժ Աֆանասյան,* Սարդարապատի հաղթանակը: Ե., 1991, էջ 16:

[15] Տես *Հ. Թուրշյան,* Սարդարապատի հերոսամարտը: Ե., 1969, էջ 143:

[16] Այս մասին հանգամանորեն տես *Գ. Բ. Ղարիբջանյան,* Մայիսյան հերոսամարտերի արձագանքները: «ՀԲ», 1998, հմ. 2:

րի ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա հանգել է մի շատ կարևոր եզրակացության. «այդ ծայրահեղ բարդ քաղաքական և ռազմական պայմաններում գեներալ Սիլիկյանն ընդունեց միակ ճիշտ, բազմակողմանի մշակված, առանց չափազանցության տաղանդավոր որոշում: Չեմ կարող լռությամբ անցնել Սարդարապատի տակ թուրքերի ջախջախման գործում Մովսես Սիլիկյանի ականավոր դերի կողքով: Նա այդ դժվարին ժամանակ գլխավորում էր հայկական զորքերի Երևանյան խումբը: Իմ խորին համոզմամբ այդ ժամանակվա բոլոր հայ գեներալներից ամենաշնորհալի զորապետը Սիլիկյանն էր»[17]:

Գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ գործող Սարդարապատի զորամասը 1918 թ. մայիսի 22-ին թիկունքից երկու ուղղություններով հարձակման անցավ Քյորփալուի (Արշալույս) և Ղուրդուղուլի (Արմավիր) գյուղերի բնագծերից՝ եռանդուն գրոհով ջախջախելով թուրքերին Ղամըշլու (Եղեգնուտ) գյուղի շրջանում և նույն օրը հետ գրավեց նախորդ օրը թշնամու վերցրած Սարդարապատ գյուղը: Հարձակման անցած զորամասերի թվում էր գնդապետ Պավել (Պողոս) Բեկ-Փիրումյանի հետևակային 5-րդ գունդը, որը մեծ մասամբ բաղկացած էր ղարաբաղցի զինվորներից, որին Կիլիկիայի ապագա կաթողիկոս, արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը մկրտել էր «մահապարտների գունդ» անունով, և որն ուժեղացված էր շրջակա գյուղերից հավաքված շուրջ 500 կամավոր աշխարհազորայիններով[18]: Թուրքական հրամանատարությունը որոշեց ուժեղացնել Սարդարապատի մոտ գտնվող խմբավորումը՝ օգնության ուղարկելով 5-րդ դիվիզիայի զորքերը, սակայն հայերին հաջողվեց դրանց հետ շպրտել:

Մայիսի 22-ից 26-ը Սարդարապատի մոտ թուրքերը կորցրին 500 ասկյար: Առաջին հաջողությունը մեծապես բարձրացրեց հայոց զորքի և ժողովրդի բարոյական ոգին: Ժողովուրդը դարձել էր միասնական ու միակամ: Հենց ազգային միասնությամբ էր պայմանավորված Սարդարապատում և մյուս հերոսամարտերում ձեռք բերված հաղթանակը:

Էսադ փաշայի գլխավորած թուրքական 9-րդ դիվիզիայի մի մասը մայիսի 20-ին արդեն գրավել էր Համամլուն (Սպիտակ), իսկ մայիսի 22-ին՝ Բաշ-Ապարանը և շարժվել դեպի Երևան՝ միանալու Սարդարապատի ուղղությամբ գործող թուրքական 36-րդ հետևակային դիվիզիային: Դրոն սկզբում չհավատաց, որ թուրքական մեծաքանակ ուժերը կարող են կենտրոնացվել Բաշ-Ապարանի ճակատում, և առարկեց Սիլիկյանի առաջարկին, պնդելով, որ ճիշտ է համատեղ ուժերով Սարդարապատում ջախջախել թշնամուն, ապա նոր ջախջախիչ հարված հասցնել Ապարանի վրա գրոհող թուրքերին[19]: Սակայն, երբ տեղափոխվեց Բաշ-Ապարանի ճակատ, համոզվեց Սիլիկյանի

[17] Տես *Հ. Բաղրամյան,* Իմ հիշողությունները: Ե., 1979, էջ 81–82:

[18] Մայիսյան հերոսամարտերի մասին հանգամանորեն տես «Հայկական բանակ», 1998, հմ. 2:

[19] Տես *Է. Մինասյան*, Նշ. աշխ.:

խոսքերի ճշմարտության մեջ: Մայիսի 22–23-ը Բաշ-Ապարանի ճակատում առաջին հարվածներին դիմագրավեցին տեղի աշխարհազորայինները[20]: Մայիսի 24-ին Դրոն ստացավ Սարդարապատի ճակատից հանված համալրումը, ժամանեցին նաև Զհանգիր աղայի ղեկավարած 200 հեծյալները: Եվ մայիսի 25-ին Դրոյի 6000-անոց ջոկատը անցավ հարձակման՝ մտնելով Ալի-Քուչակ, ապա շարժվեց դեպի Բաշ-Ապարան, որտեղ էլ մայիսի 29-ին ջախջախեց թշնամու երկու գունդն ու ծանր հրետանին: Սակայն ճակատամարտի ավարտից հետո թուրքերը սպիտակ դրոշով բանագնաց ուղարկեցին և բանակցությունների մեջ մտան Դրոյի հետ: Ռուշդի բեյը Դրոյին հայտնեց, որ Բաթումում ստորագրվել է զինադադար, որի համաձայն՝ պետք է դադարեցվեին ռազմական գործողությունները: Նա պահանջեց նաև հունիսի 1-ից հայկական զորքերը հետ քաշել Արագածից դեպի հարավ[21]: Դրոն հավատաց դրան և դադարեցրեց մարտերը:

Ղարաքիլիսայում (Վանաձոր) մայիսի 24–28-ը տեղի ունեցան կատաղի մարտեր, որոնց մասնակցեցին հայկական 4 գունդ, հավաքական հեծյալ ջոկատը և աշխարհազորայինները, ընդհանուր թվով՝ 7000 զինվոր: Թուրքերն ունեին 10000 զինվոր, Կարաբեքիր փաշայի ղեկավարությամբ, որոնց օգնում էին նաև տեղական մահմեդականները: Հայկական ուժերը համառ դիմադրություն ցույց տվեցին թուրքերին[22]: Սակայն մայիսի 28–30-ը թուրքերը, ստանալով նոր համալրում, անցան հարձակման բոլոր ուղղություններով: Սկսվեց թվաքանակով գերակշռող թուրքական ուժերի դեմ վերջին գոյամարտը: Ամենուրեք հայ զինվորները կռվում էին անձնազոհությամբ:

Ղարաքիլիսայի մոտ 4 օր (մայիսի 24–28-ը) շարունակվող ճակատամարտում հայ քաջերը կասեցրին թուրքերի առաջխաղացումը դեպի Դիլիջան ու Թիֆլիս, թեև թուրքերը կարողացան մայիսի 30-ին տիրել Ղարաքիլիսային և կազմակերպեցին խաղաղ բնակչության մեծ ջարդ:

Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը հայ ժողովրդի աննկուն կամքի, իր կյանքի իրավունքի պաշտպանության համար ազգովին պայքարելու պատրաստականության և վճռականության արտահայտություններ էին: Զուր չէ, որ թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան ազնվություն ունեցավ բարձրաձայն խոստովանելու, որ «Ղարաքիլիսայի մոտ հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»[23]:

Հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերը վիժեցրին հայերին ոչնչացնելու՝ երիտթուրքերի ծրագիրը և ստիպեցին հաշվի նստել իրենց հետ: Հաղթանակը հնարավորություններ ու պայմաններ ստեղծեց հայոց պետականութ-

[20] Տես *Հ. Ավետիսյան,* Հայոց ազգային միասնության հաղթանակը, 1918 թ. մայիս: Ե., 1998, էջ 104–105:

[21] Տես *Է. Մինասյան*, նշ. աշխ.:

[22] Տես *Մ. Ս. Կարապետյան,* Նշ. աշխ., էջ 227:

[23] Տես *Հ. Սիմոնյան,* Անդրանիկի ժամանակը, գիրք Բ: Ե., 1996, էջ 150:

յան վերականգնման, Հայաստանի Հանրապետության ստեղծման համար[24]:

1918 թ. մայիսի 26-ին գումարվեց Անդրկովկասյան սեյմի վերջին նիստը, որտեղ վրացիների պահանջով որոշում ընդունվեց ինքնալուծարման մասին: Դրանից 5 ժամ անց նույն սրահում գումարվեց Վրաց ազգային խորհրդի նիստը՝ Ն. Ժորդանիայի նախագահությամբ, որտեղ հռչակվեց Վրաստանի անկախությունը: Դրանից հետո Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարեց հայկական գավառների միակ և գերագույն իշխանություն:

Այդ իրադարձություններից հետո՝ մայիսի 30-ին, Բաթումում վերսկսվեցին բանակցությունները: Հայաստանն այդ բանակցություններում ներկայացնում էին Հ. Քաջազնունին և Ա. Խատիսյանը[25]: 1918 թ. մայիսի 30-ին Հայոց Ազգային Խորհուրդը հրապարակեց հետևյալ հայտարարությունը, որն, ըստ Ս. Վրացյանի, թեև իսկական առումով անկախության հռչակում չէր, բայց դեպքերի բերումով դարձավ այդպիսին[26]: Նիկոլ Աղբալյանի հեղինակած հայտարարության բանաձևում ասված էր. «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել Հայոց Ազգային Կառավարություն, Ազգային Խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է Կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար: Հայոց Ազգային Խորհուրդ 1918 թ. մայիս 30, Թիֆլիս»:

Այսպիսով՝ ինչպես նշում է Ս. Վրացյանը, «Հայաստանի անկախության հայտարարության օրը իսկապես պետք է համարվի մայիսի 30-ը, սակայն հակառակ դրան համարվում է մայիսի 28-ը, այսինքն այն օրը, երբ Ազգային Խորհուրդը որոշեց հայկական պատվիրակություն ուղարկել Բաթում, իսկ հաշտության բանակցություններ վարելու թուրքերի նախապայմանը անկախության հայտարարությունն էր, որը ձեռք էր բերվել մայիսյան հաղթանակների շնորհիվ, ուստի այդ օրն էլ կարող է համարվել անկախության սկզբնավորության օրը»[27]: Ճակատագրի բերումով 1918 թ. հունիսի 4-ին ստորագրված Բաթումի հաշտության պայմանագրով Հայոց անկախությունն առաջինը ճանաչեց Թուրքիան:

Այսպիսով՝ Մայիսյան հերոսամարտերի օրերին իր բնօրրանի տարածքների մեծ մասը կորցրած հայ ժողովուրդն իր կենաց ու մահու կռիվն էր մղում վերջին փոքրիկ հողակտորի վրա: Դա գոյության պատերազմ էր, որի հաղթական ելքը պայմանավորված էր ապրելու իրավունքն իր ձեռքերով պաշտ-

[24] Տես *Հ. Ակեստիսյան,* Նշ. աշխ., էջ 236:

[25] Տես *Է. Մինասյան*, Նշ. աշխ.:

[26] Տես *Ս. Վրացյան*, Հայաստանի հանրապետություն: Ե., 1993, էջ 161:

[27] Նույն տեղում, էջ 161–163:

պանելու հայ ժողովրդի վճռական կամքով: Այդ հերոսամարտերը հայրենական ու համաժողովրդական պատերազմ էին: Ժողովուրդը մեկ ոգի ու բռունցք էր դարձել, միախառնվել, ու համատեղ էին գործում տարբեր կուսակցությունների, ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչներ, բարձրագույն պաշտոնյայից ու զինվորականից մինչև գաղթական, մտավորականից մինչև շինական:

Մայիսյան հերոսամարտերը հայոց կանոնավոր զինվորական ուժի ու աշխարհազորի ռազմական համախմբման, հայոց միասնության ու հավաքական ուժի բարձրագույն դրսևորումներից էին: Դա ազնիվ բարեկամի հետ արդար հացի վերջին պատառը կիսելու, ամենադժվարին փորձությանը միասին դիմակայելու, նենգ թշնամու դեմ աննահանջ կերպով պայքարելու մեր կենսակերպի հավաստումն ու հաստատումն էր: Դա մեր ազատության, անկախության, դարավոր երազանքի իրականացումն էր, հինգ ու կես դար ստրկության ու հալածանքների լծի թոթափումից հետո վերահաստատված հայոց ինքնության վերածնունդը: Դա մեր անվախճան երթն ուղղորդող նախնյաց պատգամների հավերժական ղողանջն էր, որը հաղթանակի կոչեց 1918 թ. մայիսյան օրերին, Հայրենական մեծ պատերազմում անհողդողդ արիությամբ տոգորեց հայրենիքի պաշտպան հայորդիների սրտերը, համազգային հաշտության հենք ու քաջակորովության անսպառ աղբյուր դարձավ մեր նորօրյա արցախյան ազգային-ազատագրական պայքարում ու Չորսօրյա պատերազմում և ընդմիշտ ուղեկցելու է հայազգի սերունդներին:

## ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ВОССТАНОВЛЕНИЯ НЕЗАВИСИМОЙ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

*Э. Г. МИНАСЯН, доктор исторических наук, профессор, декан факультета истории ЕГУ, член научно-консультационного совета журнала «Айкакан банак»*

РЕЗЮМЕ

100 лет тому назад, 22 мая 1918 г., начались героические сражения под Сардарапатом, Баш-Апараном и Караклисом, завершившиеся исторической победой армянского народа – восстановлением независимой государственности.

После падения Российской Империи разложение армии, начавшееся еще в 1915–1916 гг., в результате непродуманных действий Временного правительства и, в особенности, декретов Советской власти о мире и земле приняло катастрофический характер. Солдаты эшелонами покидали фронт. В связи с трагической обстановкой на фронтах Первой мировой войны Ставка Верховного Главнокомандования в ноябре издала приказ о формировании национальных корпусов по

штатам российских армейских корпусов. 19 ноября 1917 г. командующий Кавказским фронтом генерал Пржевальский своим приказом назначил командиром Отдельного Армянского армейского корпуса генерал-майора Т. Назарбекяна.

В формировании Армянского корпуса на базе армянских полков, действовавших в составе Кавказской армии, ключевую роль сыграли Армянские национальные советы в Тифлисе и Ереване, Западноармянский национальный совет, а также специально созданный в этих целях Особый комитет, в который вошли представители Национального совета, Союза армянских военных, различных политических партий.

Еще в марте 1917 г. Временное правительство в качестве органа местного управления вместо Кавказского наместничества создало из закавказских депутатов 4-ой Государственной Думы Особый закавказский комитет (ОЗАКОМ). После Октябрьской революции в качестве высшего органа исполнительной власти был создан Закавказский комиссариат, а затем и высший орган законодательной власти – Закавказский сейм, первое заседание которого состоялось в феврале 1918 г. Все три партии, реально представлявшие в Закавказье политическую силу – грузинские меньшевики, АРФ «Дашнакцутюн» и мусульманская «Мусават»,– были широко представлены в Сейме: социал-демократы (меньшевики) – 33 мандата; блок «Мусавата» и беспартийных мусульман – 30; АРФ «Дашнакцутюн» – 27.

Сейм проводил антибольшевистскую, антирусскую политику и уже в апреле 1918 г. провозгласил Закавказье независимым государством.

Поскольку Грузия ориентировалась на Германию, мусульмане Закавказья – на союзницу Германии Турцию, то партии «Дашнакцутюн», придерживавшейся ориентации на Союзные державы (Антанту), приходилось постоянно сталкиваться с грузино-азербайджанским блоком.

Это противостояние особенно усилилось после того, как турецкие войска, нарушив условия перемирия, заключенного в декабре 1917 г., в Эрзинджане (Ерзынка), в начале 1918 г. перешли в наступление по всей линии прежнего Кавказского фронта, удерживаемого практически лишь силами одного Армянского корпуса.

Однако руководство Закавказского сейма, сосредоточенное в руках грузинских меньшевиков, не только не помогало в организации отпора наступавшему противнику, но даже препятствовало этому. В частности, руководитель нового закавказского правительства Чхенкели принял требование турецкого командования о сдаче Карса и через военного министра генерала Одишелидзе передал приказ войскам оставить Карс, поскольку грузины пытались удержать Батуми. И несмотря на возмущение армянских офицеров во главе с генералом

Назарбекяном, Карс был сдан, но и Батуми удержать не удалось. И 22 апреля 1918 г. А. Чхенкели через генерала И. Одишелидзе известил телеграммой турецкого главнокомандующего на Кавказе генерала Вехиба о прекращении военных действий.

11 мая 1918 г. в Батуми возобновились турецко-закавказские переговоры, прерванные в Трапезунде в результате турецкого наступления. Но турецкие части и в процессе переговоров продолжали наступление, намереваясь через Араратскую долину и Лори выйти к Тбилиси и Баку.

Армянский народ вновь оказался перед угрозой повторения Геноцида – теперь уже в Восточной Армении. И тогда армянские военачальники генерал Мовсес Силикян и начальник его штаба полковник Александр Великян разработали план Сардарапатского сражения, в котором двум турецким группировкам противостояли силы Ереванского отряда – в Сардарапате и Баш-Апаране. Оба сражения завершились блестящей победой армян, в составе войск которых сражались как регулярные части, так и ополченцы из всех слоев населения: крестьяне и рабочие, духовенство и интеллигенция.

После кровопролитных боев под Караклисом (Ванадзор) армяне вынуждены были отступить, но нанесли туркам такой урон, что те временно отказались от дальнейших планов продвижения на восток, а Вехиб заявил, что армяне там доказали, что являются лучшими в мире воинами.

Это заставило турок признать право армян на собственную независимую государственность. И после 6-и тяжелейших веков порабощения, эксплуатации, резни и грабежей армянский народ в ответ на Геноцид в Османской Империи создал свое независимое государство.

## THE MILITARY-POLITICAL PREREQUISITES FOR RECONSTRUCTING THE INDEPENDENT ARMENIAN STATEHOOD

*E. G. MINASYAN, Doctor of History, Professor, Dean, Department of History, YSU, Member, Academic-Advisory Council, “Haikakan Banak” Defense-Academic Journal, NDRU, MOD, RA*

SUMMARY

100 years ago, on May 22, 1918, the heroic battles began at Sardarapat, Bash-Aparan and Karaklis, which ended in the historic victory of the Armenian people – the restoration of an independent statehood.

After the fall of the Russian Empire, the decomposition of the army, which had begun as early as in 1915 – 1916, took a catastrophic character due

to the ill-considered actions of the Russian Interim Government and, in particular, the Decrees of the Soviet power on peace and land. The soldiers deserted the front in echelons. In connection with the tragic situation on the WWI front lines, in November, the Headquarters of the Supreme High Command issued an order on the formation of national corps within the Russian army corps staffs. On November 19, 1917, General Przhevalsky, Commander-in-Chief of the Caucasian Front, appointed by his order Major General T. Nazarbekian as the Commander of the Independent Armenian Army Corps.

The Armenian National Councils in Tiflis and Yerevan, the Western-Armenian National Council, as well as the Special Committee specially formed for these purposes, the members of which were the representatives of the National Council, the Union of Armenian Servicemen, of various political parties, played a key role in the formation of the Armenian Corps on the basis of the Armenian regiments operating in the Caucasian army.

Back in March, 1917, the Interim Government formed a Special Transcaucasian Committee (OZAKOM), as a local governing body, from the Transcaucasian deputies of the 4th State Duma, instead of the Caucasian vicegerency. After the October Revolution, the Transcaucasian Commissariat was created as the supreme body of executive power, and then the supreme body of legislative power – the Transcaucasian Seym was formed, the first session of which was held in February, 1918. All three parties that really represented the political force in Transcaucasia – the Georgian Mensheviks, the ARF Dashnaktsutyun, and the Muslim Musavat – were widely represented in the Seym: the Social Democrats (Mensheviks) – 33 mandates; the Block Musavat and non-partisan Muslims – 30 mandates; the ARF Dashnaktsutyun – 27 mandates.

The Seym pursued an anti-Bolshevik, anti-Russian policy, and in April, 1918, proclaimed Transcaucasia an independent state.

Since Georgia was German-oriented, and the Muslims of Transcaucasia were oriented towards Germany's ally – Turkey, the Dashnaktsutyun Party, whose orientation was towards the Allied Powers (the Entente), had constantly to confront with the Georgian-Azerbaijani bloc.

This confrontation was particularly aggravated after the Turkish troops, violating the terms of the armistice concluded in December, 1917, in Erzincan (Yerznka), in early 1918 launched an offensive along the whole line of the former Caucasian front, being held practically only by the forces of an Armenian corps.

However, the leadership of the Transcaucasian Seym, concentrated in the hands of the Georgian Mensheviks, not only did not help in organizing the rebuff of the advancing enemy, but even prevented it. In particular, the

Head of the new Transcaucasian government, Chkhenkeli, accepted the demand of the Turkish command to surrender Kars, and through the War Minister General Odishelidze ordered the troops to leave Kars, as the Georgians tried to keep Batumi. And despite the indignation of the Armenian officers led by General Nazarbekian, Kars was surrendered, however, the Georgians failed to keep Batumi either. And on April 22, 1918, A. Chkhenkeli, through General I. Odishelidze, informed by cable General Wehib, the Turkish Commander-in-Chief in the Caucasus, about the cessation of hostilities.

On May 11, 1918, the Turkish-Transcaucasian negotiations, interrupted in Trebizond as a result of the Turkish offensive, resumed in Batumi. But the Turkish units continued their offensive also when negotiations were in progress, intending to go out to Tbilisi and Baku via the Ararat Valley and Lori.

The Armenian people faced again the threat of a recurrence of the Genocide – this time in Eastern Armenia. And then the Armenian military leaders – General Movses Silikyan and the Chief of his Staff Colonel Alexander Velikian worked out the plan of the Sardarapat battle, in which two Turkish groupings were opposed by the forces of the Yerevan detachment – in Sardarapat and Bash-Aparan. Both battles resulted in the Armenians' brilliant victory, among the troops of which fought both regular units and militiamen from all the layers of the population: peasants and workers, clergy and intellectuals.

After the bloody battles at Karaklis (Vanadzor), the Armenians were forced to retreat, but caused so much damage to the Turks that they temporarily abandoned their further plans for eastward advance, and Wehib stated that the Armenians proved there to be the best warriors in the world.

This forced the Turks to recognize the right of Armenians to their own independent statehood. And after six hardest centuries of enslavement, exploitation, slaughter and robbery, the Armenian people, in response to the Genocide in the Ottoman Empire, created its own independent state.

# ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՆՈՐ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՓԱՍՏԵՐԻ ԼՈՒՅՍՈՎ (1918 թ. ՄԱՐՏ–ՀՈԿՏԵՄԲԵՐ)

*Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

1918 թ. մարտի 3-ին ստորագրված Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Օսմանյան կայսրությանը ոչ միայն հնարավորություն տվեց կրկին տիրանալու 1878 թ. Բեռլինի պայմանագրով կորցրած Բաթումի, Արտվինի և Կարսի նահանգներին, այլև Թալեաթ փաշայի կառավարության համար դարձավ Կովկասի հետ կապված նպատակների իրագործման համար մեկնարկ: 1918 թ. մարտի 14-ին Տրապիզոնում մեկնարկած խորհրդաժողովում օսմանյան պատվիրակության ղեկավար Ռաուֆ Օրբայը Անդրկովկասի կառավարության պատվիրակությանը վերջնագիր ներկայացրեց՝ ճանաչել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կետերը և հայտարարել, որ Անդրկովկասի կառավարությունը գործում է Ռուսաստանից անկախ[1]:

Թե օսմանյան կառավարող վերնախավում և ընդհանրապես թուրքական հասարակությունում ինչ զգացումներ ու հույսեր էին արթնացնում 1917 թ. Փետրվարյան հեղափոխությամբ սկսված Ռուսական կայսրության քայքայումը, 1918 թ. մարտ–ապրիլ ամիսներին թուրքական բանակի առաջխաղացումը դեպի 1914 թ. ռուս-օսմանյան սահմանը և դրան զուգահեռաբար Կովկասում տեղի ունեցող իրադարձությունները, կարելի է դատել այդ շրջանի թուրքական թերթերի հրապարակումներից: 1917 թ. նոյեմբեր–1918 թ. հունվար ամիսներին հոդվածագիրները, այդ թվում՝ իթթիհատական կառավարությանը մոտ կանգնած սյունակագիրները, ինչպիսին էր, օրինակ, Ջելալ Նուրին, քննարկում էին, թե Ռուսական կայսրության մասնատումը փոքր պետությունների և կայսրության տարածքում ապրող մոտ 40 միլիոն մահմեդականների գոյությունը ինչպես կարող են նպաստել Թուրքիայի ծրագրերին և Թուրքիայի ու Թուրանի միջև դառնալ հուսալի կամուրջ[2]: Սակայն արդեն 1918 թ. ապրիլ–մայիս ամիսներին «թերթերն ամեն օր լի էին Կովկասյան պետություններից եկող նոր և պարծանք ներշնչող լուրերով: Մեկ օր հաղորդվում էր Բաթում քաղաքը վերցնելու մասին, մյուս օրը՝ «Ղրիմի մեր եղբայրների վերաբերյալ» ուրախացնող լուրեր, մեկ այլ օր էլ՝ Թուրքիստանի վերաբերյալ հարցազրույց էր հրապարակվում: Ապագային առնչվող սպասումները շատ հուսադրող էին. կային լրագրողներ, որոնք, ինչպես Ահմեդ Էմին Յալմանը, գրում էին, «թե քանի որ Ռուսաստանն արդեն դադարել է վտանգ

[1] Տես *Yüksel Nizamoğlu*. Vehip Paşa. Kahramanlıktan Sürgüne. İstanbul, 2013, s. 232:

[2] Տես, օրինակ, *Celal Nuri.* İcmal-i Ahval. “Ati”, 4 Ocak 1918:

ներկայացնելուց, հարկավոր է հետ վերցնել Կիպրոսը, որը տարիներ առաջ հանձնվել էր Անգլիային ռուսական վտանգից մեզ պաշտպանելու դիմաց»»[3]:

1918 թ. մարտ–հոկտեմբեր ամիսներին՝ առաջին աշխարհամարտի իրադրությունում, Կովկասի տարածաշրջանում հիմնական ուժն էր Օսմանյան կայսրությունը, և Կովկաս թուրքական բանակի ներխուժումը, ինչպես նաև աշխարհաքաղաքական իրավիճակը կործանվող Օսմանյան կայսրության համար ստեղծել էին հնարավորություն տարածաշրջանի նկատմամբ իրականացնելու նախկինում մշակված ծրագրերը և փորձելու ապահովել թուրքական ներկայությունը թե՛ Հարավային Կովկասում, թե՛ Հյուսիսային: Սույն հոդվածում փորձ է արվում Թուրքիայում վերջերս հրապարակված օսմանյան արխիվային փաստաթղթերի լույսի ներքո ներկայացնել հայկական պետականության վերականգման հարցում Օսմանյան կայսրության վարած քաղաքականությունը, մասնավորապես՝ Հայաստանի՝ որպես անկախ պետության գոյությունը բացառելու և հայկական տարածքները Վրաստանի ու Ադրբեջանի միջև բաժանելու նրա գործադրած ջանքերը: Հիշատակված որոշ արխիվային փաստաթղթեր նոր են դրվել գիտական շրջանառության մեջ, և դրանց առադրումը այդ շրջանի թուրք պետական գործիչների հուշերի հետ հնարավորություն է տալիս նորովի լուսաբանելու այս կարևոր հարցում այդ շրջանի առավել ազդեցիկ տարածաշրջանային դերակատարի դիրքորոշումն ու գործունեությունը:

Թուրքական պատմագրության մեջ մշտապես առաջ է քաշվել այն թեզը, թե Օսմանյան կայսրությունը հոժարակամորեն նպաստել է Կովկասում հայկական պետության վերականգնմանը, առաջինն է ճանաչել Հայաստանի Առաջին Հանրապետությունն ու դիվանագիտական հարաբերություններ հաստատել նրա հետ: Նման տեսակետ բնորոշ է նաև խորհրդային պատմագրությանը: Խորհրդային պատմաբան Ե. Լուդշուվեյտը նշում է, որ օսմանյան կառավարությունը հողային հարցերում նույնիսկ փոքր զիջումներ է արել հոգուտ հայերի, մասնավորապես՝ էնվեր փաշան Հայաստանի Հանրապետությանը հանձնել է վրացիներից անջատված Լոռու շրջանը[4]:

Ուշագրավ է, որ թե՛ թուրքական, թե՛ խորհրդային պատմագրությունում նման մոտեցման ձևավորման համար կարևոր հիմք է ծառայել 1920 թ. սեպտեմբերի 1–7-ը Բաքվում տեղի ունեցած Արևելյան ժողովուրդների առաջին համագումարում «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, 1915 թ. Հայոց ցեղասպանության հիմնական ճարտարապետներից մեկի՝ դոկտոր Բեհաէդդին Շաքիրի ելույթում տեղ գտած պնդումը: Շաքիրը, որը համագումարին մասնակցում էր որպես Տրապիզոնի արհեստավորների միությունների ներկայացուցիչ *(Trabzon*

[3] Տես *Uygur Kocabaşoğlu, Metin Berge.* Bolşevik İhtilali ve Osmanlılar. İstanbul, 1994, s. 149:

[4] Տես *Е. Ф. Лудшувейт.* Турция в годы Первой мировой войны 1914–1918 гг. М., 1966, с. 219:

*Esnaf Cemiyetleri)*[5], իր ելույթում նշել է. «Ընկերնե՛ր, ձեզ կարող եմ փաստել հետևյալը. երբ պատերազմը շարունակվում էր, և Գերմանական դաշնադրությունը ծրագրեր էր մշակում, թե ինչպես է հաղթելու այդ պատերազմում, թուրք ժողովուրդը և թուրքական պետությունը մտածում էին Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի պես բախարգելային պետություններ ստեղծելու մասին: Եթե, ինչպես հայտարարվում է, Թուրքիան ընդհանուր առմամբ վարում էր իմպերիալիստական քաղաքականություն, ապա պետք է պարզաբանել, թե ինչու էին թուրք ժողովուրդն ու թուրքական պետությունը որդեգրել նման քաղաքականություն: Թուրքիան, Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստեղծելով բախարգելային պետություններ, ցանկանում էր պաշտպանել իրեն: Թուրքիան ո՛չ արևմուտքում, ո՛չ էլ արևելքում ուրիշի հողերին տիրանալու հավակնություն չի ունեցել և, ընդհանուր առմամբ, զավթողական քաղաքականություն չի հետապնդել»[6]:

Ի տարբերություն Վրաստանի և «Հարավային Կովկասի մահմեդականների» պետությունների հռչակումից՝ Թալեաթի կառավարությունը դեմ էր հայկական պետականության վերականգնմանը, ուստի և Հայաստանի Առաջին Հանրապետության ճանաչումը Օսմանյան կայսրության համար ցավալի իրողություն էր՝ պայմանավորված առաջին հերթին միջազգային իրավիճակով, ինչպես նաև հայկական ռազմական ուժի հաղթանակներով: 1918 թ. մայիս–հունիս ամիսներին Օսմանյան կայսրությունն ստիպված էր ճանաչել Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նաև հրաժարվել Հյուսիսային և Հարավային Կովկասում մահմեդականներով բնակեցված տարածքները Օսմանյան կայսրության կազմում ընդգրկելու կամ միասնական հզոր մահմեդական պետություն ստեղծելու մտադրություններից:

Հարկ է նշել, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրից հետո Կովկասի նկատմամբ օսմանյան կառավարության ծրագրերը փոփոխվել էին ինչպես օբյեկտիվ (ռազմաճակատներում տիրող իրավիճակի և Գերմանիայի դիրքորոշման հետևանքով), այնպես էլ սուբյեկտիվ (էնվեր փաշայի ծրագրեր) պատճառներով: Թուրքական բանակի հարձակմանը զուգընթաց Կովկասում պետությունների ձևավորման ու դրանց միջև սահմանների որոշման հարցում վճռորոշ դարձավ իթթիհատական եռապետներից էնվերի դիրքորոշումը, որի հետ ստիպված էին հաշվի նստել ինչպես Թալեաթը, այնպես էլ Բաթումի բանակցություններում թուրքական պատվիրակության ղեկավար Հալիլ Մենթեշեն: Մասնավորապես՝ իր հուշերում Մենթեշեն, նկարագրելով Բաթումի բանակցությունները, նշում է, որ վրացիները պնդում էին Աբասթումանիի շրջանում թուրք-վրացական սահմանը գծելիս մեկ հատվածն իրենց զիջելուն: «Այդ պահին Վեհիբ փաշան մտավ բանակցային սենյակ և, տեսնելով վրացիներին, ասաց. «Բարին ընդ ձեզ: Ինչ կա՞»: «Բարի է, դու քո գործին

[5] Տես *Yavuz Aslan.* Birinci Doğu Halkları Kurultayı (1-7 Eylül 1920 – Bakü). İstanbul, 2007, s. 227:

[6] Տես նույն տեղում, էջ 282–283:

նայիր», պատասխանեցի ես: Ինձ հարևան սենյակ կանչեց: «Հայերը վճռական են Ալեքսանդրապոլի մոտ գերիշխող դիրք ունեցող բարձունքը չհանձնելու հարցում»: «Կարևորություն մի՛ տուր, դու գործդ վերջացրու», պատասխանեցի ես: «Խելագարից (Էնվեր փաշան) ինձ կարո՞ղ ես փրկել»:– «Կփրկեմ, ամբողջ պատասխանատվությունը ես եմ ստանձնում, եթե ցանկանաս, գրավոր հրաման կտամ»: Գնաց: Վրացիները խորհելուց և քննարկելուց հետո ընդունեցին առաջարկս: Վեհիբ փաշան, ավարտելով հայերի հետ բանակցությունները, վերադարձավ: Նրան հայտնեցի վրացիներին հաղորդած որոշումս: «Ինչպե՞ս հնարավոր է, Էնվերը վերջս կտա», ասաց նա: «Ես պատասխանատվությունն ամբողջովին ստանձնում եմ և գրավոր տեղեկացնում եմ դրա մասին», ասացի ես»[7]:

1918 թ. մարտ–ապրիլ ամիսներին Կովկասի հարցում մյուսների համեմատությամբ Էնվերի ավելի ազդեցիկ լինելու հարցում իրենց դերակատարությունն ունեին նրա հորեղբայրը՝ Հալիլ փաշան, որն Արևելյան բանակի հրամանատարն էր, և եղբայրը՝ Կովկասյան (իսլամական) բանակի հրամանատար, Կովկասում սուլթանի ներկայացուցիչ Նուրի փաշան[8]:

Էնվեր փաշայի եռահատոր կենսագրության հեղինակ, թուրք պատմաբան Շևքեթ Սուրեյյա Այդեմիրը նշում է, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրումից և Տրապիզոնի հաշտության բանակցությունների մեկնարկման շրջանում Էնվեր փաշան իր կովկասյան ծրագրերում հիմնականում կենտրոնացած էր հնարավորության դեպքում Հյուսիսային և Հարավային Կովկասում միասնական, կամ երկու մահմեդական պետություն ստեղծելու գաղափարի իրականացման վրա[9]: Քանի որ Վրաստանը վայելում էր Գերմանիայի հովանավորությունը, ապա նրա անկախացումն անխուսափելի էր, և օսմանյան կառավարությունը ստիպված էր հաշվի նստել այդ իրողության հետ, թեև վրացական պետականության վերականգնումը թուրքական նպատակների տեսակետից ևս վտանգ չէր ներկայացնում: Հիմնական վտանգը հայկական պետականության վերականգնումն ու տարածաշրջանում ուժեղ հայկական պետության ձևավորումն էր:

Կովկասում տիրող բարդ աշխարհաքաղաքական պայմաններում, երբ Անտանտը (հանձին Մեծ Բրիտանիայի) ձգտում էր ժամ առաջ տիրանալու Բաքվին, և գոյություն ուներ Բաքվի կոմունայի գործոնը, օսմանյան կառավարությունը մշակել էր ծրագիր Հարավային Կովկասում՝ Վրաստանը և «Գյանջա մայրաքաղաքով Հարավային Կովկասի մահմեդականների պետությունը» ճանաչելու վերաբերյալ[10]: Օսմանյան արխիվային փաստաթղթե-

[7] Տես “Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe’nin Anıları”. İstanbul, 1986, s. 230:

[8] Տես *Şevket Süreyya Aydemir*. Makedonya’dan Ortaasya’ya Enver Paşa, cilt III, 1914-1922. İstanbul, 1999, s. 366:

[9] Տես նույն տեղում, էջ 367:

[10] Տես “ATASE, BDH, kl. no. 2919, d. no. 499, f. 3-21”. “Birinci Dünya Savaşı ve Azerbaycan (Osmanlı Arşiv Belgeleri)”. İstanbul, 2018, s. 517: Այդ ամիսների օսմանյան

րի վերլուծությունը ցույց է տալիս, որ 1918 թ. մարտ ամսից մինչև մայիսի 28-ը օսմանյան կառավարությունը փորձել է հայերին զրկել անկախ հայկական պետություն ունենալու հնարավորությունից: Ստիպված լինելով հաշտվել ստեղծված իրավիճակի հետ՝ Օսմանյան կայսրությունը բոլոր ջանքները գործադրել է հնարավորինս փոքրացնելու Հայաստանի Հանրապետության տարածքը:

Գոյություն ունեցող փաստերը վկայում են, որ Օսմանյան կայսրությունը նպատակ է ունեցել հայկական տարածքները բաժանելու Վրաստանի և «Հարավային Կովկասի մահմեդականների պետության» միջև: 1918 թ. մայիսի 26-ին Էնվեր փաշան Մեհմեդ Վեհիբ փաշային հրահանգ է ուղարկել, թե վրացիների անկախության հռչակման դեպքում «Հարավային Կովկասի մահմեդականները ևս հռչակեն անկախություն» այն հեռանկարով, որ «հետագայում Հյուսիսային և Հարավային Կովկասի մահմեդականները միավորվելով դառնան ավելի հոծ մահմեդական զանգված ունեցող պետություն»[11]: Նույն հրահանգում նշվում է. «Ինչ վերաբերում է հայերին, ապա նրանք պետք է բաժանվեն կովկասյան և վրացական կառավարությունների միջև, և նպատակահարմար եմ գտնում, որպեսզի նրանց անգամ սակավաթիվ զինված ուժ չթույլատրվի»[12]: Հրահանգում Էնվերը նշել է, որ օսմանյան կառավարությունը նմանատիպ հանձնարարական է տվել նաև պատվիրակության ղեկավար Հալիլ Մենթեշեին:

Իր հուշերում Հալիլ Մենթեշեն, հաստատելով այդպիսի հրահանգ ստանալու փաստը, խոստովանում է, որ սկզբից ևեթ չի հավատացել այդ տարբերակի իրականացման հավանականությանը: «Ստամբուլից մի օր գաղտնագիր եկավ: Հրահանգվում էր. «Խոսի՛ր Գեգեչկորիի հետ (Վրաստանի վարչապետը), հայերին թող իրենց միջև բաժանեն»: Ծիծաղելով տեղեկացրի Ստամբուլի ցանկության մասին: Հետևյալ պատասխանն ստացա. «Հարգելի՛ս, հսկայական Ռուսական և Օսմանյան կայսրությունները չկարողացան դրանց հարցը լուծել: Ի՞նչպես կարող է իմ փոքրիկ Վրաստանը այդ գլխացավանքը վերցնել իր վրա: Հայերը Թիֆլիսում 60 տոկոս մեծամասնություն են կազմում»»[13]:

Եթե վրացական կողմը պարզապես մերժել է թուրքական առաջարկությունը, ապա կովկասյան թաթարների, կամ մահմեդականների (ադրբեջանցիների), պարագայում օսմանյան կառավարությունը հանդիպել է ավելի լուրջ խոչընդոտի՝ կովկասյան թաթարների մի զգալի մասն ընդհանրապես դեմ է եղել անկախությանը և ցանկացել է անմիջականորեն կազմել Օսմանյան կայսրության մաս: Օսմանյան կառավարության հետ բանակցություն վարելու և աջակ-

---

փաստաթղթերում չի հանդիպում «Ադրբեջան» անվանումը, որն ընդունվել է ավելի ուշ՝ Նուրի փաշայի Բաքուն գրավելուց հետո (1918 թ. սեպտեմբեր):

[11] Տես նույն տեղում:

[12] Տես նույն տեղում:

[13] Տես "Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları", s. 229:

ցություն ստանալու նպատակով 1918 թ. հունվարին Ստամբուլ ժամանած պատվիրակության ղեկավար, հետագայում՝ Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության անվտանգության ծառայության տնօրեն Նաքի Քեյքուրունն իր հուշերում գրում է, որ վերադառնալով Ստամբուլից Բաթում՝ այնտեղ հանդիպել է Մեհմեդ Էմին Ռասուլզադեին և Նասիբ Յուսուֆբեյլիին, որոնք իրեն տեղեկացրել են, որ ադրբեջանական պատվիրակության մեծ մասը դեմ է անկախությանը և մտադիր է խնդրել օսմանյան պատվիրակությանը Հարավային Կովկասի մահմեդականներով բնակեցված տարածքները միացնել Օսմանյան կայսրությանը: Այդ մեծամասնությանը համոզելու՝ հանրապետության ապագա ղեկավարների ջանքերը ապարդյուն են եղել, և միայն Հալիլ Մենթեշեի միջամտության շնորհիվ հաջողվել է կովկասյան թաթարների պատվիրակությանը համոզել հրաժարվել միավորման մտադրությունից, քանի որ նա բացատրել է, որ օսմանյան թուրքերը ևս ունեն նման ցանկություն, սակայն այդ քայլը չեն ընդունի ոչ միայն Անտանտը, այլև իրենց դաշնակից Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան[14]:

Ի պատասխան էնվեր փաշայի 1918 թ. մայիսի 29-ի հրահանգի՝ Մեհմեդ Վեհիբ փաշան տեղեկացրել է, որ «Հարավային Կովկասի մահմեդականների ներկայացուցիչները խմբերով գալիս և պնդում են, որ անվերապահորեն անհրաժեշտ է միավորել Հարավային Կովկասի մահմեդական շրջանները: Նրանք ասում են. «Մենք կարող ենք ապրել միայն այն դեպքում, եթե լինենք օսմանյան պետության կազմում, Թուրքիայի մեր ազգակից և կրոնակից եղբայրների հետ նույն պայմաններում: Սա է մեր մշտական ցանկությունն ու անդրդվելի կամքը: Մենք անկախություն չենք ընդունում և չենք ցանկանում: Չկա որևէ ուժ, որն ի վիճակի լինի ձեզ տարանջատելու մեզնից: Մենք կա՛մ կապրենք օսմանյան պետության դրոշի տակ, կա՛մ, եթե այդ պետությունը մեզ չընդունի, այդ դրոշով փաթաթված կմեռնենք»: .... Հարավային Կովկասի մահմեդականները չեն կարող երբևէ իրենց ուժերով ձևավորել կառավարություն: Ո՛չ զարգացման մակարդակը, ո՛չ նյութական, ո՛չ էլ հոգևոր կարողությունները բավարար չեն: Եթե մահմեդականներին թողնենք իրենց ճակատագրին, նրանց միջև առաջին հերթին կծագեն այնպիսի հզոր պառակտում ու խժդժություններ, որ չեն կարողանալու իրենք իրենց պաշտպանել, և, ի վերջո, կա՛մ կբաժանվեն հայերի ու վրացիների միջև, կա՛մ կընկնեն բոլշևիկյան քողի ներքո բեմ ելած մեծ Ռուսաստանի լծի տակ: Հարավային Կովկասի մահմեդականների շրջանում այսօր չկա ո՛չ հանճարեղ ղեկավար, ո՛չ էլ երկաթե ձեռք, և Հարավային Կովկասի մահմեդականներն ի վիճակի չեն լույս աշխարհ բերել այդպիսի հանճարեղ առաջնորդի»[15]:

Ուշագրավ է, որ Անդրկովկասի սեյմի 1918 թ. մայիսի 26-ի նիստին, որտեղ վրացական պատվիրակությունը հայտարարեց Վրաստանի անկախության

[14] Տես *Naki Keykurun.* 1. Azerbaycan Cumhuriyeti Milli Emniyet Genel Müdürü: Azerbaycan İstiklal Mücadelesinden Hatıralar (1905-1920). İstanbul, 1998, s. 110–112:

[15] Տես “ATASE, BDH, kl. no. 2919, d.no. 499, f. 3-26:3-29”. “Birinci Dünya Savaşı ve Azerbaycan (Osmanlı Arşiv Belgeleri)”, s. 517:

մասին, պատվիրակության անդամ Իրակլի Ծերեթելին Անդրկովկասի միասնականության խաթարման մեջ մեղադրեց կովկասյան թաթարներին՝ հայտարարելով. «Թուրքիայի մոտենալն ու Անդրկովկաս ներխուժելը Անդրկովկասում ապրող մեծաթիվ ազգության՝ մահմեդական ազգության շրջանում ուժեղացրեց ձգտումը դեպի Թուրքիա, միասնական Անդրկովկասից անջատվելու ձգտումը: Անդրկովկասի անկախությունը հռչակելիս մենք հասկանում էինք, որ չի կարող գոյություն ունենալ Անդրկովկասի հանրապետությունը որպես պետական միասնականություն, հատկապես՝ նման ճակատագրական պահին, կենաց ու մահու պայմաններում, երբ բնակչության կեսը պետության գոյատևման վճռորոշ պահին նախօրոք հայտարարում է, թե ինքը հրաժարվում է զենքը ձեռքին իր պետության գոյությունը պաշտպանելուց: Երբ հռչակում էինք Անդրկովկասի անկախությունը, այդ ամենը լավ հասկանում էինք»[16]:

Այսպիսով՝ տարածաշրջանում գտնվող և կովկասյան թաթարների հետ անմիջական շփում ունեցող Վեհիբ փաշան հստակ կերպով գրում է, որ ձևավորվող Ադրբեջան պետությունն ի վիճակի չէ ոչ միայն իշխելու հայկական տարածքներին, այլև Թուրքիայից օգնություն չլինելու պարագայում ի վիճակի չէ գոյատևելու, և մահմեդականներով բնակեցված տարածքները բաժանվելու են Հայաստանի և Վրաստանի միջև: Ոչ միայն Վեհիբ փաշան, այլև այդ ժամանակաշրջանի այլ թուրք գործիչներ լավ էին հասկանում, որ ադրբեջանական պետության ստեղծումն առանց թուրքական բանակի աջակցության հնարավոր չէ և, հատկապես, հնարավոր չէ այդ պետության կազմում ընդգրկել ոչ մահմեդական բնակչությամբ տարածքները: Օրինակ՝ 1918 թ. Անդրկովկաս ներխուժած թուրքական բանակի հրամանատարներից մեկը՝ Հալիլ փաշան, գրում է. «Ադրբեջանի և մեր միջև կար Հայաստան: Ամեն գնով պետք է անցնեինք Ադրբեջան, օգնության հասնեինք մեր այնտեղի եղբայրներին: Հակառակ պարագայում, երկար տարիներ ռազմական կրթություն ստացած, լավ զինված և վրեժխնդրությամբ լի հայկական ստորաբաժանումների դիմաց ցարական ժամանակ զինվորական ծառայության հնարավորությունից զրկված, անզեն և զինվորական պատրաստականություն չունեցող մեր ադրբեջանցի եղբայրների կյանքը չէր կարող երաշխավորված լինել»[17]:

Եվ այսպես. եթե հաշվի առնենք վերոհիշյալ հանգամանքների հետ մեկտեղ նաև Հարավային Կովկասի իրողությունները, առաջին հերթին՝ Բաքվի կոմունայի իշխանությունը, մինչդեռ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և Օսմանյան կայսրության առաջնային նպատակներից էր Բաքվի նավթին տիրանալը, պարզ է դառնում, որ Հարավային Կովկասում երկու՝ վրացական և ադրբեջանական պետություն ճանաչելու թուրքական ծրագիրն անիրականանալի էր:

[16] Տես «Выписка из стенографического отчета заседания Закавказского сейма 26-го мая 1918 г.». BOA, YB (21), 7/16, s. 7:

[17] Տես *Şevket Süreyya Aydemir*. Son Osmanlı Paşa'sı Halil Paşa'nın hatıraları. "Akşam gazetesi", 6 Aralık 1967, s. 4:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ հայկական պետության վերականգնումը թույլ չտալու և հայկական տարածքները վրացական ու մահմեդական պետությունների միջև բաժանելու թուրքական ծրագրի թույլ կողմերից մեկը այն էր, որ Անդրկովկասում իրական ռազմական ուժ էին հայկական բանակն ու կամավորականները: Անդրկովկաս ներխուժած թուրքական բանակին դիմադրություն հիմնականում ցույց տվեց հայկական զորքը, ընդ որում, ժամանակ առ ժամանակ մեծ թուրքական զորամասերը կանգնում էին պարտության վտանգի առաջ: Այսպես. Հալիլ Մենթեշեն վկայում է, որ Բաթումի բանակցությունների ժամանակ, երբ հայկական զորքերի հետ մարտեր էին մղվում Ալեքսանդրապոլի շրջակայքում, 3-րդ բանակի հրամանատար Վեհիբ փաշան խուճապահար խնդրում էր իրեն. «Ամա՛ն, Հալիլ բեյ, այդ հայ պատվիրակները որտեղ են, հաշտության հարցը ժամ առաջ վերջացնենք, նրանք (*հայերը.–Ա. Ա.)* համառորեն դիմադրում են, իմ տրամադրության տակ 12000 հոգի կա, իսկ ռեզերվ չունեմ: Մեհմեդը, եթե նահանջի, էրզրումում շունչ կառնենք»[18]:

1918 թ. մայիսի 28-ին Սարդարապատում կրած պարտությունից հետո թուրքական զորքերը Անդրկովկասում, չհաշված Բաքվի մոտակայքում ձեռնարկված առաջին հարձակման անհաջողությունը, հիմնական կորուստները կրում էին հայկական զորամասերից: Այսպես. Շևքեթ Այդեմիրը նշում է, որ 1918 թ. հունիս–սեպտեմբեր ամիսներին «Իսլամական բանակը, ամենուրեք բախվելով հայկական ուժերի հետ, երբեմն զգալի կորուստներ էր կրում: Օրինակ՝ 5-րդ դիվիզիայի 10-րդ գունդը, 1918 թ. հունիսի 15-ին Աքչայի շրջանում ծուղակ ընկնելով, 200 հոգուց ավելի զոհ տվեց և կորցրեց երկու թնդանոթ»[19]:

Հայկական պետականության վերականգնումը թույլ չտալու փորձերի անհաջողությունից հետո օսմանյան կառավարությունը կենտրոնացավ նորանկախ Հայաստանի Հանրապետության տարածքը հնարավորինս կրճատելու ծրագրի իրականացման վրա, ինչը կյանքի կոչվեց Բաթումի պայմանագրի դրույթներով: Սակայն մի շարք հարցերում, մասնավորապես՝ Հայաստանի հյուսիսային սահմանի հարցում, Ահարոնյանի և Խատիսյանի ղեկավարած պատվիրակությունը, որը Կ. Պոլսում էր գտնվում 1918 թ. հունիսի 13-ից օգոստոսի 31-ը, Թալեաթի և Էնվերի հետ ունեցած շփումների շնորհիվ կարողացավ հասնել Հայաստանի օգտին կատարված որոշ փոփոխությունների: Հայկական պատվիրակության մեկ այլ հեռանկարային դիվանագիտական քայլ էր Հայաստանում Օսմանյան կայսրության դեսպանի պաշտոնում Էնվերի հորեղբայր Հալիլ Քութին նշանակելու առաջարկությունը[20]: Այս քայլի խելամտությունը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Հալիլը,

[18] Տես "Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları", s. 229:

[19] Տես *Շևքեթ Սուրեյյա Այդեմիր,* Նշ. աշխ., էջ 420:

[20] Տես *Taylan Sorgun.* Halil Paşa: İttihad ve Terakki'den Cumhuriyet'e Bitmiyen Savaş. İstanbul, 1997, s. 253–254:

որը Անդրկովկասում գտնվող թուրքական բանակի հրամանատարներից մեկն էր, դեռ Վանից լավ հարաբերություններ ուներ Արամ Մանուկյանի հետ և 1918 թ. սեպտեմբերի վերջում Երևանում եղած ժամանակ Արամ Մանուկյանի և կաթողիկոսի խնդրանքով թուրքական 9-րդ բանակի պահեստից Հայաստանի կառավարությանը տրամադրեց 200 տ հացահատիկ[21]: Մյուս կողմից՝ ռազմական գործողությունների շարունակման պայմաններում իրական իշխանությունը գտնվում էր զինվորականության ձեռքում, և Հալիլ փաշայի կարգի ազդեցիկ գեներալի նշանակումը դեսպան Երևանում հավելյալ լծակ և հնարավորություն էր Հայաստանի կառավարության համար:

Այսպիսով՝ օսմանյան արխիվային փաստաթղթերը և այդ շրջանի թուրք քաղաքական գործիչների հուշերը վկայում են, որ, հակառակ մինչ այդ տարածված կարծիքի, Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումը Օսմանյան կայսրության համար պարտադրված քայլ էր, իսկ դրանից առաջ թուրքական դիվանագիտությունը ակտիվ ջանքեր էր գործադրել Հարավային Կովկասում երկու՝ վրացական ու կովկասյան մահմեդականների պետություններ ձևավորելու, որոնց միջև էլ պետք է բաժանվեին հայկական տարածքները:

[21] Տես նույն տեղում, էջ 244–245:

## ВОССТАНОВЛЕНИЕ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ В СВЕТЕ ВНОВЬ ОПУБЛИКОВАННЫХ ФАКТОВ (МАРТ–ОКТЯБРЬ 1918 Г.)

*А. Г. АВАГЯН, доктор исторических наук, профессор*

РЕЗЮМЕ

В последнее время в Турции придали огласке ряд документов, касающихся политики младотурок в отношении Закавказского сейма и народов, входивших в его состав.

Если до сих пор Турция выставляла себя в роли благодетеля, позволившего армянам создать свое независимое государство, то эти опубликованные документы представляют роль Турции в данном вопросе в истинном свете.

Турция была ярой противницей создания армянского государства. И руководствовалась она не только соображениями исторических реалий – извечного противостояния армян (в отличие от кавказских татар, позднее назвавших себя азербайджанцами) или возможностью армян в случае победы Антанты через ее членов осуждения массовой резни и депортации армян (тогда еще не было понятия геноцида), но и совсем свежими фактами – ожесточенным противодействием Отдельного Армянского корпуса по всей линии Кавказского фронта.

Младотурки хотели поделить армянские земли между планируемыми грузинским и мусульманским государствами. Однако грузины наотрез отказались, мотивируя тем, что многочисленные армяне, стремящиеся к независимости, дестабилизируют обстановку в стране, тем более, что они и так составляли 60 процентов населения Тифлиса (Тбилиси). Что касается мусульман Южного Кавказа, то они не имели ни культуры государственности, ни желания быть самостоятельными, стремясь войти в состав Турции.

Создавшаяся политическая обстановка, а также героические майские сражения армян против турецкой интервенции заставили младотурок согласиться на создание независимого армянского государства, хотя и по Батумскому договору сильно урезавших новообразованную Республику Армения как в территориальном отношении, так и в плане атрибутов государственности, способных обеспечить независимость – ее Вооруженных сил.

## THE RESTORATION OF THE ARMENIAN STATEHOOD IN THE LIGHT OF THE NEWLY PUBLISHED FACTS (MARCH – OCTOBER, 1918)

*A.G. AVAGYAN, Doctor of History, Professor*

SUMMARY

Recently, a number of documents relating to the Young Turks' policy towards the Transcaucasian Seym and the peoples complementing it have gone public in Turkey.

If until now Turkey has exhibited itself as a benefactor, who allowed Armenians to create their own independent state, then these published documents represent Turkey's role in this issue in a true light.

Turkey was an ardent opponent of the creation of the Armenian state. And it was guided not only by considerations of historical realities – Armenians' age-old confrontation (unlike the Caucasian Tatars who later called themselves Azeris), or the Armenians' possibility to condemn their massacres and deportation through the members of the Entente should the latter win (there was no concept of genocide then), but by absolutely fresh facts – the fierce counteraction of the Independent Armenian Army Corps along the whole line of the Caucasian front as well.

The Young Turks wanted to divide the Armenian lands between the planned Georgian and Muslim states. The Georgians, however, flatly refused, arguing that numerous Armenians, striving for independence, destabilized the situation in the country, especially since they already

made 60 per cent of the population of Tiflis (Tbilisi). As for the South Caucasus Muslims, they had neither a culture of statehood, nor a desire to be independent, seeking to become part of Turkey.

The political situation created, as well as the heroic May battles of Armenians against the Turkish intervention, made the Young Turks agree to the creation of an independent Armenian state, although under the Batumi Treaty they severely abridged the newly-formed Republic of Armenia both territorially, and in terms of statehood attributes capable of ensuring independence – its Armed Forces.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

*Մ. Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր*

1918 թ. մայիսի 28-ին՝ 600 տարվա ընդմիջումից հետո, չափազանց դժվար արտաքին և ներքին պայմաններում վերականգնվեց հայկական պետականությունը՝ հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ստորագրած առաջին միջազգային փաստաթուղթը Թուրքիայի հետ 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված պայմանագիրն էր: Այդ պայմանագրով Թուրքիան ստիպված ճանաչեց Հայաստանը որպես անկախ պետություն, սակայն, օգտվելով նրա թուլությունից, Հայաստանի Հանրապետությանը պարտադրեց իր վրա վերցնել մի շարք ծանր և նվաստացուցիչ պարտավորություններ: Դա վերաբերում էր նաև Հայաստանի բանակին: Հայկական բանակը ունենալու էր սահմանափակ թվով զորք. Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի թվաքանակը, ինչպես նաև ըստ տարածաշրջանների տեղաբաշխումը պետք է որոշեր Թուրքիայի կառավարությունը:

Հայաստանի կառավարությունը նաև պարտավորվել էր անհապաղ վտարել Թուրքիայի և նրա դաշնակիցների դեմ պատերազմի մեջ գտնվող երկրների՝ իր տարածքում եղած բոլոր սպաներին ու քաղաքացիներին: Հայաստանին արգելվում էր մինչև համաշխարհային պատերազմի ավարտը ծառայության ընդունել այդ պետությունների սպաներին և այլ անձանց: Միևնույն ժամանակ, թուրքական բանակին թույլատրվում էր ցանկացած ժամանակ կատարել Հայաստանի տարածքով տարանցիկ փոխադրումներ, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում էր այդ փոխադրումների համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ և ապահովել դրանց անվտանգությունը: Բացի այդ, Թուրքիային իրավունք էր վերապահվում նման փոխադրումներից օգտվելու հնարավորություն տալ նաև իր դաշնակիցների զորքերին[1]:

Չնայած ստեղծված արգելքներին՝ ՀՀ Զինված ուժերի կազմավորումը և հանրապետության բանակի ստեղծումը դիտվեց որպես անկախության պաշտպանության առաջնահերթ հարց: Թիֆլիսում կազմավորված հայկական կառավարությունը՝ Հովհաննես Քաջազնունու վարչապետությամբ, առաջին նախարարությունների թվում ստեղծեց զինվորական նախարարությունը՝ ռուսական բանակի գեներալ-մայոր Հովհաննես (Իվան) Վասիլի

[1] Տես *Е. К. Саркисян*. Из истории турецкой интервенции в Армении 1918 г. Е., 1970, сс. 163–167:

Հախվերդյանի (Հախվերդով) գլխավորությամբ: Այս բարդ իրավիճակում Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ի դեմս զինվորական նախարարության, ձեռնամուխ եղավ հայկական ազգային զինված ուժերի կազմավորման գործին:

Գերխնդիրը եղած ուժերի վերախմբավորումն ու վերադասավորումն էր՝ թուրքական նոր առաջխաղացման վտանգից հանրապետությունը և ժողովրդին պաշտպանելու համար:

Զինվորական նախարար գեներալ-մայոր Հովհաննես Հախվերդյան (1918 թ. հունիս – 1919 թ. մարտ)

Հայկական բանակային կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանի և Գլխավոր շտաբի պետ գեներալ-մայոր Եվգենի Վիշինսկու 1918 թ. հունիսի 5-ի հմ. 29 հրամանով կորպուսը բաժանվեց Դիլիջանի, Ներքին Ախտայի, Երևանի և Նոր Բայազետի զորաջոկատների (տես *Հավելված,* էջ 49–50): Յուրաքանչյուր զորաջոկատի տրվեց կոնկրետ առաջադրանք:

Դիլիջանի զորաջոկատը՝ գնդապետ Տիգրան Բաղդասարյանի հրամանատարությամբ, իր կազմում ուներ 3-րդ հետևակային բրիգադի շտաբը, Վանի 2-րդ հետևակային գունդը, հայկական 2-րդ և Ղազախի ռուս-հայկական միացյալ հրաձգային գնդերը, Կարսի հեծյալ գունդը, հրետանային բրիգադի մեկ մարտկոց և առանձին ջոկատ: Նրա խնդիրն էր՝ տեղակայվելով Դիլիջան–Սեմյոնովկա–Չիբուխլու (Ծովագյուղ) շրջանում, հետևել Ղարաքիլիսայի (Վանաձոր), Քոլագերանի (Չորագետ) և Ղազախի ուղղություններում թուրքական զորքերի տեղաշարժերին, ինչպես նաև պահպանել կարգուկանոնը Սևանի ավազանում և Դիլիջան–Քարավանսարայի (Իջևան) շրջանում: Թուրքերի հետ քաշվելուց հետո այս զորաջոկատը պետք է գրավեր Ղարաքիլիսա–Համամլու (Սպիտակ) շրջանը և դուրս գար նոր հաստատված սահման:

Ներքին Ախտայի (Հրազդան) զորաջոկատը՝ գնդապետ Ալեքսանդր Բեյ Մամիկոնյանի գլխավորությամբ, իր կազմում ուներ կորպուսի 1-ին հրաձգային դիվիզիայի շտաբը, 1-ին և 3-րդ հրաձգային գնդերը, 1-ին հեծելազորային գունդը, հրետանային բրիգադի երկու և ուսումնական մեկ հրետանային մարտկոցներ: Այս զորաջոկատի Թայչարուխի (Թեժառոյք) առաջապահ զորամասերը պետք է սերտ կապ պահպանեին Ղարաքիլիսայի ուղղությամբ գործող Դիլիջանի զորաջոկատի և Երևանյան ջոկատի Բաշ Ապարանի առաջապահ ուժերի հետ:

Երևանյան զորաջոկատը՝ գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ, կազմված էր կորպուսի 2-րդ հրաձգային դիվիզիայի շտաբից, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ հրաձգային գնդերից, հայկական հրաձգային Պարտիզանական, Իգդիրի, Ղարաքիլիսայի և Երզնկայի գնդերից, Զեյթունի և Պար-

տիզանական հեծյալ գնդերից, Երևանի պահեստային գումարտակից, հրետանային 2-րդ բրիգադի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ հրետանային մարտկոցներից, Կովկասյան 3-րդ ավիաջոկատից, սակրավորների վաշտից, ինչպես նաև Խնուսի, Էրզրումի և Մակվայի հրաձգային գնդերի մնացորդներից: Երևանյան զորաջոկատի հիմնական խնդիրն էր պաշտպանել հանրապետության կարևոր կենտրոնները՝ Երևանի, Էջմիածնի և Աշտարակի շրջանները: Բաշ Ապարանի ճակատից թուրքական զորքերի հետ քաշվելուց հետո այս զորաջոկատի առաջապահ ուժերը պետք է շարժվեին մինչև Սպիտակի լեռնանցք և կապվեին Դիլիջանի զորաջոկատի զորամասերի հետ:

Զինվորական նախարար գեներալ-մայոր Քրիստափոր Արարատյան (1919 թ. մարտ – 1920 թ. ապրիլ)

Նոր Բայազետի զորաջոկատը՝ փոխգնդապետ Ապրեսյանի հրամանատարությամբ, բաղկացած էր պահեստային 1-ին հետևակային գնդից: Նրա խնդիրն էր պահպանել կարգուկանոնը Նոր Բայազետում և այդ գավառի տարածքում[2]:

1918 թ. հուլիսի 19-ի դրությամբ հայկական կորպուսի նշված զորաջոկատների մարտական կազմն ուներ հետևյալ տեսքը. 818 սպա, 18772 շարքային զինվոր՝ 11252 սվին և 1241 սուր[3]:

Եղած զորաջոկատներից ամենահամալրվածը Երևանյան զորաջոկատն էր, որն ուներ 491 սպա, 14040 զինվոր՝ 9074 սվին և 867 սուր[4]:

Նկատենք, որ հայկական զորամասերի կորիզը կազմում էին ռուսական բանակներում ծառայած Կովկասյան և Արևմտյան ռազմաճակատների մարտերին մասնակցած հայ զինվորներն ու սպաները: Նրանցից շատերը սկսել էին Կովկասյան ճակատում գործող հայկական ազգային զորամասերը համալրել դեռ առաջին համաշխարհային պատերազմի առաջին տարիներին:

Զենքի կոչված մոտ 250 հազար հայ զինվորներից ավելի քան 80 հազարը մարտնչում էր Կովկասյան ճակատում: Այստեղ էին կռվում նաև հայ կամավորական ջոկատները:

Ռուսաստանի դեմ Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո (1914 թ. հոկտեմբերի 20) Արևմտյան Հայաստանը ռուսական զենքի օգնությամբ ազատագրելու հույսեր փայփայող հայկական ազգային-քաղաքական շրջանները (մասնավորապես՝ Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոն) դիմեցին ռուսական բանակի գլխավոր հրամանատարությանը՝ խնդրելով թույլատրել կազմավորելու հայ կամավորական ջոկատներ, որոնք պետք է աջակցեին

[2] Տես Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 121, g. 2, գ. 5բ, թ. 53–54:

[3] Տես նույն տեղում, ֆ. 121, g. 2, գ. 16, թ. 25:

[4] Տես նույն տեղում, գ. 6, թ. 24:

ռուսական Կովկասյան բանակին Արևմտյան Հայաստանի ազատագրման գործում: Սկզբնապես կազմավորվեցին չորս՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, կամավորական ջոկատները, որոնց հրամանատարներ նշանակվեցին, համապատասխանաբար, ազգային-ազատագրական պայքարում թրծված հայդուկներ Անդրանիկը, Դրոն, Համազասպը, Քեռին: Ավելի ուշ կազմավորվեցին 5-րդ, 6-րդ և 7-րդ հայկական ջոկատները, և կամավորների թիվը 1915 թ. գարնանը հասավ 6500-ի[5]:

Զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյան (1920 թ. ապրիլ – նոյեմբեր)

Հայկական 1-ին կամավորական ջոկատը (հրամանատար՝ Անդրանիկ), որը կազմավորվել էր 1914 թ. հոկտեմբերի 23-ին Սալմաստում գեներալ Չեռնոզուբովի զորաջոկատի կազմում, գործում էր Սալմաստ-Վան ուղղությամբ: Ջոկատի 1200 հոգանոց անձնակազմի մեծ մասը արևմտահայեր էին: Ջոկատն աչքի ընկավ հատկապես Դիլմանի ճակատամարտում (1915 թ. ապրիլ), այնուհետև ակտիվորեն մասնակցեց Վանի ազատագրմանը (1915 թ. մայիս) և Բիթլիսի գրավմանը (1916 թ. փետրվար)[6]:

Հայկական 2-րդ կամավորական ջոկատը 1915 թ. ապրիլ–մայիս ամիսներին գեներալ Նիկոլաևի գլխավորած ռուսական Բայազետյան զորաջոկատի կազմում մասնակցեց Վանի ազատագրմանը, քաղաքից դեպի հարավ–արևելք գտնվող շրջանների՝ Ախթամարի, Մակսի, Շատախի, Ազատակերտի, Զեյվայի, Արճեշի և այլ հայկական բնակավայրերի (1915 թ. մայիս–հունիս), Մուշի և Բիթլիսի (1916 թ. փետրվար–ապրիլ) ազատագրմանը[7]:

Հայկական 3-րդ կամավորական ջոկատը ռուսական Կարադերբետյան զորաջոկատի կազմում մասնակցեց Սարիղամիշի օպերացիային (1914 թ. դեկտեմբեր – 1915 թ. հունվար), այնուհետև Վանի, Մուշի և Բիթլիսի ազատագրմանը[8]:

Սարիղամիշից մինչև Ռևանդուզ (Իրան) ձգվեց հայկական 4-րդ կամավորական ջոկատի մարտական ուղին: 1914–1916 թթ. ջոկատը 2-րդ և 3-րդ հայկական ջոկատների հետ մասնակցեց Վանի, Մուշի, Բիթլիսի համար մղված ծանր, բայց հաջողությամբ պսակված մարտերին: Հայկական 4-րդ կամավորական ջոկատը 1916 թ. հունվար–հունիս ամիսներին ռուսական բանակի Սուլդուզի զորաջոկատի կազմում մասնակցեց Ռևանդուզի գրավ-

[5] Տես *Մ. Լ. Կարապետյան,* Հայկական զինվորական կազմավորումները Կովկասյան ռազմաճակատում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: «ՀԲ», 1999, հմ. 2:

[6] Տես ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 3, թ. 1–31, նույն տեղում, գ. 16, թ. 3:

[7] Տես նույն տեղում, գ. 3, թ. 8, 14–15, նույն տեղում, գ. 1, թ. 1–18, նույն տեղում, գ. 16, թ. 3–5:

[8] Տես նույն տեղում, գ. 8, թ. 20–21, նույն տեղում, գ. 3, թ. 1–31:

ման մարտերին, որոնց ընթացքում մայիսի 30-ին ձեռնարկված գրոհներից մեկի ժամանակ հերոսաբար զոհվեց ջոկատի հրամանատար, ժողովրդական հերոս Քեռին[9]:

Հայկական 5-րդ կամավորական ջոկատը (հրամանատար՝ Վարդան) կազմավորվեց Երևանում: Նրա ձևավորման աշխատանքներն սկսվել էին դեռ 1914 թ. դեկտեմբերին: Սակայն Կովկասյան բանակի զինապահեստներում հրացաններ չլինելու պատճառով ջոկատը չսպառազինվեց և չկարողացավ մասնակցել պատերազմի առաջին շրջանի մարտական գործողություններին:

Հայկական 6-րդ ջոկատը (կոչվել է նաև հնչակյան 6-րդ խումբ) ստեղծվեց Կարակուրտում՝ գեներալ Բարաթովի գլխավորած ռուսական զորաջոկատի կազմում: Ջոկատը 1915 թ. դեկտեմբեր – 1916 թ. հունվար ամիսներին մասնակցեց էրզրումի օպերացիային, 1916 թ. փետրվար–մարտ ամիսներին գրավեց էրզրումը: Առաջին հրամանատարը ռուսական բանակի սպա կապիտան Հ. Ջանփոլադյանն էր, իսկ քիչ ուշ նրան փոխարինեց պորուչիկ Գ. Ավշարյանը, որը զոհվեց 1915 թ. ամռանը՝ Շարյան գետի ափին ծավալված ռազմական գործողությունների ժամանակ: Ավշարյանին փոխարինեցին Հայկ Բժշկյանը (Գայ), ապա՝ Պանդուխտը (Միքայել Սերյան):

Հայկական 7-րդ ջոկատը (հրամանատար՝ իշխան Հովսեփ Արղության) կազմավորվեց 1915 թ. աշնանը Երևանում և սկզբում հանդես եկավ որպես մյուս ջոկատների պահեստային ուժ, իսկ հետագայում անցավ հյուսիսային Իրան և աչքի ընկավ հատկապես Ռևանդուզի ճակատամարտում[10]:

Մարտերում ցուցաբերած խիզախության և քաջության համար հայ կամավորներից շատերը պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, այդ թվում նաև Գեորգիյան խաչերով: Ռազմի դաշտում զոհվեցին ավելի քան 700 կամավորականներ[11]:

1915 թ. դեկտեմբերից մինչև 1916 թ. օգոստոս հայ կամավորական ջոկատները կազմացրվեցին, նրանց հիմքի վրա ստեղծվեցին վեց հայկական հրաձգային գումարտակներ: Ռուսական բանակի գերագույն գլխավոր հրամանատարի 1916 թ. մարտի հրամանով ռուսական բանակի առաջին հայկական գումարտակները համալրվեցին նոր անձնակազմով՝ հիմնականում զինապարտներով և հայ կադրային սպաներով ու սպառազինությամբ՝ վերածվելով կանոնավոր բանակի մարտական ուժի: 1917 թ. հունվարի 1-ի դրությամբ այդ գումարտակներում ծառայում էր 5179 մարդ, որից 174-ը՝ սպա[12]:

Հայկական 1-ին գումարտակը (հրամանատար՝ գնդապետ Պողոս Բեժանբեկ)

---

[9] Տես նույն տեղում, գ. 9, թ. 78–79:

[10] Տես նույն տեղում, գ. 3, թ. 19:

[11] Տես նույն տեղում, ֆ. 57, g. 5, գ. 56, թ. 2, *նաև՝ М. Л. Карапетян.* Участие армян в Первой мировой войне (1914-1918 гг.). Е., 2014, сс. 108–111:

[12] Տես Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվ (ՌՊՌՊԱ), ֆ. 2100, g. 1, գ. 44, թ. 175–176:

39-րդ դիվիզիայի կազմում մեծ սխրանքներ գործեց Քիլքիթի և Երզնկայի շրջանում 1916 թ. հունիսի 25-ից 27-ը տևած կատաղի մարտերում:

Ռազմաճակատի պարսկական հատվածում իրեն լավագույնս դրսևորեց հայկական 3-րդ հրաձգային գումարտակը՝ գնդապետ Արտեմ Տեր-Նիկողոսյանի հրամանատարությամբ: Այսպես. օգոստոսի 2-ից 8-ը տեղի ունեցած մարտերում արյունահեղ կռիվներից հետո գումարտակը մեծ կորուստների գնով թուրքերից ազատագրեց Քեմիշլու, Դուրու և Սիակով գյուղերը[13]:

Զինվորական նախարար Դրաստամատ Կանայան (1920 թ. նոյեմբեր – դեկտեմբեր)

Հուլիսի 31-ի լուսաբացին հայկական 4-րդ գումարտակը՝ գնդապետ Արտեմ Հովսեփյանի հրամանատարությամբ, տիրելով շրջակա բարձունքներին, գրավեց կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող Սագիզը: Այդ հաղթանակի կապակցությամբ Սագզի զորաջոկատի պետ գեներալ Ա. Կուլեբյակինը փոխգնդապետ Հովսեփյանին հղել է հեռագիր, որում ասված էր. «Շնորհավորում եմ գումարտակին առաջին հաղթանակով և մարտական մկրտությամբ: Շնորհակալություն մարտական փայլուն աշխատանքի համար: Այսօր անձամբ եղա Ձեր գրաված անառիկ դիրքերում և տեղում գնահատեցի հաղթահարած հայ հրաձիգների ջանքն ու սխրագործությունը»[14]:

1917 թ. հունիսի 18-ին 4-րդ գումարտակը, գործակցելով հայկական 6-րդ հրաձգային գումարտակի հետ, գրավեց մեկ այլ կարևոր ռազմավարական կետ՝ Փենջվինը:

Հայկական 6-րդ հրաձգային գումարտակը՝ փոխգնդապետ Միքայել Մելիք-Մուրադյանի գլխավորությամբ, մեծ սխրանքներ գործեց Սագզի շրջանում 1916 թ. օգոստոսի 6-ից մինչև 10-ը տեղի ունեցած կատաղի մարտերում: Նույն թվականի ամռանը գումարտակը հերոսաբար մարտնչեց նաև Փենջվինի շրջանում: Հունիսի 15-ից 17-ը տևած արյունահեղ ճակատամարտում գումարտակը գրավեց Բիստանը և նրա անառիկ համարվող դիրքերը:

Ռազմական գործողություններում իրեն լավագույնս դրսևորեց նաև հայկական 5-րդ հրաձգային գումարտակը՝ գնդապետ Պավել Բեկ-Փիրումյանի գլխավորությամբ: Հիմնականում ղարաբաղցիներից կազմավորված գումարտակը Կովկասյան 7-րդ կորպուսի կազմում ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ Պարսկաստանի Դրիթկա-Ռայաթ գյուղի և Ասխաբա լեռան մոտ 1916 թ. օգոստոսի 9-ին տեղի ունեցած նշանավոր ճակատամարտում, որտեղ ռուսական զորքերը գլխովին ջախջախեցին թուրքական լավագույն 4-րդ (Դարդանելյան) դիվիզիան: Այդ ճակատամարտում, բացի մեծ ռազմա-

[13] Տես ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 17, թ. 1–4:

[14] Տես նույն տեղում, գ. 18, թ. 2–29:

կան ավարից, ռուսական զորքերը գերի վերցրեցին 2000 թուրք զինվորների և 60 սպայի[15]:

1916 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին Հայկական 5-րդ գումարտակը գեներալ Կուլեբյակինի գլխավորած Սոուջ-Բուլադի զորաջոկատի կազմում 4-րդ և 6-րդ գումարտակների հետ գրավեց Բանե քաղաքը:

1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական բանակում տարվող ազգայնացման քաղաքականության և ազգային զորամասերի կազմավորման շնորհիվ հայկական կանոնավոր գումարտակներն ընդարձակվեցին, և նրանց հիմքի վրա կազմակերպվեցին վեց հայկական հրաձգային գնդեր, որոնք մտան գործող բանակի կազմի մեջ: Դեռ կազմավորման ընթացքում դրանցից 2-րդ և 5-րդ գնդերն իրենց հռչակեցին «մահապարտների» գնդեր: Գնդապետներ Դավիթ Կարաքեշիշյանի, Սերոբ Սամարցյանի, Արտեմ Հովսեփյանի, Պողոս Բեկ-Փիրումյանի, Լևոն Հովսեփյանի և Միքայել Մելիք-Մուրադյանի հրամանատարությամբ գործող հայկական հրաձգային գնդերը հատկապես աչքի ընկան 1918 թ. Էրզրումի, Վանի, Իգդիրի մոտ տեղի ունեցած մի շարք մարտական գործողություններում: 1917 թ. հոկտեմբերի 15-ի դրությամբ հայկական 1-ին, 2-րդ և 5-րդ գնդերում միասին կար 3441 զինվոր և 143 սպա[16]:

1917 թ. նոյեմբերին գնդերի ընդարձակման շնորհիվ և նրանց հիմքի վրա կազմավորվեց հայկական Առանձին բանակային կորպուսը, որը մարտնչեց ռուսական զորքերի հետ կողք կողքի, ապա Կովկասյան ճակատից նրանց հեռանալուց հետո իր վրա կրեց ռազմաճակատի պաշտպանության ծանրագույն խնդիրը: Կորպուսի կազմում կային երկու հրաձգային դիվիզիա, հրետանային, հեծելազորային բրիգադներ և մի շարք առանձին մասնագիտացված զորամասեր ու ստորաբաժանումներ: Կորպուսի զորամասերը 1918 թ. հունվար – 1918 թ. մայիս ամիսներին ծանր անհավասար, բայց հերոսական մարտեր մղեցին թվով մի քանի անգամ գերազանցող թուրքական զորաբանակների դեմ: Այդ զորամասերը վճռական դեր խաղացին 1918 թ. մայիսի 22-ից 28-ը տեղի ունեցած Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի ճակատամարտերում տարած հաղթանակներում, որոնք բախտորոշ նշանակություն ունեցան ինչպես հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից փրկելու, այնպես էլ նրա պետականությունը վերականգնելու կենսականորեն կարևոր գործում:

Մայիսյան հերոսամարտերում Հայկական կորպուսի տարած հաղթանակները, որոնք նա կերտեց հայ ժողովրդի ակտիվ աջակցությամբ, հայկական բանակի խելամիտ կերպով ծրագրված և իրականացված ռազմական օպերացիաների արդյունք էին[17]:

---

[15] Տես նույն տեղում, գ. 19, թ. 10:

[16] Տես ՌՊՌԱ, ֆ. 2100, ց. 1, գ. 72, թ. 273:

[17] Տես Մայիսյան հերոսամարտերի համակողմանի վերլուծությունը տես «Հայկական բանակ», 1998, հմ. 2:

Թուրքական զորքերի դեմ մղված մայիսյան կռիվներում աչքի ընկան հատկապես Հայկական կորպուսի 2-րդ հրաձգային դիվիզիան ու նրա հրամանատար գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը, Սարդարապատի զորաջոկատը՝ գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ, 5-րդ «մահապարտների» հրաձգային գունդը՝ գնդապետ Պողոս Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ, հեծելազորային գունդը, որի հրամանատարն էր հեծելազորի գնդապետ Նիկոլայ Ղորղանյանը, հատուկ Ղարաբաղյան զորաջոկատը՝ գնդապետ Պավել Մելիք-Շահնազարյանի հրամանատարությամբ, Պարտիզանական գունդը՝ գնդապետ Վասիլի Պերեկրյոստովի հրամանատարությամբ, Պարտիզանական հեծյալ գունդը՝ փոխգնդապետ Կորոլկովի հրամանատարությամբ, 2-րդ հեծյալ գունդը՝ գնդապետ Զալինյանի հրամանատարությամբ, 4-րդ հետևակային գունդը՝ գնդապետ Արտեմ Հովսեփյանի հրամանատարությամբ և շատ ուրիշ զորամասեր:

1918 թ. մայիսյան հերոսամարտերից և անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո Հայկական Առանձին բանակային կորպուսն անցավ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կառավարության տրամադրության տակ՝ դառնալով հայկական ազգային բանակի միջուկը:

## ИСТОКИ ВООРУЖЕННЫХ СИЛ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*М. Л. КАРАПЕТЯН, доктор исторических наук*

РЕЗЮМЕ

28 мая 1918 г., после 600-летнего перерыва, была восстановлена независимая армянская государственность в лице Первой Республики Армения.

Этому предшествовали три героических сражения частей Отдельного Армянского армейского корпуса против превосходящих сил турецких интервентов. И если армяне под Сардарапатом и Баш-Апараном одержали блестящие победы, то под Караклисом, несмотря на поражение, оказали столь мужественное сопротивление врагу, что турецкий командующий Вехиб-паша заявил в Батуми на мирных переговорах с делегацией Закавказского сейма, а затем делегациями трех новообразованных государств Южного Закавказья: «Армяне доказали, что являются лучшими в мире воинами».

Долог и тяжел был путь армянского народа к независимости. Только за годы Первой мировой войны ему пришлось пережить ужасный Геноцид 1915 г. в Османской империи, гибель своих сынов и дочерей в отрядах самообороны.

Армяне в 1915 г., после Геноцида, получили разрешение сформировать для действия в составе русской Кавказской армии добровольческих дружин. Были сформированы в такие дружины, общей численностью более 6500 человек. Дружины отличились беззаветной храбростью и самоотверженностью в каждом бою, ибо сражались не за страх или вознаграждение, а во имя Великой идеи освобождения Родины.

В 1916 г. в составе русских частей на базе добровольческих отрядов были сформированы 6 армянских стрелковых батальонов, общей численностью более 5000 человек. Армянские батальоны также покрыли себя славой в кровопролитных боях на Кавказском фронте Первой мировой войны.

После Февральской революции 1917 г. в России Временное правительство приняло решение о создании национальных формирований, и армянские батальоны слились в регулярные армянские полки, на основе которых приказом командующего Кавказским фронтом генерала Пржевальского в ноябре был создан Армянский Отдельный армейский корпус. Его частям пришлось принять на себя удары превосходящих сил противника практически по всей линии противостояния в условиях массового оставления фронта русскими войсками и пассивных действий частей Грузинского корпуса.

Именно частям Армянского корпуса, возглавляемым генералами Т. Назарбекяном, М. Силикяном, полковниками Д. и П. Бек-Пирумянами, Бей-Мамиконяном, комиссаром Дро и многими другими прославленными армянскими офицерами, при активной поддержке всех слоев армянского народа удалось в Майских героических сражениях 1918 г. одержать историческую победу, приведшую к восстановлению армянской государственности. Причем корпус стал ядром Вооруженных сил Первой Республики Армения.

## THE ORIGINS OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA'S ARMED FORCES

*M. L. KARAPETYAN, Doctor of History*

SUMMARY

The independent Armenian statehood represented by the First Republic of Armenia was restored after a 600-year-long hiatus on May 28, 1918.

This was preceded by three heroic battles of the Independent Armenian Army Corps units against the Turkish interventionist superior forces. And if the Armenians won several brilliant victories at Sardarapat and Bash-

Aparan, then, despite the defeat at Karaklis, they showed such courageous resistance to the enemy that at the peace talks with the delegation of the Transcaucasian Seym in Batumi, and then with the delegations of three newly-formed states of Southern Transcaucasia, the Turkish commander Wehib Pasha declared: "The Armenians have proved that they can be the best warriors in the world".

Long and hard was the path of the Armenian people to independence. Only during the years of the World War I it had to survive the terrible Genocide of 1915 in the Ottoman Empire, the death of its sons and daughters in self-defense units.

In 1915, after the Genocide, the Armenians were permitted to form volunteer squads in the Russian Caucasian Army. A total of more than 6,500 people enlisted in such squads. In every battle did the squads excel in selfless courage and commitment, for they fought without fear or recompense, but in the name of the Great Idea of liberating their Motherland.

In 1916, six Armenian rifle battalions, totalling more than 5,000 people, were formed as part of Russian units on the basis of volunteer detachments. The Armenian battalions basked in the glory also in bloody battles on the Caucasian front in the World War I.

After the 1917 February Revolution, the Russian Interim Government decided to set up national formations, and the Armenian battalions merged with regular Armenian regiments, on the basis of which the Independent Armenian Army Corps was established by the order of General Przhevalsky, the Caucasian Front Commander. Those units had to take the attacks of the superior enemy forces practically along the entire line of confrontation in terms of the Russian troops' mass abandonment of the front, and the Georgian Corps units' passive actions.

Those were the Armenian Corps units headed by Generals T. Nazarbekyan, M. Silikyan, Colonels D. and P. Bek-Pirumyans, Bey-Mamikonyan, Commander Dro, and many other renowned Armenian officers, with the active support of all layers of the Armenian people, which won the historic victory in the May heroic battles of 1918, leading to the restoration of the Armenian statehood. What is more, the Corps became the kernel of the Armed Forces of the First Republic of Armenia.

*ՀԱՎԵԼՎԱԾ*

Приложение к схеме расположения частей отдельнаго армянскаго корпуса по состоянию к 19 июля 1918 г.

Штаб Корпуса - Канакир

Эриванский отряд - Штаб отряда - Эривань

Левая колонна - 7 стр.полк - I б-н
Игдырский п. - I б-н
Эрзинджанский п. - $I^{1/2}$ б-на
6 стр.п. - $I^{1/2}$ б-на
Зейтунский к.п. - 3 п.эск. и I к.эск.
Партизанский к.п. - 4 сотни
5 бат. 2 арт. бр. - 4 орудия
6 бат. и - 2 орудия

Итого: $5^{3/4}$б-на, 5 к.сот. и эск., 6 орудий

Эчмиадзинский отряд

5 стр.п. - 3 б-на
Караклисский п. - 2 б-на
Эрзинджанский п. - $I^{1/2}$ б-на
8 стр.п. - I/2 б-на
2 кон.полк - 2 эск.
I бат. 2 арт.бр. - 4 орудия
6 бат. - 2 орудия

Итого: 7 б-ов, 2 эск., 6 орудий

Баш-Абаранский отряд

8 стр.п. - 2 б-на
6 стр.п. - $I^{1/4}$ б-на
2 кон.полк - 2 эск.
Игдырский п. - I б-н
4 бат. 2 Арт.бр. - 4 орудий

Итого: $4^{1/4}$ б-на, 2 эск., 4 орудия

Итого в Эрив.отряде 20 бат., 9 к.сот. и эск. и 18 ор.

Պատճենահանված փաստաթուղթը բերվում է ըստ «Материалы председателя военно-исторической комиссии "Участие армян в Первой мировой войне 1914 – 1918 гг". генерал-лейтенанта А. Кулебякина "О формировании и боевых действий армянских воинских частей". 30.07.1919 г.»

(հեղինակի անձնական արխիվից)

- 2 -

2. Нижнє-Ахтинский отряд

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I Арм.стр.п. | 38 | 408 | I7I | - | 34 |
| 3 "___"___" | 49 | 678 | 435 | - | 78 |
| I Кон.Арм.п. | I8 | I98 | - | II0 | I00 |
| Упр. I Арт.бр. | 4 | 30 | - | - | II |
| " 2 горн.див. | 3 | 57 | - | - | II |
| 3 батарея | 7 | 97 | - | - | 46 |
| 4 бат. | 3 | 883 | - | - | I8 |
| 5 бат. | 7 | I37 | - | - | 3I |
| Учебная бат. | I4 | 57 | - | - | 57 |
| Штаб див. | 7 | 227 | I24 | 5 | 68 |
| I 2 див. | - | II5 | - | - | - |
| Саперная рота | | 85 | - | - | - |
| Итого | I50 | 2I72 | 730 | I37 | 433 |

3. Делижанский отряд

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 Арм.стр.п. | 52 | 758 | 682 | - | I97 |
| 2 Ванский п.пол. | 52 | 439 | 600 | - | I00 |
| Казахск.Рус.Арм.п.п. | I0 | - | - | - | - |
| Карсский арм.кон.п. | 9 | 238 | - | I97 | 63 |
| Отряд Т.Багдасарова (4 Ван.п.) | 36 | п. 464<br>к. I83 | 490<br>I80 | -<br>- | I04<br>I75 |
| I бат. I арт.бр. | 3 | 75 | - | 40 | 40 |
| Итого | I62 | 2I57 | I352 | 237 | 679 |

4. Ново-Баязетский отряд

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| I Арм.зап.п.полк | I5 | 403 | I03 | - | - |
| Итого | I5 | 403 | I03 | - | - |
| Всего | 8I8 | I8772 | II252 | I24I | 4504 |

И.д. обер--Квартирмейстера
полковник Тимченко

И.д. старшего адъютанта
штабс-Капитан Бениянц

С подлинным верно:
Член военно-исторической Комиссии
Капитан Абазов

3I/Ш.I9I9.
г.Эривань

Дело I6, стр.25.

# ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ

*Գ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, Գ. Հ. ՍԱՖԱՐՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող*

Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակը առիթ է վերստին իմաստավորելու պատմական ձեռքբերումները, ինչպես նաև հարյուրամյա բարձունքից անաչառ կերպով վերլուծելու բացթողումները, որպեսզի դրանք այլևս չկրկնվեն:

Մեկ դար առաջ հայ ժողովուրդն իրերի բերումով հայտնվել էր կյանքի և մահվան սահմանագծին: Օսմանյան Թուրքիան, օգտվելով առաջին աշխարհամարտի խառնաշփոթ իրավիճակից, հայ ժողովրդի նկատմամբ իրագործում էր ցեղասպանական քաղաքականություն: Արևմտյան Հայաստանի հայկական բնակավայրերը ավերակվել ու հայաթափվել էին, թուրքական հրոսախմբերը ներխուժել էին նաև Արևելյան Հայաստան՝ սպառնալով մեր ժողովրդի գոյությանը: Այս ճակատագրական պահին հայ ժողովուրդը միահամուռ կամքով Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում կարողացավ ոչ միայն կանգնեցնել թշնամու առաջխաղացումը, այլև փայլուն հաղթանակներով հինգուկես դարերի երկարատև դադարից հետո ճանապարհ հարթել անկախ ազգային պետականության վերականգնման համար:

Եվ այսպես. մայիսյան հաղթական հերոսամարտերը հիմք դարձան Հայաստանի անկախության համար: 1918 թ. հունիսի 13-ին նորընտիր վարչապետ Հովհաննես Քաջազնունին ի լուր աշխարհի պաշտոնապես հայտարարություն արեց Հայաստանի անկախության մասին[1]:

Այսպիսով՝ երեք օրվա ընթացքում Անդրկովկասի դաշնության փլատակների վրա հիմնվեցին երեք անկախ պետություններ՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունները: «Մայիսի 28-ը» հայոց պատմության մեջ մտավ որպես Հայաստանի անկախության օր: Հայաստանի անկախանալը պատմական օբյեկտիվ անհրաժեշտություն էր և ստեղծված պայմաններում չուներ այլընտրանք:

---

[1] Տես «Հայոց պատմություն», հ. IV, գիրք առաջին. «Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.)»: Ե., 2010, էջ 18:

Հարյուրամյակների ընդմիջումից հետո կրկին վերականգնվեց հայոց անկախ պետականությունը: Հայաստանի անկախության հռչակումը, իրավամբ, հայ ժողովրդի քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքում եղավ շրջադարձային: Դրանով փակվում էր հայ ժողովրդի ողբերգական ու հերոսական դրվագներով հարուստ նոր պատմության ժամանակաշրջանը, և սկսվում էր նորագույն՝ հայոց չորս պետությունների՝ Հայաստանի Առաջին Հանրապետության, Հայաստանի երկրորդ, երրորդ և Արցախի (Լեռնային Ղարաբաղի) հանրապետությունների դարաշրջանը:

Հայաստանի Հանրապետության գոյության ընդամենը երկուսուկես տարվա ընթացքում գործել են 5 կառավարություններ: Կուսակցական պատկանելության տեսակետից վարչապետներն իրենց կաբինետներով հիմնականում ներկայացնում էին ՀՀԴ կուսակցությունը: Սակայն այդ ընթացքում երկու անգամ հաջողվել է ստեղծել միջկուսակցական (կոալիցիոն) կառավարություն[2]:

Հայոց պետականությունը կառուցվելու էր եվրոպական քաղաքական ու պետական համակարգի օրինակով՝ տեղական պայմանների և հայ ժողովրդի ազգային առանձնահատկությունների հաշվառմամբ:

1918 թ. հուլիսի վերջին Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը, պաշտոնապես կոչվեց Հայաստանի խորհուրդ: Քանի որ քաղաքական հանգամանքները հնարավորություն չէին տալիս անցկացնելու խորհրդարանի ընտրություններ, որոշվեց Հայոց ազգային խորհրդի անդամների թվաքանակը, կուսակցական համամասնությամբ եռապատկելու, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ հրավիրելու միջոցով կազմել Հայաստանի առաջին օրենսդիր մարմինը: Այս եղանակով խորհրդարանում տեղեր զբաղեցրին. ՀՀԴ-ն՝ 18 ներկայացուցիչ, ՀԺԿ-ն՝ 6 ներկայացուցիչ, սոցիալ-դեմոկրատները՝ 6 (5 մենշևիկ և 1 բոլշևիկ), սոցիալիստ-հեղափոխականները (էսէռներ)՝ 6 ներկայացուցիչ և 2 անկուսակցական: Բայց դրանցից և ոչ մեկը չուներ բացարձակ մեծամասնություն[3]: Ինչպես նշվեց, խորհրդարան հրավիրվեցին նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ 6 թուրք-թաթար, 1 ռուս և 1 քուրդ (եզդի)՝ ընդամենը 8 անդամ: Այսպիսով՝ Հայաստանի ոչ ընտրովի առաջին գումարման խորհրդարանն ուներ 46 պատգամավոր[4]:

Խորհրդարանի հավանությանն արժանացավ Հ. Քաջազնունու կառավարության հայտագիրը, որում վարչապետը երկրի վիճակը բնութագրում էր որպես «անձև քաոս և ավերակների կույտ»: Անհրաժեշտ էր ստեղծել պետական մեքենա, պետական իրավակարգ, հաստատել կարգուկանոն, երկիրը դուրս բերել քաոսից ու անիշխանությունից, գաղթականությանը

[2] Տես նույն տեղում, էջ 28:

[3] Տես «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)»: Ե., 2000, վավ. 33, էջ 53–54:

[4] Տես նույն տեղում, վավ. 35, էջ 57–59:

սնունդ ու բնակարան տալ, կարգավորել պարենավորումը, ֆինանսները, հաղորդակցությունը, ստեղծել բանակ, զսպել ազգամիջյան խռովությունները, լուծել սահմանային վեճերը, մի խոսքով՝ ստեղծել կենսունակ և կազմակերպված պետություն: Այդպիսի ծանր պայմաններում հանրապետության նորաստեղծ իշխանությունները ձեռնամուխ եղան հայոց պետականության կայացմանը:

1919 թ. հունիսի 21–23-ը տեղի ունեցան Հայաստանի խորհրդարանի համաժողովրդական առաջին ընտրությունները, որոնք անցկացվեցին համամասնական (կուսակցական) ընտրակարգով: Համաձայն ընտրությունների մասին օրենքի՝ ընդհանուր, ուղղակի, հավասար և գաղտնի քվեարկության միջոցով ընտրելու իրավունք ունեին Հայաստանի Հանրապետության 20 տարին լրացրած բոլոր քաղաքացիները (այդ թվում՝ ՀՀ տարածքում ապաստանած արևմտահայ գաղթականները): Պատգամավորների թվաքանակը սահմանված էր 80 մարդ[5]: Ընտրացուցակներում ընդգրկված էր 380 հազար ընտրող: Քաղաքական անկայուն վիճակի հետևանքով Կարսում, Շարուրում, Նախիջևանում և մի քանի այլ շրջաններում ընտրություններ չանցկացվեցին: Երկրորդ ընտրովի գումարման խորհրդարանի 80 պատգամավորական տեղերից 72-ը զբաղեցրեց ՀՀԴ-ն: Խորհրդարանի մնացած 8 տեղերն զբաղեցրին 4 էսէռ, 2 թուրք, 1 եզդի և 1 անկուսակցական[6]: Թեև այդ խորհրդարանն ուներ շատ թույլ՝ ընդամենը 8 պատգամավորներից կազմված, ընդդիմություն, սակայն օրինաստեղծ աշխատանքում աչքի է ընկել ավելի մեծ արդյունավետությամբ և արհեստավարժությամբ:

Բոլշևիկների Մայիսյան ապստամբության կապակցությամբ խորհրդարանն ուղարկվել է շուրջ 7-ամսյա հարկադիր արձակուրդի: Արտակարգ իրավիճակի թելադրանքով հաստատվել է ՀՀԴ բյուրո-կառավարության դիկտատուրա, պետական կառավարման համակարգը՝ կուսակցականացվել:

Այսպիսով՝ Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքական համակարգի անբաժան մաս է կազմել օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը, որի ձևավորման ժամանակ հաշվի է առնվել խորհրդարանականության այն ժամանակվա համաշխարհային փորձը: Հանրապետության գոյության 2,5 տարվա ընթացքում կազմվել է երկու գումարման խորհրդարան: Հայաստանի երկու գումարման խորհրդարաններն իրենց գործունեության ընթացքում ընդունել են 300-ից ավելի օրենքներ[7], որոնք նշանակալի դեր են խաղացել հայոց անկախ պետականության կերտման գործում:

Հայաստանի Հանրապետության կազմավորման գործում կարևորվում էր

[5] Տես նույն տեղում, վավ. 75, էջ 95:

[6] Տես «Հայոց պատմություն», հ. IV, գիրք առաջին, էջ 31:

[7] Տես «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1: Ե., 1919, էջ 38–61, «ՀՀ օրենքների հավաքածու», 1919, էջ 1–93, նույն տեղում,1920, էջ 1–72:

երրորդ իշխանության՝ դատահիրավական մարմինների ու արդարադատության կայացումը[8]:

Առաջին հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների կազմավորումից հետո նրանց առջև դրված գլխավոր խնդիրներից մեկը հանրապետության դատական համակարգի կառուցման և գործունեության հիմունքների մշակումն էր, դատարանակազմական, քրեական ու քաղաքացիական դատավարական հարաբերությունները կարգավորող համապատասխան օրենքների մշակումն ու ընդունումը: Նորակազմ հանրապետությունում շարունակում էին գործել ռուսական տիրապետությունից ժառանգություն մնացած երկու կարգի դատարաններ՝ քաղաքացիական և զինվորական, չհաշված ժամանակավորները: Արդարադատության համակարգն սկսեց աստիճանաբար հայացվել: Քայլեր կատարվեցին դատարանների և դատավարության ազգայնացման ուղղությամբ և այլն:

Իշխանության համակարգում իրենց ուրույն տեղն էին գրավում տեղական՝ գավառային, քաղաքային և համայնքային կառավարման մարմինները: Վարչական տեսակետից գավառները բաժանվում էին շրջանների կամ գավառակների, իսկ վերջիններս՝ գյուղական համայնքների: Գավառների գործադիր մարմինը գավառային վարչությունն էր, որը ենթակա էր ներքին գործերի նախարարությանը: Գավառը ղեկավարում էր գավառային կոմիսարը:

1920 թ. մայիսին Հայաստանի տարածքը բաժանվեց չորս նահանգների՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունյաց, որի ժամանակ հանրապետության տարածքը անվանապես հասավ իր առավելագույն չափին՝ շուրջ 70 հազար քառ. կմ, 2 միլիոն ազգաբնակչությամբ[9]: Վերակազմվեցին քաղաքային ինքնավարությունները: Քաղաքներն առաջնորդվում էին քաղաքային կանոնադրությամբ: Գոյություն ունեին նահանգային և գավառային նշանակության քաղաքներ:

Ազգային իրավական համակարգում հիմնականում գերիշխում էր օտար իրավունքը (օրենսդրությունը)՝ որոշակի փոփոխություններով: Այսպես. հանրապետության իրավական համակարգի ձևավորման հիմնարար քայլն օրենսդիրն իրականացրել է 1918 թ. դեկտեմբերի 6-ին՝ ընդունելով «Նախկին Ռուսական Կայսրության օրենքները ՀՀ տարածքի վրա գործադրման մասին» օրենքը: Համաձայն այդ օրենքի՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես գործառելու էին նախկին Ռուսական Կայսրության օրենքները՝ ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի, Սեյմի, Հայաստանի խորհրդի կատարած փոփոխություններով ու լրացումներով[10]:

---

[8] Այդ մասին ավելի հանգամանորեն տես՝ *Գ. Ս. Ղազինյան, Ա. Գ. Վաղարշյան,* Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը: Հին շրջանից մինչև մեր օրերը: Ե., 2014, էջ 169–182, *նաև՝ Ա. Վաղարշյան*, Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգը (1918–1920 թթ.): Ե., 2006:

[9] Տես «Հայոց պատմություն», հ. IV, գիրք առաջին, էջ 34:

[10] Տես «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918–1919 թթ.», մաս 1, էջ 28:

Հայաստանի Առաջին Հանրապետության իրավական համակարգի նախադրյալների և դրա հիմքերի կառուցման պատմությունը հաստատում է, որ հանրապետությունը վերցրել էր ռոմանագերմանական իրավական համակարգի շինարարության ուղղություն և բարեհաջող ներքին ու արտաքին քաղաքական կացության դեպքում Հայաստանը կունենար կայացած ու առաջադիմական աշխարհիկ իրավական համակարգ[11]: Սակայն Հայաստանի Առաջին Հանրապետությունն այդպես էլ չհասցրեց ունենալ Սահմանադրություն:

Կարելի է արձանագրել Հայաստանի Առաջին Հանրապետության իրավական համակարգի բնորոշ առանձնահատկությունները, որոնք պայմանավորված էին ժամանակի մարտահրավերներով, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Նախ. դա անցումային շրջանի իրավական համակարգ էր, որն աչքի էր ընկնում իր անկայունությամբ: Այդ իրավական համակարգում գերիշխում էր օտար իրավունքի ռեցեպցիան (փոխառությունը) հիմնականում՝ Ռուսական Կայսրության իրավունքից, ակնառու էին հիմնական (սահմանադիր) օրենքների սակավությունը, իրավական մշակույթի և օրենսդրական տեխնիկայի ցածր մակարդակը և այլն:

Այդուհանդերձ, կարելի է պնդել, որ Հայաստանի Առաջին Հանրապետության անցումային շրջանի իրավական համակարգն իր բացթողումներով հանդերձ հնարավորինս կատարեց իր առաքելությունը՝ պետական իշխանության և արդարադատության մարմինների կազմակերպման, երկրում ժողովրդավարական սկզբունքների և «հանրապետական» ձևի կառավարման ներդրման, օրինականության և իրավակարգի ամրապնդման, անձի իրավունքների պաշտպանության, քաղաքացիական շրջանառության և կրթական համակարգի հաստատությունների (օրինակ՝ պետական համալսարանի ստեղծման) կազմակերպման հարցերում: Առաջին Հանրապետության գոյությունը, ինչպես հայտնի է, ավարտվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ին՝ Հայաստանի Հանրապետության անկմամբ և նրա խորհրդայնացմամբ[12]:

Առաջին Հանրապետությունը ճանապարհ հարթեց երկրորդ՝ Խորհրդային, Հանրապետության ձևավորման ու զարգացման համար՝ իր իրավաքաղաքական արժեհամակարգով, «հանրապետական» ձևի կառավարմամբ, իշխանության ճյուղերի բաժանմամբ, ընտրությունների միջոցով իշխանությունների ձևավորմամբ, բազմակուսակցական և բազմակարծության քաղաքական համակարգի ներդրմամբ, հասարակական կյանքում սոցիալական արդարության սկզբնավորմամբ:

Հայոց պետականության պատմական ճակատագրին նախախնամված էր ևս մեկ ցնցում ապրել 1991 թ. ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո: Նախկին

[11] Տես *Գ. Ս. Ղազինյան, Ա. Գ. Վաղարշյան,* Նշ. աշխ., էջ 133:

[12] Տես *Ա. Խատիսյան,* Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը: Պէյրութ, 1968, էջ 327:

ԽՍՀՄ կազմի մեջ մտնող 15 հանրապետությունների անջատման գործընթացը տեղի էր ունենում արագ տեմպերով: 1990 թվականի օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց Անկախության հռչակագիրը: Իսկ մեկ տարի անց՝ 1991 թ. օգոստոսին, Հայաստանի Գերագույն խորհրդի նախաձեռնությամբ Հայկական սոցիոլոգիական ընկերակցությունը, անկախության հանրաքվեին ընդառաջ, հանրապետությունում անցկացրեց հասարակական կարծիքի հարցում: «Համաձա՞յն եք, որ Հայաստանը լինի անկախ ժողովրդավարական պետություն» հարցին բնակչության 64 %-ը տվել էր դրական պատասխան: Այդ պահին արդեն ակնհայտ էր, որ մեր բնակչության մեծ մասը Անկախության հանրաքվեի ժամանակ կտա դրական պատասխան: Ստացված արդյունքներից երևում էր, որ ավագ սերնդի ներկայացուցիչները (45 և բարձր տարիքի) այս հարցին վերաբերվում էին ավելի զգուշորեն, քան երիտասարդները: Պատճառները, ընդհանուր առմամբ, պարզ էին. Արցախի չլուծված խնդիրը, սահմանների անվտանգությամբ պայմանավորված անհանգստությունը, խոր տնտեսական ճգնաժամը, աղետալի երկրաշարժից վնասված բնակավայրերի վերականգնման դանդաղ տեմպերը: Մտավախություններ կային նաև երկու հարևան պետությունների հնարավոր ագրեսիայի կապակցությամբ: Ժամանակը ցույց տվեց, որ երկուսն էլ ճիշտ էին:

Ադրբեջանը դաժան պարտություն կրեց ու մեծ կորուստներ ունեցավ: Հայոց բանակը այն ժամանակ ազատագրեց ոչ միայն Լեռնային Ղարաբաղի մարզը, այլև մի շարք հարակից շրջաններ: Կարելի է ասել, վերջին մի քանի հարյուրամյակներում դա հայերի ամենամեծ ռազմական հաղթանակն էր:

Մեր հանրային գիտակցությունը կարճ ժամանակում ապրեց լուրջ զարգացում՝ նոր կարգերի քաջալերումից մինչև հիասթափություն և քաղաքական հուլություն. դժգոհություն ու հիասթափություն իշխանություններից, ինչպես նաև ընդդիմությունից, նույնիսկ անկախության՝ դարեր շարունակ փափագած գաղափարից: Ժողովուրդն ապրեց խոր քաղաքական օտարվածություն: Հասարակական կարծիքի ուսումնասիրությունները ցույց էին տալիս, որ զանգվածային գիտակցության մեջ «ուժեղ ձեռքի», ուժեղ իշխանության վերադարձի պահանջ կար: Նման իրավիճակի հետագա խորացումն ու զարգացումը հանգեցրեց 90-ական թվականների վերջում «համատարած կոնվերսիայի», կամ ուժեղ անձնիշխանության վերականգնմանը:

Սոցիալական իրավիճակը շարունակում էր մնալ լարված: Բնակչության 85 %-ը գտնվում էր աղքատության եզրին: Մոտ 25-30 %-ը օգնություն էր ստանում արտասահմանում ապրող բարեկամներից և ընտանիքի՝ երկրից դուրս մեկնած աշխատող անդամներից:

Վարչական ապարատի վերահսկող մարմիններում կոռուպցիան և կաշառակերությունը հասել էին վտանգավոր չափերի: Հայաստանում հաստատվել էր շուկայական տնտեսության վատթարագույն՝ ասիական, մոդելը: Ազատական-բուրժուական հեղաշրջման հետևանքով Հայաստանում, ինչպես և

ԱՊՀ այլ երկրներում իշխանության էին եկել խոշոր բիզնեսի շահերին ծառայող վարչակազմեր:

Տեղի ունեցավ հասարակության ուժեղ բևեռացում: Մի կողմից՝ հարյուրհազարավոր մարդիկ ընկան աղքատության գիրկը, մյուս կողմից՝ առաջ եկան տասնյակ նորաթուխ մեծահարուստներ: Հազարավոր մարդիկ ստիպված բռնեցին արտագաղթի ճանապարհը: Մեր հարցումներով՝ բնակչության 55 %-ը հոգեբանորեն պատրաստ էր հեռանալու պետությունից, եթե ունենար նման հնարավորություն:

Սակայն քաղաքական հարաբերություններում ժողովրդավարական նորամուծություններն ավելի խորը սերմանվեցին և առայժմ պահպանվում են: Մամուլի ու խոսքի ազատությունը դրա լավագույն վկայությունն է:

Անկախության ձեռքբերումներից ամենակարևորը, իհարկե, պատերազմական հաղթանակն ու Արցախի անկախացումն էր, ինչպես նաև մեր անկախ պետականության հետագա ամրապնդումն ու զարգացման երաշխիքը:

Հայ ժողովուրդը անցած դարի 90-ական թվականների առաջին տարիներին ծանրագույն լարվածությամբ, զրկանքներով, անմարդկային պայմաններին հերոսաբար դիմակայելով, իր զավակների մարտական սխրագործությունների ու կյանքի գնով նվաճեց Արցախի ազատությունը և հաստատեց իր պետական անկախությունը:

Ապագա պատմաբանները հայ ժողովրդի պատմության մեջ 20-րդ դարի հատկապես վերջին տասնամյակը կգնահատեն որպես «ոսկե դար», քանի որ նրանք կտեսնեն, որ հայերին հաջողվեց ունենալ երեք հսկա, դարաշրջիկ ձեռքբերում. վերականգնել ու պաշտպանել հայոց անկախ պետականությունը, ազատագրել Արցախ աշխարհը և միջազգայնացնել Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնախնդիրը: Մնացած բոլոր այն խնդիրները, որ այսօր մեզ հուզում են՝ բնակչության արտագաղթը, սոցիալական բևեռացումը, կյանքի ցածր կենսամակարդակը, կոռուպցիան, պատերազմի վտանգը, օրինականության պակասը, արդարության անկումը, բարոյական դեգրադացիան և շատ ու շատ այլ արատներ, հետագայում գուցե անխուսափելի մանրունքներ թվան, միգուցե միայն այսօրվա մանրադիտակով են հսկայական թվում:

Բացի այդ, այս բոլոր արատների հաղթահարումը հիմնականում կախված է իշխող ուժերի և օրվա իշխանությունների քաղաքական կամքից ու մեր ժողովրդի հավաքական վճռականությունից: 2018 թ. ապրիլ–մայիս ամիսների «թավշյա հեղափոխությունը» նոր շունչ ու հավատ հաղորդեց, նոր հեռանկարներ բացեց անկախ հայոց պետականության զարգացումների համար:

Ամփոփելով կարելի է ասել, որ հարյուր տարի առաջ սկզբնավորված հայոց անկախ պետականության կառուցումը շարունակվում է և մեր օրերում նոր հեղափոխական ընթացք է ստանում:

# СОЦИАЛЬНО-ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ВОССТАНОВЛЕНИЯ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

*Г. А. ПОГОСЯН, Академик НАН РА, доктор социологических наук, профессор, директор Института философии, социологии и права НАН РА,*
*Г. Г. САФАРЯН, доктор юридических наук, профессор, главный научный сотрудник Института философии, социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

100-летие Первой Республики Армения – это повод для переосмысления исторических достижений и беспристрастной оценки допущенных ошибок. Сто лет назад армянский народ, оказавшийся на грани физического уничтожения в результате проводимой Османской Империей геноцидальной политики, не только сумел выжить ценой жизни полутора миллионов своих сынов и дочерей, но в ответ на эту угрозу сумел воссоздать свое независимое национальное государство.

В сложной военно-политической обстановке, царившей на Южном Кавказе к концу Первой мировой войны, в условиях разрухи, голода, наплыва сотен тысяч беженцев, изгнанных со своей исторической родины – Западной Армении, в неравной борьбе с турецкими интервентами, армянский народ сумел создать на основе национального самосознания и демократических ценностей Первую Республику Армения. Этого права он добился в результате исторических побед, достигнутых в кровопролитных сражениях с превосходящими силами врага, готового и в Восточной Армении повторить Геноцид 1915 года. Эти победы стали началом новой эры четырех армянских государств – Первой Республики Армения, Второй, Третьей и Арцахской (Нагорно-Карабахской) Республик.

Исторической судьбой армянскому народу было уготовано еще одно серьезное испытание сразу после распада СССР. Будущие историки оценят последнее десятилетие двадцатого века как «золотой век» для армянского народа. Именно тогда армянам удалось обеспечить и закрепить три судьбоносных достижения: восстановить и защитить независимую государственность, освободить Арцах и интернационализировать вопрос признания Геноцида армян в Османской Империи.

«Бархатная революция» в апреле–мае 2018 года дала новый импульс, вдохнула уверенность в собственные силы и открыла неожиданные перспективы для демократического развития армянского государства, результатом чего является развернувшийся исторический процесс

революционного обновления страны и общества, в особенности – в социально-правовой сфере.

Таким образом, продолжаются начатое 100 лет назад строительство и дальнейшее укрепление независимой армянской государственности.

## THE SOCIAL AND LEGAL ASPECTS OF THE RESTORATION OF THE ARMENIAN STATEHOOD

*G. A. POGHOSYAN, Academician, NAS, RA, Doctor of Social Sciences, Professor, Director, Institute of Philosophy, Sociology and Law, NAS, RA,*
*G. H. SAFARYAN, Doctor of Law, Professor, Chief Research Fellow, Institute of Philosophy, Sociology and Law, NAS, RA*

SUMMARY

The 100th Anniversary of the First Republic of Armenia is an occasion for reviewing historical achievements, and impartially assessing the mistakes made. A hundred years ago, the Armenian people, being on the verge of physical elimination as a result of the genocidal policy pursued by the Ottoman Empire, not only managed to survive at the expense of the lives of its one and a half million sons and daughters, but it could recreate its own independent national state in response to that threat.

In the complex military and political situation that prevailed in the South Caucasus at the end of the World War I, in conditions of devastation, famine, influx of hundreds of thousands of refugees expelled from their historical homeland – Western Armenia, in an unequal struggle against Turkish interventionists, the Armenian people managed to create the First Republic of Armenia based upon national consciousness and democratic values. The Armenian people obtained that right owing to the historical victories won in bloody battles with superior numbers of enemy troops ready to re-commit the 1915 Genocide in Eastern Armenia as well. These victories were the beginning of a new era of four Armenian states – the First, the Second, and the Third Republics of Armenia, and the Republic of Artsakh (Nagorno-Karabakh).

The historical destiny had one more serious trial awaiting for the Armenian people right after the collapse of the USSR. Future historians will assess the last decade of the 20th century as a "golden age" for the Armenian people. It was then that the Armenians managed to secure and consolidate three crucial achievements: to restore and protect the independent statehood, to liberate Artsakh, and to internationalize the issue of recognizing the Armenian Genocide in the Ottoman Empire.

The Velvet Revolution in April – May, 2018, gave a new impetus, instilled self-reliance, and opened up nonpresumable perspectives for the democratic development of the Armenian state, which resulted in the unfolding historical process of the revolutionary renewal of the country and the society, especially in the socio-legal sphere.

Thus, the construction that began 100 years ago, and the further strengthening of the independent Armenian statehood carry on.

# ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
# ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

# ВИДЕНИЕ РАЗВИТИЯ
# ВООРУЖЕННЫХ СИЛ РА

# THE RA ARMED FORCES
# DEVELOPMENT VISION

# ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

*Դ. Է. ՏՈՆՈՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարար*

Հայաստանի Հանրապետության անվտանգային անկայուն միջավայրը, պետության և հասարակության առջև ծառացած մարտահրավերները, դրանցից բխող արտաքին, այդ թվում՝ անմիջական ռազմական բնույթի սպառնալիքները պահանջում են ունենալ հուսալի պաշտպանության համակարգ: Ի լրումն նախաձեռնողական արտաքին դիվանագիտության՝ այդ համակարգը Հայաստանի և Արցախի երաշխավորված, կայուն և տնտեսական զարգացումը խթանող պաշտպանունակության, Արցախի Հանրապետության բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովման, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում Հայաստանի և Արցախի համար բարենպաստ բանակցային պայմաններ ապահովելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ուժի դիրքերից հանդես գալու հիմնական գրավականն է:

Պաշտպանության համակարգի գերագույն նպատակը մարտունակ, ապաքաղաքականացված, հասարակության համակողմանի ներգրավմամբ և ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության ներքո գտնվող զինված ուժերի ձևավորումն է: Այսպիսի զինուժ ունենալու համար պահանջվում են զգալի՝ Հայաստանի Հանրապետության հնարավորությունների համեմատ ***անհամաչափ մեծ միջոցներ***, որոնք պետք է զուգակցվեն թափանցիկության բարձր չափորոշիչների, ուժերի և միջոցների առավելագույն արդյունավետ օգտագործման, վատնումների բացառման և բանակի նկատմամբ հասարակության լիակատար վստահության հետ:

Կառավարության ծրագրում հստակ ամրագրված է բանակաշինության և զինվորական ծառայության շուրջ հաստատված մթնոլորտի ու մոտեցումների արմատական փոփոխության հրամայականը՝ որպես Զինված ուժերի մարտունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն միջոց: Այս գերխնդրի իրագործման համար պաշտպանության համակարգում մենք պետք է անցնենք իմացական վերափոխում՝ ***պարտականության զգացողությունը*** փոխարինելով ***առաքելության զգացողությամբ***: Սա վերաբերում է պաշտպանության ոլորտի անձնակազմի անխտիր բոլոր կատեգորիաներին՝ գեներալներից ու սպաներից մինչև կրտսեր և ավագ ենթասպաներ ու շարքայիններ, հայեցողական պաշտոններ զբաղեցնող

պաշտոնյաներից և քաղաքացիական հատուկ ծառայողներից մինչև բանվոր-ծառայողներ: Պարտականության զգացողությունը մարդու մեջ սերմանում է մշտապես վերադասի հրահանգներին սպասելու, իսկ անգործության պատճառով առաջադրանքը ձախողելու դեպքում՝ նման հրահանգ չստանալու պատճառաբանությամբ արդարանալու մշակույթ: ***Տրամագծորեն հակառակ մշակույթ է ձևավորում առաքելությունը***. այն ենթադրում է տվյալ գործին, ձեռնարկին կամ հղացմանը սեփականության իրավունք, երբ նպատակի իրականացման պատասխանատվությունը հավասարաչափ դրված է պաշտպանության նախարարի և կրտսեր ծառայողի, գեներալի և շարքայինի վրա, և երբեմն սեփական կարգապահ նախաձեռնողականությունդ կարող է ունենալ հիրավի ***ռազմավարական նշանակության բարենպաստ հետևանքներ***:

Հետևելով այս տրամաբանությանը՝ բոլորս պետք է առաջնորդվենք մեր պետության և ժողովրդի առաջ ունեցած պատմական առաքելության գիտակցումով: Ղեկավար պաշտոն զբաղեցնող ցանկացած անձ, առանց բացառության, պետք է գիտակցի, որ իրեն վստահված այս առաքելությունը լավագույնս իրականացնելու համար պետք է գերազանցություն դրսևորի երկու առանցքային գործառույթում:

***Առաջինը դա ենթականերին առաջնորդելն է***: Առաջնորդիր սեփական օրինակով, մարդկանց խրախուսիր ըստ արժանիքների, պատժիր արդարացի կերպով, սահմանիր հստակ առաջադրանք, տուր դրա իրականացման խելամիտ ուղղորդում, թույլ տուր կարգապահ նախաձեռնողականություն՝ միաժամանակ վերահսկելով առաջադրանքի կատարումը և չխուսափելով ընդհանուր պատասխանատվությունից, և վերջապես՝ հանդուրժող եղիր ոչ էական վրիպումների համար, և կտեսնես, որ ձևավորել ես բարձր կատարողականությամբ թիմ՝ դրա անդամների բնավորության, խորագիտակության և հանձնառության առողջ հավասարակշռմամբ:

***Երկրորդ առանցքային գործառույթը միջոցների մտապատկերումն է***, դրանց պլանավորումը, ձեռքբերումը, հատկացումը և օգտագործման վերահսկողությունը: ***Նախևառաջ պետք է գիտակցենք, որ Հայաստանի մարդկային ռեսուրսները սահմանափակ են, հետևաբար հայոց զինուժի զինվորն ու սպան պետք է շեշտը դնեն ոչ թե քանակական առավելության, այլ որակական գերազանցության վրա:*** Յուրաքանչյուր հրամանատար և պաշտոնյա պետք է առաջնորդվի հասարակության և պետության կողմից հատկացված մարդկային, նյութական, ֆինանսական և այլ ռեսուրսները պետության և հասարակության անվտանգության ապահովմանը առավելագույն արդյունավետությամբ ծառայեցնելու գիտակցումով: Ռեսուրսների ոչ նպատակային, ոչ արդյունքային, ոչ խնայողաբար և անարդյունավետ ծախսը հատկապես վնասակար ազդեցություն է գործում Հայաստանի նման սահմանափակ ֆինանսական հնարավորություններ և

համեմատաբար մեծ զինված ուժեր ունեցող երկրների վրա: Բոլորս պետք է գիտակցենք, որ հասարակության կողմից Զինված ուժերին հատկացված նյութատեխնիկական և ֆինանսական միջոցները քաղաքացիների՝ սեփական սոցիալական, կրթական, առողջապահական և մյուս ոլորտներից խնայված և անվտանգության ապահովման առաջնահերթությունից ելնելով մեզ տրամադրված ռեսուրսներ են: Այս հարցն էլ ավելի է կարևորվում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն ունեցող երկրներում, երբ պետությունը պատասխանատվություն է կրում զինվորի կենցաղային պայմանների, սննդի, հագուստի, հանգստի և ժամանցի պայմանների ու մի շարք այլ խնդիրների համար: Այս տեսանկյունից յուրաքանչյուր հրամանատար պետք է գիտակցի ծնողների կողմից իրեն վստահված զորակոչիկների կյանքի, անվտանգության և բարեկեցության ապահովման բարձր պատասխանատվությունը: ***Մյուս կողմից՝ յուրաքանչյուր ժամկետային զինծառայող պետք է գիտակցի, որ լինելով հայրենիքի պաշտպան, ինքն այլևս չի գտնվում ծնողների և հարազատների խնամքի տակ, և ֆիզիկական ու հոգեպես պատրաստ լինի պատվով կրելու զինվորական ծառայության դժվարությունները և սահմանափակումները:***

Ինչքան էլ հզոր ռազմական տեխնիկա և մեծաթիվ անձնակազմ ունենաս, միևնույն է, դատապարտված ես ձախողման, եթե բանակումդ չի տիրում անհրաժեշտ արդարության, նվիրվածության և համախմբվածության մթնոլորտ: Այս հատկանիշները չեն ձևավորվում ինքնին, այլ կախված են առկա բացասական երևույթները կամ դրանց վերապրուկները արմատախիլ անելուն և դրական դրսևորումները ամրապնդելուն ուղղված ամենօրյա աշխատանքի հաջողությունից: Կոռուպցիոն որևէ դրսևորում տեղ չպետք է ունենա բանակում: ***Կոռուպցիան ինքնին չարիք է*** պետության կենսագործունեության ցանկացած ոլորտում, սակայն այն կրկնակի աղետ է ռազմական բնագավառում, աղետ, որը չսանձահարման դեպքում կարտահայտվի մարտի ժամանակ խափանված կրակոցի, հավաքակայանից դուրս գալ չկարողացող տեխնիկայի, զինվորի համար անհրաժեշտ կալորիականություն չպարունակող սննդի տեսքով: Այնպես որ՝ բանակի շարքերում բարեվարքության ամրապնդման, անհրաժեշտ հաշվետվողականության զարգացման աշխատանքները պետք է լինեն ղեկավար կազմի ուշադրության կիզակետում:

Պաշտպանության բնագավառում և զինված ուժերում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու, դրանք կառավարելու և բարեվարքության նորմերն ամրապնդելու համար պետք է մշակվեն նաև *նյութատեխնիկական ռեսուրսների կառավարման, այսինքն՝ պլանավորման, գնումների, սպառման, վերահսկման և հաշվետվողականության թափանցիկ ընթացակարգեր: Այս ընթացակարգերը կոչված են* երաշխավորելու պաշտպանության ռազմավարության առաջնահերթությունների հիման վրա ռեսուրսների բաշխումը և կարողությունների ձևավորումը, կառավարման և բյուջետային որոշումների

ներդաշնակեցումը, բյուջետային ծրագրերի՝ նյութատեխնիկական առումով կայունությունը և մրցակցող պահանջների միջև ռացիոնալ որոշումների կայացումը: Եվ քանի որ առկա անվտանգային միջավայրում Զինված ուժերի պահանջները հիմնականում գերազանցելու են պետության տնտեսական հնարավորությունները, պետք է ռեսուրսների կառավարման ոլորտում իսպառ վերացնենք տեղայնական շահերի ազդեցությունը, երբ զինված ուժերի այս կամ այն բաղադրիչն իր կարիքները ներկայացնելիս դրանք չի դիտարկում մարտական կարողությունների ընդհանուր տարրապատկերում, միաժամանակ խուսափելով ռազմական գիտության տեսանկյունից չհիմնավորված այնպիսի ձեռքբերումներից՝ լինեն դրանք համակարգերի, համալիրների, ապրանքների կամ ծառայությունների տեսքով, որոնք պարունակում են վաղաժամ բարոյապես հնանալու կամ ձեռքբերման համար ոչ մատչելի դառնալու ռիսկեր:

Զինված ուժերի կարևորագույն խնդիրներից է նաև պաշտպանության համակարգի և Զինված ուժերի՝ ապաքաղաքական լինելու և քաղաքական չեզոքության պահպանման սահմանադրական պահանջի իրագործումը: Այս առումով արդեն հիշատակված իմացական վերափոխման արգասիքներից պետք է լինի նաև այն, որ բանակը գործնականում զերծ մնա քաղաքական և ընտրական գործընթացների վրա որևէ հնարավոր ապօրինի ազդեցությունից կամ հակառակը՝ ինքը ուղղորդված կերպով չազդի ընտրությունների արդյունքների վրա: Լինելով համազգեստ կրող քաղաքացիներ՝ զինծառայողները երկրի իշխանության ձևավորման գործընթացին մասնակցելու իրենց իրավունքը պետք է իրացնեն բացառապես ընտրությունների ժամանակ ազատ կամարտահայտության միջոցով և զինվորականներին հարիր կարգապահ կերպով՝ առանց որևէ ապօրինի ներգործության: ***Այս նպատակով առաջիկայում կմշակվեն առաջարկություններ ՀՀ Ընտրական օրենսգրքում ՀՀ Զինված ուժերում նախընտրական քարոզչության իրականացման մեխանիզմներ սահմանելու վերաբերյալ***:

***Միաժամանակ, չպետք է մոռանալ, որ բանակը հասարակության անբաժանելի մասն է և պետք է առավելագույն թույլատրելի սահմաններում թափանցիկ լինի քաղաքացիական հանրության համար: Հասարակության լայն շերտերի, լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների կողմից զինված ուժերում առկա խնդիրների վերհանումը կապահովի անկողմնակալ կարծիքի հաշվառմամբ ընդլայնված մտքերի փոխանակում՝ նպաստելով առավել արդար և արդյունավետ լուծումների որոնմանը և կենսագործմանը:***

Կառավարության ծրագիրը նախատեսում է նաև ճշգրտումների կատարում Զինված ուժերի զարգացման պլանում և սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրում: Որպես պաշտպանության ոլորտի ռազմավարական նշանակության երկու հիմնական ուղեցույցներ,

այս փաստաթղթերը կարիք ունեն ինչպես իրենցում պարփակված հայեցակարգային դրույթների՝ նոր քաղաքական առաջնահերթություններին և պաշտպանության կազմակերպման մոտեցումներին համապատասխանեցման, այնպես էլ կատարված աշխատանքների միջանկյալ վերստուգման և խնդիրների թարմացման: Նորացված փաստաթղթերի վերջնանպատակը կլինի զինված ուժերի մարտական կարողությունների և անձնակազմի մարտական վարպետության բարձրացումը, որին հասնելու համար կպլանավորվեն որոշ ոլորտներում ռեսուրսների ավելացման, այլ ոլորտներում դրանց ծախսի արդյունավետության բարձրացման, մեկ այլ տեղ՝ խնայողության ռեժիմի անցման միջոցառումներ՝ հասնելով պաշտպանության համակարգում ընդհանուր արդյունքայնության բարձրացման:

Որպես պաշտպանության ոլորտի և Զինված ուժերի զարգացման առաջնահերթություններ, անդրադառնամ հետևյալ խնդիրներին.

**Առաջնահերթություն 1.**

***Զինված ուժերի համալրումը անհրաժեշտ քանակի և ժամանակակից սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և նյութատեխնիկական միջոցներով, ռազմական կառավարման արդիական սկզբունքների և համակարգերի ներդրումը և անձնակազմի մարտական վարպետության բարձրացման նոր չափանիշների սահմանումը:*** Այստեղ մեր վերջնանպատակն է բանակի մարտունակության մակարդակի համապատասխանեցումը ռազմական սպառնալիքների մակարդակին և հավանական պատերազմի բնույթին՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ զինված ոտնձգությունը զսպելու և կանխելու, իսկ պատերազմի ժամանակ՝ ռազմական գործողությունները հնարավորինս վաղ փուլում և ՀՀ-ի համար շահավետ պայմաններով դադարեցնելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորմամբ:
Մեր թիվ մեկ խնդիրն է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման համար բարենպաստ ռազմական պայմանների ստեղծումը: Մենք թույլ չենք տալու, որ հակամարտության կարգավորման գործընթացում, ինչքան էլ այն երկարաձգվի, հակառակորդը մեզ հետ խոսի ուժի դիրքերից և հետամտի առավելապաշտական նպատակներ: Սահմանին որևիցե, այսպես ասած ապակառուցողական դրսևորում՝ լինի դա դիվերսիոն ներթափանցումների, դիպուկահար կրակի, դիրքային փոփոխությունների և լայնածավալ հարձակման համար ուժերի կուտակումների տեսքով, արժանանալու է կտրուկ և սթափեցնող պատասխանի: Դա անելու համար մենք շարունակելու ենք հետևողականորեն զարգացնել Զինված ուժերի մարտական կարողությունները, հակառակորդի նկատմամբ ճիշտ պահին, ճիշտ տեղում և ճիշտ ձևաչափով անհրաժեշտ ազդեցության ներուժը պահպանելու և էլ ավելի զարգացնելու համար: Խնդիրներն արդեն առաջադրված են, կարողությունները՝ ձևավորված, և մենք աշխատում ենք դրանք էլ ավելի հզորացնելու ուղղությամբ:

Զինված ուժերի երկարաժամկետ արդիականացման գործընթացը ներառելու է ռազմական հզորության բոլոր ոլորտները՝ առաջնագծում մարտական հերթապահությունից, հեռահար միջոցներով զսպումից, մարտական պատրաստությունից սկսած և վերջացրած ռազմական կառավարման համակարգով, մարտ վարելու նոր եղանակներով և կրթությամբ: Անշուշտ, առանցքային նշանակություն ունի Զինված ուժերի զինանոցի համալրումը արդիական սպառազինությամբ, և այս գործում մեր աշխատանքներն իրականացնելու ենք ինչպես դաշնակից ու գործընկեր պետությունների հետ ռազմատեխնիկական համագործակցության իրականացման, այնպես էլ՝ հայրենական ռազմարդյունաբերության զարգացման շրջանակներում: Մեր վարած ռազմատեխնիկական և ռազմաարդյունաբերական քաղաքականությունը նախ մտասևեռված է *Զինված ուժերի հարվածային և կրակային խոցման հեռավորության, ճշգրտության և արդյունավետության ավելացման վրա, որի համար նախատեսվում է շարունակել* բանակի զինանոցի համալրումը *գերճշգրիտ հեռահար հրթիռային հարվածի, հրետանային խոցման և հակաօդային պաշտպանության* ժամանակակից զինատեսակներով, ***ինչպես նաև առաջնահերթ բազմաֆունկցիոնալ ավիացիայով***:

Գերակա խնդիր է նաև Զինված ուժերի կառավարման համակարգի և կառավարման մշակույթի արդիականացումը: Այդ համակարգը պետք է ունենա ժամանակակից ռազմական գործողություններ վարելու համար բավարար օպերատիվություն, կենսունակություն, շարժունակություն և տեխնոլոգիական հագեցվածություն: Այս խնդրի կատարման համար, բացի տեխնիկական լուծումներից, շարունակվելու է նախաձեռնողականության, արագ կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու և դրանցով գործելու խթանմանը միտված «Հրամանատրում առաջադրանքի միջոցով» կառավարման ու ղեկավարման սկզբունքի ներդրումը: Այս սկզբունքի էությունը հետևյալն է. տուր ենթականերիդ անհրաժեշտ ռեսուրսներ, ուժեր և միջոցներ, խելամիտ ուղղորդում և վստահություն, և կտեսնես, որ տեղում նրանք կգտնեն ավելի լավ լուծումներ և ամենակարևորը՝ կիրականացնեն դրանք ավելի օպերատիվ կերպով, քան եթե դու փորձես որոշել բոլորի փոխարեն, միաժամանակ չտեսնելով յուրաքանչյուր առանձին հրամանատարի պատասխանատվության գոտում ծագած իրավիճակի առանձնահատկությունները:

Ոչ պակաս կարևոր է *ռազմական գործողությունների վարման ձևերի ու եղանակների, այսինքն՝* ***ռազմարվեստի արդիականացումը և ապակենտրոնացված ու տարապեղված գործողություններ վարելու կարողությունների ձևավորումը՝*** Զինված ուժերի պատրաստությունը հավանական պատերազմի բնույթին համապատասխանեցնելու, որոշումների կայացման և գործողությունների իրականացման փուլերում հակառակորդի նկատմամբ առաջանցում ապահովելու նպատակով:

*Եվ իհարկե, առաջնահերթ նշանակություն ունի* ***ռազմաարդյունաբերական համալիրում ներդրումների խթանման և համատեղ ձեռնարկությունների ստեղծման քաղաքականության վարումը՝*** *հարկային և վարչարարական ընթացակարգերի բարելավման, օտարերկրյա ներդրումների ներգրավման և հանրային, մասնավոր ու միջազգային կոոպերացիայի սկզբունքով համատեղ ձեռնարկությունների ստեղծման միջոցով: Պաշտպանության նախարարությունը խթանելու է համապատասխան արտադրական կարողությունների ստեղծումը, գիտահետազոտական և կիրառական գիտության զարգացումը և գիտատեխնիկական մասնագիտական ներուժի ավելացումը՝ սպառազինության ու ռազմական տեխնիկայի մշակմանը, արտադրությանը, շահագործմանը, նորոգմանն ու արդիականացմանն ուղղված պետական պաշտպանական պատվերի՝ սեղմ ժամկետներում կատարումն ապահովելու նպատակով:*

**Առաջնահերթություն 2.**

***Հակառակորդի հետ անմիջական շփման բնագծերի շարունակաբար համալրումը արդիական տեխնիկական միջոցներով և մարտական խնդիրների կատարման արդյունավետության բարձրացումը***: Մենք պետք է առավելագույնի հասցնենք մի կողմից՝ հակառակորդի դիպուկահար կրակի, դիվերսիոն ներթափանցման և հարձակման նախապատրաստման փորձերի բացահայտման, հավաստանշման, թիրախորոշման և կրակային խոցման կարողությունները և մյուս կողմից՝ յուրային անձնակազմի քողարկման, պատսպարման և պաշտպանվածության աստիճանը:

Այս համատեքստում գերակա խնդիր է մարտական հերթապահության կրման պայմանների կատարելագործումը և անձնակազմի անվտանգության աստիճանի բարձրացումը: Պետք է աստիճանաբար քայլեր ձեռնարկենք առաջնագծում մեր կողմից կիրառվող ստատիկ պաշտպանությունը տեսադիտարկման և այլ հետախուզական սարքավորումներով և հեռակառավարվող խոցման միջոցներով հագեցած ***տարաշարժուն-ճկուն*** պաշտպանությամբ փոխարինելու ուղղությամբ: Պաշտպանության այս տեսակի միջոցով զգալիորեն կնվազի անձնակազմի՝ հակառակորդի նշանառու կրակի տակ գտնվելը, կբարձրանա անձնակազմի պաշտպանվածության և դիմակայունության աստիճանը և կավելանա հակառակորդի դիվերսիոն խմբերի դարանակալման և ոչնչացման հավանականությունը: Այս նպատակով, ի թիվս այլ ուժերի և միջոցների, ստեղծվում են հակառակորդի օպերատիվ դասավորության ամբողջ խորությամբ և ռազմավարական մակարդակում նրա մտահղացումների վաղ հայտնաբերմանն ուղղված զորային, տեխնիկական ու գործակալական հետախուզական և վերլուծական կարողություններ:

**Առաջնահերթություն 3.**

***Անձնակազմի հետ տարվող աշխատանքների որակի և արդյունավետության էական բարձրացումը:*** Այստեղ մեր վերջնանպատակն է Զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստվածության մակարդակի ու կարգապահության ամրապնդումը, բանակում մարդու իրավունքների պաշտպանության ապահովումը, ոչ կանոնագրային հարաբերությունները նվազագույնի հասցնելը, զինծառայողների արժանապատվության խոցման դեպքերի, ինքնավնասման և ինքնասպանության փորձերի առավելագույնս կասեցումը:

Մեր գերակա խնդիրն է զինված ուժերում մարդու իրավունքների ապահովումը երաշխավորելու նպատակով իրականացնել զինծառայողների իրազեկվածության և իրավագիտակցության բարձրացման, թափանցիկության ընդլայնման և ծառայողական քննությունների պարզեցման աշխատանքներ:

**Առաջնահերթություն 4.**

***Զինծառայողների կրթության շարունակականության ապահովումը զինվորական ծառայության ողջ ընթացքում:*** Մենք պետք է հետևողական աշխատանքներ տանենք զինծառայողի կրթական ցենզի բարձրացման և ինտելեկտուալ մակարդակի աճի ուղղությամբ՝ որպես Զինված ուժերի զարգացման ռազմավարության կարևորագույն ուղղություն:

Մեր վերջնական նպատակն է բանակում արհեստավարժության և բարոյականության նոր չափանիշների ձևավորումը՝ հմուտ, պատվախնդիր ու առաջնորդ սպայական կազմով և վարժված, կրթված, շարժառիթավորված ու մարտունակ զինվորներով, որի համար ձեռնարկելու ենք քայլեր Զինված ուժերի մասնագիտական ինքնությունը և վարկանիշը ամրապնդելու ուղղությամբ, ընդհուպ՝ մինչև ազգային արժեքները խորհրդանշող նոր համազգեստի ներմուծումը:

Կրթությունը անքակտելիորեն կապված է անձնակազմի կառավարման հետ: Պաշտպանության համակարգում ընթացող կադրային փոփոխությունները իրականացվելու են պետական կառավարման և քաղաքացիական հանրության կարող ուժերը ներգրավելու և առկա պրոֆեսիոնալ ռեսուրսը լավագույնս օգտագործելու փոխլրացնող ուղղություններով: Պաշտպանության նախարարությունը ղեկավարությունը կյանքի է կոչելու արժանիքների վրա հիմնված ծառայողական առաջխաղացման քաղաքականություն, ավելի ու ավելի պատասխանատու պաշտոններ վստահելով ուժեղ բնավորություն, առաջնորդական որակներ, մասնագիտական խորագիտակություն և առաքելության նկատմամբ հանձնառություն ունեցող պրոֆեսիոնալ զինվորականներին և աշխատակիցներին:

**Առաջնահերթություն 5.**

***Զինծառայողների պատշաճ և ամբողջական նյութական բավարարումը:*** Մենք պետք է երաշխավորենք բոլոր կարգի զինծառայողների իրավունքների պաշտպանվածության, թիկունքային, նյութատեխնիկական և բժշկական պատշաճ ապահովումը՝ որպես Զինված ուժերի ղեկավարության, պետական ու հասարակական վերահսկողության ու հոգածության առարկա:

Մեր խնդիրն է զինծառայողներին հատկացվող իրային միջոցների՝ համազգեստի, ներքնազգեստի, հիգիենայի ապահովման պարագաների որակական և քանակական ցուցանիշների, ինչպես նաև սննդակարգի բարելավումը: Այս ուղղությամբ առաջիկայում պաշտպանության նախարարությունում կմշակվի համապատասխան չափորոշիչների բարելավման վերաբերյալ առաջարկությունների փաթեթ և կներկայացվի ՀՀ կառավարություն: Պետք է աշխատենք նաև մի շարք ապահովման ծառայություններ օտարելու ուղղությամբ՝ հիմքում ունենալով դրանց որակի կտրուկ բարձրացումը և կոռուպցիոն երևույթների բացառումը:

**Առաջնահերթություն 6.**

***Զինծառայողների սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացումը, բնակարանային, բժշկական ապահովման և այլ ծրագրերի իրականացումը:*** Բանակի բարոյահոգեբանական պատրաստվածությունը չի լինի բարձր մակարդակի վրա, եթե զինծառայողների համար չլինեն պատշաճ սոցիալական ապահովման պայմաններ՝ սկսած արժանավայել դրամական բավարարումից, հանգստի ու ժամանցի պայմաններից և վերջացրած բուժապահովմամբ: Իհարկե, ինչպես արդեն նշվել է, պետության տնտեսական ներուժի համեմատ մեծաքանակ բանակ ունենալու հանգամանքը ինքնին առաջ է բերում ֆինանսական սահմանափակումներ, սակայն խելամիտ լուծումների, «վատնող արտահոսքը» կասեցնելու և գործառույթներն ավելի օպտիմալ բաշխելու միջոցով պաշտպանության նախարարությունում անելու ենք ամեն ինչ զինծառայողի կենսապայմանները և նրա հոգևոր գոհունակությունը բարելավելու համար:

Պաշտպանության նախարարության գերակա խնդիրն է *ծառայության մեջ գտնվող և նախկին զինծառայողների ու քաղծառայողների, զինվորական հաշմանդամների, զոհված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամների համընդգրկուն սոցիալական ապահովման ծրագրերի իրականացումը, զինծառայողների բժշկական ապահովման համակարգի վերափոխումը՝ առաջին բուժօգնության ցուցաբերումից և մարտի դաշտից տարհանումից մինչև հոսպիտալային օղակում որակյալ բուժում ստանալը: Այս համատեքստում արդեն իսկ ավարտական տեսքի է բերվում* արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման «Մատչելի բնակարան զինծառայողին» պետական աջակցության նպատակային ծրագիրը, որը բեկումնային լուծում կապահովի բոլոր զինծառայողների (առանց

տարիքային սահմանափակումների) սոցիալական պաշտպանվածության ոլորտի այս կարևոր հիմնախնդրին: Եվ իհարկե, աչքաթող չի արվում պաշտպանության ոլորտի անձնակազմի դրամական բավարարման մակարդակը բարձրացնելու հարցը, որին լուծում կտրվի Հայաստանում տնտեսական աճի և պետական բյուջեի եկամտային մասի ավելացմանը զուգընթաց:

**Առաջնահերթություն 7.**

***Միջազգային ինտեգրման և հավաքական անվտանգության գործող ընթացակարգերի հնարավորությունների ընդլայնումը:*** Այս նպատակի վերջնարդյունքն է ռազմաքաղաքական դաշինքների և գործընկերությունների զարգացումը՝ պահպանելով ՀՀ ազգային շահերից բխող և առկա ռազմաքաղաքական ընդհանրությունների վրա հիմնված հարաբերությունների ձևավորման հավասարակշռությունը:

Մենք մեր հակառակորդի հետ չենք գտնվում քաղաքական վակուումում, այլ շրջապատված ենք տարատեսակ, երբեմն հակադիր օրակարգեր ունեցող պետությունների և միջազգային կազմակերպությունների հանրույթով: Նրանից, թե որքանով ճիշտ կկարողանանք նավարկել միջազգային հարաբերությունների այս հորձանուտով, կախված է արտաքին անվտանգության հարցերում ՀՀ շահերից բխող դիրքորոշումների ձևավորման, մեր բարեփոխումներին աջակցության, մեր բանակի հեղինակության ամրապնդման հաջողությունը:

Մեր գերակա խնդիրն է դաշնակցային և գործընկերային պաշտպանական համագործակցությունը զարգացնելու, բովանդակային և աշխարհագրական պատկերը բազմազանեցնելու ուղղությամբ քայլերի ձեռնարկումը, միջազգային համագործակցության նպատակաուղղումը բազմակողմ և երկկողմ հարթությունում ռազմաքաղաքական հարաբերությունների, ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ու փոխգործունակության ամրապնդման բաղադրիչների զարգացմանը:

Սա պաշտպանության նախարարի տեսլականն էր Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում պաշտպանության համակարգի և զինված ուժերի համար սահմանված նպատակների, առաջնահերթությունների և գերակա խնդիրների իրագործման վերաբերյալ: Վստահ եմ, որ պաշտպանության համակարգի անձնակազմն իր մասնագիտական խորագիտակության և հմտությունների ոլորտներում կգտնի էլ ավելի արդյունավետ գործնական լուծումներ, որոնք ամբողջարկվելով պետության և բանակի ղեկավարության ուղեցույցում, կապահովեն մեր ընդհանուր առաքելության պատվով կատարումը: Իսկ այս առաքելության կատարման գործում բանիմացության, արդարամտության, նվիրվածության և համախմբվածության կատարելատիպ դառնալու ձգտումը չունի այլընտրանք:

# ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

Հայաստանի Հանրապետության Վարչապետ
Նիկոլ Փաշինյանի ելույթը
Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում

երկրորդ շարքում. ձախից աջ՝
Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ,
Հայաստանի Հանրապետության Նախագահ Արմեն Սարգսյան,
Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյան,
Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար
Դավիթ Տոնոյան

Սարդարապատ, 2018 թ. մայիսի 28

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏՆԵՐ



Հովհաննես Քաջազնունի
(Իգիթխանյան) (1868–1938)
պաշտոնավարել է՝
07.06.1918 – 07.08.1919 թթ.



Ալեքսանդր Խատիսյան
(1874–1945)
պաշտոնավարել է՝
07.08.1919 – 05.05.1920 թթ.

Համազասպ (Համո)
Օհանջանյան (1873–1947)
պաշտոնավարել է՝
05.05.1920 – 23.11.1920 թթ.

Սիմոն Վրացյան
(1882–1969)
պաշտոնավարել է՝
23.11.1920 – 02.12.1920 թթ.

# ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՀԵՐՈՍՆԵՐ

Ամենայն Հայոց Կաթողիկոս
Գևորգ Ե Սուրենյանց

Գեներալ-լեյտենանտ
Թովմաս Նազարբեկյան

Գեներալ-լեյտենանտ
Մովսես Սիլիկյան

Գնդապետ Դանիել
Բեկ-Փիրումյան

Գնդապետ Պողոս
Բեկ-Փիրումյան

Ապագա ԽՍՀՄ մարշալ
Հովհաննես Բաղրամյան

Գնդապետ
Ալեքսեյ
Պերեկրյոստով

Կապիտան (հետագայում՝
հրետանու գեներալ-
լեյտենանտ)
Նիկոլայ Կլիչ

Եզդիական գնդի
հրամանատար
Ջհանգիր աղա

# ԴՐՎԱԳՆԵՐ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Հայաստանի անկախության տարելիցին նվիրված զորահանդես

Երևան, 1919 թ. մայիսի 28

89-րդ Հայկական Թամանյան դիվիզիան Բրանդենբուրգյան դարպասների մոտ

Բեռլին, 1945 թ. մայիս

Հայաստանի Առաջին Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված տոնակատարություն

Սարդարապատ, 2018 թ. մայիսի 28

# ՀՀ-ՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՌԱՁԱՎՈՐ ՄԻՁԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ

*Ա. Մ. ԴԱՎԹՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ*

## ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայտնի ռուս ռազմական տեսաբան Ի. Վորոբյովը նշում է, որ «Արդի պայմաններում մարտում հաջողության հասնելու գործում կառավարային գործոնն իր նշանակալիությամբ օրինաչափորեն հավասարեցվում է նյութական գործոնին (զորքի և սպառազինության թվաքանակին ու որակին), իսկ դիմամարտող կողմերի կառավարման մակարդակները դիտվում են որպես նրանց մարտական հնարավորությունների կարևոր ցուցիչներ և մարտական միջոցների հարաբերություն»[1]: Ընդսմին օպերացիաներում (մարտերում) զորքերի ու զենքի կառավարման դերը գնալով աճում է՝ պայմանավորված զինված պայքարի որակապես նոր միջոցների, առաջին հերթին՝ գերճշգրիտ զենքի անընդհատ կատարելագործմամբ, տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների զարգացմամբ ու տարածմամբ: Դրա դերն ավելի վճռորոշ է սուղ մարդկային ու նյութական ռեսուրսներ ունեցող պետությունների համար, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը:

Մարտական կառավարումը ռազմական կառավարման կարևոր բաղադրիչն է, իսկ վերջինս, լինելով պետական իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց իշխանական-կարգադրիչ գործառույթ, զինվորական գործունեությամբ զբաղված մարդկանց կառավարումն է: Որոշ ռուսաստանցի ռազմագետների կարծիքով՝ ռազմական կառավարումն ինքը ռազմարվեստի բաղկացուցիչ մաս է և ապահովվում է տարբեր նախանշանակումների ու բնույթների բաց ռազմական կազմակերպատեխնիկական համակարգերի և կառավարման ավտոմատացված համակարգերի ստեղծման ու գործառման միջոցով[2]:

Այսպիսով՝ ռազմական կառավարումը հատուկ տեսակի կառավարում է, որն

---

[1] *И. Н. Воробьев.* Тактика – искусство управления. «Военная мысль», 2002, № 6.

[2] Տես *О. А. Бельков*. Военное управление: политологический ракурс. М., 2005 (http://viperson.ru/articles/belkov-o-a-voennoe-upravlenie-politologicheskiy-rakurs):

ապահովում է պետության այնպիսի ռազմական կազմակերպվածքի ստեղծումը, պահպանումն ու զարգացումը, որը քանակապես ու որակապես համապատասխանում է գոյություն ունեցող սպառնալիքներին ու դրանց հաղթահարմանն ուղղված գործունեության ծավալմանը:

Ռազմական կառավարման օբյեկտներ են պետության պաշտպանական ոլորտը և ռազմական կազմակերպվածքը, հետևաբար նաև ռազմական անվտանգության ապահովման շահերով պայմանավորված՝ բնակչությունը, տարածքը, տնտեսությունը, հասարակական հարաբերությունների և հաստատությունների ամբողջ համակարգը[3]:

Ռազմական կառավարումն իրագործվում է իր համակարգի միջոցով, որը կազմում են կառավարման մարմինները, կառավարման կետերը և կառավարման տեխնիկական հիմքը:

Ռազմական կառավարումն իրագործվում է զանազան մակարդակներում, որոնք տարբեր հեղինակներ յուրովի են որոշարկում: Մեր կարծիքով՝ առավել նպատակահարմար է օգտագործել ռազմական կառավարման մակարդակների այն դասակարգումը, որի սկզբունքները քաղաքագիտական տեսանկյունից մշակել է Օ. Բելկովը[4]. *ռազմական քաղաքականություն*, *զորքերի կառավարում*, *զինվորական կադրերի այն կառավարչական գործունեությունը, որն ուղղված է ՀՈՒ-ի առջև դրված այլ (զորքերի կառավարմանը չառնչվող) խնդիրների լուծմանը*, *զորքերի գործունեության բարոյահոգեբանական ապահովում:*

Ըստ Արևմուտքում ընդունված մոտեցման՝ ռազմական կառավարումը լինում է երկու տեսակի՝ վարչական (վարչատնտեսական) և օպերատիվ:

*Վարչական կառավարումն* իր բովանդակությամբ ու իրավական կարգավորման ձևերով նման է պետական կառավարման մյուս ոլորտներին և ներառում է զորքերի պատրաստման կազմակերպումը, նրանց նյութատեխնիկական ապահովումը, կադրերի ընտրությունն ու բաշխումը, զինծառայողների միջև փոխհարաբերությունների կարգավորումը և այլն[5]:

*Օպերատիվ կառավարումը* զորքերի (ուժերի) մարտական գործողությունների կառավարումն է: Դրա հիմքը հրամանատարությունն է, այսինքն՝ զինված պայքարի ղեկավարումը[6]:

Օպերատիվ կառավարման հիմնական կազմակերպահրավական սկզբունք-

---

[3] Տես *Բ. Ֆ. Савченко*. Теория военного управления: история и современность. «Военная мысль», 2007, № 11 (http://militaryarticle.ru/voennaya-mysl/2007-vm/10070-teorija-voennogo-upravlenija-istorija-i):

[4] Տես *Օ. Ա. Բելկով*, Նշ. աշխ.:

[5] Տես *Բ. Մ. Корякин*. Военная администрация. М., 2012, сс. 40–41 (http://www.voennoepravo.ru/files/015%20VA15.pdf), նաև՝ *Herbert Strunz*. Management in the Armed Forces. Doctoral (PhD) Dissertation, Budapest, 2010, pp. 7-9 (http://archiv.uni-nke.hu/downloads/konyvtar/digitgy/phd/2010/strunz_herbert.pdf):

[6] Տես նույն տեղում:

ներն են ղեկավարման կենտրոնացումը, միանձնյա ղեկավարումը և զինվորական կարգապահությունը: Ղեկավարման կենտրոնացումը նշանակում է, որ. ա) զինված ուժերի տեսակները և զորատեսակները ունեն մեկ ընդհանուր հրամանատարություն, բ) ռազմական կառավարման կենտրոնական մարմիններն իրավասու են ղեկավարելու ենթակա զորքերին (ուժերին) և ըստ միասնական պլանի միավորելու և ուղղորդելու ռազմական կառավարման բոլոր ստորադաս մարմինների գործունեությունը, գ) վերադաս մարմինների իրավական ակտերը ստորադասների համար անվերապահորեն ենթակա են կատարման: Միանձնյա ղեկավարման էությունն այն է, որ հրամանատարը (պետը) իր պարտականությունները կատարելիս օժտված է կազմակերպակարգադրիչ և վարչատնտեսական գործառույթներով, լիակատար կերպով ապահովված է ենթակաների նկատմամբ կարգադրիչ իշխանությամբ և պետության առաջ կրում է անձնական պատասխանատվություն զորամասի, ստորաբաժանման և յուրաքանչյուր զինծառայողի կյանքի ու գործունեության բոլոր կողմերի համար[7]:

Օպերատիվ կառավարման սկզբունքներից հիշատակման են արժանի նաև՝ առաջադրված խնդիրների կատարման համար ենթակա զորքերի (ուժերի) և միջոցների կիրառման առավելագույն արդյունավետության ապահովումը[*], իրավիճակի փոփոխությանը օպերատիվ և ճկուն կերպով արձագանքումը, անընդհատությունը և ծածուկությունը, ընդունված որոշումներն ու պլաններն իրագործելու հաստատակամությունն ու վճռականությունը, կառավարման կայուն ու տարածուն համակարգի ստեղծումը, հրամանատարների ու շտաբների աշխատանքի բարձր աստիճանի կազմակերպվածությունն ու ստեղծագործական միտքը, առաջադրանքային կառավարումը (հրամանատրում առաջադրանքների միջոցով՝ *Mission Command)*[8]: Վերջինս «զինված ուժերում մարտական կառավարման հեռանկարային գերակա եղանակ է, որի դեպքում ռազմական օպերացիաներն իրագործվում են ապակենտրոնացման սկզբունքով՝ ըստ առաջադրանքի տիպի հրամանի: Դա անհատներին հնարավորություն է տալիս ինքնուրույնաբար որոշելու, թե ինչպես պետք է կատարել առաջադրանքը, և դրա կատարման ժամանակ դրսևորելու կամքի ուժ, դատողականություն, նախաձեռնողականություն, ստեղծագործական մոտեցում, փոխվստահություն, ինչը նպաստում է օպերացիաներում մարդկային գործոնի առավել արդյունավետ օգտագործմանը»[9]:

---

[7] Տես *Վ. Մ. Կորյակին*, Նշ. աշխ., էջ 43–45:

[*] Նկատենք, որ առավելագույն արդյունավետության ապահովման սկզբունքը «փոքր ուժերով՝ մեծ խնդիրներ» սկզբունքի այլ ձևակերպումն է:

[8] Տես *Ֆ. Ա. Զայցև, Վ. Ի. Իվանով, Ի. Ս. Ուստինով*. Правоведение. Учебное пособие. Воронеж, 2008 (https://lawbook.online/prava-respubliki-osnovyi/formyi-metodyi-printsipyi-voennogo-42623.html), նաև՝ *Վ. Կորյակին*, Նշ. աշխ., էջ 41:

[9] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երգնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն – ռուսերեն – անգլերեն, ռուսերեն – հայերեն, անգլերեն –

Առաջադրանքային կառավարումը, որը լայն տարածում է ստացել Արևմտյան, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի ռազմական կառավարման մշակույթում[10], հիմնվում է Գերմանիայի Զինված ուժերի (Բունդեսվերի) ղեկավարման հիմնական սկզբունքների՝ «Հանձնարարությունների մարտավարության» *(Auftragstaktik)* և «Ներքին ղեկավարման» (*Innere Führung)* հայեցակարգների վրա[11]: «Հանձնարարությունների մարտավարության» հանգուցային սկզբունքը հետևյալն է. ենթակաները (ստորադաս հրամանատարները) պետք է գործեն ինքնուրույնաբար՝ առաջնորդվելով իրենց ղեկավարների մտահղացումներով և հիմնական նպատակներով, ընդսմին ղեկավարն իր ենթականերին ազատություն է տալիս նրանց առաքելության կատարման գործում: Իսկ «Ներքին ղեկավարման» հիմնարար գաղափարն այն է, որ զինծառայողը զինվորական համազգեստով քաղաքացի է, և այս սկզբունքը նպատակաուղղված է «բարոյապես կայուն և արժանապատիվ վարքի ձևավորմանը»[12]:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Ռազմական կառավարման համակարգը, լինելով պետական կառավարման համակարգի մաս, իր վրա կրում է պետական կազմակերպվածքի առանձնահատկությունների կնիքը: Այսպես. երբ ՀՀ-ում կիսանախագահական կառավարման մոդելի կիրառման ժամանակ Զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարը պետության նախագահն էր, ընդսմին նա այդ գործառույթները կատարում էր և՛ խաղաղ, և՛ պատերազմական շրջանում: Ներկայումս խորհրդարանական կառավարման պայմաններում ՀՀ ԶՈՒ-ի Գերագույն հրամանատարը Վարչապետն է, այն էլ նա այդ գործառույթների կատարումն ստանձնում է միայն պատերազմի շրջանում: Միևնույն ժամանակ, ՀՀ-ում ռազմական կառավարման համակարգը, որը հիմնականում արդեն ձևավորվել է ըստ պետական կառավարման խորհրդարանական մոդելի, այդուհանդերձ պահանջում է որոշակի բարեփոխումներ ու ճշգրտումներ:

Դրա հետ մեկտեղ նշենք, որ ՀՀ ԶՈՒ-ի ստորաբաժանումները հաջողությամբ

---

հայերեն մեծ բառարան: ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան, Ե., 2015, էջ 290:

[10] Տես «FM 6-0. “Mission Command: Command and Control of Army Forces”. August 2003; *James D. Sharpe Jr., Thomas E. Creviston*. Understanding Mission Command, 10.07.2013 (https:// www.army.mil/article/106872/understanding_mission_command):

[11] Տես Major General Werner Widder (German Army). Auftragstaktik and Innere Führung: Trademarks of German Leadership. «Military Review», September–October 2002 (http:// www.scribd.com/doc/58814248/Auftragstaktik-Innere-fuhrung-Trademarks-of-German-Leadership); «Общевойсковой устав ZDv 10/1. Внутреннее руководство Innere Führung». Федеральное министерство обороны. Бонн, 28.01.2008; նաև՝ *Ա. Մ. Պետրոսյան*, ԶՈՒ-ի ղեկավարման միջազգային փորձը Գերմանիայի Դաշնային Հանրապետության զինված ուժերի օրինակով: «Հայկական բանակ», 2011, հմ. 1–2:

[12] Տես *Ա. Մ. Պետրոսյան*, Նշ. աշխ.:

ու ներդաշնակորեն համագործակցում են և՛ նախագահական տիպի կառավարման համակարգով (Ռուսաստանի Դաշնություն, Ղազախստանի Հանրապետություն, Բելառուսի Հանրապետություն), և՛ խորհրդարանական (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Լեհաստանի Հանրապետություն) պետությունների զինված ուժերի ստորաբաժանումների հետ[13]:

ՀՀ ռազմական կառավարման գլխավոր մարմինները և դրանց միջև ստորադասության հարաբերությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով:

ՀՀ Ազգային ժողովը օրենսդրորեն սահմանում է ՀՀ ռազմական կազմակերպվածքի նպատակներն ու խնդիրները[14], իրականացնում է պաշտպանության ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողություն[15]: Ըստ էության, սրանք կառավարման գործառույթներ են, սակայն Ազգային ժողովը ռազմական կառավարման մարմին չէ, քանի որ նախանշանակված չէ դրա համար, պետության ռազմական կազմակերպվածքի ոչ մի տարր անմիջականորեն չի ենթարկվում նրան (չունի ռազմական կառավարման օբյեկտ), այլ օրենսդիր իշխանություն իրականացնող ներկայացուցչական մարմին է[16]:

ՀՀ Կառավարությունը, որը գործադիր իշխանության գերագույն մարմինն է, ռազմական կառավարման մարմին է, «զինված ուժերը Կառավարության ենթակայության ներքո են»[17]: Կառավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության քաղաքականությունը[18], որի հիմնական ուղղությունները սահմանում է ՀՀ Անվտանգության խորհուրդը[19]: Վերջինս պետական մարմին է[20], որը «պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղություններին վերաբերող հարցերով ընդունում է որոշումներ»[21], որոնք ստորագրում են վարչապետը[22] և ՀՀ պաշտպանության նախարարը (պաշտպանության քաղաքականությանը չառնչվող որոշումները ստորագրում են վարչապետը և անվտանգության խորհրդի քարտու-

[13] Տես *Դ. Է. Տոնոյան*, Պաշտպանական բարեփոխումների իրականացումը ռազմական համագործակցության շրջանակներում: «Հայկական բանակ», 2012, հմ. 1–2:

[14] Տես, օրինակ՝ «Պաշտպանության մասին» ՀՀ 2015թ. նոյեմբերի 15-ի հմ. ՀՕ-196-Ն օրենքը, հոդվածներ 1, 5, 15 (http://www.arlis.am/documentview.aspx?docid=117631):

[15] Տես նույն տեղում, հոդ. 6:

[16] Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ»: Ընդունվել է 06.12.2015 (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510):

[17] Տես նույն տեղում, հոդ. 155:

[18] Տես «Պաշտպանության մասին» ՀՀ 2015 թ. նոյեմբերի 15-ի հմ. ՀՕ-196-Ն օրենքը, հոդ. 7:

[19] Տես նույն տեղում, հոդ. 8:

[20] Տես «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ 2018թ. մարտի 7-ի հմ. ՀՕ-145-Ն օրենքը, հոդ. 1 (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120572):

[21] Տես նույն տեղում, հոդ. 2, մաս 4:

[22] Տես նույն տեղում, հոդ. 5, մաս 2:

ղարը): Անվտանգության խորհրդի անդամներն են՝ վարչապետը (խորհրդի նախագահ), առաջին փոխվարչապետը, փոխվարչապետները, Անվտանգության խորհրդի քարտուղարը, պաշտպանության նախարարը, արտաքին գործերի նախարարը, ազգային անվտանգության ծառայության տնօրենը, ոստիկանության պետը, Զինված ուժերի գլխավոր շտաբի պետը[23]:

Անվտանգության խորհուրդն իրականացնում է պաշտպանության ռազմավարական պլանավորում և վերանայում, հաստատում է զինված ուժերի զարգացման, մյուս զորքերի զարգացման, զինված ուժերի ծավալման և կիրառման, զորահավաքի, ՀՀ տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման, քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանները[24]:

ՀՀ Վարչապետը համակարգում է պաշտպանության ոլորտում պետական կառավարման մարմինների գործունեությունը[25]:

ՀՀ պաշտպանության նախարարը պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակներում իրականացնում է պաշտպանության նախարարության և զինված ուժերի ղեկավարումը[26]: Զինված ուժերի անմիջական հրամանատարը զինված ուժերի գլխավոր շտաբի պետն է, որը զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձն է: Ոչ պատերազմական ժամանակ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը ենթակա է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին[27]:

Զինված ուժերի գլխավոր շտաբը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է[28], որի գործունեությունը ղեկավարում է գլխավոր շտաբի պետը[29]:

Այսպիսով՝ ոչ պատերազմական ժամանակաշրջանում ՀՀ ռազմական կառավարման մարմինների միջև ձևավորվում է կառավարման հետևյալ շղթան. Վարչապետ – Կառավարություն և Անվտանգության խորհուրդ – Պաշտպանության նախարար – Պաշտպանության նախարարություն – ԶՈՒ-ի ԳՇ պետ – ԶՈՒ-ի Գլխավոր շտաբ:

Պատերազմի ժամանակ Զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է[30]: Պատերազմի ժամանակ Զինված ուժերի գլխավոր շտաբի

[23] Նույն տեղում, հոդ. 3:

[24] Տես «Պաշտպանության մասին» ՀՀ 2015 թ. նոյեմբերի 15-ի հմ. ՀՕ-196-Ն օրենքը, հոդ. 8:

[25] Տես նույն տեղում, հոդ. 9:

[26] Տես նույն տեղում, հոդ. 10, մաս 2:

[27] Տես նույն տեղում, հոդ. 16, մաս 3:

[28] Տես նույն տեղում, հոդ. 17, մաս 1:

[29] Տես նույն տեղում, հոդ. 17, մաս 2:

[30] Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ»: Ընդունվել է 06.12.2015, հոդ. 155, մաս 4 (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510):

պետը ենթակա է Զինված ուժերի գերագույն հրամանատարին[31]: Միևնույն ժամանակ, օրենքում շեշտվում է, որ «այդպիսի ուղիղ ենթակայությունը չի ձևափոխում զինված ուժերի գերագույն հրամանատարի կողմից չկարգավորված հարցերում զինված ուժերի ղեկավարումն իրականացնող և դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ապահովող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին զինված ուժերի գլխավոր շտաբի պետի ենթակայությունը»[32]: Այսպիսով՝ պատերազմի ժամանակ ԶՈՒ-ի ԳՇ պետը մի խումբ հարցերով ենթակա է վարչապետին, մյուսով՝ պաշտպանության նախարարին:

## ՀՀ-ՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ՝ ԴՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՁԱԶԳԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ

20-րդ դարի երկրորդ կեսին աշխարհի պետությունների մեծ մասի զինված ուժերի կառուցվածքն ու կառավարման համակարգը համապատասխանում էին կա՛մ այսպես կոչված «անգլոսաքսոնական», կա՛մ «պրուսական» («արևելաեվրոպական») մոդելին[33]:

Անգլոսաքսոնական մոդելում զինված ուժերի տեսակներն օժտված են մեծ ինքնուրույնությամբ: Վարչական ղեկավարումը կատարվում է ԶՈՒ-ի տեսակների նախարարությունների և դրանք միավորող պաշտպանության նախարարության միջոցով:

Պրուսական մոդելին բնորոշ է ամբողջ ԶՈՒ-ի ինչպես վարչական, այնպես էլ օպերատիվ կառավարման միասնական ուղղահայացը: ԶՈՒ-ի տեսակները միավորող կառավարման մարմին է գերագույն շտաբը, որը ԶՈՒ-ի տեսակների ու զորատեսակների գործունեության բոլոր ոլորտներում ունի բացարձակ լիազորություններ: Տվյալ մոդելի զարգացման որոշակի փուլից սկսած՝ այդպիսի բացարձակ լիազորությամբ օժտված մարմին է դառնում պաշտպանության նախարարությունը, որին ենթարկվում է գլխավոր շտաբը, ընդսմին պաշտպանության նախարարությունը հաճախ կրկնում է, իսկ լավագույն դեպքում՝ լրացնում գլխավոր շտաբի գործառույթները: Թե՛ պաշտպանության նախարարությունը, թե՛ գլխավոր շտաբը ղեկավարում են, որպես կանոն, պրոֆեսիոնալ զինվորականներ[34]:

Փորձը ցույց է տալիս, որ ռազմական կառավարման երկու մոդելներին էլ հատուկ են թերություններ: Անգլոսաքսոնական մոդելի հիմնական թերությունն է ժամանակավոր կամ մշտական հիմքով ստեղծված զորքերի

[31] Տես «Պաշտպանության մասին» ՀՀ 2015թ. նոյեմբերի 15-ի հմ. ՀՕ-196-Ն օրենքը, հոդ. 16, մաս 3:

[32] Տես նույն տեղում:

[33] Տես *С. Л. Печуров*. Англо-саксонская модель управления в военной сфере: история и современность. М., 2005, с. 5:

[34] Տես նույն տեղում, էջ 6–8:

միջտեսակային խմբավորման կառավարման ծայրահեղ նվազ արդյունավետությունը: Պրուսական մոդելի (որին, արևմտյան տեսաբանների կարծիքով, համապատասխանում էր նաև ԽՍՀՄ ԶՈՒ-ն) թերությունն այն է, որ սահմանափակվում էր ԶՈՒ-ի տեսակների զարգացումը: Արևմուտքում ընդունված տեսակետի համաձայն՝ դա հանգեցրել էր այն բանին, որ խորհրդային ռազմական ղեկավարությունը կողմնորոշված էր դեպի գլխավորապես ցամաքային օպերացիաների իրագործումը:

Ըստ այդմ արևմտյան ռազմական տեսաբանները 20-րդ դարի վերջին առաջարկում էին գտնել զինված ուժերի զարգացման «երրորդ» ճանապարհը, որին համապատասխանող կառավարային մոդելը տարբերվեր և՛ անգլոսաքսոնական, և՛ պրուսական մոդելներից, ընդսմին ունակ լիներ ավելի լիարժեք կերպով միավորելու (ինտեգրելու) ԶՈՒ-ի տարբեր բաղադրիչները (տեսակներ)՝ ռազմական օպերացիաներում ապահովելով դրանց սերտ փոխգործությունը[35]: Այս նպատակին հասնելու ճանապարհին կանխատեսվում էր ԶՈՒ-ի կառավարման անգլոսաքսոնական և պրուսական մոդելների «միաձուլում»[36]:

Ռազմական կառավարման համակարգերի ոլորտի այս զարգացումներին զուգահեռաբար 20-րդ դարի վերջին տեղի էր ունենում տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների բուռն զարգացում: Արևմուտքի որոշ գիտնականներ առաջ էին քաշել այն տեսակետը, թե սկսվել է Տեղեկութային դարաշրջան, որը հաջորդել է Արդյունաբերական դարաշրջանին[37]: Տեղեկութային դարաշրջանին բնորոշ է պատերազմների վարման սկզբունքորեն նոր եղանակ՝ այսպես կոչված ցանցակենտրոն պատերազմների վարում, ինչպես նաև կառավարման (մասնավորապես՝ ռազմական կառավարման) նոր գաղափարայնություն, որից և պետք է բխեցվեն ապագայի ռազմական կառավարման համակարգերին ներկայացվող պահանջները և դրանց կատարելագործման սկզբունքներն ու ուղղությունները:

Ըստ 21-րդ դարի սկզբում առաջ քաշված «Իշխանությունը դեպի եզր» *(«Power to the edge»)* հայեցակարգի՝ Տեղեկութային դարաշրջանում խախտվում են այն յոթ սկզբունքները, որոնց վրա Արդյունաբերական դարաշրջանում հիմնվում էր կառավարումը, մասնավորապես՝ զորքերի կառավարումը *(command and control)*[38]: Այդ սկզբունքներն են.

*1) Մասնատում (decomposition).* աշխարհի ճանաչողություն ոչ թե ամբողջապես, այլ մաս առ մաս: Սրա դրսևորումն է այն, որ մարտական իրավիճակի մասին ամբողջական պատկերացում ունի միայն հրամանատարը, իսկ են-

[35] Տես նույն տեղում:

[36] Տես նույն տեղում, էջ 218–221:

[37] Տես *David S. Alberts, Richard E. Hayes*. Power to the Edge: Command… Control… in the Information Age. DoD Command and Control Research Program. Washington, 2003 (http://www.dodccrp.org/files/Alberts_Power.pdf):

[38] Տես *Դ. Ս. Ալբերտս, Ռ. Է. Հայես*, Նշ. աշխ.:

թակա ստորաբաժանումները գիտեն իրավիճակի իրենց վերաբերող մասը:

*2) Մասնագիտացում (specialization).* նախորդ սկզբունքի գործադրման հետևանք է:

*3) Աստիճանակարգություն (hierarchy).* դրա անհրաժեշտությունը ծագում է, քանի որ կարիք կա համադասելու և միավորելու մասնագետների ու մասնագիտական կազմակերպությունների գործունեությունը:

*4) Օպտիմալացում (optimization).* Արդյունաբերական դարաշրջանում կառավարումը հիմնված է այն կանխադրույթի վրա, որ գոյություն ունի յուրաքանչյուր պրոբլեմի լավագույն լուծում: Զորքերի կառավարումը առաջադրանքների կատարման օպտիմալ տարբերակների որոշումն է:

*5) Գժտազերծում (deconfliction).* տարբեր ստորաբաժանումների գործունեության տիրույթների վերադրման, գործառույթների կրկնության և դրա հետևանքով գժտությունների (կոնֆլիկտների) առաջացման կանխում:

*6) Կենտրոնացված պլանավորում (centralized planning).* ուժերի և իրադարձությունների «դասավորում» տարածության և ժամանակի մեջ՝ առաքելության իրագործման հավանականությունը առավելագույնի հասցնելու նպատակով:

*7) Ապակենտրոնացված կատարում (decentralized execution).* առաջադրանքները կատարելիս ստորին օղակների հրամանատարներին նախաձեռնության և ինքնուրույնության հնարավորության ընձեռում այն հիմնավորմամբ, որ նրանք մարտադաշտի դինամիկորեն փոփոխվող միջավայրում լինում են իրավիճակին ավելի քաջատեղյակ, քան մարտադաշտից հեռու գտնվող վերադաս հրամանատարը:

Տեղեկութային դարաշրջանում զինված ուժերից պահանջվում է երկու հույժ կարևոր ունակություն՝ փոխգործելիություն (օպերատիվ համատեղելիություն, գործակցելիություն՝ *interoperability)* և ճկունություն *(agility)*: Փոխգործելիությունը այլ համակարգերի հետ համահունչ՝ ներդաշնակորեն, առանց հակասությունների ու համակարգային խաթարումների գործելու կարողություն է, որը պայմանավորված է կառուցվածքային սկզբունքների ու գործելակերպի համատեղելիությամբ[39]: Ճկունությունը անսպասելի մարտահրավերներին դիմագրավելու, տրված առաջադրանքը նոր եղանակներով կատարելու և նոր առաջադրանքների կատարում սովորելու ունակությունն է[40]: «Իշխանությունը դեպի եզր» հայեցակարգի հեղինակների կարծիքով՝ այս երկու ունակություններն էլ հակասում են վերը բերված սկզբունքներին:

Այսպես. փոխգործելիությունը կարևոր է դաշնադրային ուժերի համար, որոնք թեպետ ունեն ընդհանուր նպատակ, բայց տարբեր գերակայություններ և գործունեության տարբեր սահմանափակումներ, ինչը խոչընդո-

[39] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան*, Նշ. աշխ., էջ 610:

[40] Տես *Դ. Ս. Ալբերտս, Ռ. Է. Հայես*, Նշ. աշխ., էջ 59–60:

տում է պլանավորմանը: Բացի այդ, պլանավորումը ենթադրում է, որ դաշնադրային ուժերից յուրաքանչյուրին կտրվի իր մասնավոր առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ տեղեկույթ («իր» տեղեկույթը): Իրականում անհնար է կանխատեսել, թե ուժերից յուրաքանչյուրն իր առաջադրանքը կատարելիս ինչ տեղեկույթի և ում աջակցության կարիքը կունենա:

Կենտրոնացված պլանավորումը հակասում է ճկունությանը, քանի որ, նախ, անհնար է կանխատեսել, թե ինչ նոր առաջադրանք կատարելու անհրաժեշտություն կծագի, երկրորդ՝ իրավիճակի փոփոխման արագությունը գերազանցում է պլանավորման, հետևաբար նաև՝ իրավիճակին հարմարման արագությունը, երրորդ՝ իրավիճակի մասին մասնակիորեն տեղեկացված ուժերը չեն կարող ունակ լինել սովորելու նոր եղանակներով նոր առաջադրանքներ կատարել, չորրորդ՝ գժտազերծման սկզբունքից բխող սահմանափակումները հնարավորություն չեն տալիս ճկուն լինելու[41]:

Տեղեկութային դարաշրջանում զինված ուժերը վերածվում են եզրային կազմակերպության, որտեղ կառավարման հիմնական խնդիրն է ոչ թե ենթակաների բոլոր քայլերի կանխորոշումն ու վերահսկումը, այլ նրանց համար առաջադրանքների հաջող կատարումն ապահովող պայմանների ստեղծումը:

Այսպիսով՝ «Իշխանությունը դեպի եզր» հայեցակարգով կազմակերպության *հզորությունը կարող է մեծանալ առանց ռեսուրսների նշանակալի ծախսի՝* կազմակերպության կառուցվածքի և նրա տարրերի միջև հարաբերությունների փոփոխության շնորհիվ: «Եզրային կազմակերպության» հզորությունն ապահովվում է այն բանի շնորհիվ, որ *բոլորը* տիրապետում են *ամբողջ* տեղեկույթին և ճանաչում ու կարողանում են օգտվել իրավիճակի փոփոխությամբ առաջացած նոր հնարավորություններից[42]:

Այս հայեցակարգից բխող եզրակացությունները զուտ տեսական են, մինչդեռ զորքերի կառավարման համակարգերը կատարելագործելու համար անհրաժեշտ է ավելի գործնական մոտեցում: Այդպիսի մի մոտեցման հեղինակները փորձել են կանխատեսել ապագայի օպերացիոն միջավայրի բնութագրիչները և դրանցից բխեցնել զորքերի կառավարմանը ներկայացվող ընդհանուր պահանջները[43]: Նրանց կարծիքով՝ այսօր պատերազմում հաջողությունը կախված է քաղաքացիականների և զինվորականների, պետական և ոչ պետական մարմինների համագործակցության արդյունավետությունից, ուստի զորքերի կառավարման դասական սահմանումը, որը վերաբերում է միայն զինվորականներին, այլևս ճիշտ չէ: Զինված ուժերի մարտական խնդիրները կարող են արագորեն վերափոխվել մարդասիրական

[41] Տես նույն տեղում, էջ 63:

[42] Տես նույն տեղում, էջ 213–222:

[43] Տես *Robert L. Leonhard, Thomas H. Buchanan, James L. Hillman, John M. Nolen, Timothy J. Galpin.* A Concept for Command and Control. «Johns Hopkins APL Technical Digest», 2010, vol. 29, № 2 (http://www.jhuapl.edu/techdigest/TD/td2902/Leonhard.pdf):

(խաղաղարարական) առաքելության: Ռեստի ապագայում հրամանատարները պետք է կարողանան կառավարման ոլորտում հանդես բերել բավարար չափով ճկունություն՝ պատրաստ լինելով տեղում հարաբերություններ հաստատելու ոչ միայն զինվորականների, այլև քաղաքացիական անձանց հետ[44]:

Ըստ այս հեղինակների՝ ապագայում զինված ուժերը հարկ կլինի կիրառել կազմությամբ բարդ, բազմազան և մշտապես փոփոխվող միջավայրում.

Եվ այդ օպերացիոն միջավայրը «կլինի այնպիսին, ինչպիսին է և ոչ այնպիսին, ինչպիսին որ մենք ցանկանում ենք… Ապագայի զարգացման ուղիների օբյեկտիվ և հստակ ընկալումը պատսպարում է արմատավորված պահպանողականությունից»: Նրանց կարծիքով՝ նման միջավայրում զորքերի կառավարումը պետք է լինի բավական ճկուն, որպեսզի որոշում ընդունողները կարողանան մարտական գործողություններ վարել իրողության բոլոր պայմաններում: Այդ միջավայրում օպերացիաների բնույթի վրա կներազդեն հետևյալ հիմնական գործոնները.

ա) *անհամաչափ պատերազմները*, այդ թվում՝ քիմիական ու կենսաբանական զենքերի, քայքայիչ համակարգչային վիրուսների կիրառման, «ուրիշի ձեռքով» վարվող պատերազմների պայմաններում,

բ) *ոչ պետական դերակատարները*, այդ թվում՝ քաղաքական կամ կրոնական համոզմունքներով խմբերում միավորված անհատներ, հանցավոր կազմակերպություններ,

գ) *տեղեկությային դարաշրջանին հատուկ պատերազմները*, երբ և՛ պետությունները, և՛ ոչ պետական դերակատարները ձգտում են մեծացնելու իրենց հզորությունը՝ զանգվածային լրատվության միջոցները ենթարկելով ձեռնածությունների,

դ) *էկոլոգիան և աղետների հետևանքների վերացումը*, քանի որ մարդկային աղետները հաճախ տեղի են ունենում այնտեղ, որտեղ առկա են քաղաքական կամ կրոնական բնույթի հուզումներ, ուստի և փրկարարական օպերացիաները սերտորեն առնչվում են ռազմաանվտանգային օպերացիաների հետ,

ե) *միջգերատեսչական օպերացիաները*, քանի որ ներկայումս օպերացիոն տարածությունում ներառված են լինում ինչպես զինված ուժերի ստորաբաժանումները, այնպես էլ այլ գերատեսչությունների կազմավորումները, այլ պետությունների զորքերը, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ,

զ) *փոխգործությունը հակադրությունների հետ*, այն է՝

– ավանդական և ոչ ավանդական պատերազմներ,
– աստիճանակարգային համակարգ և անստորակարգություն: Աստիճանակարգության դեպքում հրամանատարի և ենթակաների հարաբերութ-

[44] Տես նույն տեղում:

յունները սահմանվում են օրենքով կամ ավանդույթով, և պատասխանատվությունը համաչափ է իշխանությանը: Անստորակարգային համակարգերում հստակ իշխանական հարաբերություններ և հստակ կառուցվածք չկա, հրամանատարը պետք է կարողանա կառավարել յուրաքանչյուրի հետ անձնական հարաբերություններ հաստատելու միջոցով,

– իրազեկվածություն և անորոշություն: Իրավիճակը որոշակի է, եթե դրա վերաբերյալ կա բավարար չափով տեղեկույթ: Անորոշ իրավիճակը բնութագրվում է տեղեկույթի անբավարարությամբ,
– կենտրոնացված և ապակենտրոնացված կառավարում: Կենտրոնացված կառավարումը կիրառվում է այն ժամանակ, երբ հրամանատարը հնարավորություն ունի արագորեն և ճշգրտորեն գնահատելու իրավիճակը և արձագանքելու փոփոխություններին: Երբ դա անհնար է, կիրառվում է ապակենտրոնացված կառավարումը: Օրինակ՝ բաց տեղանքում կառավարումը կենտրոնացված է, լեռնային տեղանքում կամ քաղաքում՝ ապակենտրոնացված,
– ուժերի կենտրոնացում և տարաբաշխում: Երբ հրամանատարը մանրամասն տեղեկություններ ունի թշնամու տեղաբաշխման, հնարավորությունների և մտադրության մասին, կարող է իր ուժերը բաշխել նպատակահարմար կերպով և չվախենալ, որ թշնամին իրեն հանկարծակիի կբերի, իսկ երբ թշնամու մասին տեղեկությունները բավարար չեն, նպատակահարմար է ուժերը պահել կենտրոնացված,
– որոշումների ակտիվ և ռեակտիվ կայացում: Որոշման ընդունումը կատարվում է ակտիվ կերպով, եթե հրամանատարը գործ ունի կանխատեսելի թշնամու հետ: Այս դեպքում գործողությունները կատարվում են «որոշեցի – հայտնաբերեցի – հարվածեցի» հերթականությամբ: Եթե թշնամու գործելաոճը անկանխատեսելի է, ապա որոշումը ընդունվում է ռեակտիվ կերպով՝ «հայտնաբերեցի – որոշեցի – հարվածեցի» հաջորդականությամբ:

Այսպիսի միջավայրում զորքերի կառավարումը պետք է բավարարի հետևյալ պահանջներին:

*1) Ապահովել հրամանատարների իրավիճակային քաջատեղյակությունը (situational awareness)*, ընդսմին պետք է հաշվի առնել, որ զինված ուժերի տարբեր բաղադրիչներ ունեն տարբեր տեղեկույթի կարիք: Զորքերի կառավարման համակարգը (ԶԿՀ) պետք է հրամանատարներին հնարավորություն ընձեռի սահմանելու իրենց տեղեկութային կարիքները և արագորեն բավարարի դրանք: ԶԿՀ-ն պետք է կարողանա համադրել, գնահատել և ամբողջացնել տարբեր աղբյուրներից ստացված տեղեկույթը, կատարել առնմանում:

Հույժ կարևոր է նաև, որ ԶԿՀ-ն կարողանա գնահատել տեղեկույթի որակը, այսինքն՝ թարմությունը, արժանահավատությունը (ճշգրտությունը) և այլ տեղեկույթի համապատասխանության աստիճանը:

ԶԿՀ-ն պետք է պաշտպանված լինի թշնամու կիբեռհարձակումներից: Բացի այդ, ապագայում հրամանատարներն աշխատելու են ընդլայնված թիմով, որում ընդգրկված են լինելու գաղտնիքներին ծանոթանալու տարբեր աստիճանների թույլտվություն ունեցող մարդիկ, ուստի լինելու են տարբեր չափերով իրազեկված և տարբեր կերպ են ընկալելու իրավիճակը: ԶԿՀ-ն պետք է ունակ լինի ոչ միայն միավորելու տեղեկույթը, այլև մասնատելու այն՝ յուրաքանչյուրին իր բաժինը հատկացնելու համար:

*2) Ապահովել պլանավորումը.* ապագայի ԶԿՀ-ները պետք է հնարավորինս ավտոմատացնեն պլանավորումը:

*3) Ապահովել հիմնավորված որոշման ընդունումը:* Հրամանատարը որոշում կայացնող անձ է, բայց իրականում նա հաճախ այդ իշխանությունը փոխանցում է տարբեր մարդկանց՝ ըստ իրադրության: Ապագայի ԶԿՀ-ն պետք է կարողանա աջակցել որոշում ընդունողներին և, բացի այդ, պետք է մեծացնի որոշում կայացնելու արագությունը: Միևնույն ժամանակ, կարևոր է նաև գնահատել որոշման որակը (հիմնավորություն, իրավիճակին համապատասխանություն և այլն):

*4) Ապահովել որոշումների արդյունավետ կատարումը:* Կարող է թվալ, թե զորքերի կառավարման վերոնշյալ երեք գործառույթները հաջորդական պրոցեսներ են: Իրականում դրանք տեղի են ունենում միաժամանակ, և ապագայի ԶԿՀ-ն պետք է ապահովի այդ գործառույթների սիներգիկ միավորումը: Բացի այդ, զորքերի կառավարման համակարգը պետք է լինի շարժունակ: Հրամանատարն ավելին է, քան որոշում կայացնող անձը. նա նաև առաջնորդ է, որը պարտավոր է սովորեցնել, առաջնորդել և ոգեշնչել: Մարտադաշտում նա պետք է, պահպանելով կառավարման անընդհատությունը, անձամբ հանդիպի իր ենթակաների ու վերադասի հետ, ուստի ԶԿՀ-ն պետք է ապահովի այդ հնարավորությունը[45]:

21-րդ դարի սկզբից աշխարհի առաջատար պետությունները (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, ԳԴՀ, Ֆրանսիա, Ռուսաստան, Չինաստան, Իսրայելի Պետություն և այլն) բարեփոխում են իրենց զինված ուժերը՝ կատարելագործելով միջտեսակային և դաշնադրային ուժերի կազմում օպերացիաների վարման կարողությունները՝ դրանք համապատասխանեցնելով ցանցակենտրոն պատերազմների հայեցակարգին, զարգացնելով նաև ռազմական կառավարման մարմիններն ու ռազմական կառավարման տեխնիկական հիմքը: Ընդսմին կառավարման մարմինների կատարելագործումը նպաստում է կառավարման տեխնիկական հիմքի զարգացմանը, և հակառակը՝ վերջինիս, մասնավորապես՝ կառավարման ավտոմատացված համակարգերի զարգացումը, հանգեցնում է կառավարման մարմինների կառուցվածքի փոփոխության[46]:

[45] Տես նույն տեղում:

[46] Տես *В. И. Выпасняк, А. М. Гуральник, О. В. Тиханычев*. Система поддержки принятия решений как «виртуальный штаб». «Военная мысль», 2015, № 2:

## ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Կառավարում ասելով մենք հասկանում ենք որոշակի տեսակի մարդկային գործունեություն, որի էությունն է մարդկանց, առարկաների ու դրանց միջոցով պրոցեսների վրա գիտակցված և նպատակաուղղված ներգործությունը՝ դրանց գործառումն ու զարգացումը ցանկալի պարամետրներով (բնույթ, ուղղվածություն, դինամիկա և այլն) օժտելու համար[47]:

Ռազմարվեստի պատմությունը վկայում է, որ ռազմական կառավարման ոլորտում հակառակորդի նկատմամբ գերազանցության ապահովումը հաղթանակի ձեռքբերման անհրաժեշտ պայմաններից մեկն է: Սակայն արդի պայմաններում, երբ ցանցակենտրոն պատերազմների հայեցակարգի համաձայն ռազմական գործողությունները տեղափոխվում են միասնական տեղեկութային տարածություն, կարիք է առաջանում նորովի սահմանելու, թե ինչ է նշանակում հակառակորդին գերազանցել ռազմական կառավարման ոլորտում և ինչպես կարելի է ապահովել այդ գերազանցությունը:

Նախ, պետք է նկատի ունենալ, որ ի տարբերություն նախորդ (և արդեն հնացած) մոտեցումներից, օպերացիայում (մարտում) կառավարման առաջնային օբյեկտը ոչ թե յուրային զորքն է, այլ օպերացիայի (մարտի) ընթացքը[48]: Ընդսմին երկրորդ հերթին որպես կառավարման օբյեկտ հանդես են գալիս ոչ միայն յուրային, այլև հակառակորդի զորքերը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ կոլեկտիվ օգտագործման շտեմարանների ցանցային մուտք ունեցող միասնական տեղեկութային տարածությունը, որն ստեղծել է հակառակորդը, առաջ է բերում նրա տվյալների շտեմարանների նպատակային աղավաղման միջոցով նրա կառավարման համար բարենպաստ պայմաններ[49]:

Այսպիսով՝ ռազմական կառավարման ոլորտում գերազանցություն ասելով «պետք է հասկանալ օպերացիայի (մարտի) ընթացքում ստեղծվող այն կառավարային ազդեցությունների օպերատիվության ու որակի գծով հակամարտող կողմերից մեկի բացահայտ առավելությունը, որոնք նպատակաուղղված են առաջադրված մարտական խնդրի անվերապահ կատարումն ապահովող օպերատիվ իրադրության ձևավորմանը»[50]:

Ինչ վերաբերում է գերազանցության ապահովման եղանակներին, ապա ՌԴ-ում դրա վերաբերյալ հրահանգներ դեռ մշակված չեն: Որպես այդ խնդրի

---

[47] Տես *Օ. Ա. Բելկով,* Նշ. աշխ:

[48] Տես *Վ. Ա. Балыбин*. Завоевание превосходства над противником в управлении применительно к операции (бою). «Военная мысль», 2016, № 3:

[49] Տես նույն տեղում:

[50] Տես նույն տեղում, նաև՝ տես *Ю. Е. Донсков, П. Н. Беседин, А. К. Ботнев*. Превосходство в управлении – обязательный фактор реализации основных закономерностей оперативного искусства. «Военная мысль», 2017, № 11:

լուծման առաջին քայլ՝ առաջարկվում է կառավարման ոլորտում գերազանցությունը դիտել որպես երեք առանձին ոլորտներում գերազանցությունների հանրագումար, ընդսմին այդ ոլորտներն են տեղեկութային ապահովումը, ընդունվող որոշումների հիմնավորումը և որոշումների կատարումը[51]:

Կառավարման ոլորտում հակառակորդի նկատմամբ գերազանցությունը կարող է ապահովվել նաև նրա կառավարման համակարգի կազմալուծմամբ կամ գործունեության խաթարմամբ: Դա այն փոխհամաձայնեցված միջոցառումների ու գործողությունների ամբողջությունն է, որոնք նպատակաուղղված են հակառակորդի զորքերի ու զենքի կառավարման մարմինների և կառավարման տեխնիկական միջոցների գործառման հնարավորությունների էական նվազեցմանը կամ լիովին դադարեցմանը[52]:

Տվյալ դեպքում խոցման ենթակա օբյեկտներ են՝ հակառակորդի կառավարման մարմինների պաշտոնատար (առաջին հերթին՝ որոշում ընդունող) անձինք, կառավարման կետերը, իրավիճակի մասին տվյալներ հայթայթող միջոցները (հետախուզության միջոցներ և այլն), ԿԱՀ-երը, տեղեկույթի մշակման, պահպանման և արտապատկերման միջոցներն ու դրանց ծրագրային ապահովումն ու տեղեկութային ռեսուրսները, տեղեկույթի հաղորդման միջոցները (կապի, տվյալների փոխանակման միջոցները), հեռուստահաղորդակցային (կապի, տվյալների հաղորդման) կապուղիները[53]:

Այս նպատակով ձեռնարկվող միջոցառումները ներառում են՝

- հակառակորդի կառավարման մարմինների և կետերի կրակային խոցում, գրավում (կալում) և շարքից հանում,
- հակառակորդի զորքերի (ուժերի) ու զենքի կառավարման միջոցների և նրա հետախուզական-տեղեկատվական ապահովման համակարգերի ու միջոցների կրակային և ռադիոէլեկտրոնային խոցում, գրավում (կալում) և շարքից հանում,
- հակառակորդի տեղեկութային և հաշվողական համակարգերի ու ռեսուրսների վրա ծրագրային-ապարատային (հատուկ ծրագրային) ազդեցություն,
- հակառակորդի հեռուստահաղորդակցային (կապի) կապուղիների ռադիոէլեկտրոնային ճնշում,
- հակառակորդի մոլորեցում (ապատեղեկացում, յուրային մտադրությունների և գործողությունների թաքուցում և նմանարկում)[54]:

Այդ խնդրի լուծմանը մասնակցում են հետևյալ յուրային ուժերն ու միջոցները՝ կրակային խոցման ուժերն ու միջոցները (հրթիռային զորքեր և հրետանի,

[51] Տես *Յու. Ե. Դոնսկով, Պ. Ն. Բեսեդին, Ա. Կ. Բոտնև*, Նշ. աշխ.:

[52] Տես *Ю. Е. Донсков, А. Л. Морареску, В. В. Панасюк*. К вопросу о дезорганизации управления войсками (силами) и оружием. «Военная мысль», 2017, № 8:

[53] Տես նույն տեղում:

[54] Տես նույն տեղում:

ավիացիա, այդ թվում՝ գերճշգրիտ զենք), հատուկ նախանշանակման զորքերի ուժերը, ռադիոէլեկտրոնային խոցման (ճնշման) ուժերն ու միջոցները, ծրագրային-ապարատային (հատուկ ծրագրային) ազդեցության միջոցները, քողարկման ու նկատելիության նվազեցման միջոցները, ապատեղեկացման միջոցները (ԶԼՄ-ներ, նմանարկման միջոցներ, կեղծ ռադիոէլեկտրոնային իրավիճակի ստեղծման միջոցներ և այլն)[55]:

Ռուսաստանյան մասնագետները զարգացնում են նաև ռեֆլեքսիվ կառավարման տեսությունն ու պրակտիկան[56]: Արտահայտությունն առաջացել է «ռեֆլեքսիա» տերմինից, որը նշանակում է «խորհրդածություններ իր ներքին վիճակի մասին, ապրումները վերլուծելու հակում»[57]: Ռեֆլեքսիվ կառավարման օբյեկտը հակառակորդն է, իսկ ռեֆլեքսիվ կառավարման էությունը՝ հակառակորդին ձեռնածության (մանիպուլյացիայի) ենթարկելը՝ նրան որոշակի որոշումների ընդունմանը և գործողությունների կատարմանը հակելու նպատակով: Այլ կերպ ասած՝ ռեֆլեքսիվ կառավարումը «մի գործընթաց է, երբ հակառակորդներից մեկը փոխանցում է մյուսին որոշումներ ընդունելու համար հիմքեր»[58]: Ընդսմին դա կատարվում է ռեֆլեքսիվ տեխնոլոգիաների (հակառակորդի նկատմամբ տեղեկութահոգեբանական ազդեցության եղանակների, միջոցների և հնարների ամբողջության) գործադրմամբ: Գործնական առումով ռեֆլեքսիվ կառավարումը ռազմական խորամանկության կիրառում է: Այն նույնպես կառավարման ոլորտում հակառակորդի նկատմամբ գերազանցության հասնելու արդյունավետ գործիքներից է:

## ԱՄՓՈՓՈՒՄ. ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՁՆԱՀԵՐԹ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերը շարադրվածից կարելի է հանգել մի շարք եզրակացությունների և առաջարկությունների, որոնցից, մեր կարծիքով, առավել կարևոր են.

*1. ՀՀ ԶՈՒ-ի համար ռազմական կառավարման ոլորտի մասնագետների պատրաստում:* Ռազմական կառավարումը արագորեն զարգացող գիտաճյուղ է, որում արված հայտնագործությունները կատարում են զինված ուժերի զարգացման լոկոմոտիվի դեր: Պատահական չէ, որ աշխարհի առաջատար պետություններն առաջնահերթ նշանակություն են տալիս այդ ոլորտում բարձրորակ կադրերի պատրաստմանը: Այսպես. ՌԴ ԳՇ ռազմական ակադեմիայում 2013 թ. ստեղծվել է ռազմական կառավարման ամբիոն, որի

[55] Տես նույն տեղում:

[56] Տես *Վ. Լ. Махнин*. Рефлексивные процессы в военном искусстве: историко-гносеологический аспект. «Военная мысль», 2013, № 2; *В. Г. Казаков, А. Н. Кирюшин*. Комплексное управление боевыми действиями. «Военная мысль», 2013, № 7:

[57] Տես *Л. П. Крысин*. Толковый словарь иноязычных слов. М., 2000, с. 608:

[58] *В. А. Лефевр*. Логика рефлексивных игр и рефлексивное управление. Принятие решения человеком. Тбилиси, 1967 (բերվում է ըստ՝ *Т. Л. Томас* (США). Рефлексивное управление в России: теория и военные приложения. «Рефлексивные процессы и управление», 2002. т. 2, № 1).

անհրաժեշտությունը թելադրված էր այն հանգամանքով, որ ժամանակակից զինվորական կադրերը պետք է տիրապետեն ոչ միայն զորախմբավորումների, այլև պետության ամբողջ ռազմական կազմակերպվածքի կառավարման արվեստին[59]: ԱՄՆ-ի պաշտպանության քարտուղարի օգնականի *(Assistant Secretary of Defense)* գրասենյակում իրագործվում է «Զորքերի կառավարման հետազոտական ծրագիրը», որի նպատակներն են ինչպես զորքերի կառավարման կատարելագործումը, այնպես էլ Տեղեկութային դարաշրջանում զորքերի կառավարման առանձնահատկությունների ուսումնասիրությունը[60]:

*2. ՀՀ ԶՈՒ-ի ռազմական կառավարման մարմինների կառուցվածքի, կազմի և գործառույթների օպտիմալացում՝* իրավիճակի ցանկացած պայմաններում ենթակա զորքերի անխափան կառավարումն ապահովելու համար:

*3. ՀՀ ԶՈՒ-ի կառավարման կետերի համակարգի կատարելագործում,* որպեսզի այդ համակարգը բավարարի բոլոր մակարդակների կառավարման մարմինների կարիքները:

*4. ՀՀ ԶՈՒ-ի ռազմական կառավարման համակարգի տեխնիկական հիմքի արդիականացում՝ ժամանակակից բարձր տեխնոլոգիաների լայն կիրառմամբ:*

---

[59] Տես «Кафедра военного управления». «www.vagsh.mil.ru» (http://vagsh.mil.ru/Struktura-akademii/Kafedra-voennogo-upravleniya):

[60] Տես «*The Command and Control Research Program – CCRP». «The International Command and Control Institute»* (http:// internationalc2institute.org/): Ծրագիրը ղեկավարում է «Իշխանությունը դեպի եզր» հայեցակարգի համահեղինակներից մեկը՝ Դևիդ Ալբերտսը:

## ПЕРСПЕКТИВЫ СОВЕРШЕНСТВОВАНИЯ СИСТЕМЫ ВОЕННОГО УПРАВЛЕНИЯ В РА В УСЛОВИЯХ ПАРЛАМЕНТСКОГО ОБУСТРОЙСТВА ВЛАСТИ С УЧЕТОМ ПЕРЕДОВОГО МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА

*А. М. ДАВТЯН, генерал-майор, Начальник Генерального штаба ВС РА*

РЕЗЮМЕ

На базе обширной специальной литературы (как научной и учебной, так и нормативной) в статье систематизированно излагаются определения и суть основных понятий и терминов теории военного управления на всех уровнях функционирования. Причем рассмотрение проводится как в аспекте российской (прусской), так и англо-саксонской культуры управления. В частности, отмечается, что система военного управления состоит из трех основных элементов: органов управления, пунктов управления и технической основы управления.

*Органами военного управления* являются установленные по штату или временно создаваемые коллективы, предназначенные для выполнения конкретных задач (функций) по руководству войсками (силами) в определенных звеньях, как то: министерство обороны, генеральный (главный) штаб, командования видов ВС, родов войск, армейских соединений, управления МО и т. д.

*Пункт управления* – это специально оборудованное и оснащенное техническими средствами место, откуда командир (командующий) вместе с офицерами своего штаба управляет подчиненными ему войсками (силами) в процессе их подготовки и ведения ими боевых действий, а также боевого дежурства.

*Техническая основа управления* представляет собой комплекс информационных, вычислительных, телекоммуникационных систем (средства, комплексы, ресурсы), систем и средств связи, автоматизированных систем управления войсками (силами) и оружием, средств хранения, обработки и отображения информации, персональных компьютеров.

Различные авторы выделяют различные уровни военного управления. В частности, российский политолог О. Бельков предлагает систему уровней на политологической основе: военная политика; управление войсками; управленческая деятельность военных кадров, направленная на решение поставленных перед ВС иных (не относящихся к управлению войсками) задач; морально-психологическое обеспечение деятельности войск.

Согласно принятому на Западе подходу военное управление подразделяется на административное (административно-хозяйственное) и оперативное.

*Административное управление*, по своему содержанию и правовому обеспечению наиболее близкое к иным сферам государственного управления, включает: организацию подготовки войск, их материально-техническое обеспечение, отбор и распределение кадров, регулирование отношений между военнослужащими и т. д.

*Оперативное управление* – это управление боевыми действиями войск (сил), в основе которого лежит командование, т. е. руководство вооруженной борьбой. Главными организационно-правовыми принципами оперативного управления являются централизация руководства, единоначалие и воинская дисциплина. При этом централизация руководства означает, что: а) виды ВС и рода войск имеют единое командование; б) центральные органы военного управления уполномочены руководить подчиненными войсками (силами) и в соответствии с единым планом координировать и направлять деятельность всех нижестоящих органов военного управления; в) правовые акты вышестоящих органов являются обязательными к исполнению нижестоящими.

Важными принципами оперативного управления являются также: обеспечение максимальной эффективности применения подчиненных войск (сил) и средств для выполнения поставленных задач; оперативное и гибкое реагирование на изменение оперативной обстановки; непрерывность и скрытность; устойчивость и развитость системы военного управления; высокая степень организованности и творчества в работе командиров и штабов; наделение подчиненных командиров самостоятельностью в принятии решений по выполнению заданий *(Mission Command).* Последний принцип зиждется на двух руководящих концепциях Бундесвера: «Тактике поручений» *("Auftragstaktik")* и «Внутреннем руководстве» *("Innere Führung")*, суть которых сводится к тому, что в приказах содержится лишь указание *что* делать, а *как* делать – решает сам исполняющий, и что военнослужащий – это «гражданин в форме». Таким образом, подчиненные наделяются возможностью проявлять самостоятельность, инициативность, силу воли, творческий подход, рассудительность, что способствует максимально эффективному использованию в операциях человеческого ресурса.

Поскольку военное управление является составляющей (причем – важнейшей) военного искусства, то оно должно быть гармонизировано с его основными принципами и требованиями. В связи с этим прежние представления об организации военного управления в последнее время подверглись радикальным изменениям в соответствии с концепциями сетецентричных боевых действий (войн, операций) и «Власти на край» *("Power to the Edge").*

В этих концепциях нарушаются основополагающие принципы военного управления, доминировавшие в традиционной системе управления, как то: *разложение (decomposition)*, когда мир познается не в целом, а по частям; *специализация (specialization); иерархичность (hierarchy); оптимизация (optimization); бесконфликтность (deconfliction),* когда путем предотвращения наложения функций, перекрытия сфер деятельности различных подразделений устраняются причины внутренних конфликтов; *централизованное планирование (centralized planning); децентрализованное выполнение (decentralized execution).*

В информационном обществе от вооруженных сил требуются два важных качества: *интероперабельность* и *гибкость*.

Командиры должны быть готовы в операциях будущего действовать в среде, в которой существуют такие действенные факторы, оказывающие серьезное влияние на их действия, в первую очередь – принятие решений, как: *асимметричные войны; негосударственные акторы; войны, присущие информационной эпохе*, когда государственные и негосударственные акторы стремятся увеличить свою мощь путем манипулирования средствами массовой информации; *экология и ликвидация последствий*

*катастроф; межведомственные операции,* в которых могут быть задействованы как формирования иных ведомств, так и иных государств, журналисты, представители местной власти, общественные и частные организации, что потребует от командиров умения грамотно строить с ними отношения; *взаимодействие с такими противоположностями*, как: традиционные и нетрадиционные войны, иерархия и анархия (отсутствие подчиненности), централизованное и децентрализованное управление, концентрация и распределение сил, активное и реактивное принятие решений, т. е. принятие по схеме решил–обнаружил–ударил и обнаружил–решил–ударил.

В этих условиях обеспеченность военного управления должна соответствовать следующим требованиям: ситуационная осведомленность командира, планирование, принятие обоснованного решения, эффективное выполнение решений.

На современном этапе организации боевых действий на первый план выдвигается проблема достижения *превосходства в военном управлении*. При этом в основу теоретических рассмотрений данного вопроса закладывается не понятие «цикла управления», а «управляющего воздействия». При таком современном подходе первичным объектом управления становится *ход операции (боя),* а управление войсками переходит в разряд вторичного, причем теперь уже объектом управления становятся *не только свои войска, но и войска противника*.

Это те основные принципы и соображения, отражающие современные тенденции развития военного искусства и культуры военного управления, которые должны быть заложены в программу развития системы военного управления в РА. При этом в основе решений всех системных проблем, связанных с совершенствованием военного управления в РА, должно лежать широкое и разумное применение современных технологий, в первую очередь – информационно-коммуникационных, и киберресурсов.

## PERSPECTIVES OF IMPROVING THE MILITARY CONTROL SYSTEM IN THE RA IN TERMS OF THE PARLIAMENTARY POWER SETTING ON ACCOUNT OF THE ADVANCED INTERNATIONAL EXPERIENCE

*A. M. DAVTYAN, Major General, Chief, General Staff, the RA Armed Forces*

SUMMARY

Based on the vast amount of specialized literature (both academic and teaching, as well as methodical/standard), the author has depicted in a systematized way the definitions and the essence of the main notions and terms of the theory of military control on all the levels of functioning. Moreover, the review is conducted both in terms of the Russian

(Prussian), and Anglo-Saxon military control culture. In particular, it is noted that the military control system consists of three main elements: control bodies, control posts, and the technical basis of control.

*Bodies of military control* are the teams established by staff or created temporarily, assigned to perform certain tasks (functions) on leading the troops (Armed Forces) in certain sections, as the Ministry of Defense, General (Main) Staff, the armed services, the combat arms, army units, the MOD departments, etc.

*The control post* is a place specially equipped and supplemented with technological devices, from where the commanding officer (commander) together with his staff officers leads the troops (Armed Forces) under his command in the process of preparing and conducting combat operations, as well as on combat alert duty.

*The technical basis of control* encompasses a complex of information, computing, and telecommunication systems (means, complexes, and resources), communication systems and means, automated systems of the troops (Armed Forces) and weapon control, means of data and PC storage, processing and displaying.

Various authors distinguish various levels of military control. Namely, Russian political scientist O. Belkov offers a system of levels on a politological basis: military policy; troops control; the managerial activity of the military personnel targeted at the solution of other tasks assigned to the Armed Forces (not related to the troops control); the moral and psychological support to the troops operation.

According to the approach adopted in the West, the military control is subdivided into the administrative (administrative-economic) and operational components.

*The administrative control* is closer to the other spheres of public administration by its content and legal support: it embraces the organization of troops preparation, their logistic support, selection and assignment of personnel, regulation of interpersonal relationships among the servicemen, etc.

*The operational control* is the control of the troops (Armed Forces) combat operations, with the commanding underlying it, i.e., leading the armed struggle. The main organizational and legal principles of the operational control are the centralized leadership, unity of command, and military discipline. Moreover, the centralized leadership implies that: a) the armed services and the combat arms have a unified command; b) the central bodies of the military control are commissioned to lead the subordinate troops (Armed Forces), and coordinate and guide the activity of all the

subordinate bodies of the military command pursuant to the unified plan; c) the legal acts of the superior bodies are mandatory for the subordinate bodies to carry out.

Important principles of the operational control are also the following: ensuring maximum efficiency of employing the subordinate troops (Armed Forces) and means in carrying out the assigned tasks; operational and flexible response to the change in the operational environment; continuity and security of command; sustainability and development of the military control; high level of organization and creativity in the work of commanders and the staffs; delegating the subordinate commanders with independence in decision-making in performing the tasks *(Mission Command)*. The last principle is based upon the two conceptual guidelines of the Bundeswehr: “the mission-type tactics” *(“Auftragstaktik”)*, and “the leadership development and civic education” *(“Innere Führung”)*, the essence of which leads up to the notion that the orders contain only an indication of what to do, and it is up to the performer to decide on how to do, and that the serviceman is a "citizen in uniform". Thus, the subordinates are provided with the ability to display independence, initiative, willpower, creative approach, and discretion, which facilitates the maximum efficient use of the human resource in operations.

As long as the military control is a component (and by the way, the most important one) of the art of war, then it ought to be harmonized with its key principles and requirements. In this regard, the previous views on the organization of military control have recently undergone radical changes in accordance with the concepts of network-centric combat operations (warfare, operations) and the *“Power to the Edge”.*

Within these conceptions, disrupted are the fundamental principles of the military control, dominating in the traditional control system, such as: *decomposition*, when the world is perceived not as a whole, but in parts; *specialization*; *hierarchy*; *optimization*; *deconfliction*, when the causes for internal conflicts are eliminated via prevention of overlapping functions and the spheres of activity of different units; *centralized planning; decentralized execution*.

In the information society two significant qualities are required from the Armed Forces: *interoperability* and *flexibility*.

In future operations commanders ought to be prepared to act in an environment, where exist such effective factors, exerting significant influence over their actions, and first and foremost, the decision-making, as: *asymmetric warfare: non-state actors; wars inherent in the information age*, when state and non-state actors strive to increase their power by manipulating the mass media; *environmental protection and disaster*

*relief*; *interagency operations*, in which both the formations of other agencies, and other states, journalists, representatives of local authorities, NGOs and private organizations may be involved, which will require commanders to competently build relationships with them; *interaction with such contrasts* as: traditional and non-traditional warfare, hierarchy and anarchy (absence of subordination), centralized and decentralized control, concentration and allocation, active and reactive decision-making, i.e., decision-making by the scheme decide-detect-strike and detect-decide-strike.

In these terms, ensuring the military control ought to meet the following requirements: situational awareness of the commander, planning, making a reasonable decision, effective implementation of decisions.

At the present stage of the organization of combat actions, the problem of achieving superiority in military control is brought to the forefront. At the same time, it is not the concept of the “control cycle” that underlies the theoretical considerations of the given issue, but rather the "control influence". Along with such a modern approach, the primary object of control is the progress of the *operation (combat)*, and the troops control becomes somewhat of a secondary category, and at that now *not only one’s own troops, but also the enemy's troops* become the object of control.

These are the basic principles and considerations mirroring the current trends in the development of the art of war and the culture of military control, which should be incorporated into the program for the development of the military control system in the Republic of Armenia. At the same time, the widespread and reasonable application of modern technologies, in the first place, those of information and communication, as well as of cyber resources, should be the basis for solving all backbone problems related to the improvement of military control in Armenia.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾԻՔ

*Գ. Վ. ՏԱՎԱՐԱԾՅԱՆ, զեներալ-մայոր, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ ՌՊ վարչության պետ*

Հարավային Կովկասի տարածաշրջանի անվտանգային միջավայրի վրա էական ազդեցություն են գործում ոչ միայն տարածաշրջանում ներկայացված համաշխարհային դերակատարների շահերի խաչումն ու բախումը, այլև հարակից տարածաշրջաններում, առաջին հերթին՝ Մերձավորարևելյան տարածաշրջանում, տեղի ունեցող հակամարտային աշխարհաքաղաքական ու ռազմաքաղաքական զարգացումները: Հայաստանի Հանրապետության համար իրադրությունն ավելի է բարդանում ագրեսիվ հարևանի անթաքույց հակահայկական նկրտումների, նրա սպառազինությունների սանձազերծած մրցավազքի, երկու հարևանների ձեռնարկած տնտեսատրանսպորտային շրջափակման հետևանքով: Այս պայմաններում ՀՀ-ն ստիպված է մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսների սղության պայմաններում կենսական կարևորություն տալ ազգային անվտանգության պաշտպանական բաղադրիչին: Միևնույն ժամանակ, ՀՀ-ն պետք է հաշվի առնի նաև զինված պայքարի նոր միջոցների և, համապատասխանաբար, դրա վարման նոր մեթոդների առկայության ու մշտական զարգացման հանգամանքը՝ ըստ այդմ վերափոխելով ու կատարելագործելով, առաջանցիկության սկզբունքով օրվա պահանջներին համապատասխանեցնելով իր ռազմական, կամ պատերազմական, ռազմավարությունը:

Ռազմական ռազմավարությունը ռազմական արվեստի բաղադրամասն է, նրա բարձրագույն տիրույթը, որն ընդգրկում է պետության ռազմական անվտանգության ապահովման, այդ թվում՝ պատերազմի կանխման, ագրեսիայի հետմղմանը պետության և ԶՈՒ-ի պատրաստման, ռազմավարական օպերացիաների և ընդհանուր առմամբ պատերազմի պլանավորման ու վարման տեսությունն ու պրակտիկան[1]:

Ռազմական ռազմավարության մշակման ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալ հիմնական գործոնները.

– տարածաշրջանում և աշխարհում ռազմաքաղաքական ուժերի աշխարհաքաղաքական ու աշխարհառազմավարական դիրքերի, դասավորության փոփոխությունները,

[1] Տես «Военный энциклопедический словарь» («ВЭС»), т. II. М., 2001, с. 607:

– հավանական հակառակորդների հայեցակարգների և դոկտրինների վերանայումը (փոփոխումը),
– սպառնալիքի գործադրման և ռազմական ուժի անմիջական կիրառման ընթացքում հետապնդվող քաղաքական նպատակները,
– պետության ռազմական դոկտրինի դրույթների ճշգրտումը,
– պետության տնտեսական հնարավորությունների և նրա ռազմական հզորության (զինված ուժերի կազմի, վիճակի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացածության մակարդակի) հաշվառումը,
– ռազմական գործողությունների ծավալման դեպքում զինված ուժերի խնդիրների փոփոխումը (ճշգրտումը)[2]:

Ռազմական ռազմավարության խնդիրների շարքն են դասվում.

- պետության պատրաստումը ագրեսիայի հետմղմանը,
- զինված ուժերի ղեկավարումը խաղաղ և պատերազմական ժամանակ,
- պատերազմի բնույթի և ռազմավարական բովանդակության, ռազմական միջոցներով դրա կանխման ուղիների հետազոտությունը,
- բանակաշինությանը և ԶՈՒ-ի տնտեսության, բնակչության ու տարածքի պատրաստմանը ներկայացվող պահանջների որոշարկումը,
- պատերազմի վարման եղանակների և ռազմավարական գործողությունների ձևերի մշակումը,
- ԶՈՒ-ի կիրառման ռազմավարական պլանավորումը,
- ԶՈՒ-ի համակողմանի ապահովման վերաբերյալ պահանջների ձևակերպումը[3]:

Ռազմավարության հիմնական խնդիրների՝ պաշտպանությանը պետության ու նրա ԶՈՒ-ի, ինչպես նաև տարբեր ձևերի ռազմավարական գործողությունների պատրաստման կարևոր բաղադրամասն է **ռազմավարական պլանավորումը,** որի խնդիրն է պատերազմում ԶՈՒ-ի և մյուս զորքերի պատրաստման, կիրառման ու համակողմանի ապահովման կարգի ու եղանակների որոշումը[4]: Այսպիսով՝ ռազմավարական պլանավորումը մի գործընթաց է, որը ներառում է ռազմաքաղաքական ու ռազմավարական իրադրության վերլուծությունը և զինված պայքարի վարման, դրա կազմակերպման ու ապահովման նպատակների, ուժերի, միջոցների և եղանակների որոշումը, որը կատարվում է օպերատիվ-ռազմավարական հաշվարկումների, կանխատեսումների հաստատման ու համապատասխան փաստաթղթերի մշակման միջոցով[5]:

---

[2] Տես *П. Н. Тихоновский.* Военная стратегия как основа военной теории и практики. «Наука и военная безопасность», 2003, № 1 (http://militaryarticle.ru/nauka-i-voennaya-bezopasnost/2003/11837-voennaja-strategija-kak-osnova-voennoj-teorii-i):

[3] Տես «ՎՅՀ», т. II, с. 607, նաև՝ *Պ. Ն. Տիխոնովսկի,* Նշ. աշխ.:

[4] Տես «ՎՅՀ», т. II, с. 607:

[5] Տես «Стратегическое планирование». «Война и мир в терминах и определениях». Военно-политический словарь. Под общей ред. Д. Рагозина (http://www.voina-i-mir.ru/article/240):

Արևմտյան կառավարային մշակույթում ընդունված է, որ «ռազմավարական պլանավորումը այն կազմակերպական կառավարային գործունեությունն է, որի նպատակն է գերակայությունների որոշումը, ջանքերի ու ռեսուրսների կենտրոնացումը, գործողությունների ինտենսիվացումը, այն բանի ապահովումը, որ աշխատողներն ու այլ շահագրգիռ անձինք աշխատեն ընդհանուր նպատակին հասնելու համար, գան համաձայնության սպասվելիք արդյունքի/արգասիքի հարցում, ինչպես նաև ուղեգծի գնահատումը և շտկումը ըստ միջավայրի փոփոխության»[6]:

«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պաշտպանության ռազմավարական պլանավորումը սահմանվում է որպես «ռազմական անվտանգության համակարգի կարողությունների և կառուցվածքի պլանավորմանն ու զարգացմանն ուղղված համընդգրկուն, աստիճանակարգված, հեռանկարին միտված և շարունակական գործընթաց»[7]:

Պաշտպանության ռազմավարական պլանավորման սկզբունքները պայմանավորված են ռազմական ռազմավարության հետևյալ հիմնական օրինաչափություններով, որոնք բնորոշում են զինված պայքարի միջոցների ու եղանակների շարունակական փոփոխումը.

- ժամանակակից պատերազմների բնույթի փոփոխությունը,
- սպառազինության, ռազմական և հատուկ տեխնիկայի կատարելագործումը,
- զինված ուժերի և ռազմական կազմակերպության այլ կառույցների կիրառման ձևերի զարգացումը,
- ռազմական գործողությունների վարման եղանակների զարգացումը,
- պետության ռազմական կազմակերպության, առաջին հերթին՝ զինված ուժերի նոր կերպարի կերտումը[8]:

Ընդհանուր առմամբ «ռազմավարական պլանավորման հիմնական խնդիրն է մեծ ցանկից (առաջին փուլում՝ հավելուրդային) ընտրել այն հնարավոր գերակա միջոցառումները, որոնք ռեսուրսային սահմանափակումների ու պլանավորման հորիզոնի շրջանակներում ռացիոնալ ռեսուրսային ապահովման սահմաններում ապահովում են ռազմավարական նպատակին առավելագույն մոտեցումը»[9]: Ռազմավարական պլանավորումը հիմնվում է իրավիճակի կառավարման այնպիսի եղանակների մշակման վրա, որոնք լինեն ոչ այնքան հրահանգային (հրամանատվական) բնույթի, որքան հանդես գան որպես զարգացման միտումների փոփոխման նպատակով կա-

[6] Տես “The Basic of Strategic Planning, Strategic Management and Strategy Execution” (www.balancedscorecard.org/BSC-Basics/Strategic-Planning-Basics):

[7] Տես «Պաշտպանության մասին» ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի հմ. ՀՕ-196-Ն օրենքը, հոդ. 3, կետ 3 (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=117631):

[8] Տես *С. Г. Чекинов, С. А. Богданов.* Военная стратегия: взгляд в будущее. «Военная мысль» («ВМ»), 2016, № 11:

[9] Տես *В. В. Баскаков, С. А. Федосеев, А. Н. Фомин.* Стратегическое планирование на предприятиях оборонно-промышленного комплекса. «ВМ», 2015, № 11:

տարված՝ կառավարման օբյեկտների գործունեության օրինաչափությունների փոփոխում և ռեսուրսների վերաբաշխում[10]:

Պաշտպանության ռազմավարական պլանավորման դեպքում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խնդիրները.

– պլանավորվող ժամանակահատվածում պետության շուրջ ձևավորված անվտանգային միջավայրի, ռազմաքաղաքական, աշխարհատնտեսական ու ռազմավարական իրավիճակի և դրա զարգացման միտումների գնահատումը, ռազմական սպառնալիքների ու մարտահրավերների որոշարկումը և կանխատեսումը,
– պաշտպանության ռազմավարական պլանավորման նկատառումների ձևակերպումը,
– պետության անվտանգության ապահովման ու պաշտպանության առաջնահերթությունների որոշումը,
– պաշտպանության համակարգի և, մասնավորապես, զինված ուժերի դերերի, առաջադրանքների և խնդիրների սահմանումն ու հստակեցումը,
– պաշտպանության համակարգի և, մասնավորապես, զինված ուժերի անհրաժեշտ կարողությունների մակարդակի, կազմի ու կառուցվածքի որոշումը,
– զինված ուժերի և մյուս զորքերի զարգացմանը, կազմի ու կառուցվածքի կատարելագործմանը նպատակաուղղված միջոցառումների պլանավորումը, դրանց կատարման ընթացքի գնահատումը, արդյունքների ամփոփումն ու վերլուծությունը,
– սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացումը,
– պետական և տարածքային կառավարման մարմինների՝ պաշտպանության համակարգի զարգացման խնդիրների կատարմանը նպատակաուղղված գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացումը,
– պաշտպանության ոլորտին հատկացվող միջոցների պլանավորումը, նպատակային և ըստ առաջնահերթության բաշխումը,
– պաշտպանության ոլորտին ուղղվող պետական ֆինանսների օգտագործման թափանցիկության ապահովումը,
– պաշտպանության ռազմավարական պլանավորման փաստաթղթերում ամրագրված միջանկյալ արդյունքների և ռազմավարական նպատակների իրագործման ընթացքի գնահատումը, ամփոփումն ու, ըստ անհրաժեշտության, պլանավորման հաջորդ փուլերի միջոցառումների հստակեցումը:

Համաձայն ռազմավարական պլանավորման ընդհանուր տեսության՝ դրա հիմնական փուլերն են.

1. առաքելության և նպատակների որոշումը,

[10] Տես նույն տեղում:

2. միջավայրի վերլուծությունը, որը ներառում է տեղեկույթի հավաքում, կազմակերպության ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև հնարավորությունների որոշումը՝ եղած արտաքին ու ներքին տեղեկույթի հիման վրա,
3. ռազմավարության ընտրությունը,
4. ռազմավարության իրագործումը,
5. կատարման գնահատումն ու վերահսկումը[11]:

**Առաքելությունը** հայեցակարգային մտադրությունն է շարժվելու որոշակի ուղղությամբ, այն միտված է դեպի ապագան, ցույց է տալիս, թե ինչի վրա պետք է կենտրոնացվեն ջանքերը, որ արժեքներն են համարվում գերակա:

**Նպատակը** առաքելության կոնկրետացումն է այնպիսի ձևով, որ լինի մատչելի դրանց իրագործումը կառավարելու համար:

Ռազմավարական վերլուծության ժամանակ կիրառվում են զանազան մեթոդներ[12], որոնցից առավել կիրառելիներն են Մակկենզիի մատրիցը *(GE McKinsey)*, Բոստոնի խորհրդատվական խմբի մատրիցը *(BCG matrix)*, ՈՒԹՀՍ վերլուծություն (ուժեղ–թույլ, հնարավորություն–սպառնալիք, *SWOT-analysis*):

**Ռազմավարությունը** զարգացման որակապես որոշարկված երկարաժամկետ ուղղությունն է, որը վերաբերում է գործունեության ոլորտին, միջոցներին ու ձևերին, ներքին փոխհարաբերությունների համակարգին, ինչպես նաև արտաքին միջավայրում ունեցած դիրքին, և որը հանգեցնում է նպատակների իրագործմանը:

**Ընտրված ռազմավարության գնահատումը** այն հարցի պատասխանն է, թե արդյոք տվյալ ռազմավարությունը կապահովի դրված նպատակների իրագործումը[13]:

Ռազմական բնագավառում, մասնավորապես՝ բանակաշինության ոլորտում, ռազմավարական պլանավորման փուլեր կարող են լինել՝ պլանավորման համար միասնական ելակետային տվյալների ձևավորումը, ՀՈՒ-ի կերպարանքի ռազմառազմավարական ու ռեսուրսատնտեսական հիմնավորումը, բանակաշինության ծրագրումը, ազգային պաշտպանության համար բյուջեի ձևավորումը[14]:

Ըստ վերը ասվածի իմաստի՝ պաշտպանության ռազմավարական պլանավորման փուլերի սահմանման ժամանակ հաշվի է առնվում դրանց ֆինանսաբյուջեական ապահովման անհրաժեշտությունը՝ միջնաժամկետ ծախսերի ծրագրի շրջանակներում:

---

[11] Տես «Стратегическое планирование. Понятие и этапы стратегического планирования» (www.stplan.ru/articles/theory/strplan.htm):

[12] Տես *Դ. Է. Տոնոյան,* ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման սկզբունքներն ու մեթոդները: «ՀԲ», 2015, հմ. 3:

[13] Տես «Стратегическое планирование. Понятие и этапы …» (www.stplan.ru/articles/theory/strplan.htm):

[14] Տես *А. В. Квашнин.* Перспективная система планирования строительства Вооруженных сил. «ВМ», 2001, № 6:

Պաշտպանության ռազմավարական պլանավորման հերթական փուլը մեկնարկում է ՀՀ Կառավարության որոշմամբ: Ստեղծվում է այդ գործընթացը համակարգող աշխատանքային մարմին՝ միջգերատեսչական հանձնաժողով, որն ընդգրկում է պետական կառավարման համակարգի մարմինների, ինչպես նաև պաշտպանության ոլորտին առնչվող այլ կազմակերպությունների ու հաստատությունների ներկայացուցիչների: Նշված հանձնաժողովի՝ պաշտպանության և զինված ուժերի զարգացման խնդիրների մշակմանն աջակցելու նպատակով ստեղծվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատանքային խումբ:

Կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա հանձնաժողովը մշակում և ներկայացնում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանելու կամ դրանց որոշ դրույթներ վերանայելու վերաբերյալ առաջարկություններ:

Պաշտպանության ոլորտի քաղաքականության նախնական տարբերակը մշակելուց և շահագրգիռ կառույցների հետ համաձայնեցնելուց հետո աշխատանքային խումբը մշակում է Զինված ուժերի զարգացման մտահղացումը (հայեցակարգը կամ ռազմավարությունը[15]), որում հաշվառվում են պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների լրամշակման արդյունքները:

Զինված ուժերի զարգացման մտահղացումը, որն ըստ էության ռազմավարությունն է, պետք է արտացոլի զինված ուժերի զարգացման նպատակը, գերակայությունները, խնդիրները և դրանց կատարման եղանակներն ու միջոցները, ցուցանիշներն ու ակնկալվող արդյունքները, ինչպես նաև հասանելի ռեսուրսների բաշխման առաջնահերթությունները: Տվյալ մոտեցումը նպատակաուղղված է կոռուպցիոն ռիսկերի նվազարկմանը և դրանց կառավարմանը:

Պաշտպանության ռազմավարական պլանավորման նպատակների ու խնդիրների կատարման ընթացքը գնահատելու նպատակով ձևավորվում է գնահատման ու վերանայման աշխատանքային խումբ, որի եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա պաշտպանության նախարարը կարող է դիմել վարչապետին՝ առաջարկելով փոփոխություններ կատարել Զինված ուժերի զարգացման պլանում և (կամ) սպառազինության ու ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրում:

Այսպիսով՝ պաշտպանության ռազմավարական պլանավորումը պետության պաշտպանական համակարգի պլանավորմանն ու առկա հնարավորությունների կատարելագործմանը նպատակաուղղված համակողմանի, համակարգված, հեռանկարային գործընթաց է, որով նախատեսվում է գիտական հենքի վրա կատարված համակողմանի վերլուծության արդյունքներով կանխորոշել ու մշտական հսկողության տակ պահել պետության պաշտպանության բնագավառի առաջնահերթ խնդիրների լուծման ընթացքը:

[15] Տես *Լ. Գ. Այվազյան,* Պաշտպանության ռազմավարական վերանայումը՝ որպես պաշտպանության պլանավորման կարևոր բաղադրիչ: «ՀԲ», 2015, հմ. 3:

# СТРАТЕГИЧЕСКОЕ ПЛАНИРОВАНИЕ ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ КАК НЕОБХОДИМЫЙ ИНСТРУМЕНТ ПОСЛЕДОВАТЕЛЬНОГО РАЗВИТИЯ ОБОРОННОЙ СИСТЕМЫ

*Г. В. ТАВАРАЦЯН, генерал-майор, начальник Управления СП ГШ ВС РА*

РЕЗЮМЕ

Стратегическое планирование обороны – это процесс анализа военно-политической и стратегической обстановки и определения целей, сил, средств и способов ведения вооруженной борьбы, ее организации и обеспечения. Оно заключается в проведении оперативно-стратегических расчетов, установлении прогнозов и разработке соответствующих документов стратегического планирования.

Его основными задачами являются: оценка безопасностной среды, военно-политической, геоэкономической и стратегической обстановки вокруг государства в планируемый период времени, определение и прогнозирование военных угроз и вызовов; определение первоочередностей обеспечения и защиты безопасности государства; определение и уяснение ролей, заданий и задач оборонной системы в целом и, в частности, вооруженных сил; определение необходимого состава и структуры ВС, уровня их возможностей; развитие вооружения и военной техники; планирование средств, предоставляемых оборонной сфере, их целевого распределения в соответствии с первоочередностями.

Стратегическое планирование обороны можно разделить на ряд этапов: определение миссии и целей ВС; анализ среды; выбор стратегии; осуществление стратегии; оценка результатов и контроль.

# DEFENSE STRATEGIC PLANNING AS A NECESSARY TOOL FOR THE CONSISTENT DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARMENIA'S DEFENSE SYSTEM

*G. V. TAVARATSYAN, Major General, Head, Strategic Planning Department of the General Staff, the RA Armed Forces*

SUMMARY

Defense Strategic Planning is a process of analyzing the military-political and strategic situation, and determining the goals, forces, means and methods of waging, organizing and supporting an armed struggle. It consists of conducting operational and strategic calculations, making forecasts, and developing relevant strategic planning documents.

Its main tasks are: assessment of the security environment, military-political, geo-economic and strategic situation around the state within the

planned period of time, the determination and prediction of military threats and challenges; identification of the priorities for ensuring and protecting the state; determination and clarification of the roles, tasks and goals of the defense system in general and, in particular, of the armed forces; determination of the necessary composition and structure of the Armed Forces, the level of their capabilities; development of weapons and military equipment; planning of the funds provided for the defense sector, their targeted distribution in accordance with their priorities.

Defense Strategic Planning can be divided into a number of stages: setting the mission and objectives of the Armed Forces; analyzing the environment; choosing the strategy; implementing the strategy; assessing results, and monitoring.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

*Ա. Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական,*
*ՀՀ ՊՆ ՈԱԿ-ի ռազմատեխնիկական բաժնի պետ*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած պետության ռազմական անվտանգության ամրապնդման կարևոր միջոցներից է նրա ռազմաարդյունաբերական համալիրը: Ընդսմին ռազմաարդյունաբերական համալիրի կայացման ու զարգացման կարևոր պայմանը համապատասխան գիտատեխնիկական բազայի առկայությունն է, որի զարգացումն անմիջականորեն կախված է իր գիտատեխնիկական համալիրի նկատմամբ տվյալ պետության վարած գիտակրթական և ռազմատեխնիկական քաղաքականությունից:

Գոյություն ունի մի տարածված տեսակետ, թե «գեներալները միշտ պատրաստվում են անցյալ պատերազմին»[1], ինչը բավական մոտ է ճշմարտությանը, քանի որ զորապետները մեծ տեղ են տալիս իրենց փորձին և անցած դասերի վերլուծությանը: Այս առումով կարող ենք ասել, որ նրանք որոշակի չափով պահպանողական են, թեև ռազմական բնագավառում վերջին 60-70 տարիներին տեղ գտած զարգացումների վերլուծությունը ցույց է տալիս, որ, այդուհանդերձ, կան մի քանի պետություններ, որոնց ռազմական մշակույթը հաղթահարել է այդ իներտությունը կամ պահպանողականությունը, և որոնք հաջողությամբ գործնականում կիրառում են ամենանոր նվաճումները: Ընդսմին այնտեղ ռազմաարդյունաբերական ձեռնարկությունները ղեկավարում են հենց նախկին գեներալները: Այս տեսակետից հատկապես առանձնանում է Իսրայելը:

## ՌԱՀ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

1) Ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացման առաջավոր համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ռազմական նախանշանակման արտադրանքի նախագծման, ստեղծման և արդյունաբերական թողարկման բնագավառում ավելի ու ավելի է խորանում պետական ու մասնավոր հատվածների ընկերությունների ու ձեռնարկությունների միջև կոոպերացիան: Հատկապես մեծ տարածում է ստացել նորամուծական տեխնո-

[1] Տես *У. Черчилль*. Афоризмы. Цитаты. «Сводная энциклопедия афоризмов» (https://dic.academic.ru/dic.nst/aphorism/1631/Уинстон):

լոգիաների կիրառմամբ պետական և մասնավոր ընկերությունների համատեղ նախագծերի իրականացումը[2] սպառազինության և ռազմական տեխնիկայի ու ռազմական նախանշանակման այլ արտադրանքի մշակումների և արտադրության ասպարեզում:

Վերջին 20 տարում SS ոլորտի և նորամուծական տեխնոլոգիաների թռիչքային զարգացումը պայմանավորված է նոր մասնավոր ընկերությունների («Մայկրոսոֆտ», «Սինոպսիս», «Էպլ» և այլն) ստեղծմամբ, որոնք շուկայում «տեղավորվելու», հաստատվելու և ընդարձակվելու համար զարկ տվեցին նորագույն տեխնոլոգիական ուղղությունների մշակմանն ու հիմնականում քաղաքացիական նախանշանակման ապրանքների արտադրությունում և ծառայությունների մատուցման բնագավառում դրանց ներդրմանը՝ ոլորտում դառնալով գերակշռող ու որոշիչ: Այսպես. «Մայկրոսոֆտ» և «Տոյոտա» ընկերությունների ԳՀՓԿԱ-ներին հատկացվող բյուջեն ավելի քան 2 անգամ գերազանցում է ԱՄՆ-ում սպառազինություն արտադրող 5 ամենախոշոր ընկերությունների ԳՀՓԿԱ-ների բյուջեները միասին վերցրած (4 մլրդ ԱՄՆ-ի դոլար):

Ռազմաարդյունաբերությունում հենց այս առաջավոր, բարձր նորամուծական տեխնոլոգիաները կիրառելու մտադրությամբ է պայմանավորված ավանդաբար ռազմական պատվերներ կատարող խոշոր պետական և մասնավոր հատվածի առաջատար ընկերությունների միջև կոոպերացիայի զարգացումը: Եվ եթե նախկինում ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկություններն էին առաջավոր տեխնոլոգիաներ «մատակարարում» լայն սպառման ապրանքներ արտադրող ընկերություններին, ապա հիմա տեղի է ունենում հակառակը: Մասնավորապես՝ ԱՄՆ-ում անցած դարի 80-ական թվականներին գիտատեխնոլոգիական ոլորտը կարգավորող նոր օրենսդրության հիմքում դրվեց այն «համոզմունքը, որ հիմնարար ու տեխնոլոգիական հետազոտությունների մեջ ներդրումների ավանդական դաշնային քաղաքականությունը, որը կողմնորոշված չէր դեպի այդ հետազոտությունների առևտրային օգտագործում, և որը հենվում էր դաշնային տեխնոլոգիաները մասնավոր հատվածին տրամադրելու ձևարկված մեխանիզմների վրա, առավելագույնս չէր օգտագործում ի հաշիվ դաշնային բյուջեի կատարված հոտազոտությունների արգասիքների առևտրային ներուժը, ինչպես նաև մասնավոր հատվածի նախաձեռնողությունը»[3]:

[2] Տես, օրինակ, «Ликвидация провалов: зачем в мире создают центры развития государственно-частного партнерства». «RG.RU», 14.12.2010 (https://rg.ru/2010/12/14/partnerstvo.html); *Manisha Verma.* Role of the State Partnership with the Private Sector. «Journal of Development Policy and Practice», 01.01.2016 (http://journals.sagepub.com/doi/abs/10.1177/2455133315613229?):

[3] Տես *В. П. Заварухин.* Партнерство государства и частного сектора США. «Российское предпринимательство», 2000, № 9 (https://creativeconomy.ru/lib/233):

Տվյալ պարագայում ծագում են ռազմական ոլորտի ստանդարտներին նոր տեխնոլոգիաների համապատասխանեցման հետ կապված խնդիրներ, քանի որ դրանց պահանջներն անհամեմատ ավելի խիստ են, քան լայն սպառման համար նախատեսված արտադրանքի ստանդարտները, և առաջանում է արտաքին անբարենպաստ ազդեցություններին դիմացող հատուկ համալրող տարրերի արտադրության անհրաժեշտություն: Այս խնդիրն ավելի է բարդանում Հայաստանի պարագայում, քանի որ չունենք նշված բազային տարրերի արտադրություն, իսկ արտերկրից ներկրումը բավական բարդ է՝ դրանց ռազմական նշանակության պատճառով:

2) Ընդհանրապես ռազմաարդյունաբերական համալիրի հիմնական գործառույթը սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և ռազմական նախանշանակման այլ միջոցներով զինված ուժերի պահանջմունքների ու կարիքների բավարարումն է (նախագծում, արտադրում, մատակարարում): Սակայն զարգացած և անընդհատ զարգացող ռազմաարդյունաբերական համալիրն անուղղակի ձևով իրականացնում է մի կարևոր գործառույթ ևս: Նա, գիտության նվաճումների և բարձր տեխնոլոգիական լուծումների հիման վրա նոր, գերճշգրիտ և մեծ արդյունավետությամբ օժտված զինատեսակներ ու ռազմական տեխնիկա արտադրելով, զինվորականներին ոչ միայն հնարավորություն է տալիս, այլև պարտադրում է մշակել և կիրառել պատերազմների ու մարտական գործողությունների նոր ռազմավարություն և մարտավարություն՝ յուրային զորքերի նվազեցմամբ և հակառակորդի կորուստների մեծացմամբ: Այսպես. պատերազմի հիմնական օբյեկտիվ օրենքներից մեկով սահմանվում է զինված պայքարի ձևի կախումը զենքի բնութագրերից. «մարդկային հասարակության զարգացման ընթացքում տեղի է ունենում զինված պայքարի բնույթի ուղղորդված և անհակադարձելի փոփոխություն, որն արտահայտվում է խոցվող օբյեկտների քայքայումից հետևողական անցմամբ դեպի դրանց գործառման խաթարում, իսկ հետագա զարգացման հետևանքով՝ նախատեսված գործառման փոփոխում»[4]:

3) Ռազմաարդյունաբերության ոլորտում առկա են նաև միջազգային կոոպերացիայի (համընդհանրացման) միտումները, երբ տարբեր պետություններ պետական մակարդակով իրականացնում են ռազմական նախանշանակման համատեղ նախագծեր և կազմակերպում համատեղ արտադրություն: Ասվածի օրինակ են ռուս-հնդկական «Բրահմոս»-ը, «Սուխոյ Սու-30ՄԿԻ»-ն, ամերիկա, իսրայելական «Էրոու»-ն (մասնագիտանում է ՀՕՊ-ի միջոցների մշակման և արտադրության ոլորտում), իսրայելա-ադրբեջանական («Օրբիտեր» տեսակի ԱԹԱ-ների արտադրություն) նախագծերը:

[4] Տես *В. М. Лисовой.* О законах развития вооруженной борьбы и некоторых тенденциях в области обороны. «Военная Мысль», 1993, № 5:

Աշխարհում միայն ԱՄՆ-ն ու ՌԴ-ն են, որ ունեն իրենց պաշտպանական պահանջմունքներն ամբողջովին կամ գրեթե ամբողջովին սպասարկող ռազմաարդյունաբերական համալիրներ, մինչդեռ այդպիսի համալիր ունեցող մյուս պետությունները (այդ թվում՝ միջուկային և զանգվածային ոչնչացման այլ զենքեր ունեցողները), որքան էլ տնտեսապես զարգացած լինեն, մասամբ են բավարարում իրենց զինված ուժերի կարիքները: Ուստի և մի շարք պետություններ, սպառազինության և որոշ տեսակների ռազմական նախանշանակման արտադրանք թողարկելու համար միավորելով իրենց գիտական, տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները, ստեղծում են համատեղ հետազոտական կենտրոններ և արտադրական ընկերություններ:

## ՀՀ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ՀՀ ռազմաարդյունաբերության ոլորտի համակարգված և կայուն զարգացմանը խոչընդոտում են[5].

- ոչ լիարժեք ռազմավարական պլանավորումը, մասնավորապես.
  - ռազմավարական պլանավորման և իրագործման միջև թույլ փոխկապվածությունը,
  - գերակայությունների որոշման բնագավառում ոչ համակարգային մոտեցումը,
  - հեռանկարային/ռազմավարական և երկարաժամկետ նախագծեր չլինելը,
  - «ներմուծում, թե՞ տեղական արտադրություն» որոշումների կայացման մեխանիզմ չլինելը,
- պատվերների անկայունությունը,
- պատվերների փոքր ծավալները,
- ցածր մակարդակի համագործակցությունն ու կոոպերացիան,
- բնագավառի ոչ բավարար ֆինանսավորումը և աշխատողների ցածր աշխատավարձերը,
- կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման քաղաքականության անբավարարությունը, ինչի հետևանքով ՌԱՀ-ում չկան որակյալ կառավարչական և մասնագիտական կադրեր:

---

[5] Այս մասին տես նաև *Ա. Ռ. Թովմասյան,* ՀՀ ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման համար խոչընդոտների և դրանց հաղթահարման ուղիների որոշման հարցի շուրջ. ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն: «ՀԲ», 2017, հմ. 1–2:

## ՀՀ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆՀԱՊԱՂ ԼՈՒԾՈՒՄ ՊԱՀԱՆՁՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

- Անկախացումից, Հայաստանի տնտեսության ազատականացումից և մասնավորեցումից հետո պետության տնտեսական կարողությունների հաշվառման և գույքագրման ուղղությամբ ամփոփ և համակարգված աշխատանքներ չեն կատարվել: Մասնավորապես՝ նշենք այն ուղղությունները, որոնց վերաբերյալ հստակ և ամփոփիչ տվյալների առկայությունը էապես կնպաստի ոլորտի արդյունավետության ու մրցունակության մեծացմանը: Դրանք են՝ արտադրական հզորությունները և միջոցները, գիտատեխնիկական կադրերը, հումքը և համալրող դետալները, գիտաարտադրական պաշարը: Ուստի նպատակահարմար է ստեղծել ու վարել հետևյալ ցուցակագրությունը. արտադրական ընկերություններ, արտադրական միջոցներ, գիտահետազոտական ինստիտուտներ և կենտրոններ, գիտական կադրեր, ինժեներական կադրեր, տեխնիկական կադրեր (մասնագետներ), գիտաարտադրական պաշար, հումք և համալրող տարրեր:

  Նման ցուցակագրություն չունենալու պատճառով մենք զրկվում ենք մեր գիտական, տեխնիկական և արտադրական կարողություններն իրատեսորեն, հիմնավորված ու ամբողջապես գնահատելու հնարավորությունից:
- Կատարված մշակումների, պատրաստված նմուշների նախագծային փաստաթղթեր չունենալու կամ դրանց թերի լինելու հանգամանքը, որը, կարելի է ասել, համատարած բնույթ է կրում, հատկապես բնորոշ է ռազմական պատվեր կատարող նորաստեղծ մասնավոր ընկերությունների գործելակերպին:
- Արտադրությունը հիմնականում արհեստագործական բնույթի է, չեն կիրառվում մշակված տեխնոլոգիական օպերացիաներ, չկա համապատասխան սարքավորանքի հավաքակազմ, ինչի պատճառով գերակշռում է ձեռքի աշխատանքը:

## ՀՀ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացման օրենսդրական հիմքեր ստեղծելու համար վերջին մի քանի տարում ընդունվել է «ՀՀ Ռազմաարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքը[6], ՀՀ Նախագահի կարգադրությամբ հաստատվել է «Ռազմաարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությունը»[7]:

[6] Տես «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ 2015 թ. մարտի 25-ի հմ. ՀՕ-16-Ն օրենքը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID= 97154):

[7] Տես «Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարություն», ՀՀ Նախագահի 2017 թ. հունվարի 31-ի հմ. ՆԿ-15-Ն կարգադրության հավելված (http://www.president.am/files/legislation/3647.pdf):

Հայաստանի Հանրապետությունը, հիմնվելով նշված օրենսդրական ակտերի վրա, ձեռնամուխ է եղել հետևյալ քայլերի իրականացմանը:

- ԶՈՒ-ի և մյուս զորքերի պահանջմունքների բավարարման համար գիտաարտադրական պաշար ունեցող գիտատեխնիկական համալիրի ստեղծում, որը համաշխարհային զարգացման միտումների հաշվառմամբ կմշակի և կկազմի ՌԱՀ-ի հետազոտական, գիտատեխնիկական և նորամուծական աշխատանքների կատարման երկարաժամկետ ծրագիր:

  Գիտատեխնիկական համալիրի գործունեությունը հիմնվելու է ՀՀ գիտական և գիտաարտադրական հնարավորությունների գնահատմամբ սահմանված ռազմատեխնիկական քաղաքականության գերակա ուղղություններին համապատասխանող համալիր պետական ծրագրի վրա՝ դրա կատարման նկատմամբ պետական հսկողության իրագործման պայմանով:
- Գոյություն ունեցող արդյունաբերական տեխնոլոգիական հիմքի վրա նոր սերնդի գիտատար մրցունակ ռազմական և քաղաքացիական արտադրանքի թողարկման կազմակերպում՝ նպատակաուղղված կառավարման նորամուծական մոդելների կիրառմամբ նոր որակական մակարդակի արտադրության ստեղծմանը և արտահանման հնարավորությունների ընդլայնմանը: Օրինակ՝ հարկ է շարունակել և զարգացնել արհեստական բանականության ստեղծման ու կիրառման ուղղությամբ աշխատանքները, ինչը լայն հնարավորություններ է ստեղծում ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական նախանշանակման «խելացի» արտադրանքի թողարկման համար:
- Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման բարձր ցուցանիշներ ապահովելու համար հիմնական արտադրության ավելի բարձր տեխնոլոգիական մակարդակի ապահովում:
- Պետական օժանդակությամբ և համապատասխան գիտատեխնիկական ու արտադրատեխնոլոգիական ներուժի ներգրավմամբ համակարգաստեղծ կազմակերպությունների ստեղծում:
- Ներքին և արտաքին շուկաներում հայրենական արտադրանքի դիրքի ամրապնդմանն ուղղված միջոցառումների իրականացում:
- Երկարատև արտադրաշրջանակով ՍՈՏ, ՌՏՈՒ-ի և հատուկ տեխնիկայի ներհանրապետական գնման երկարաժամկետ պետական պաշտպանական պատվերի համակարգի ներդրում և զարգացում:
- Քաղաքացիական ու ռազմական հատվածների փոխգործության զարգացում:
- ՌԱՀ-ի վիճակի մշտազննում և բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում:
- Բարձր տեխնոլոգիաների ոլորտում ռազմատեխնիկական քաղաքականության հետևյալ ուղղությունների շարունակական զարգացում.

– լազերային, օպտոէլեկտրոնային, ռադիոէլեկտրոնային և ռադիոտեղորոշումային սպառազինություն,
– անօդաչու թռչող ապարատներ, այդ թվում՝ հարվածային անօդաչու թռչող ապարատներ և դրանց հակազդեցության միջոցներ,
– հետախուզության տեխնիկական միջոցներ,
– կապի և ռադիոէլեկտրոնային պայքարի նոր սերնդի միջոցներ,
– փոքր, միջին և մեծ հեռահարությամբ հրթիռներ և այլն:

Նշված ուղղությունների զարգացման համար հանրապետությունում անհրաժեշտ է ստեղծել մետաղամշակման կենտրոններ, ճշգրիտ դետալներ մշակող հաստոցային հավաքակազմ, ռադիոէլեկտրոնային դետալների, պայթուցիկ նյութերի՝ հեքսոգենի, օկտոգենի ու վառելիքային նյութերի, համաձուլվածքների արտադրություն, յուրացնել բաղադրյալ (կոմպոզիցիոն) նյութերի արտադրության տեխնոլոգիաները:

Հարկ է նշել, որ ռազմաքաղաքական իրավիճակի թելադրանքով ռազմատեխնիկական քաղաքականության ուղղությունները կարող են փոփոխվել:

## ՀՀ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

### 1. ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերության կոմիտեի՝ որպես պետական մարմնի կայացման հարցերը

ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերության կոմիտեի կանոնադրության, կառավարման կազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի մշակված նախագծի հաստատումից հետո հնարավորություն կտա.

- որպեսզի ՌԱԿ-ն վարի ինքնուրույն ռազմատեխնիկական քաղաքականություն, որը համահունչ լինի «Ռազմաարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությանը»[8],
- տարանջատելու սպառազինության և ռազմական տեխնիկայի պատվերի կատարողին, պատվիրատուին և շահագործողին՝ պայմանավորվածությունների հնարավորինս բացառմամբ և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմամբ,
- ռազմաարդյունաբերության ոլորտում սահմանված կարգով ստեղծելու ենթակառուցվածքներ, որոնք կուսումնասիրեն արտերկրի ռազմաարդյունաբերական համալիրների զարգացման միտումները և կմշակեն հայրենական նպատակային համալիր ծրագրեր:

### 2. Ռազմատնտեսական արդյունավետության գնահատման գործուն մոդելների ներդրում

Զինված ուժերի ծախսերի պլանավորման և ռազմաարդյունաբերական համալիրի կառավարման առաջնահերթ լուծում պահանջող պրոբլեմն է արդյունավետ ռազմատնտեսական մոդել չլինելու փաստը, մի մոդել, որում պետք

[8] Տես նույն տեղում:

է հաշվառված լինեն ռազմական, տնտեսական, բարոյահոգեբանական, կադրային, ինչպես նաև այլ պետությունների հետ ունեցած քաղաքական, ռազմական, տնտեսական կապերն ու մի շարք այլ գործոններ: Մոդելը պետք է լինի տնտեսական ծախսումների առումով օպտիմալ և իր մասով ապահովի մի շարք համապետական խնդիրների լուծում: Այդ խնդիրներից են.

- ռազմական սպառնալիքների չեզոքացումը կամ հավանական պատերազմի նպաստավոր ընթացքի ու ելքի ապահովումը,
- պետության բարձրամակարդակ պաշտպանունակության ապահովումը,
- անձնակազմի՝ անհրաժեշտ մակարդակի հայրենասիրության ու բարոյական ոգու և մարտունակության ապահովումը,
- զինված ուժերի մարտական պատրաստության ապահովումը, և այլն:

Ինչպես ցույց է տալիս առաջավոր միջազգային փորձը, ռազմատնտեսական խնդիրների լուծման համար անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները.

- ռազմատնտեսական հարաբերությունների ուսումնասիրում և ռազմատնտեսական քաղաքականության գիտական հիմքերի մշակում,
- բոլոր ուժային կառույցների համար միասնական ռազմասոցիալական քաղաքականության հայեցակարգի մշակում, մի հայեցակարգի, որում պետք է որպես մեկ ընդհանուր համակարգ դիտվի և ուսումնասիրվի զինծառայողների «կյանքի փուլաշրջանը»,
- ուժային կառույցներում հաշվապահական հաշվառման վերաբերյալ տեսական և գործնական հանձնարարականների մշակում ու ներդրում,
- ռեսուրսապահովվածության խնդիրների և խնայողության ռեժիմի կիրառական մշակում:

### 3. ՀՀ ռազմաարդյունաբերական համալիրի սուբյեկտների կառավարման ավտոմատացված համակարգի զարգացում

ՀՀ ռազմաարդյունաբերական համալիրում չկա միասնական կառավարման ավտոմատացված համակարգ, սուբյեկտների միջև տեղի չի ունենում տեղեկույթի փոխանակում, ինչպես նաև փաստաթղթաշրջանառությունը կատարվում է թղթային եղանակով, ինչի պատճառով էապես նվազում է համալիրի կառավարման օպերատիվությունը: Կառավարման ավտոմատացված համակարգը կառավարվող օբյեկտի կազմիաստիքային կառուցվածքին նման կառուցվածք ունեցող մի տարածայնորեն աստիճանակարգված բազմաօբյեկտ ավտոմատացված համակարգ է, որի օբյեկտները զինված են համակարգչային ու կապի ժամանակակից միջոցներով և ապահովում են իրար հետ տեղեկույթի անընդհատ փոխանակում: Որպես համակարգի գործունեության նպատակ կարելի է նշել՝ ռազմաարդյունաբերական համալիրի սուբյեկտների զարգացմանը նպաստող պայմանների ստեղծման համար պետական պատասխանատվության և կատարողի նկատմամբ կանոնավոր հսկողության սահմանումը, ռազմական ապրանքի և գույքի մատակարարման համար հատկացված բյուջեական միջոցների նպատակային և արդյու-

նավետ օգտագործումը, ընթացիկ աշխատանքների օպերատիվ կազմակերպումը և տեղեկույթի արագ մատչելիության ապահովումը:
Համակարգը պետք է ներառի՝

- *արտադրության կառավարման համակարգ,* որը կարևոր տեղեկատվական համակարգ է, քանի որ հնարավորություն է տալիս մեծացնելու աշխատանքների կատարման օպերատիվությունը, ժամանակին և հավաստի կերպով որոշելու թողարկվող արտադրանքի ինքնարժեքը, նյութական ծախսումների կրճատման շնորհիվ նվազեցնելու ինքնարժեքը և ապահովելու նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը,
- ռազմական պատվերների շրջանակներում թողարկվող արտադրանքի գնագոյացման ավտոմատացված համակարգ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանական համակարգի և մասնավորապես նրա ԶՈՒ-ի շարունակական արդիականացումը հնարավոր չէ առանց զարգացած ՌԱՀ-ի: Այս է պատճառը, որ ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը մեծ ուշադրություն է դարձնում ՌԱՀ-ի շուտափույթ զարգացման հարցերին՝ այդ զարգացումը դիտելով նաև որպես ՀՀ տնտեսության հզորացման կարևոր գործիքի և, նույնիսկ, շարժիչ ուժի: Ձեռնարկվող միջոցառումները ինչպես իրավական, այնպես էլ հաստատութենական, տնտեսական ու կրթական բնույթի են և նպատակաուղղված են ոչ միայն այժմեական հաջողությունների ձեռքբերմանը, այլև հեռանկարում դրանց շարունակականության ապահովմանը:

## К ВОПРОСУ О ПЕРСПЕКТИВЕ РАЗВИТИЯ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ КАК ВАЖНОГО СРЕДСТВА ПОВЫШЕНИЯ ОБОРОНОСПОСОБНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*А. П. ПЕТРОСЯН, советник 1-го класса СГС, начальник военно-технического отдела КВП МО РА*

РЕЗЮМЕ

Модернизация оборонной системы РА, в частности – ВС, невозможна без развития военно-промышленного комплекса (ВПК), который со стороны военно-политического руководства РА рассматривается как важный инструмент развития общегосударственной экономики. Систематическому и устойчивому развитию ВПК РА препятствуют: неполноценность стратегического планирования; неустойчивость заказов и их малый объем; низкий уровень взаимодействия и кооперации между предприятиями государственного сектора, а также между ними и организациями частного сектора; недостаточное финансирование данной сферы; проблемы подготовки кадров и повышения их квалификации.

Для преодоления этих препятствий в РА на основе соответствующей законодательной базы реализуются следующие шаги: создание научно-

технического комплекса с заделом, который нацелен на разработку долгосрочной программы выполнения исследовательских, научно-технических и инновационных работ; организацию выпуска наукоемкой конкурентоспособной продукции нового поколения (например, с применением искусственного интеллекта) на основе существующей промышленно-технологической базы; повышение технологического уровня основного производства; создание системообразующих организаций в сфере ВПК; разработку и реализацию мероприятий, направленных на упрочение положения отечественной продукции на внутреннем и внешнем рынках; развитие взаимодействия гражданского и военного секторов экономики; мониторинг состояния ВПК и разработка мероприятий по его укреплению; последовательное развитие таких направлений военно-технической политики: лазерное, оптоэлектронное, радиоэлектронное и радиолокационное вооружение, БПЛА и средства противодействия им, технические средства разведки, средства связи и РЭБ нового поколения, ракеты малой, средней и большой дальности и т. д.

В сфере управления ВПК РА представляется актуальным решение следующих проблем: становление Государственного комитета военной промышленности МО РА как государственного органа, наделенного необходимым потенциалом и полномочиями; внедрение действенных моделей оценки военно-экономической эффективности; развитие автоматической системы управления субъектами ВПК РА.

## ON THE ISSUE OF THE DEVELOPMENT PERSPECTIVE OF THE MILITARY INDUSTRY AS AN IMPORTANT MEANS TO INCREASE THE DEFENSE CAPABILITY OF THE REPUBLIC OF ARMENIA

*A. P. PETROSYAN, 1st Class SCS Advisor, Chief, Military-Technical Section, State Military-Industry Committee, MOD, RA*

SUMMARY

The modernization of the defense system of the Republic of Armenia, in particular of the Armed Forces, is impossible without the development of the Military-Industrial Complex (MIC), which the RA military-political leadership considers an important tool for the development of the national economy. The systematic and sustainable development of the RA Military-Industrial Complex is impeded by: the deficiency of strategic planning; instability of orders and their small volume; a low level of interaction and cooperation among public sector enterprises, as well as between them and the private sector organizations; insufficient financing of this sphere; problems of personnel training and improving their skills.

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՁՆԱՀԵՐԹ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Ա. Լ. ԴԱՎԹՅԱՆ, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ*[*]

ՀՀ Զինված ուժերի առջև դրված խնդիրների լուծումը նպատակաուղղված է մոտ ապագայում հայկական բանակը մարտունակության սկզբունքորեն նոր մակարդակի հասցնելուն: Այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ է կատարելագործել նաև ՀՀ ռազմական կրթության համակարգը:

Կրթության համակարգի արդիականացումն անհրաժեշտ է լինում հիմնականում այն դեպքերում, երբ պետք է՝

- կրթությունը համապատասխանեցնել գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիաների ասպարեզում տեղ գտած առաջընթացին,
- վերացնել պետության հետ մնալը որևէ ասպարեզում (օրինակ՝ 1962 թ. ԱՄՆ-ը 4,5 անգամ մեծացրեց կրթության ֆինանսավորման չափը՝ այդ պարամետրով գերազանցելով Խորհրդային Միությանը),
- ապահովել հասարակության ու տնտեսության նոր որակ, արագացնել հասարակության զարգացման տեմպերը,
- մեծացնել քաղաքական ու սոցիալական ընտրության հնարավորությունները, ինչը քաղաքացիներից պահանջում է պատրաստության մակարդակի բարձրացում,
- տեղեկութային հասարակությանն անցմամբ պայմանավորված՝ միջմշակութային փոխգործության հնարավորությունների ընդլայնման հետևանքով բարձրացնել հաղորդվելիության ու հանդուրժողականության մակարդակը,
- ստեղծել ձեռնարկվող բարեփոխումների արդյունքների հեռանկարային ամրապնդման ու շարունակականության համար մարդկային ու մտավոր ռեսուրս, և այլն[1]:

---

[*] Հեղինակը 2018 թ. մայիսի 8-ին իր դիմումի համաձայն ազատվել է ՀՀ պաշտպանության նախարարի՝ ռազմական կրթության համակարգը համադասող տեղակալի պաշտոնից:

[1] Այս մասին ավելի հանգամանորեն տես, օրինակ, *Н. Д. Сорокина*. Модернизация образования в «знаниевом» обществе: эффективность и оценка (постнеклассический подход) (http://www.odn2.ru/index.php/biblioteka/25-postneklassika/56-modernizatsiya-obrazovaniya-v-qznanievomq-obshchestve-effektivnost-i-otsenka-postneklassicheskij-podkhod); *А. Н. Зыков*. Факторы, влияющие на реформирование военного образования в Российской Федерации. «Военная мысль», 2014, № 12:

For overcoming these obstacles, the following steps are being implemented based on the appropriate legal framework in the Republic of Armenia: creation of a scientific and technical complex with a groundwork targeted at developing a long-term program for the implementation of research, scientific-technical and innovative activities; organization of the production output of science-intensive high-tech competitive products of a new generation (for example, using artificial intelligence) based on the existing industrial and technological framework; increase of the technological level of the main production; creation of backbone organizations in the sphere of Military-Industrial Complex; development and implementation of measures targeted at enhancing the position of domestic products in the domestic and foreign markets; development of interaction between civil and military sectors of the economy; monitoring the state of the Military-Industrial Complex and development of measures to enhance it; a consistent development of such directions of military-technical policy: laser, optoelectronic, radio-electronic and radar weapons, UAVs and their countermeasures, technical reconnaissance equipment, means of communications and EW of a new generation, missiles of small, medium and long range, etc.

In the sphere of controlling the Military-Industrial Complex of the Republic of Armenia, the solution to the following problems seems urgent: establishment of the State Military Industry Committee, MOD, RA as a state body empowered with the necessary potential and authorities; implementation of efficient models for assessing the military-economic performance; development of an automatic control system for the entities of the Military-Industrial Complex of the Republic of Armenia.

Ռազմական, կամ ռազմամասնագիտական, կրթությունը զինվորական մասնագետների պատրաստման, որակավորման բարձրացման և վերապատրաստման գործընթաց է, որն ուղեկցվում է ձեռք բերված կրթական մակարդակի փաստմամբ[2]: Թեև արևմտյան մասնագիտական գրականության մեջ ռազմական կրթության համընդհանուր սահմանում չկա, սակայն մասնավոր ձևակերպումներն իրենց իմաստով մոտ են: Օրինակ՝ այդպիսի սահմանումներից է. «Մասնագիտական ռազմական կրթությունը ներառում է Պենտագոնի այն բոլոր ջանքերը, որոնք նպատակաուղղված են ոչ սպայական ու սպայական կադրերի այնպիսի գիտելիքների, հմտությունների ու հատկությունների ձևավորմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց պետությանը ծառայելու համար: Դա իր մեջ ներառում է ամենը՝ սկսած Վեստ-Փոյնտի նման ռազմական վարժարաններում նախասպայական ուսումից ու շարքայինների անհատական նախավարժեցումից մինչև ուսուցումը՝ նպատակաուղղված առավել ավագ գեներալներին ու սերժանտներին: Ռազմական կրթությունը ներառում է զինծառայողների պատրաստումը իրենց ներկայիս պարտականությունների կատարմանը, հետագայում զբաղեցվելիք պաշտոններին և այն դիրքին, որը նրանք կունենան որպես ավագ ղեկավարներ»[3]:

Լինելով պետական կրթական համակարգի բաղկացուցիչ մաս՝ ռազմական կրթության համակարգը «ռազմական, կրթական, գիտական, վերապատրաստման հաստատությունների, կրթության կառավարման մարմինների, կրթական չափորոշիչների ու ծրագրերի, ինչպես նաև կրթական համապատասխան միջավայրի և կիրարկվող կրթական տեխնոլոգիաների ամբողջություն է»[4], որը «ապահովում է զինված ուժերի կիրառման, պլանավորման, կազմակերպման և կառավարման վերաբերյալ առկա գիտելիքների փոխանցումը, համապատասխան հմտությունների և կարողությունների ձևավորումը»[5]:

ՀՀ ռազմական կրթության հայեցակարգի համաձայն՝ սպայական կազմի պատրաստումը կատարվում է հետևյալ փուլերով.

1. նախազորակոչային *պատրաստում*, որի ժամանակ կատարվում են զինվորական գործի նկատմամբ դպրոցականների հետաքրքրության և նախնական զինվորական պատրաստության հիմունքների, գիտելիքների և հմտությունների ձևավորում,

---

[2] Տես «Военный энциклопедический словарь», т. II. М., 2001, с. 183:

[3] Տես *James Jay Carafano*. On Teaching War: The Future of Professional Military Education, 31.07.2008 (https://www.heritage.org/defense/commentary/teaching-war-the-future-professional-military-education):

[4] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության հայեցակարգ», ՀՀ կառավարության 2012 թ. մարտի 7-ի նիստի հմ. 9 արձանագրային որոշման հավելված հմ. 1, կետ 6 (https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR9-18_1.pdf):

[5] Տես նույն տեղում, կետ 7:

2. *կրտսեր սպայական կազմի կրթություն*, որով ապահովվում է մարտավարական մակարդակում ռազմական գիտելիքներին ու հմտություններին տիրապետող, կառավարչական ու հրամանատարական հատկություններով օժտված սպայական կազմի պատրաստումը, ներառյալ՝ քաղաքացիական բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների՝ որպես սպայի թեկնածուի ուսուցումը, ինչպես նաև կրտսեր սպայակազմի վերապատրաստումն ու որակավորման բարձրացումը,

3. *ավագ սպայական կազմի կրթություն*, որով ապահովվում են օպերատիվ-մարտավարական գործողությունների կառավարմանը և շտաբային աշխատանքներին տիրապետող՝ բարձրագույն ռազմական կրթությամբ սպաների պատրաստումն ու վերապատրաստումը,

4. *բարձրագույն սպայական կազմի կրթություն*, որով ապահովվում են զինվորական կամ պետական այլ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց կրթությունն ու վերապատրաստումը[6]:

Հարկ է նշել, որ ըստ Բոլոնյայի գործընթացի՝ ռազմական կրթությունը ևս կազմակերպվում է երկաստիճան կարգով՝ բակալավրի և մագիստրոսի մակարդակներով: Միևնույն ժամանակ, ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործում պաշտպանության ոլորտի կենսական առաջնահերթության հաշվառմամբ նախատեսվում է հանրապետության անվտանգային մտավոր ռեսուրսները պաշտպանական գերատեսչության շուրջ համախմբելու նպատակով կազմակերպել «միջգերատեսչական ձևաչափով պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթություն»[7]: Փորձնական ծրագրով նման դասընթաց 2017 թ. աշնանը հաջողությամբ կազմակերպվել է ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում:

Զինված ուժերի կազմավորման արդի փուլում ձևավորվել է ռազմական (ռազմամասնագիտական) բուհերի մի այնպիսի համակարգ, որն ապահովում է կրտսեր և ավագ սպայական կազմերի կրթությունը և ըստ մասնագիտությունների՝ որակավորման պետական կրթական չափորոշիչներով նախատեսված բակալավրի և մագիստրոսի որակավորումների շնորհումը:

Ինչպես նշվեց, ՀՀ Զինված ուժերն անհնար է արդիականացնել առանց ռազմական կրթության գործող համակարգի արդիականացման, նրա բովանդակային և կառուցվածքային նորացման: Այդ արդիականացումն ու նորացումը պետք է կատարվեն համակարգային նորամուծական մոտեցման հիման վրա և լինեն հստակ, հետևողական ու հակասություններից զուրկ: Ժամանակակից ռազմական կրթության արդիականացումը փուլային գործընթաց է: Առաջին փուլում պետք է բանաձևել ոլորտում եղած հիմնախնդիրները, երկրորդում՝ մշակել ու սահմանված կարգով հաստատել հայեցակարգ,

[6] Տես նույն տեղում, գ. IV:

[7] Տես նույն տեղում, կետ 21:

որում ամրագրել արդիականացման հիմնական գործնական ուղղությունները, երրորդում՝ մշակել ու վարել տեղեկատվական քաղաքականություն՝ նպատակաուղղված արդիականացման գործընթացին մասնակցող մարդկանց գիտակցության վրա անհրաժեշտ ազդեցություն գործելուն, չորրորդում՝ ձևավորել վարվելակերպի շարժառիթները:

ՀՀ ԶՈՒ-ի արդիականացման պետական քաղաքականության առաջնային նպատակներից է բարձրագույն ռազմական կրթության համակարգի համար այնպիսի պայմանների ստեղծումը, որոնցում ապահովվի ապագա սպայի՝ որպես ինքնուրույնաբար մտածող անձնավորության ձևավորումը, մի մարդու, որը կարողանա արդյունավետ կերպով գործել ՀՀ Զինված ուժերում ինչպես խաղաղ, այնպես էլ ռազմական իրադրությունում: Բարձրագույն ռազմական կրթության համակարգի արդյունավետ գործունեության համար համապատասխան պայմանների ստեղծումը ենթադրում է բնագավառի առջև ծառացած խնդիրների վերհանում, վերլուծում, լուծմանն ուղղված գործնական ուղղությունների առանձնացում և առաջնահերթությունների որոշում՝ համապատասխան լուծումների նշմամբ:

Մասնագիտական գրականության ուսումնասիրմամբ մենք առանձնացրել ենք բարձրագույն ռազմական կրթական համակարգի արդյունավետության մեծացման հետևյալ հիմնական ուղիները.

– ռազմաուսումնական հաստատություններում ընդհանուր կրթության ներկայիս մակարդակի հաշվառմամբ դիմորդների նպատակային ընտրության համակարգի մշակումն ու կիրառումը,
– ուսուցման համար թեկնածուների ընտրազատման չափանիշների այնպիսի գործուն համակարգի մշակումն ու ներդրումը, որի շնորհիվ կմեծանա ընտրազատման արդյունքների համար հրամանատարների ու նրանց ենթակա ստորաբաժանումների պատասխանատվությունը,
– շարքային և կրտսեր հրամանատարական կազմի նախնական պատրաստման համակարգի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի կատարելագործումը,
– հրամանատարների մասնագիտական վերապատրաստման ուսումնական ծրագրերի մշակումը, ընդսմին պետք է նախատեսվեն նաև այնպիսի մասնագիտական ծրագրեր, որոնցով կապահովվի նրանց հեռակա ուսուցման հնարավորությունը,
– ըստ մասնագիտությունների՝ պետական ուսումնական չափանիշների համալիր գիտական և մեթոդական ապահովման մշակումը,
– գործնական ուղղվածությամբ կրթական ծրագրերի մշակումը, ինչով բազային ակադեմիական կրթության հետ մեկտեղ կապահովվի նաև որակյալ կիրառական մասնագիտական պատրաստումը,
– ուսումնական հաստատությունների և մասնագիտական պատրաստման կենտրոնների ուսումնանյութական բազայի արդիականացումը,

– ուսումնական մասնաշենքերի, համալիր ուսումնական զորավարժարանների վերակառուցումն ու նորերի շինարարությունը,
– բոլոր աստիճանների կադրային ռեզերվների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման համակարգի կատարելագործումը՝ ղեկավար պաշտոններում արդյունավետ ստաժավորման կազմակերպմամբ:

Ներկայումս հստակ կերպով առանձնանում են ռազմական կրթության արդիականացման հետևյալ հիմնական ուղղությունները. բարձրագույն ռազմա-ուսումնական հաստատությունների անձնակազմի կառավարման համակարգի օպտիմալացում, ռազմական կրթության և գիտության միաձուլում, ռազմական կրթության որակի բարձրացում[8]:

Անձնակազմի կառավարման համակարգի ու դրա մոդելի արդիականացումը պետք է ուղղված լինի կրթական գործընթացների, պրոֆեսորադասախոսական և հրամանատարական կազմերի աշխատանքի որակի բարելավմանը, նրանց, կուրսանտների և ունկնդիրների աշխատանքի արդյունավետության գնահատման նոր չափանիշների ներդրմանը:

Անձնակազմի կառավարման ընդհանուր արդյունավետ մոդելը բնութագրվում է հետևյալ հիմնական ցուցանիշներով.

- առաջադրված անհատական խնդիրների լուծման արդյունավետություն՝ հաստատության ընդհանուր հաջողության մեջ անհատական ներդրում,
- անձնակազմի աշխատանքային արդյունավետություն՝ կատարվող աշխատանքի անհրաժեշտ որակն ապահովելու համար անձնակազմի նպատակային խթանում, կադրերի ցածր հոսունություն և ժամանակի կորստի բացառում,
- մասնակցային արդյունավետություն՝ ընդհանուր խնդիրների խմբովի լուծման և համագործակցության պատրաստակամություն և կարողություն,
- նյութական արդյունավետություն՝ ժամանակակից սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով, ուսումնանյութական բազայով, տեղեկատվական և գիտահետազոտական համալիրներով ապահովվածություն[9]:

Անձնակազմի կառավարման արդյունավետության վրա ազդում են հաստատության մասշտաբը, ուսումնական խմբերի մասնագիտությունների առանձնահատկությունները, ֆինանսական հնարավորությունները, կադրային ներուժը և քաղաքականությունը: Անձնակազմի կառավարման գործում կարևոր

[8] Տես *В. В. Полич.* Проблемы военного образования и науки (социально-философский анализ). «Профессиональное образование в современном мире», 2015, № 2 (profed.nsau.edu.ru/ jour/article/download/126/127):

[9] Համեմատության համար տես, օրինակ՝ *О. Н. Пономарева, Д. В. Бажина.* Критерии эффективности управления организацией как социальной системой. «Общество: политика, экономика, право», 2012, № 1 (https://cyberleninka.ru/article/n/kriterii-effektivnosti-upravleniya-organizatsiey-kak-sotsialnoy-sistemoy):

տարրերից է տեղեկատվությունը: Առանց ժամանակակից տեղեկատվական քաղաքականության հնարավոր չէ լիարժեք կերպով իրականացնել կառավարման որևէ գործառույթ: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ օպտիմալացվում են կադրերի անհատական և որակական վերլուծության և հոսունության հաշվառման, անձնակազմի և ուսուցանվողների ուսուցման և որակավորման բարձրացման, առաջատար փորձի ուսումնասիրման և ներդրման գործընթացները[10]: Անձնակազմի շարժի և հոսունության վերլուծությունը կարևոր է ռազմական բարձրագույն ուսումնական հաստատության գիտաուսումնական գործունեության պլանավորման և կառավարման տեսակետից:

Բարձրագույն ռազմական ուսումնական հաստատության անձնակազմի կառավարման արդյունավետ համակարգը հնարավոր է կառուցել հետևյալ մեխանիզմների համատեղությամբ՝ պլանավորում, կազմակերպում, խթանում, վերահսկում:

*Պլանավորումը*, որի ամենապատասխանատու խնդիրներն են կանխատեսումը և մոդելավորումը, հնարավորություն է տալիս սահմանելու նպատակները, դրանց հասնելու համար անհրաժեշտ առավել արդյունավետ մեթոդներն ու միջոցները, դրված խնդիրների լուծման ընթացքի գնահատման ցուցանիշների համակարգը:

*Կազմակերպումը* այժմ և ապագայում կազմակերպության հաջող գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է: Դրա հիմնական խնդիրներն են՝ կազմակերպության կազմակերպվածքի ձևավորումը, նրա գործունեության ապահովումը ֆինանսներով, սարքավորանքով, աշխատանքային ռեսուրսներով:

*Շարժառիթավորումը* այն նյութական ու բարոյական խթանիչների համախումբն է, որոնց հիման վրա մարդն իր աշխատանքային գործունեության ընթացքում իր առջև դնում է կոնկրետ նպատակներ:

*Վերահսկումն* անհրաժեշտ է ընդունված որոշման և փաստացի արդյունքի առադրման և տեղեկույթի հաղորդման առավելագույն արդյունավետության օպտիմալացման համար: Այն պետք է լինի օպերատիվ, հրապարակային և օբյեկտիվ[11]:

---

[10] Տես, օրինակ, *И. Е. Жуковская*. Инновационные аспекты совершенствования управленческих процессов в высшем учебном заведении на основе применения современных информационно-коммуникационных технологий (https://www.researchgate.net/publication/306523109_Innovative_aspects_of_enhancement_of_management_ processes _in_the_higher_educational_institution_on_the_basis_of_application_of_modern_information_and_communication_technologies/fulltext/57beefcd08aed246b0f7a6e9/306523109_Innovative_aspects_of_enhancement_of_management_processes_in_the_higher_educational_institution_on_the_basis_of_application_of_modern_information_and_communication_technologies.pdf?origin=publication_detail):

[11] Տես *А. В. Дейнека.* Управление персоналом. М., 2013, сс. 7–8:

Ժամանակակից պայմաններում անհրաժեշտություն է առաջանում որոշելու անձնակազմի կառավարման ռազմավարական ուղղությունները, նպատակները և խնդիրները, այսինքն՝ ձևավորելու անձնակազմի կառավարման համակարգի ռազմավարությունը: Բարձրագույն ռազմական ուսումնական հաստատության ռազմավարությունը ապահովում է հաստատության ընդհանուր նշանակության, քաղաքականության և ռազմավարության նպատակներին հասնելու համար պլանավորված միջոցառումների միջև տրամաբանական կապը: Այս պարագայում ռազմավարությունը մշակվում և իրագործվում է տարբեր մակարդակներում.

- համապետական՝ ռազմական կրթություն, պետական (ՀՀ ԶՈՒ-ի) պատվերի կատարման պարտավորություն, պատասխանատվություն, ապահովում և այլն,
- կազմակերպական՝ անձնակազմի կառավարում, ռազմական կրթության որակի ապահովում, ֆինանսական քաղաքականություն, հասարակական պատասխանատվություն և այլն,
- հաստատության (կազմակերպության) ստորաբաժանումների՝ պրոֆեսորադասախոսական կազմի, ծառայողների, աշխատողների որակավորումների և մասնագիտական վարպետության զարգացման կառավարում, հաստատության կառավարման համակարգի կատարելագործում և այլն,
- անհատ ծառայողի (մասնագետի, աշխատողի)՝ որակավորումների և վարպետության կատարելագործման անընդհատություն, հեռանկարային մասնագիտական աճ, անհատական պահանջների բավարարում և այլն:

Որակյալ ռազմական մասնագետների պատրաստումը Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության ապահովման կարևոր ուղղությունն է, առաջնահերթ խնդիրը: Դրան զուգընթաց, բարձրագույն ռազմական ուսումնական հաստատությունը լուծում է գիտահետազոտական, գիտատեխնիկական (նորամուծություն, նորարարություն, ժամանակակից ռազմական տեխնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում), որակական (կրթության որակի ապահովում), հասարակական (ուսուցանվող կազմի հասարակական պահանջմունքների բավարարում) խնդիրներ:

Զինված ուժերի արդիականացումը չի կարելի դիտել առանց ռազմական գիտության զարգացման: Այստեղ հիմնական խնդիրն է ռազմական գիտության արդյունավետության, պետական մակարդակով նրա պահանջվածության աստիճանի բարձրացումը, ռազմական ոլորտում գիտական հետազոտությունների և հեռանկարային մշակումների խթանումը, գիտական դպրոցների, ռազմագիտական կենտրոնների ստեղծումը և զարգացումը: Ակնհայտ է, որ բարձրագույն ռազմական կրթության արդիականացումը պայմանավորված է ոչ միայն ռազմական գիտության զարգացմամբ, այլև բարձրագույն ռազմական կրթության հետ նրա ինտեգրմամբ: Ռազմական գիտության ներթափանցումը բարձրագույն ռազմական կրթության համակարգ արմատապես կփոխի ԲՈՌՀ-ի դասախոսի որակները՝ նա արդեն կլինի գիտնա-

կան դասախոս, որը կարող է իր հիմնական գործառույթն իրագործել գիտահետազոտական գործունեության հենքի վրա:

Գիտական աշխատանքին առանձնահատուկ տեղ է տրվում անմիջականորեն ուսումնական գործում[12]: Բարձրագույն ռազմաուսումնական հաստատությունում գիտական աշխատանքը ուղղված է ռազմական տեսության և գիտագործնական մշակումների զարգացմանը: Նրա հիմնական ձևերն են գիտահետազոտական աշխատանքները (հիմնարար և կիրառական), դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մենագրությունների, ատենախոսությունների, հոդվածների և այլ մասնագիտական գրականության ստեղծումը: ԲՈՈՒՀ-ներում կազմակերպվող գիտագործնական գիտաժողովներում, սեմինարներում, «կլոր սեղաններում» կուրսանտները և ունկնդիրները ձեռք են բերում հրապարակային ելույթների և գիտական բանավեճերի փորձ, մեր երկրում և արտասահմանում ստեղծված գիտական ու տեխնիկական նորամուծությունների մասին տեղեկույթի հավաքման և վերլուծության հմտություններ: Կուրսանտների և ունկնդիրների ռազմագիտական աշխատանքը կոչված է ձևավորելու ռազմագիտական ստեղծագործական գործունեության նկատմամբ հետաքրքրություն, զարգացնելու նրանց վերլուծական մտածողությունը և ինքնուրույնությունը, ռազմական գիտության արդիական խնդիրների լուծման գործում օգտագործելու նրանց ստեղծարար մտավոր ներուժը:

ՀՀ ԶՈՒ-ի արդիականացման ընդհանուր ռազմավարական տրամաբանությունը պահանջում է ստեղծել ժամանակակից, շարժունակ, լավ սպառազինված բանակ, որը պատրաստ լինի ապահովելու մեր պետության բարձր մակարդակի պաշտպանությունն ու պաշտպանական անվտանգությունը: Բանակի արդիականացումը պետք է հիմնված լինի նոր տիպի՝ գրագետ, հանկարծակի ծագող բարդ իրավիճակներում արագ կողմնորոշվող ու ճիշտ որոշումներ ընդունող, նորամուծական ստեղծագործական մտածողությամբ օժտված սպաների – ռազմագետների – հոգեբան-մանկավարժների խաղաղ ու պատերազմական շրջանների զինվորական ու քաղաքացիական կյանքում աննկուն առաջնորդների ու հայրենասեր քաղաքացիների եղբայրության վրա, իսկ նման անձնավորություններ ձևավորելու համար անհրաժեշտ է համապատասխանաբար բարեփոխել ռազմական կրթության համակարգը, նրա բովանդակային, կառուցվածքային ու մեթոդաբանական էությունը:

Դրա համար առաջնահերթ խնդիրներ են՝ մշակել ՀՀ ԶՈՒ-ի նոր պահանջներին համապատասխանող պետական կրթական չափորոշիչներ, բոլոր զինվորական մասնագիտությունների գծով շրջանավարտների ռազմամաս-

[12] Տես *Յ. Ի. Սիниченко*. Роль научной деятельности в профессиональной подготовке специалиста. «Вестник Таганрогского института управления и экономики», 2013, № 1(17) (https://cyberleninka.ru/article/n/rol-nauchnoy-deyatelnosti-v-professionalnoy-podgotovke-spetsialista); *Л. В. Вохминцева, В. И. Шарапов*. Роль учебно-исследовательской работы студентов в современном образовательном процессе. «Фундаментальные исследования», 2007, № 5 (http://www.fundamental-research.ru/ru/article/view?id=3098):

նագիտական պատրաստման համար որակավորման նոր պահանջներ, օգտագործել կոմպետենտ մոտեցում, համաձայն որի՝ ռազմական կրթության արդյունքը պետք է լինեն ոչ թե ցաք ու ցրիվ գիտելիքները, թերի հմտությունները, այլ իր համակարգված և խոր գիտելիքներն ու հմտությունները իր գործունեության մեջ արդյունավետ կերպով ու լիարժեք օգտագործելու կարողությունը:

Որպեսզի ռազմական համալսարաններում ստացված գիտելիքները որոշ ժամանակ անց չկորցնեն իրենց այժմեականությունը և մշտապես թարմացվեն, պետական մակարդակով ձևավորվում է զինծառայողների անընդհատ, շարունակական կրթության համակարգ: Այդ համակարգն ապահովելու է տարբեր տարիքի ու կազմերի զինվորականների գիտելիքների մշտական ընդլայնումը և խորացումը: Համակարգը, բացի հիմնարար բարձրագույն մասնագիտական կրթությունից և ամբողջական ռազմամասնագիտական պատրաստումից, նախատեսում է լրացուցիչ մասնագիտական կրթության համակարգ, ինչպես նաև որակավորման բարձրացման դասընթացներ և մասնագիտական վերապատրաստում:

Մասնագիտական կրթության նորամուծական բնույթի ապահովումն ընդհանուր առմամբ ենթադրում է.

- դիմորդների պատրաստում, որը գնահատվում է մինչբուհական կրթության և ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա,
- պրոֆեսորադասախոսական կազմի բարձր մասնագիտական մակարդակ,
- օգտագործվող կրթական տեխնոլոգիաներ, որոնք խելամիտ կերպով զուգակցում են դասավանդման կայացած դասական և նորամուծական մեթոդները[13],
- զորքերի պահանջներին համապատասխան՝ նոր մասնագիտություններով ուսուցում ապահովող կրթական ծրագրերի օպերատիվ մշակում ու ներդրում,
- նոր կրթական տեխնոլոգիաների, նորամուծական մոդելների ներդրման և ուսումնական գործընթացում կիրառման համար անհրաժեշտ ուսումնանյութական բազայի ստեղծում,
- ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների, էլեկտրոնային կրթական շտեմարանների և ձեռնարկների օգտագործում,
- դասախոսական կազմի և ուսուցանվողների համար գիտության ու տեխնիկայի ոլորտում տեղեկատվական աղբյուրների մատչելիության ապահովում,

[13] Տես *С. Ю. Григоров, А. Э. Ойношев, Д. А. Моисеев.* Инновации в военном образовании как условие формирования профессиональной компетентности. «Территория науки», 2017, № 2 (https://cyberleninka.ru/article/n/innovatsii-v-voennom-obrazovanii-kak-uslovie-formirovaniya-professionalnoy-kompetentnosti):

– միասնական էլեկտրոնային կրթական համակարգի պաշտոնների ստեղծում ու կատարելագործում[14]:

Մասնագիտական կրթության որակի գնահատման համակարգի ձևավորումն ու զարգացումը պահանջում են.

– կրթական հաստատությունների և զորքերի միջև հետադարձ կապի կատարելագործում շրջանավարտների կրթական որակի, մասնագիտական գործունեության համալիր հետազոտություն կատարելու և ըստ այդմ զորքերից ստացված կարծիքների հիման վրա ուսումնական գործընթացն արագորեն ճշգրտելու համար,
– ուսումնական հաստատությունների գործունեության անկախ գնահատման եղանակների ու միջոցառումների ներդրում:

Ռազմական կրթության համակարգում կարևոր խնդիրներից է ստեղծագործական մտածողության ձևավորման, մտավոր զարգացման համար պայմանների ստեղծումը: Ուստի առաջին հերթին անհրաժեշտ է հրաժարվել ուսումնական գործընթացներում կուրսանտների նկատմամբ չափից դուրս ցուցաբերվող խնամակալությունից և խրախուսել նրանց ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը: Չնայած ռազմական կազմակերպությունում հաստատված միանձնյա ղեկավարության և աստիճանակարգային համաստորադասության, ինչպես նաև հրամանների անվերապահ կատարման սկզբունքներին՝ ստեղծագործական մտածողությունը անհրաժեշտ է լինում անկանխատեսելի, արագ փոփոխվող պայմաններում, ոչ ստանդարտ իրավիճակներում, երբ պահանջվում են արագ կողմնորոշում և նույնիսկ հանպատրաստից միջոցների ձեռնարկում (իմպրովիզացիա):

ՀՀ ԶՈՒ-ի կարիքների համար ձեռք բերվող նոր սպառազինության, ռազմական տեխնիկայի և տեխնոլոգիաների շահագործման համար անհրաժեշտ է օտարերկրյա պետությունների ռազմակրթական կենտրոններում կազմակերպել ՀՀ ԲՈՌՈՒՀ-ների դասախոսական անձնակազմի վերապատրաստում, որպեսզի այնուհետև մեզանում ներդրվեն համապատասխան ուսումնական ծրագրեր (այդ թվում՝ արդիականացված) և կազմակերպվի դրանց սպասարկող անձնակազմի որակյալ պատրաստում:

ՀՀ բարձրագույն ռազմական կրթության համակարգի զարգացման կարևոր միջոցներից է համագործակցության սերտացումը ինչպես ՀՀ բարձրագույն քաղաքացիական կրթության համակարգի, այնպես էլ օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ[15]:

---

[14] Համեմատության համար տես, օրինակ, *М. И. Червонных*. Инновации в управлении и образовании: технико-технологические и методические аспекты. «Сибирский торгово-экономический журнал», 2016, № 1(22) (https://cyberleninka.ru/article/n/innovatsii-v-upravlenii-i-obrazovanii-tehnikotehnologicheskie-i-metodicheskie-aspekty):

[15] Տես, օրինակ, *Ա. Բ. Դահրամանյան,* Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում կրթության համակարգի կատարելագործման հարցը՝ զորքերի մարտական կարողությունների մեծացման հայեցակետից: «ՀԲ», 2015, հմ. 4:

Այսպիսով՝ Զինված ուժերի արդիականացումը, դրանց կերպարանքի փոփոխումը, նոր ՍՈՏ-ով զինումը պահանջում են որակապես նոր կադրեր, որոնց պատրաստումը պետք է կատարվի առաջանցիկության սկզբունքով: Իսկ դա նշանակում է, որ ռազմական կրթության ղեկավար մարմինները, սերտորեն համագործակցելով ՊՆ ու ԶՈՒ-ի բոլոր վարչությունների հետ, պետք է ԲՈՈՒՀ-ների անձնակազմերի գիտամանկավարժական ներուժի լիակատար օգտագործմամբ այսօր ապահովեն վաղվա սպայի պատրաստումը՝ ԶՈՒ-ի զարգացման վերլուծությամբ ու գիտական կանխատեսմամբ, մոտ ապագայի պահանջների հաշվառմամբ:

## ПЕРВООЧЕРЕДНЫЕ ЗАДАЧИ МОДЕРНИЗАЦИИ СИСТЕМЫ ВЫСШЕГО ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ

*А. Л. ДАВТЯН, заместитель Министра обороны РА*[*]

РЕЗЮМЕ

Модернизация ВС РА возможна лишь при условии содержательного и структурного обновления системы военного образования (СВО). Модернизацию СВО целесообразно осуществить в несколько этапов: 1) формулирование проблем, существующих в данной сфере; 2) разработка концепции модернизации с указанием ее практических направлений; 3) разработка и проведение информационной политики, нацеленной на необходимое воздействие на сознание субъектов модернизации; 4) формирование мотивации поведения.

Основными направлениями модернизации СВО являются: оптимизация системы управления персоналом военных вузов; интеграция военного образования и науки; повышение качества военного образования.

Среди первоочередных задач модернизации СВО можно отметить: разработку и применение системы целевого выбора абитуриентов военных вузов; разработку и внедрение действенной системы критериев отбора кандидатов для обучения; совершенствование организационной и штатной структуры системы начальной подготовки рядового и младшего командного состава; разработку специальных учебных программ переподготовки командиров с обеспечением возможности дистанционного обучения; разработку учебных программ практической направленности; обновление учебно-материальной базы военных вузов и центров специализированной подготовки; перестройку и возведение новых учебных

[*] 8-го мая 2018 года автор подал в отставку с должности заместителя Министра обороны РА, курирующего систему образования.

корпусов, комплексных учебных полигонов; совершенствование системы специальной переподготовки и повышения квалификации кадровых резервов всех степеней с организацией их эффективной стажировки на руководящих должностях.

## THE PRIORITY TASKS OF MODERNIZING THE SYSTEM OF HIGHER MILITARY EDUCATION

*A. L. DAVTYAN, Deputy Defense Minister, the Republic of Armenia*[*]

SUMMARY

It is possible to modernize the Armed Forces of the Republic of Armenia only if the military education system (MES) is substantially and structurally updated. The modernization of the MES is expedient to be undertaken in several stages: 1) formulating problems existing in this sphere; 2) developing the modernization concept indicating its practical directions; 3) developing and implementing an information policy targeted at the necessary impact on the conscience of the parties to the modernization; 4) shaping incentive for behavior.

The main areas of modernizing the MES are: the optimization of the personnel management system in military higher educational institutions; the integration of military education and science; the improvement of the quality of military education.

The following can be noted among the priority tasks of the modernization of the MES: the development and adaptation of a system of “picking-up” military educational institutions’ entrants; the development and implementation of an efficient system of candidates’ selection criteria for training; the improvement of the organizational and staff structure of the basic training system for the rank-and-file and non-commmissioned officers; the development of special training programs for requalifying commanders providing them with distance learning opportunities; the development of practical curricula; the update of the educational and material base of military higher educational institutions and specialized training centers; the reorganization and construction of new educational buildings, complex training ranges; the improvement of the system of special retraining and upgrading the qualifications of the personnel reserves of all degrees with the organization of their effective internship in decision-making positions.

[*] The author, who had supervised the education system, submitted his resignation from the position of Deputy Defense Minister, the Republic of Armenia, on May 8, 2018.

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

*Տ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական,*
*ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչության պաշտպանական քաղաքականության պլանավորման բաժնի պետի տեղակալ,*
*ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ասպիրանտ*

Արդի տարածաշրջանային և համաշխարհային ռազմաքաղաքական զարգացումների հետևանքով պահպանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանական անվտանգության դեմ ուղղված բարձր մակարդակի սպառնալիքներն ու մարտահրավերները: Դրանց չեզոքացման կամ մեղմման համար պահանջվում է պետության պաշտպանական համակարգի մշտական արդիականացում՝ համապարփակ և սիներգիկ լուծումների համալիրի կենսագործմամբ: Սա նշանակում է, որ Հայաստանում պաշտպանական ներուժի զարգացման, մասնավորապես՝ բանակաշինության գործում ոչ միայն պետք է ապահովել խնդիրների՝ բոլոր ոլորտները ներառող հնարավորինս լայն ընդգրկույթ, այլև ձգտել տարատեսակ գործոնների և միջոցների գործարկմամբ հասնելու պլանավորված համակցված արդյունքների:

Այդ սիներգիկ լուծումներից մեկն է միջազգային ռազմական համագործակցությամբ ընձեռվող հնարավորությունների ծառայեցումը ՀՀ Զինված ուժերի զարգացմանը:

Միևնույն ժամանակ, միջազգային ռազմական համագործակցությունը, որպես պետության միջազգային համագործակցության կարևոր բաղադրիչ, էական անմիջական դեր է կատարում յուրաքանչյուր պետության արտաքին անվտանգության ապահովման գործում: Ուստի ՀՀ պաշտպանության նախարարության ձեռնարկած արտաքին շփումները, համաշխարհային անվտանգության ճարտարապետության համակարգաստեղծ կառույցների հետ փոխգործությունը և դրանց գործադրած ջանքերին ակտիվ մասնակցությունը էական դեր են խաղում թե՛ միջազգային, թե՛ տարածաշրջանային դերակատարների հայանպաստ դիրքորոշումների ձևավորման կամ հակահայկական նկրտումների զսպման, համապատասխանաբար՝ ՀՀ անվտանգության համար միջազգային երաշխիքների ձեռքբերման գործում:

Յուրաքանչյուր պետության գերխնդիրն է, նրա հիմնական գործառույթն է ապահովել ազգային անվտանգությունը, որը իրական և հնարավոր սպառնալիքներից անհատի, ընտանիքի, հասարակության և պետության կենսա-

գործունեության բոլոր ոլորտներում նրանց կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության գումարային բնութագրիչն է[1]: Ընդսմին ազգային անվտանգության ապահովման ոլորտում իր համար գերակայությունները որոշում է յուրաքանչյուր պետություն ինքը՝ ըստ ազգային շահերի, գոյություն ունեցող և կանխատեսվող մարտահրավերների ու սպառնալիքների սպեկտրի և ազգային անվտանգության սուբյեկտների անվտանգ ու կայուն զարգացման վրա դրանց բացասական ազդեցության աստիճանի[2]:

Հայաստանի Հանրապետությունը անկախացումից ի վեր վարել է բազմավեկտոր արտաքին քաղաքականություն՝ տարածաշրջանում ոչ միայն չփորձելով միմյանց հակադրել գերտերությունների տարատեսակ շահերը և մոտեցումները, այլև դառնալով այդ շահերի համադրման մի յուրահատուկ հարթակ: Այս մոտեցումն է դրված նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանական քաղաքականության կարևորագույն հիմնասյուներից մեկը կազմող միջազգային ռազմական համագործակցության հիմքում:

Ցանկացած պետության համար, որն ունի խիստ սահմանափակ մարդկային, ֆինանսատնտեսական, հումքանյութական ռեսուրսներ, ավելորդ ծախսերը կարող են հանգեցնել զարգացման խաթարման, անգամ՝ կաթվածահարության ու կործանման: Ուստի նրանց համար կենսական կարևորություն ունի խելամիտ ռազմավարական պլանավորումը[3]: Մեզանում արդեն կան նման պլանավորման հիանալի օրինակներ, հատկապես՝ պաշտպանության ոլորտում[4]: Այդպիսիք էին՝ պաշտպանական ոլորտում բարեփոխումների ծրագրումը, որն իր արտացոլումն է ստացել գերազանցապես ԱԳԳԾ-ների միջոցով[5], պաշտպանության ռազմավարական վերանայումը[6], ՁՈՒ-ի արդիականացման ծրագիրը և այլն: Այդպիսով մեզանում արմատավորվում է երկարաժամկետ ու հեռամետ ռազմավարական պլանավորման մշակույթը, որը հիմնականում միջազգային շփումների արգասիք է:

Այս համատեքստում կատարվող աշխատանքները կարելի է բաժանել երեք հիմնական ուղղությունների.

---

[1] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան*, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 45:

[2] Տես *Հ. Ս. Քոթանջյան*, ‹‹Ազգ–բանակ›› ռազմավարական համակարգը ՀՀ կիբեռթվային պաշտպանական–քաղաքական–տնտեսական–սոցիալական հեռանկարում: «ՀԲ», 2016, հմ. 4:

[3] Տես *Լ. Գ. Այվազյան,* Պաշտպանության ռազմավարական վերանայումը՝ որպես պաշտպանության պլանավորման կարևոր բաղադրիչ: «ՀԲ», 2015, հմ. 3:

[4] Տես *Յ. Գ. Խաչատուրով,* Ռազմավարական պլանավորման համակարգի զարգացման հարցի շուրջ: «ՀԲ», 2015, հմ. 3:

[5] Տես *Դ. Է. Տոնոյան,* Պաշտպանական բարեփոխումների իրականացումը ռազմական համագործակցության շրջանակներում: «ՀԲ», 2008, հմ. 4:

[6] Տես «ՀԲ», 2015, հմ. 3. «Պաշտպանության ռազմավարական վերանայում»:

– հրամանատարական ու շտաբային գործառույթների հստակ տարանջատում[7],
– առաջադրանքային կառավարում (հրամանատրում առաջադրանքով) փիլիսոփայության ու գործելաոճի արմատավորում[8],
– ռազմական գործողություններ վարելու հայեցակարգի վերափոխում:

Պետք է նշել, որ 2008 թ. սկիզբ առած՝ ՀՀ ԶՈՒ-ի բարեփոխումների երկրորդ փուլից ի վեր հեռամետ պլանավորման յուրաքանչյուր փուլ ապահովվել է պատշաճ միջազգային փորձագիտական-խորհրդատվական ուղեկցությամբ[9]:

Ընդսմին պաշտպանական բարեփոխումները պետության պաշտպանունակության մեծացմանն առավելագույնս ծառայեցնելու համար ՀՀ-ում որդեգրվել է մի այնպիսի ռազմավարություն, երբ ազգային ինքնությանը, Հայաստանի Հանրապետության իրականությանը ներհատուկ ինքնատիպ լուծումները հնարավորինս համադրվում էին միջազգային հանրության խորագիտակության, առաջավոր փորձի և աջակցության հետ: Այսպիսով՝ բարեփոխումների ընթացքում մշտապես կարևորվել է ազգային և միջազգային հնարավորությունների ճշգրիտ գնահատումն ու հարաբերակցումը[10]:

Դասական առումով ցանկացած պետության զինված ուժերի մարտական ներուժը խարսխվում է հետևյալ հիմնասյուների վրա.

- սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով զինվածություն և դրանց կիրառման արդյունավետություն՝ պայմանավորված անձնակազմի մարտական պատրաստակամությամբ,
- անձնակազմի արհեստավարժություն՝ պայմանավորված զինծառայողների զինվորական վարպետությամբ, ստորաբաժանումների, զորամասերի ու զորամիավորումների մարտական ներդաշնակությամբ, զորքերի հաստատուն կառավարմամբ,

[7] Տես *Դ. Է. Տոնոյան,* ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման սկզբունքներն ու մեթոդները: «ՀԲ», 2015, հմ. 3:

[8] Տես *Ա. Մ. Պետրոսյան,* ԶՈՒ-ի ղեկավարման միջազգային փորձը Գերմանիայի Դաշնային Հանրապետության Զինված ուժերի օրինակով: «ՀԲ», 2011, հմ. 1–2, *Դ. Է. Տոնոյան,* ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման սկզբունքներն ու մեթոդները: «ՀԲ», 2015, հմ. 3:

[9] ՀՀ ՊՆ համակարգում ռազմավարական պլանավորման և պաշտպանական բարեփոխումների միջև կապի, ռազմավարական պլանավորման մշակույթի ձևավորման մասին ավելի հանգամանորեն տես *Լ. Գ. Այվազյան*, Պաշտպանական բարեփոխումները ռազմավարական պլանավորման համատեքստում. մեթոդաբանություն և մոտեցումներ: «Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները» (փորձագիտական-ուսումնական ձեռնարկ), մաս 1: Ե., 2013, էջ 301–314:

[10] Տես *Դ. Է. Տոնոյան,* Պաշտպանական բարեփոխումների իրականացումը ռազմական համագործակցության շրջանակներում: «Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները» (փորձագիտական-ուսումնական ձեռնարկ), մաս 1, էջ 292:

- բանակի մարտական ոգի, որը բնութագրում է անձնակազմի պատրաստակամությունը և ունակությունը հաղթահարելու պատերազմական ժամանակի դժվարություններն ու զրկանքները և պահպանելու հաղթանակի կամքը[11]:

Աշխարհում կան միայն երկու պետություն, որոնց ռազմաարդյունաբերական համալիրներն ապահովում են ռազմական արտադրությունն ամբողջ սպեկտրով. դրանք են ԱՄՆ-ը և ՌԴ-ն: Մյուս պետությունները դա անում են տարբեր չափով՝ կախված իրենց ՌԱՀ-ի զարգացածության մակարդակից: Այսպես. Գերմանիային բնորոշ է ռազմական արտադրության գրեթե լիարժեք ճյուղային կառուցվածքը (բացի միջուկային արտադրությունից), ինչի շնորհիվ ցամաքային զորքերի համար ՍՈՏ ներմուծումը 1%-ից պակաս է[12]: Համապատասխանաբար, այդ պետություններն իրենց կարիքները բավարարում են ի հաշիվ ռազմական ու ռազմատեխնիկական միջազգային համագործակցության: ՀՀ ռազմական դոկտրինը սահմանում է, որ այդ համագործակցության հիմնական նպատակների թվում են ՀՀ ռազմական անվտանգության համակողմանի ապահովումը և ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդումը, Զինված ուժերի արդիականացման գործում միջազգային փորձի և օժանդակության կիրառումը, կադրերի ուսուցման և վերապատրաստման, սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով ապահովման պահանջմունքների բավարարումը, ինչպես նաև ռազմական արդյունաբերության համալիրի զարգացումը և վերակառուցումը[13]:

Այստեղ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ որքան աճում է տեխնիկական միջոցների «խելացիությունը», դրանց ունակությունը գործելու ինքնուրույն բանելակարգում՝ առանց մարդու միջամտության, այնքան բարդանում է դրա սպասարկումը, ուստի և ավելի խիստ պահանջներ են ներկայացվում «մարդ–մեքենա–միջավայր» համակարգի առաջին բաղադրիչին՝ սպասարկող ու նորոգող անձնակազմին:

Ամերիկացի հայտնի հետազոտող է. Թոֆլերը, իր «Երրորդ ալիք» աշխատության մեջ ուսումնասիրելով արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների կրթական համակարգերը, նշում է, որ երկու մոդելների դեպքում էլ ստացված գիտելիքը, որն օժտված է գործնական արժեքավորությամբ, ծառայում է որոշակի արդյունքների ստացմանը[14]:

Դա Հայաստանին հնարավորություն է տալիս օգտվելու ՆԱՏՕ-ի ռազմական կրթության ոլորտում համագործակցությունից և խելամիտ կերպով կատարելագործելու իր կրթական համակարգը՝ չհրաժարվելով իր երկարամյա փորձի դրական տարրերից:

---

[11] Տես «Военный энциклопедический словарь», т. II. М., 2001, с. 360:

[12] Տես *И. Михайличенко*. Производство вооружения для сухопутных войск ФРГ. «Зарубежное военное обозрение», 2004, № 2:

[13] Տես «ՀՀ ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

[14] Տես *Alvin Toffler.* The Third Wave. Bantam Books, 1980, P. 87:

Համագործակցությունը երկկողմ և բազմակողմ ձևաչափով իրականացվում է ինչպես ՀԱՊԿ-ի անդամ պետությունների հետ, որտեղ առանցքային դեր ունի համագործակցությունը Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանի հետ, այնպես էլ ՆԱՏՕ-ի անդամ պետությունների, այդ թվում՝ իր ռազմավարական գործընկեր ԱՄՆ-ի հետ:

ՀՀ պաշտպանական գերատեսչության միջազգային ռազմական համագործակցության արևմտյան ուղղության գերակայություն են հարաբերությունները ՆԱՏՕ-ի՝ որպես համաշխարհային անվտանգության ապահովման առավել հզոր և ազդեցիկ համակարգի հետ: Հայաստան–ՆԱՏՕ համագործակցությունը ծավալվում է երկու հիմնական փաստաթղթերի՝ «Անհատական գործընկերության գործողության ծրագրի» (ԱԳԳԾ)[15] ու «Պլանավորման և վերանայման գործընթացի» (ՊՎԳ) շրջանակներում: Համագործակցության ասպարեզում իր ուրույն դերն ունի խորհրդատվական աջակցությունը հետևյալ ոլորտներում.

- ռազմական կրթություն,
- խաղաղապահություն,
- ռեսուրսների կառավարում և պլանավորում,
- ստացված դասերի համակարգի ստեղծում,
- ՀՀ ԶՈՒ-ի հայեցակարգային փաստաթղթերի համապարփակ վերաքննում,
- օրենսդրական փոփոխությունների իրականացում, պլանավորման, ծրագրավորման և բյուջեավորման համակարգի ներդրում:

Նշված ոլորտներում համագործակցության հիմնական նպատակն է միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրմամբ և ներդրմամբ Հայաստանում ճկուն և արդիական պաշտպանական համակարգի ստեղծումը:

Խոսելով խաղաղապահության ոլորտի մասին պետք է նշել, որ հայ խաղաղապահները միջազգային խաղաղության և կայունության պահպանմանը մասնակցում են 2004 թվականից: Ներկայումս նրանք ընդգրկված են ՆԱՏՕ-ի երկու ցամաքային օպերացիաներում՝ ԿՖՈՐ (Կոսովո), «Վճռական աջակցություն» (Աֆղանստան), ինչպես նաև ՄԱԿ-ի ՅՈՒՆԻՖԻԼ (Լիբանան) և ՄԻՆՈՒՍՄԱ (Մալի) առաքելություններում: Հայաստանը, լինելով ՀԱՊԿ-ի հիմնադիր անդամ և մասնակցելով դրա զորավարժություններին, միևնույն ժամանակ այդ կազմակերպության միակ մասնակիցն է, որը ներգրավված է ՆԱՏՕ-ի խաղաղապահական առաքելություններում: Ավելին. Հայաստանը հետխորհրդային տարածքում այն եզակի պետություններից է, որը վերջին տասնհինգ տարիների ընթացքում կարողացել է խաղաղապահության ոլորտում կուտակել արևմտյան ռազմական համակարգերի հետ գործնական համագործակցության բավական լուրջ փորձ և պատրաստ է այն կիսելու ՀԱՊԿ-ի մյուս անդամների հետ:

[15] Տես «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր (ԱԳԳԾ)» (http://www.mfa.am/hy/international-organisations/NATO/):

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտի բարեփոխումների շրջանակներում մեծ տեղ է հատկացվում նաև կիբեռանվտանգության հիմնահարցերին: Մասնավորապես՝ միջազգային ռազմական համագործակցության շրջանակներում ՀՀ ԶՈՒ-ի համապատասխան ստորաբաժանումների կիբեռանվտանգության մասնագետներին հնարավորություն է ընձեռվում վերապատրաստման շրջանակներում մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության դաշնակից Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ ռազմավարական գործընկեր ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի կազմակերպած՝ կիբեռանվտանգության տարատեսակ դասընթաց-վարժանքներին:

Այդ գործընթացի կարևոր մաս է կազմում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում ստեղծված կիբեռանվտանգության խմբի գործունեությունը, որը ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության նորացման շրջանակներում մշակել է Կիբեռանվտանգության ազգային ռազմավարության նախագիծը[16]: Տվյալ փաստաթուղթը հաջողությամբ գիտական փորձաքննություն է անցել ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Տեղեկատվական ռեսուրսների և կիբեռտարածության կառավարման քոլեջում: Սա վկայում է Հայաստանի պաշտպանական գերատեսչության առանցքային ուղեղային կենտրոնում այնպիսի նախագծի մշակման մասին, որն իր որակական և հայեցակարգային առումով արժանացել է կիբեռանվտանգության ոլորտի համաշխարհային առաջատարներից մեկի՝ ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի Տեղեկատվական ռեսուրսների և կիբեռտարածության կառավարման քոլեջի գիտամեթոդաբանական հավանությանը:

Ամփոփելով հոդվածը՝ նշենք, որ Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված անվտանգային միջավայրը բնութագրվում է մեծ անորոշություններով և ցածր մակարդակի կանխատեսելիությամբ, ինչն առաջին հերթին պայմանավորված է Լեռնային Ղարաբաղի հակամարտության չլուծվածությամբ, ինչպես նաև, մի կողմից, տարածաշրջանի պետությունների հարաբերությունների և, մյուս կողմից, հիմնական միջազգային դերակատարների շահերի անհամապատասխանությամբ: Այս անկայուն միջավայրում մեր անվտանգության, կայուն զարգացման և տարածաշրջանային խաղաղության պահպանման կարևորագույն նախապայմանն է Հայաստանի հավասարակշռված արտաքին քաղաքականության իրագործումը, ինչպես նաև անհրաժեշտ ռազմական ներուժի զարգացումը: Առկա տարածաշրջանային և համաշխարհային ռազմավարական ռազմաքաղաքական ու աշխարհատնտեսական զարգացումների պայմաններում Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգության ապահովման խնդիրները շարունակում է լուծել Ռուսաստանի ու ՀԱՊԿ-ի հետ դաշնակցային, ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի ու Եվրամիության հետ՝ գործընկերային, ինչպես նաև Իրանի ու Չինաստանի

[16] Տես «Հայաստանի Հանրապետության կիբեռանվտանգության ազգային ռազմավարության նախագիծ»: «ՀԲ», 2017, հմ. 1–2:

հետ՝ պրագմատիկ փոխգործության պահպանմամբ ու շարունակական զարգացմամբ:

Ստեղծված իրավիճակում, երբ ՀՀ դաշնակցի ու գործընկերոջ միջև նկատվում է առճակատում, բարդացել է այդ ուժային կենտրոնների հետ մեր արտաքին ու պաշտպանական քաղաքականության հավասարակշռումը: Սակայն, պետք է փաստել, որ տվյալ մարտահրավերները հանգեցրել են նաև ազդեցության կենտրոնների տեսանկյունից Հայաստանի նշանակության աճման և այդպիսով՝ մեր անվտանգության շահերի առաջմղման համար բարենպաստ հնարավորությունների: Հայաստանը, ունենալով փոքր տարածք և սահմանափակ ռեսուրսներ, պետք է մշտապես փորձի մրցակցային առավելությունների ստեղծմամբ ձևավորել որակական գերազանցություն, որով կչեզոքացվեն առկա և ապագա սպառնալիքները:

## РОЛЬ МЕЖДУНАРОДНОГО ВОЕННОГО СОТРУДНИЧЕСТВА В ДЕЛЕ МОДЕРНИЗАЦИИ ВС РА

*Т. С. АРУТЮНЯН, советник 1-го класса СГС, заместитель начальника Отдела планирования оборонной политики Управления оборонной политики МО РА, аспирант НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Безопасностная среда, в которой находится Республика Армения, характеризуется высоким уровнем неопределенности. В этой неустойчивой среде важным предусловием обеспечения безопасности является осуществление сбалансированной внешней политики, в рамках которой РА продолжает развитие союзнических отношений с РФ, членство в ОДКБ, партнерских отношений с США, членами НАТО и Евросоюза, прагматического сотрудничества – с Ираном и Китаем.

Со дня своей независимости РА проводит взвешенную многовекторную внешнюю политику, суть которой не противопоставление друг другу интересов ведущих в регионе акторов, а стремление стать своеобразной платформой для сочетания и стыкования этих интересов. Данный подход лежит и в основе военного сотрудничества РА с другими государствами.

Создание современной и гибкой оборонной системы РА является основной целью ее сотрудничества с НАТО, осуществляемого в следующих сферах: военное образование; миротворчество; управление ресурсами и стратегическое планирование; разработка концептуальных документов ВС РА; изменения в военном законодательстве; внедрение системы бюджетного планирования и программирования.

Армянские миротворцы участвуют в двух наземных операциях НАТО – КФОР (Косово) и «Решительное содействие» (Афганистан), а также в

миссиях ООН ЮНИФИЛ (Ливан) и МИНУСМА (Мали). Армения – единственный член ОДКБ, который вовлечен в миротворческие миссии НАТО и имеет опыт взаимодействия с западными системами военного управления, что позволяет ей выступить в роли моста, связующего эти две организации.

Другой важной сферой военного сотрудничества РА с РФ, США и НАТО является кибербезопасность.

## THE ROLE OF INTERNATIONAL MILITARY COOPERATION IN THE MODERNIZATION OF THE RA ARMED FORCES

*T. S. HARUTYUNYAN, 1st Class Advisor, SCS, Deputy Chief, Defense Policy Planning Section, Defense Policy Department, MOD, RA, Graduate Student, NDRU, MOD, RA*

SUMMARY

The security environment around the Republic of Armenia is characterized by a high level of uncertainty. In this volatile environment, an important precondition for ensuring security is the implementation of a balanced foreign policy, within which the RA continues to develop allied relations with the RF, membership in the CSTO, partnership with the US, NATO and EU members, pragmatic cooperation with Iran and China.

Since its independence, Armenia has pursued a balanced multi-vector foreign policy, the main point of which is not opposing the interests of the regional leading actors to each other, but rather the commitment to become a unique platform for combining and joining these interests. This approach also underlies Armenia's military cooperation with other states.

Creating a modern and flexible defense system of the Republic of Armenia is the main goal of its cooperation with NATO being implemented in the following spheres: military education; peacekeeping; resource management and strategic planning; elaboration of conceptual documents of the RA Armed Forces; amendments to the military legislation; implementation of the budget planning and programming system.

The Armenian peacekeepers participate in NATO’s two ground operations – KFOR (Kosovo) and "Resolute Support Mission" (Afghanistan), as well as in the UN missions UNIFIL (Lebanon, and MINUSMA (Mali). Armenia is the only CSTO member involved in NATO peacekeeping missions, and has experience of interaction with Western military control systems, which makes it possible for Armenia to act as a bridge linking these two organizations.

Another important sphere of Armenia's military cooperation with the Russian Federation, the United States, and NATO is cybersecurity.

# ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԵՎ ԱԿՏԻՎ ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԵՐ

*Ա. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ կազմզորահավաքային վարչության պետի տեղակալ, Գ. Բ. ՂՈՒԼՅԱՆ, գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ կազմզորահավաքային վարչության զորահավաքային բաժնի պետ–վարչության պետի տեղակալ*



## ԶՈՒ-Ի ՀԱՄԱԼՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Զինված ուժերի համալրումը միջոցառումների համալիր է, որը պետությունն իրագործում է անձնակազմի, ավելի լայն իմաստով՝ նաև սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների գծով ԶՈՒ-ի պահանջմունքը բավարարելու նպատակով[1]:

Կա անձնակազմով ԶՈՒ-ի համալրման երեք եղանակ.

– զորակոչով,

– պայմանագրային հիմունքներով,

– խառը եղանակով:

ԶՈՒ-ի համալրման յուրաքանչյուր եղանակ ունի իր առավելություններն ու թերությունները, որոնց վերլուծությունն անհրաժեշտ է համալրման առավել նպատակահարմար տարբերակը որոշելու համար: Փաստորեն դա օպտիմալացման խնդրի լուծում է: Ըստ սպառնալիքների գնահատման, հավանական հակառակորդի դոկտրինի և նրա ռազմական համակարգի վիճակի ու զարգացման միտումների՝ որոշվում է յուրային ԶՈՒ-ի կերպարանքը, համապատասխան թվային կազմն ու կառուցվածքը, կատարվում է սպառազինությունների ու ռազմական տեխնիկայի համակարգերի ընտրությունն ու որոշվում է դրանցից յուրաքանչյուրի թվաքանակը: Այնուհետև ստացված թվային արժեքները ճշգրտվում են ըստ պետության տնտեսական, ֆինանսական հնարավորությունների, մարդկային ռեսուրսների. ընտրվում է դրանց

[1] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 196:

ամենաբարենպաստ հարաբերակցությունը[2]: Որպես հիմք վերցվում է կշռադատված ռազմական բավարարության* սկզբունքը[3]:

Զորակոչով զինված ուժերի համալրման հիմնական և որոշիչ առավելությունն այն է, որ այդպիսով պատրաստվում է նշանակալի թվով ռազմաուսուցանված ռեզերվ (պահեստազոր): Առավելություն է նաև այն, որ զինակոչիկի պատրաստումն ու ապահովումը ֆինանսապես պակաս ծախսատար են, քան պայմանագրային հիմունքներով ծառայության անցածինը, ուստի միևնույն ծախսով հնարավոր է պահել էապես ավելի մեծաթիվ զորք: Զորակոչային համալրումն ունի ևս մեկ առավելություն. այն հնարավորություն է տալիս ներդրելու այլընտրանքային քաղաքացիական ծառայության համակարգ, ինչն անհրաժեշտ է քաղաքացու իրավունքների և խղճի ազատության լիարժեք ապահովման տեսակետից:

Առավելությունների հետ մեկտեղ, ակնհայտ են զորակոչային համալրման համակարգի թերությունները: Դրանցից են՝ ծառայության սկզբնական շրջանում զորակոչիկների համեմատաբար ցածր մակարդակի մասնագիտական պատրաստականությունը, ոչ բավարար շառժառիթավորման պատճառով զորակոչիկների շրջանում նկատվող ավելի ցածր մակարդակի անձնական պատասխանատվությունը և այլն:

Պայմանագրային զինծառայողների մասնագիտական պատրաստության մակարդակն ավելի բարձր է, քանի որ դրան նպաստում են մի շարք գործոններ՝ պայմանագրայինների նյութական և սոցիալական շահագրգռվածությունը մասնագիտական մակարդակի աճմամբ, պաշտոնեական առաջընթացով: Կարևոր գործոն է նաև զինծառայության ավելի երկար տևողությունը, քան պարտադիր ժամկետային ծառայության զորակոչիկների դեպքում:

Միևնույն ժամանակ, պրոֆեսիոնալ բանակ պահելն անհամեմատ ավելի ծախսատար է, քանի որ մասնագետ կադրերի պատրաստումը, նրանց դրամական, սոցիալական ու բուժական ապահովումը պահանջում են հսկայական միջոցներ:

Այսօր Հայաստանում պայմանագրային հիմունքներով համալրվում են կարևոր ռազմավարական ուղղություններում տեղաբաշխված մշտական մարտական պատրաստությամբ զորամասերը: Աշխարհաքաղաքական գործոնների հաշվառմամբ ԶՈՒ-ն համալրելիս մեր պետությունը չի կարող հիմնվել բացառապես պայմանագրայինների վրա, քանի որ լայնածավալ պատերազմ սկսվելու դեպքում միայն պայմանագրայիններից կազմված բանակի ներուժը կարող է արագորեն սպառվել:

---

[2] Տես, օրինակ, *В. Манилов.* Оптимизация. Качество. Эффективность. Параметры реформирования Вооруженных сил России. «Красная Звезда», 15.08.1997:

* «Խաղաղ ժամանակի համար ԶՈՒ-ի այն թվաքանակը, սպառազինության ու ռազմական տեխնիկայի քանակությունը, որոնք անհրաժեշտ են տվյալ շրջանի խնդիրների կատարման համար» (*Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան*, Նշ. աշխ., էջ 304):

[3] Տես *С. А. Тюшкевич.* Разумная достаточность для обороны: параметры и критерии. «Военная мысль», 1989, № 5:

Մարդկային սահմանափակ ռեսուրսներով երկրում, ինչպիսին Հայաստանն է, անհնար է լիովին հրաժարվել զորակոչից:

Այսօր ոչ մեծ պայմանագրային բանակ ունենալու իրավունք իրենց կարող են վերապահել ՆԱՏՕ-ին անդամակցող առանձին եվրոպական պետություններ, որոնք դաշնադրային պայմանագրերի հիման վրա որոշակի հույս են կապում դաշնակից գերտերությունների, հատկապես՝ ԱՄՆ-ի ռազմական հզորության հետ և այդ պատճառով իրենց տարածքները տրամադրելով ԱՄՆ-ի Զինված ուժերի ստորաբաժանումների տեղակայման համար՝ իրենց ռազմական անվտանգության ապահովման հարցում գլխավորապես ապավինում են այդ ռազմական հզորությանը:

Կա մի թյուր կարծիք, թե իբր զորակոչի սկզբունքով ԶՈՒ-ի համալրումը բնորոշ է ամբողջատիրական, իսկ վարձու սկզբունքով համալրումը՝ զարգացած ժողովրդավարական պետություններին: Փաստերը, սակայն, վկայում են այլ բան:

Վարձկաններից կազմված բանակ ունեցողների մեծ մասը երրորդ աշխարհի թույլ զարգացած պետություններն են՝ Բանգլադեշը, Բուրունդին, Զամբիան, Զիմբաբվեն, Կամերունը, Նեպալը, Նոր Գվինեա-Պապուան, Ռուանդան, Ուգանդան, Եթովպիան, որտեղ գոյություն ունեն տարբեր տեսակի քաղաքական, ռասայական, ազգային կամ ժողովրդագրական խնդիրներ, և վարձու բանակը, կազմավորվելով տեղի բռնապետի համար, ծառայեցվում է հենց այդ ներքին խնդիրների լուծմանը[4]:

Զորակոչային հիմունքներով համալրվող զինված ուժեր ունեցողների թվում են այնպիսի զարգացած ժողովրդավարական պետություններ, ինչպիսիք են Նորվեգիան, Շվեդիան, Ֆինլանդիան, Շվեյցարիան, Իսրայելը, Կորեայի Հանրապետությունը, Սինգապուրը, Թայվանը, Բրազիլիան, Իտալիան, Չինաստանը, Ֆրանսիան[5]:

Ինչպես պնդում են գերմանացի փորձագետները, վարձկանների ծառայության գլխավոր շարժառիթը ոչ թե Հայրենիքի պաշտպանությունն է, այլ ծառայության դիմաց վճարվող գումարը և պետական արտոնություններից օգտվելը: Ուստի վարձկանները, որպես կանոն, խուսափում են մարտական գործողություններում լիովին ներգրավվելուց՝ գիտակցելով մահվան սպառնալիքը, վիրավորվելու (հաշմվելու) մեծ հավանականությունը[6]: Նիկոլո Մաքիավելլին գրում է. «Զորքն անհրաժեշտ է պետությանը, և եթե նա չունի իր ռազմական

[4] Տես *Александр Храмчихин.* Наемник - не защитник отечества. «Военно-промышленный курьер», 19–25 мая 2010 г., № 19 (335) (https://vpk-news.ru/sites/default/files/pdf/issue_335.pdf):

[5] Տես *Виталий Генаров.* Воинская обязанность: кого и в каких странах сегодня призывают служить в армию?, 5 декабря 2017 (https://discours.io/articles/social/voinskaya-obyazannost-kogo-i-v-kakih-stranah-segodnya-prizyvayut-sluzhit-v-armiyu):

[6] Տես «Анатолий Цыганок: Армии нужны профессионалы, а не наемники», 30.01. 2008 (http://www.army-hr.ru/article/1252.html):

ուժը, ապա վարձում է օտարերկրացիների, իսկ օտարերկրյա զորքն ընդհանուր բարիքի համար ավելի վնասակար է, քան յուրայինը, քանի որ նրան ավելի հեշտ է կաշառել, և փառամոլն ավելի հեշտ կարող է հենվել նրա վրա: Եվ իրագործել իր այս մտադրությունը նա կարող է ավելի մեծ հեշտությամբ, քանի որ կեղեքվողներն անզեն են»[7]:

Իրական պատերազմի պայմաններում վարձու բանակի կայունությունը (տոկունությունը) արագորեն անկում է ապրում: Բնորոշ օրինակ է Քուվեյթի նախկին վարձու բանակը: Մասնագետների գնահատմամբ՝ տարածաշրջանում մեծ ներուժ ունեցող Քուվեյթի Զինված ուժերը չկարողացան դիմակայել 1990 թվականի օգոստոսին Իրաքի ձեռնարկած ագրեսիային: Ազատագրվելուց անմիջապես հետո՝ 1991 թվականի փետրվարին, այդ պետությունը վերադարձավ Զինված ուժերը զորակոչով համալրելու սկզբունքին[8]:

1991 և 2003 թվականների իրաքյան՝ դասական համարվող պատերազմներում, ԱՄՆ-ի Զինված ուժերի ղեկավարությանը հաջողվեց բարձր պահել անձնակազմի մարտական ոգին. առաջին պատերազմում՝ «Քուվեյթի ազատագրումը իրաքյան ագրեսիայից», երկրորդում՝ «Իրաքի ազատագրումը Սադամ Հուսեյնի տիրակալությունից» նպատակ-կարգախոսների շնորհիվ: Սակայն երկրորդ պատերազմի՝ դասական ձևից պարտիզանականի անցնելու պարագայում ամբողջովին ի հայտ եկան պայմանագրային բանակին հատուկ թերությունները. ամերիկյան զորամասերի անձնակազմը չուներ բարոյական շարժառիթ, ինչը անձնակազմի մեծ կորուստներով ուղեկցվող թեժ մարտական գործողությունների ժամանակ հանգեցրեց ցամաքային զորքերում և ծովային հետևակում ծառայել ցանկացողների թվի կտրուկ նվազման, այսինքն՝ այն բաղադրիչներում, որոնք Իրաքում անմիջականորեն մասնակցում էին մարտական գործողություններին ու, բնականաբար, կրում էին մեծ կորուստներ: Տեղի ունեցավ անձնակազմի բարոյահոգեբանական հատկությունների կտրուկ անկում, և, փաստորեն, կատարվեց վերադարձ դեպի 1970-ականների վիճակը, երբ ԶՈՒ-ի ղեկավարությունն ստիպված էր մեղմացնել ծառայության համար պիտանիության չափանիշները, որոնք կիրառվում էին պայմանագրային զինծառայողի նկատմամբ: Որպես արդյունք՝ ծառայության էին վերցվում բոլոր նրանք, ովքեր ցանկություն էին հայտնում[9]:

Նույն համատեքստում ուշագրավ է նաև ռուսական բանակի փորձը. Չեչենական պատերազմների ժամանակ ՌԴ ԶՈՒ-ի բարեփոխումների ջատագովները դեմ առան պայմանագրային հիմունքներով համալրմանը բնորոշ նշված խնդիրներին. մեկ անգամ լինելով Չեչնիայում՝ պայմանագրայինները խզում էին պայմանագրերը և չէին ցանկանում կռվել: Ռուսական բանակում,

[7] *Н. Макиавелли*. О военном искусстве, с. 7 (www.rulit.me/books/o-voennom-iskusstve-read-115701-7.html).

[8] Տես *Ալեքսանդր Խրամչիխին,* Նշ. աշխ.:

[9] Տես «Анатолий Цыганок: Армии нужны профессионалы, а не наемники» (http://www.army-hr.ru/article/1252.html):

մինչև սպառազինության ու ռազմական տեխնիկայի արդիականացման, աշխատավարձերի կտրուկ ավելացման ու բնակարանային ապահովման մակարդակի բարձրացման պուտինյան հայտնի բարեփոխումները, պայմանագրային ծառայողների միջուկը կազմում էին բնակչության անապահով խավի ներկայացուցիչները[10]:

Այստեղ ուզում ենք նշել հետևյալ նկատառումը. չի կարելի շփոթել պայմանագրային զինծառայողներին և կամավորականներին: Հայ ժողովուրդն ունի կամավորական շարժման փայլուն օրինակներ՝ սկսած առաջին համաշխարհային պատերազմի տարիներից[11] մինչև Հայրենական մեծ պատերազմը[12], Արցախի ազատամարտը[13] և Ապրիլյան պատերազմը[14]:

Տարբերությունը շարժառիթներն են: Եթե առաջինների համար գերակա է վարձատրության չափը, ապա երկրորդների մղումը հայրենասիրությունն է, իսկ վարձատրության չափը (լինել, թե չլինելը) նշանակություն չունի: Բայց անգամ կամավորականների դեպքում էլ կարգապահությունն այդուհանդերձ կաղում է[15]:

Ասվածի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ Հայաստանը պայմանագրային սկզբունքով կարող է համալրել միայն իր բանակի մի մասը՝ զուգընթաց զորակոչելով նաև պարտադիր ժամկետային ծառայության զինակոչիկների: Դա համալրման, այսպես կոչված, խառը եղանակն է (և՛ ժամկետային, և՛ պայմանագրային սկզբունքներով): ՀՀ ԶՈՒ-ի համալրման խառը եղանակը այսօրվա աշխարհաքաղաքական ու տնտեսական իրողությունների պայմաններում օպտիմալ տարբերակ է և, մեր կարծիքով, այդպիսին կլինի տեսանելի ապագայում: Միայն թե, կարծում ենք, պետք է օպտիմալացման խնդրի սկզբունքներով որոշել դրանց առավել բարենպաստ հարաբերակցությունը:

---

[10] Տես նույն տեղում:

[11] Տես *Մ. Լ. Կարապետյան,* Հայկական զինվորական կազմավորումները Կովկասյան ռազմաճակատում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: «ՀԲ», 1999, հմ. 2:

[12] Տես *Ա. Ա. Թադևոսյան,* Հայերը Խորհրդային Միության սրբազան պատերազմի դաշտում, *նաև՝ Ա. Թ. Հարությունյան,* Հայաստանի զինվորական կոմիսարիատների դերը Հայրենական մեծ պատերազմում: «ՀԲ», 2005, հմ. 2–4:

[13] Տես *Ս. Մ. Օհանյան,* Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի անցած ուղին, ներկան և ապագան, *նաև՝ Ա. Մ. Դավթյան, Ս. Ա. Ավանեսյան,* Շուշիի ազատագրումը և դրա պատմական նշանակությունը: «ՀԲ», 2012, հմ. 1–2, *Է. Կ. Պողոսյան,* ՀՀ ԶՈՒ-ի ստեղծման իրավական ապահովման հարցի շուրջ (1990–1994 թթ.): «ՀԲ», 2012, հմ. 4:

[14] Տես *Պ. Ա. Չոբանյան,* «Ազգ–բանակ». Հայոց աշխարհազորը պատմության հոլովույթում, *նաև՝ Ա. Վ. Աթանեսյան,* Հայաստանում բանակի և զինծառայողների հեղինակության ապահովման հիմնախնդիրները «ազգ–բանակ» հայեցակարգային մոդելի մշակման համատեքստում: «ՀԲ», 2016, հմ. 4:

[15] Տես *Մ. Լ. Կարապետյան,* Կամավորական խմբերի համար մշակված հրահանգները որպես առաջին աշխարհամարտում հայ զինվորականության վարքականոն: «ՀԲ», 2002, հմ. 1–2:

## ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ ՇԱՐՔԱՅԻՆ ԱՆՁՆԱԿԱԶՄՈՎ

Հայաստանում, ի լրումն օրենքով սահմանված ժամկետային պայմանագրային ու պարտադիր ծառայություններից, նախատեսվում է նաև դրանց նոր տարբերակի ներդրում. այդ ծրագիրը կոչվում է «Ես եմ»: Ծրագրին մասնակցելու իրավունք են ստանում զորակոչի ենթակա այն երիտասարդները, որոնք ցանկություն են հայտնում իրենց ծառայությունն անցկացնելու մարտական հերթապահություն իրականացնող զորամասում՝ պաշտպանության նախարարության նշած վայրում:

Ժամկետային պայմանագրային ծառայության տևողությունը սահմանված է 3 տարի, որից 7 ամիսը զինծառայողն անցկացնում է ազատ արձակվածի կարգավիճակով: Ժամկետային պայմանագրային զինծառայողն սկսած ծառայության 6-րդ ամսից, երբ նրա ստորաբաժանումը հինգամսյա ուսումնական փուլից հետո ստանձնում է մարտական հերթապահությունը, յուրաքանչյուր ամիս ծառայում է հետևյալ կարգով. մեկ շաբաթ՝ արձակուրդում, մեկ շաբաթ՝ զորամասում՝ պատրաստվելով մարտական հերթապահության, և երկու շաբաթ՝ առաջագծում մարտական հերթապահություն կատարելով: Սա, այսպես կոչված, «1+1+2» բանաձևով ծառայությունն է:

Յուրաքանչյուր անգամ արձակուրդ գնալիս զինծառայողին վճարվում է որոշակի գումար՝ արձակուրդային ծախսերը հոգալու համար:

Ծառայության ավարտին զինծառայողին հատկացվում է 5 մլն ՀՀ դրամի չափով պատվո վճար, որը փոխանցվում է նրա անձնական հաշվին: Զորացրված զինծառայողն այդ գումարը կարող է օգտագործել երեք նպատակային ծրագրերից մեկում.

1. մատչելի բնակարանի ձեռքբերում (սուբսիդավորված հիպոտեկային ծրագիր),
2. մինի-ֆերմայի ստեղծում (գյուղաբնակ զինծառայողների համար փոքր ջերմոց կամ ֆերմա ստեղծելու կամ փոքր գյուղտեխնիկա ձեռք բերելու ծրագիր),
3. ուսման վարձի փոխհատուցում[16]:

«Ես եմ» ծրագրի նպատակներից մեկը առաջագծում ծառայողի կարգավիճակը այլ զորամասերում զինծառայողների կարգավիճակից բարձր դասելն է[17]:

Ծրագիրն այլընտրանքային է, և քաղաքացին, որը չի ցանկանում ընդգրկվել դրանում, կարող է ընտրել սովորական երկամյա պարտադիր ծառայության տարբերակը: Բայց և այնպես, ծրագրի մեկնարկը խոստումնալից է, և կան

[16] Տես «Վիգեն Սարգսյանը հանդես է եկել հեղափոխական առաջարկներով»: «mediamax», 20.04.2017 (http://www.mediamax.am/am/news/armypolice/23151):

[17] Տես «Վիգեն Սարգսյանը՝ «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերի մասին»: «Ելակետ Լրատվական», 21.04.2017 (https://yelaket.am/?p=16932&l=am):

նախադրյալներ, որ մոտ ապագայում ծառայության առաջարկվող ձևը կդառնա գերակշռող:

Ծրագրի իրագործմամբ ակնկալվում է, որ տարիներ հետո Զինված ուժերը հնարավորություն կունենան առաջագծում անցնելու ծառայության բացառապես նշված ձևին, ինչն էլ նոր որակական մակարդակի կբարձրացնի առաջագծում ծառայությունը՝ դրանում ներգրավելով առավել շարժառիթավորված, հայրենիքի պաշտպանության գործին նվիրված անձնակազմ: Բացի այդ, ակնկալվում է, որ «Ես եմ» ծրագրով ծառայության անցած զինծառայողների մի մասը հետագայում կհամալրի պայմանագրայինների շարքը[18]:

Այլ կերպ ասած՝ «Ես եմ» ծրագիրը ոչ թե ապահովելու է զորակոչային անձնակազմի թվաքանակի ավելացում, այլ մեծապես բարձրացնելու է առաջագծում ծառայության որակը, իսկ ԶՈՒ-ի պահեստազորը համալրվելու է հմուտ, առաջագծում ծառայություն անցած պահեստազորայիններով: Միևնույն ժամանակ, ծրագիրը միտված է զինվորական ծառայություն անցած երիտասարդին՝ իր ապագան Հայաստանում կառուցելու հնարավորության ընձեռմանը, երկարատև սոցիալական ծրագրերի միջոցով պետության հետ նրա կապի ամրապնդմանը:

## ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ ՍՊԱՅԱԿԱԶՄՈՎ

«Պատիվ ունեմ» ծրագիրը նպատակաուղղված է ՀՀ-ում սպայական ծառայության նկատմամբ հետաքրքրության խթանմանը: Դրա գաղափարն է՝ բուհական տարկետման ու ապագա սպայական ծառայության շաղկապումը: Ընդսմին այդ ծրագրին դիմելու իրավունք է տրվում պետական հավատարմագրում ունեցող ցանկացած բուհում սովորող յուրաքանչյուր երիտասարդի:

Եթե ծրագրին մասնակցել կամեցող երիտասարդը համապատասխանում է մի շարք կարևոր պայմանների (առողջական վիճակ, հրամանատարական ջիղը պարզելուն միտված հոգեբանական թեստավորման դրական արդյունք, ուսման ընթացքում գնահատականի նվազագույն շեմի պահպանում), ապա նա կարող է ընդգրկվել նշված ծրագրում՝ դառնալով սպայի կոչման հավակնող թեկնածու: Սովորելով քաղաքացիական բուհում՝ այդ երիտասարդները 2-րդ կուրսի սկզբից մինչև 4-րդ կուրսի առաջին կիսամյակը, ներառյալ՝ յուրաքանչյուր շաբաթ օր, մասնակցում են Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում կազմակերպվող զինվորական պատրաստման դասընթացին: Ուսուցումը հաջողությամբ ավարտելու և քաղաքացիական բուհի դիպլոմ ստանալու դեպքում քաղաքացին բակալավրի աստիճանին զուգընթաց ստանում է լեյտենանտի սպայական կոչում և երեք տարի ժամ-

[18] Տես «Վիգեն Սարգսյանը հանրային քննարկման ներկայացրեց առաջնագծում զինծառայության «Ես եմ» ծրագիրը»: «panorama.am», 20.04.2017 (https://www.panorama.am/am/news/2017/04/20/%D5%8D%D5%A1%D6%80%D5%A3%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE/1764409):

կետով ծառայության անցնում զինված ուժերում[19]: Ասել է թե՝ բուհական տարկետում ստանալու և անվճար ուսուցման հնարավորությունը վերապահվում է այն քաղաքացիներին, որոնք որոշում են բուհն ավարտելուց հետո երեք տարի ծառայել որպես սպա (սպայի վարձատրությամբ հանդերձ):

Ծառայությունը կազմակերպվում է քաղաքացիական մասնագիտության հաշվառմամբ, բայց բոլոր դեպքերում՝ մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում: Ծառայությունը բարեհաջող ավարտելու դեպքում ծրագրում ընդգրկված երիտասարդն ստանում է լրացուցիչ ֆինանսական բոնուս՝ իր ուսումնառության տարիների ուսման վարձի չափով, իսկ ծառայությունից հետո մագիստրատուրա ընդունվելու դեպքում նա ստանում է նաև իր մագիստրոսական կրթության ծախսի հատուցումը:

«Պատիվ ունեմ» ծրագրով նախատեսվում է նաև հատուկ պայմաններով սպայական ծառայություն առաջարկել աշխարհի 10 առաջատար բուհերից մեկն ավարտած, ինչպես նաև միջազգային օլիմպիադաների հաղթող ուսանողներին: Նրանց ծառայություն է առաջարկվում սպայական պաշտոններում, մասնավորապես՝ ռազմաարդյունաբերական համալիրում, որտեղ նրանք կկարողանան ավելի մեծ արդյունավետությամբ կիրառել իրենց գիտելիքները: Ընդսմին նրանց առաջարկվում է կնքել ոչ թե եռամյա, այլ հնգամյա պայմանագիր[20]:

Ծրագրի ակնկալվող կարևոր արդյունքներից է նաև առաջագծում ծառայություն անցած, լավ պատրաստված սպայական պահեստազորի ձևավորումը[21]:

Այսպիսով՝ ծրագիրն արժեքավորում է տարկետման իրավունքը, որից օգտվողն առավելություն ունի տարկետում չստացած ուսանողի համեմատությամբ և պիտի բանակում ղեկավարի նրան՝ ծառայելով որպես սպա: Բացի այդ, այս ծրագրով ավելի մեծ թվով ՀՀ քաղաքացիներ են իրավունք ստանում օգտվելու անվճար կրթություն ստանալու հնարավորությունից: Ակնկալվում է, որ ծրագրի իրագործմամբ հայկական բանակը կհամալրվի բանիմաց և հմուտ սպայակազմով, որը համալրողները կգբաղեցնեն դասակ–վաշտ օղակում կրտսեր սպաների թափուր հաստիքները:

Սպայակազմի համալրման մեկ այլ ծրագիր է «Զինվորից՝ սպա» ծրագիրը, որը նախատեսված է այն քաղաքացիների համար, որոնք ժամկետային ծառայության ընթացքում զինվորական մասնագիտության նկատմամբ ցուցաբերել են հետաքրքրություն և որոշել են մնալ բանակում ու ծառայել որպես սպա: Նրանց համար ռազմական համալսարանում կկազմակերպվեն դասընթացներ, կսահմանվի նվազագույն աշխատավարձի չափով կրթաթոշակ,

[19] Տես «ՀՀ ՊՆ-ն սպայական ծառայության հնարավորություն կտա հատուկ դասընթացից ավարտած ուսանողներին»: «ՌԱԶՄ.info», 20.04.2017 (https://razm.info/100684):

[20] Տես ««Ներդրվում է այլընտրանքային համակարգ». Հանրային խորհուրդը քննարկել է ՊՆ «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերը»: «News.am», 05.05.2017 (https://news.am/arm/news/388258.html):

[21] Տես նույն տեղում:

ուսանողները համալսարան կհաճախեն միայն դասաժամերին և քննությունները հաջողությամբ հանձնելուց հետո կկնքեն տասը տարով սպայական ծառայության պայմանագիր:

## ԱԿՏԻՎ ՊԱՀԵՍՏԱԶՈՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Պահեստազորը ռազմական տեսակետից ուսումնավարժված այն մարդկանց թվակազմն է, «որոնք գտնվում են զինվորական հաշվառման մեջ և նախանշանակված են զորահավաքի դեպքում զինված ուժերի ծավալման և պատերազմի դեպքում դրանց համալրման համար»[22]: ՀՀ-ում նպատակ կա ժամանակի ընթացքում ձևավորելու այնպիսի ակտիվ պահեստազոր, որը անհրաժեշտության դեպքում ունակ լինի արհեստավարժ կերպով կատարելու մարտական խնդիրները[23]:

Պահեստազորի դերը մեծացավ 19-րդ դարում՝ մեծ բանակների դարաշրջանում: Այդ ժամանակ աշխարհի առաջատար պետությունների զինված ուժերի թվաքանակը հասել էր հարյուր հազարավոր զորակոչված զինվորների, իսկ 20-րդ դարում՝ պարտադիր զորակոչի շնորհիվ, միլիոնների: Պարտադիր ժամկետային ծառայության տևողությունը կարճ էր՝ մինչև 3 տարի, ուստի գործող բանակում զինվորների թվաքանակի պակասը հիմնականում լրացվում էր պահեստազորայինների զորակոչմամբ: Այս հանգամանքը դրական ազդեցություն ունեցավ պահեստազորայինների պատրաստման որակի վրա: Այդուհանդերձ, առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ բանակները շատ արագ կորցրին իրենց զինավարժ պահեստազորը և ստիպված էին զորահավաքել բանակում չծառայած մարդկանց և նրանց ուսուցանել հենց մարտերի ընթացքում[24]:

Եթե Չինաստանում զինված ուժերում է ծառայում շուրջ 600 քաղաքացուց մեկը, Միացյալ Նահանգներում՝ 450-ից մեկը, Ռուսաստանի Դաշնությունում՝ 150-ից, ապա Հայաստանում յուրաքանչյուր 40-րդ քաղաքացին Զինված ուժերի ծառայող է: Հարաբերականորեն մենք աշխարհում ամենամեծաթիվ զինծառայողներով երկրներից ենք, առաջիններից ենք նաև պահեստազորում ընդգրկված մեր քաղաքացիների տոկոսային հարաբերակցությամբ և երևի թե առաջինը՝ նրանցից մարտական հերթապահության բարդ ուղին անցածների թվով: Սրանից էլ եզրակացություն, որ Հայաստանը պահեստազորի թվաքանակի խնդիր չունի, այլ նպատակ ունի տարբեր ծրագրերի իրագործմամբ բարձր որակական ցուցանիշի հասցնելու պահեստազորի պատրաստության մակարդակը:

---

[22] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան,* Նշ. աշխ., էջ 462:

[23] Տես ««Բուհ-բանակ» համագործակցության գերակայությունը «Ազգ-բանակ» հայեցակարգի համատեքստում» (միջազգային գիտաժողովի նյութեր), 14-15 նոյեմբերի, 2017: Ե., 2017, էջ 10 (http://www.northern.am/images/git-hraparakum/Azg-Banak.pdf):

[24] Տես *Ֆիլիպ Ֆլուրի, Վալենտին Բադրակ,* Պահեստազորային համակարգի կիրառման փորձի հետազոտություն: ԺՆԿ-Երևան, 2016, էջ 5 (https://www.dcaf.ch/sites/default/files/publications/documents/Research-Project-on-Reserve-System-Practices_arm.pdf):

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում արդեն ամրագրված է ակտիվ պահեստազոր հասկացությունը՝ «պատերազմական ժամանակի հաստիքների կցագրված քաղաքացիներին պայմանագրային հիմունքներով հաստիքով նախատեսված պարտականությունների կատարման մեջ ներգրավում»[25]:

Զինվորական կոմիսարիատները պահեստազորում հաշվառված քաղաքացիներին, նրանց ռազմահաշվառական մասնագիտությանը համապատասխան, կցագրում են պատերազմական ժամանակաշրջանի Զինված ուժերի հաստիքներին: Օրենքով նախատեսված է, որ այդ պահեստազորայինների մի մասը կարող է հաստիքով նախատեսված պարտականությունների կատարման գործում ներգրավվել ինքնակամ՝ պայմանագրային հիմունքներով, այսինքն՝ պաշտպանության նախարարության և քաղաքացու միջև կնքվող պայմանագրի հիման վրա: Դա կոչվում է ակտիվ պահեստազորային ծառայություն:

Ակտիվ պահեստազորային ծառայությունը այն համալիր միջոցառումների ամբողջությունն է, որոնք պետք է իրականացնեն զինվորական կոմիսարիատներն ու զորամասերը՝ տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ:

Ակտիվ պահեստազորային ծառայության ներդրման նպատակն է ԶՈՒ-ի կառավարման մարմինների պատրաստության մակարդակի բարձրացումը:

Այս ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ակտիվ պահեստազորային ծառայությունը հնարավոր է կիրառել.

1) զորամասերի մարտական հերթապահությունում չընդգրկվող ստորաբաժանումներում,
2) զորամասերի, զորամիավորումների ու միավորումների վարչակազմերի՝ ըստ պատերազմական ժամանակի հաստիքներին կցագրված սպայական կազմի համար,
3) զորամասերի մարտական հնարավորությունները որոշող պատերազմական ժամանակի պաշտոններին կցագրված պահեստազորայինների համար:

Ակտիվ պահեստազորային ծառայություն անցնելու ցանկություն հայտնած յուրաքանչյուր անձի հետ (եթե համապատասխանում է ներկայացվող պահանջներին) զորամասի հրամանատարը կնքում է քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագիր: Կնքված պայմանագրի հիման վրա պահեստազորայինը նախորոշվում է համապատասխան պաշտոնի՝ համաձայն նրա կրթության, զինվորական հաշվառման մասնագիտության և զինվորական կոչման ու հրամանագրվում զորամասի հրամանատարի հրամանով:

[25] Տես «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի հմ. ՀՕ-195-Ն օրենքը, հոդ. 58, կետ 1, ենթակետ 3 (http://www.arlis.am/DocumentView.aspx? docid=117633):

Ակտիվ պահեստազորային ծառայության սկզբունքի ներդրմամբ նախատեսվում է մոտակա համայնքների պահեստազորայինների ամսական մի քանի օր մասնակցություն կցագրված զորամասում մարտական պատրաստման պարապմունքներին, ինչը կբարելավի պահեստազորայինների ռազմական ունակությունները, միաժամանակ հնարավորություն կընձեռի ծանոթանալու իրենց ամրակցված սպառազինությանը: Չի փոխվի նաև ստորաբաժանմանը կցագրված անձնակազմը, հրամանատարները հնարավորություն կունենան ճանաչելու իրենց ստորաբաժանման պահեստազորի անձնակազմին: Բարձր աստիճանների մարտական պատրաստության բերման դեպքում այս պահեստազորայինների ազդարարումն ու հավաքը կկատարվեն ավելի կարճ ժամկետներում և նվազ ծախսերով:

Ակտիվ պահեստազորային ծառայության ներդրումից որոշ ժամանակ անց տվյալ ստորաբաժանումները կլինեն պատրաստված և ներդաշնակված ու ըստ անհրաժեշտության կիրառման ենթակա:

Կարող ենք եզրակացնել, որ ակտիվ պահեստազորային ծառայության ներդրումը որակական բարձր ցուցանիշ կապահովի ԶՈՒ-ի պահեստազորի համար, ինչպես նաև կնպաստի ԶՈՒ-ի համալրմանը, քանի որ այն, ըստ էության, զինծառայության այլընտրանքային տեսակ է:

## ՈՐՈՇ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԶՈՒ-Ի ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻՑ

ԶՈՒ-ի համալրման համակարգի կատարելագործման խնդիրները միշտ էլ եղել են ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարության ուշադրության կենտրոնում: Թեև Հայաստանի Հանրապետությունն ունի համալրման գործուն համակարգ և զինավարժ պահեստազոր ստեղծելու համար բավարար նախադրյալներ, օգտակար է նաև ուսումնասիրել տվյալ ոլորտում միջազգային փորձը:

Այսպես. Իսրայելի բանակը, որում խաղաղ ժամանակ ծառայում են շուրջ 200 հազար զինծառայողներ, հաշվված ժամերում իր թվաքանակը կարող է հասցնել 800 հազար լավ ուսումնավարժեցված զինծառայողի:

Ի տարբերություն Ռուսաստանից, որտեղ սպայական կադրերը պատրաստվում են ռազմական ուսումնարաններում՝ դպրոցների երեկվա շրջանավարտներից, Իսրայելում սպա դառնալու համար պարտադիր պետք է ծառայել որպես շարքային: Սպայական դասընթացների ընդունելության քննություններ հանձնելու իրավունք ունեն միայն մանրակրկիտ ընտրազատմամբ առանձնացված լավագույն շարքայիններն ու սերժանտները:

Իսրայելի Պաշտպանության բանակը բարձրագույն կրթությամբ մասնագետ սպաներով համալրելու նպատակով գործում է «Ատուդա» ծրագիրը, որի համաձայն՝ քաղաքացիական բուհերում բանակին անհրաժեշտ մասնագիտություններով սովորող ուսանողներին տրամադրվում է զորակոչից տարկետում՝ պայմանով, որ ուսումն ավարտելուց հետո նրանք բանակում ծառայեն ոչ պակաս, քան հինգ տարի: Այդ ծրագրով սովորող ուսանողները ուսման տարիներին պարբերաբար զորակոչվում են բանակ, մասնակցում

երիտասարդ մարտիկի մեկամսյա և հիմքային սպայական դասընթացների[26]:

Իսրայելի Պաշտպանության բանակում գործում են նաև պարտադիր ժամկետային ծառայության հատուկ ծրագրեր.

– «Իեշիվար հա-հեսդեր» ծրագրով պարտադիր ժամկետային ծառայությունը զուգակցվում է միջնակարգ կրոնական դպրոցում՝ իեշիվայում ուսման հետ: Նման ծառայության ժամկետը 4 տարի է, որից 16 ամիսը մարտական ծառայություն է, մնացածը՝ ուսում,
– «Նահալը» հատուկ կանոնավոր ստորաբաժանումներ են, որոնցում զինվորական ծառայությունը համատեղվում է նոր հիմնվող (որպես կանոն՝ սահմանամերձ) բնակավայրերում գյուղատնտեսական աշխատանքի հետ: Ծառայության ժամկետը կանանց համար 23, տղամարդկանց համար՝ 40 ամիս է,
– «Շնատ շերուտը» մինչբանակային հասարակական ծառայություն է, այսինքն՝ որևէ երիտասարդական շարժումում հասարակական հիմունքներով տեսուչ աշխատելն է կամ այլ հանրօգուտ գործունեությամբ զբաղվելը, որի համար երիտասարդ տղաներին և աղջիկներին տրվում է պարտադիր ժամկետային ծառայությունից մինչև մեկ տարի ժամկետով տարկետում,
– «Հադնա» (Հդուդեյ նոար՝ երիտասարդական գումարտակներ) ակումբները, որոնք գտնվում են Իսրայելի Պաշտպանության բանակի տնօրինության տակ, միավորում են նախազորակոչային տարիքի երիտասարդների (մեծ մասամբ նրանց, ովքեր չեն ավարտել կրթությունը)՝ տալով հանրակրթական ու զինվորական պատրաստություն, մասնավորապես՝ օդաչուների, ծովայինների, իջազորայինների և այլ մասնագիտություններով նախնական գիտելիքներ[27]:

Ուշագրավ է նաև Վրաստանի փորձը. 2018 թվականին այնտեղ պետք է ներդրվի զինվորական պահեստազորի ստեղծման նոր համակարգի գործարկման փորձնական ծրագիրը[*]: Այն նախատեսում է մարդկային ռեզերվի երեք բաղադրիչների առկայություն՝ բանակային, տարածքային և մասնագիտական:

Ըստ այդ համակարգի՝ բանակային ռեզերվում ներգրավվելու են ոչ ավելի, քան 5 տարի առաջ պայմանագրային և սպայական զինծառայությունը թողած անձինք, ինչպես նաև ավելի քան 5 տարի առաջ ծառայությունը թողած քաղաքացիները, որոնց ֆիզիկական վիճակը համապատասխանում է պահանջվող չափանիշներին, եթե կա տվյալ գծով մասնագետների պակաս:

---

[26] Տես *Հ. Ս. Քոթանջյան,* Խորհրդարանական հանրապետության անվտանգային-պաշտպանական համակարգը. Իսրայելի և Վրաստանի դասերի ռազմավարական քաղաքագիտական իմաստավորում: «ՀԲ», 2016, հմ. 2:

[27] Տես նույն տեղում:

[*] Հայեցակարգն առաջարկել էր Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Տինա Խիդաշելին՝ 2016 թ. մարտին, և ծրագիրը պետք է իրականացվեր մինչ 2016 թ. աշուն, սակայն քաղաքական փոխատեղումների պատճառով այն հետաձգվեց 2018 թ.:

Տարածքային ռեզերվում ներգրավվելու են պարտադիր զինծառայություն անցած, կադրային կամ պայմանագրային ծառայությունն ավելի քան 5 տարի առաջ թողած քաղաքացիները: Տարածքային ռեզերվի շարքերում կներգրավվեն նաև պարտադիր զինծառայություն չանցած քաղաքացիները:

Մասնագետների ռեզերվը համալրվելու է որակավորում ունեցող այն քաղաքացիներով, որոնք անհրաժեշտ կլինեն զորահավաքի կազմակերպման և անցկացման համար: Կհաշվառվեն նաև զինված ուժերում ծառայություն անցած բոլոր քաղաքացիները, որոնք կկանչվեն արտակարգ անհրաժեշտության դեպքում կամ կամավորության սկզբունքով[28]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ակնկալվում է, որ Հայաստանում «Ես եմ», «Պատիվ ունեմ» և «Զինվորից՝ սպա» ծրագրերի իրագործման շնորհիվ կձևավորվի պարտադիր և պայմանագրային ծառայության փոխկապված համակարգ՝ պարտադիր զինծառայության կազմակերպման խնդիրների այլընտրանքային լուծումներով, ինչպես նաև կապահովվի պայմանագրային հիմունքներով Զինված ուժերի համալրում արհեստավարժ կադրերով:

Ակտիվ պահեստազորային ծառայության ներդրումը հնարավորություն կտա արդյունավետ կերպով օգտագործելու պահեստազորի մասնագիտական ներուժը՝ պարբերական վարժանքների և Զինված ուժերին առաջադրված խնդիրների կատարման գործում նրա նպատակային ներգրավման միջոցով, բարձր որակական ցուցանիշի կհասցնի պահեստազորի պատրաստությունը:

Նշված ծրագրերի կենսագործումը կնպաստի պետության բարձր մակարդակի պաշտպանունակության և անվտանգության ապահովմանը:

[28] Տես «Վրաստանը պատրաստվում է պահեստազորի նոր համակարգ ներդնել»: «ՌԱԶՄ. info», 01.11.2017 (https://razm.info/115409):

## АЛЬТЕРНАТИВНЫЕ РЕШЕНИЯ НЕКОТОРЫХ ПРОБЛЕМ ОРГАНИЗАЦИИ ВОЕННОЙ СЛУЖБЫ И ВОПРОСЫ СОЗДАНИЯ И СОВЕРШЕНСТВОВАНИЯ АКТИВНОГО РЕЗЕРВА

*А. М. ПЕТРОСЯН, полковник, заместитель начальника Организационно-мобилизационного управления ГШ ВС РА, Г. Б. ГУЛЯН, полковник, начальник мобилизационного отдела – заместитель начальника Организационно-мобилизационного управления ГШ ВС РА*

РЕЗЮМЕ

В современных геополитических и экономических условиях оптимальным способом комплектования ВС РА является использование смешанного способа: как путем призыва на обязательную срочную службу, так и на договорной основе (по контракту).

В ВС РА осуществляются целевые программы по мотивации службы на передовой линии. Так, для пополнения рядового состава войсковых частей, несущих боевое дежурство, осуществляется программа “Я”, в которой могут участвовать те молодые граждане РА, которые изъявляют желание добровольно служить в таких частях. Их служба, длительность которой составляет 3 года, предоставляет им ряд льгот как в процессе службы на передовой, так и по завершении активной службы.

Для пополнения офицерского состава войсковых частей, несущих боевое дежурство, осуществляются программы “Честь имею” и “Из солдата в офицеры”. Согласно первой программе, в ней имеют право участвовать студенты вузов, которым предоставляется отсрочка от обязательной срочной службы взамен на службу по контракту на передовой линии в качестве офицера после получения диплома бакалавра. При этом Министерство обороны оплачивает обучение контрактника. Целью программы является как повышение качественного уровня службы на передовой линии, так и формирование хорошо подготовленного офицерского резерва. Вторая программа предназначена для тех, кто в течение обязательной срочной службы решил остаться в армии и служить в качестве офицера.

Активный резерв – это вовлечение в исполнение по контракту обязательств, предусмотренных штатом военного времени, тех граждан, которые приписаны к этим штатам. Законом предусмотрена также возможность добровольного привлечения к этой службе, которая называется службой в активном резерве. Цель ее внедрения – повышение уровня боеготовности органов управления и резерва ВС РА.

## ALTERNATIVE SOLUTIONS TO SOME PROBLEMS OF ORGANIZING MILITARY SERVICE. ISSUES OF FORMING AND IMPROVING AN ACTIVE RESERVE

*A. M. PETROSYAN, Colonel, Deputy Head, Mobilization Department, the General Staff, the RA Armed Forces, G. B. GHULYAN, Colonel, Head, Mobilization Section – Deputy Head, Mobilization Department, the General Staff, the RA Armed Forces*

SUMMARY

In contemporary geopolitical and economic conditions, an optimal method of manning the RA Armed Forces is using a mixed one – both by compulsory recruitment for military service, and on contractual basis (enlistment under contract).

In the Armed Forces of the Republic of Armenia, targeted programs on stimulating the military service on the front line are being implemented. Therefore, for the replenishment of the rank and file military units on

combat alert duty, the "I am" program is implemented, in which those young citizens of Armenia who are willing to volunteer for service in such units can participate. Their service of 3-year time period provides them with a number of benefits both during the service on the front line, and at the end of the active service.

To replenish the commissioned staff of the military units on combat alert duty, the "I Have the Honor" and "From Soldier to Officer" programs are being implemented. The first program goes that higher education students, who are granted a postponement of compulsory military service, shall do military service on the front line under contract as an officer after graduating with a Bachelor's Degree. At the same time, the Ministry of Defense pays for the contract serviceman's education. The goal of the program is both to improve the quality of the military service on the front line, and to form a well-trained reserve of officers. The second program is designed for those who, during the compulsory military service, decided to stay in the army and serve as an officer.

An active reserve is the involvement of those citizens bound to meet obligations under contract, stipulated by the wartime staff, who are assigned to these staffs. The law also provides for the possibility of voluntary involvement in this service, which is called service in active reserve. Its implementation is aimed at increasing the level of combat readiness of the command and reserve bodies of the RA Armed Forces.

# ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ՝ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ*

*Ա. Ռ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, գնդապետ, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի պետ*

Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի ստեղծումն սկսվեց Արցախյան ազատամարտի շրջանում և կատարվում էր ծանր, փոփոխական հաջողությամբ ընթացող մարտական գործողություններին զուգընթաց: Դա, անշուշտ, չէր կարող իր բացասական կնիքը չդնել տվյալ գործընթացի վրա՝ էապես դժվարացնելով այդ բարդ գործը[1]:

Բանակաշինությունն առանձնակի թափ ստացավ հրադադարի համաձայնագրի կնքումից հետո, երբ Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարությունը հնարավորություն ստացավ լիովին նվիրվելու այդ բարդ խնդրի լուծմանը՝ առանց շեղվելու մարտական գործողությունների կազմակերպման ու հնարավորինս լիարժեք ապահովման վրա: Անհրաժեշտ էր օպտիմալացման եղանակով միաժամանակ լուծել երկու խնդիր: Զինված ուժերը համալրել հնարավորինս որակյալ ու գիտակ կադրերով, ստեղծել «փոխզիջումային կառավարման համակարգ», որի շրջանակներում հնարավոր լիներ ղեկավարել հասարակության համար մեծ հեղինակություն ներկայացնող, հաղթանակած բանակի հրամանատարական կազմին, որի առանձին ներկայացուցիչներ պատերազմի ավարտից հետո դժվարությամբ էին համակերպվում իրենց պասիվ դերին և ռազմական անգործությունը փորձում էին համակշռել հասարակական ակտիվությամբ՝ առավելապես միտված լինելով ինքնակառավարման: Քաղաքացիական վերահսկողության յուրաքանչյուր դրսևորում կարող էր արժանանալ նրանց ոչ համապատասխան վերաբերմունքի՝ համարվել անհարկի միջամտություն Զինված ուժերի գործունեությանը և ձախողվել: Հարկ է նշել, որ Զինված ուժերում

---

* Սույն հոդվածում փորձ է արվում պարզելու այն բացասական երևույթների արմատները, որոնք այսօր էլ դեռ դժվարացնում են բանակաշինության սահուն ընթացքը: Մենք ամենևին էլ նպատակ չունենք դրանք ներկայացնելու որպես համատարած ու գերիշխող բնույթ կրող երևույթներ՝ առաջնորդվելով այն գաղափարով, որ ցանկացած բացասական իրողություն, որքան էլ այն մանր թվա, կարող է մեծ ազդեցություն գործել ծավալուն զարգացումների վրա:

[1] Տես *Մ. Հ. Հարությունյան*, ՀՀ Զինված ուժերի Գլխավոր շտաբի դերը ռազմական շինարարության գործում: «ՀԲ», 2002, հմ. 1–2:

ընդգրկված էին սոցիալական տարբեր խմբերի տարբեր կրթական ու արժեքային մակարդակներ ունեցող շերտերի ներկայացուցիչներ, որոնց աշխարհայացքներն ու գնահատականները ազգային-հայրենասիրական պոռթկումի հանդարտումից հետո հակադրվում էին միմյանց:

Այսպիսով՝ ԶՈՒ-ի հրամկազմը հիմնականում բաղկացած էր երկու միանգամայն տարբեր ստվար խմբերի ներկայացուցիչներից: Մի կողմից՝ միայն պատերազմի բովում զինվորականի գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերած ու կամավորական ջոկատների կազմում առավել աչքի ընկած սպաներն էին, որոնցից շատերին անգամ խորթ էին զինվորական կարգապահությունը, ստորակարգությունը և զինծառայողի վարքականոնները:

Մյուս կողմից՝ շարունակում էին լուրջ դեր խաղալ խորհրդային դպրոց անցած կադրային սպայակազմի ներկայացուցիչները, որոնք Արցախյան պատերազմի հաղթանակում ունեցան ոչ պակաս նշանակալի ներդրում: Նրանք ևս ունեին զինվորական խմբում հարաբերությունների և դրա կառավարման վերաբերյալ իրենց ուրույն պատկերացումները, որոնք միանգամայն տարբեր էին առաջին խմբին բնորոշ պատկերացումներից:

Հարկ է նշել, որ վերը ասվածը ամենևին չի նշանակում, թե պետականության կառուցման գործում հետպատերազմյան շրջանում պայմանական այդ խմբերից որևէ մեկի ունեցած ավանդն ընդհանուր առմամբ ավելի կամ պակաս նշանակալից էր: Պարզապես գաղափարական և կառավարման սկզբունքների հարցում հենց Զինված ուժերում տեղի ունեցած այս յուրահատուկ բաժանումը կարող էր մեծ հավանականությամբ վտանգի տակ դնել ձեռնարկվող միջոցառումների հաջողությունը և հանգեցնել պաշտպանական համակարգից դուրս գործող քաղաքական–պետական հաստատությունների շրջանում համախոհների որոնումների, այլ կերպ ասած՝ որոշակիորեն նպաստել Զինված ուժերի քաղաքականացմանը:

Զինված ուժերի քաղաքականացման հարցում էական դեր ունեցան հատկապես կամավորականները: Նրանց շարքերում մեծ թիվ էին կազմում և անգամ, կարելի է ասել, որակ էին ստեղծում նախկին հասարակական-քաղաքական գործիչները (ավանդական կուսակցությունների ներկայացուցիչներ, նորաստեղծ քաղաքական ուժերի համակիրներ, հրապարակախոսներ և այլն): Պատերազմի ավարտից հետո նրանց մի որոշ մասը կարող էր անմիջապես վերադառնալ քաղաքական դաշտ, սակայն, հաշվի առնելով պետական կառավարման համակարգի սաղմնային վիճակը, պետական մարմինների ու քաղաքական հաստատությունների ենթակառուցվածքային անկատարությունը, նախընտրեց մնալ Զինված ուժերում, քանի որ դա քիչ թե շատ ձևավորված ու ազդեցիկ կառույց էր, ուներ բավարար վարչատնտեսական ռեսուրսներ ու լծակներ, որոնք հնարավոր էր նպատակաուղղել քաղաքական հարցերում որոշումների ընդունման վրա ներազդելուն:

Ուշագրավ է, որ ՀՀ Զինված ուժերի երկու հիմնակազմիչ խմբերի՝ նախկին

խորհրդային սպաների ու կամավորների միջև տարաձայնությունները դուրս չեկան զինվորական կառավարման համակարգի վերաբերյալ մեթոդաբանական բանավեճերի շրջանակից և չհանգեցրին լուրջ համակարգային բախումների: Կարծես ներքին համաձայնությամբ՝ կամավորականները, զինվորական կառավարման համակարգի նորմավորման ու կանոնակարգման, ռազմատեխնիկական, մարտավարական ու օպերատիվ հարցերի լուծման իրավունքը կամովի զիջելով խորհրդային կադրային սպաներին, ստանձնեցին Զինված ուժերի քաղաքական ղեկավարման և ռազմավարական հարցերը լուծողի դերը: Ստանձնելով այդ գործառույթը՝ կամավորականները հստակեցրին և կանոնակարգեցին իրենց սոցիալ-քաղաքական կարգավիճակը՝ ստեղծելով «Երկրապահ կամավորականների միություն»[*]: Դա նպաստեց նոր խմբային նույնականացման (երկրապահ, ազատամարտիկ, «կռված տղա» և այլն) ի հայտ գալուն և խմբի շարքերը մեծամասնությանը հակադրվող տարրերից զտելուն: Խմբային նույնականացման այս գործընթացն առնվազն իր սկզբնական շրջանում արժանացել էր հասարակության մեծ մասի հարգանքին ու վստահությանը:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ Արցախյան ազատամարտի ակտիվ փուլի ավարտից հետո Զինված ուժերի կազմավորման հիմքում եղած երկու հիմնական խմբերը, բաժանելով ազդեցության գոտիները, գործնականում խուսափեցին ներհամակարգային լարվածություն ստեղծելուց: Սակայն հենց ազդեցության գոտիների բաժանման միջոցով նրանք նախապայմաններ ստեղծեցին Զինված ուժերին վերաբերող հարցերում կայացվող քաղաքական որոշումների վրա Զինված ուժերի ազդեցությունը, ինչպես նաև մարզերում տնտեսական-ռեսուրսային առավելություններն ապահովելու համար:

Այս իրողությամբ պայմանավորված՝ որոշ մարտահրավերներ պահպանվում են մինչ օրս: Դրանցից ամենակարևորը բուն ազգային Զինված ուժերի, զինվորական պրոֆեսիոնալիզմի ու զինվորական մշակույթի ձևավորման անավարտությունն է: Զինված ուժերի ձևավորման սկզբնական փուլում այդ գործընթացի վրա ազդեցություն ունեցան նախկին խորհրդային զինվորական ավանդույթները, որոնք, հատկապես զինվորական ոլորտը կարգավորող իրավական նորմերի վերաբերմամբ, ժամանակի սղության պատճառով չտեղայնացվեցին ու չհարմարեցվեցին ազգային առանձնահատկություններին: Դա հանգեցրեց Զինված ուժերի գործունեությունը ձևականորեն կարգավորող իրավական նորմերի և զինվորական կյանքի առօրյա հարաբերությունները իրականում կարգավորող բարոյական, ավանդութային կամ սովորութային նորմերի բախման: Նախկին կամավորականների որոշ մասի համար Խորհրդային բանակի իրավական կարգավորիչները խորթ էին և անընդունելի, իսկ ազգայինն ստեղծելու փորձ ու ռեսուրս դեռ չկային, ուստի այդ կարգախմբի սպաներն ստեղծեցին իրավական դաշտից դուրս գտնվող

[*] «Երկրապահ կամավորականների միությունն» ստեղծվել է 1993 թ. հուլիսին (տես «Համառոտ բնութագիր» (http://www.ekm.am/about-us)):

բարոյաարժեքային համակարգ՝ խարսխված քրեական «ռոմանտիկայի», «տղայականության», հարցերն ինքնակամորեն լուծելու և իր ազդեցության ոլորտում անվերապահ իշխանության ու կեղծ առաջնորդության իրավունքի վրա: Այդպիսի «արժեհամակարգի» ստեղծումը ևս ուներ իր նախադրյալները: Նախ. նոր սպայակազմի որոշ ներկայացուցիչների համար այդ նորմերը մինչպատերազմյան շրջանում կազմել էին կենսակերպի մաս, և փակ տղամարդկային խմբերին իր բնույթով մոտ զինվորական կոլեկտիվներում դրանց ներդրումը մեծ ջանքեր չէր պահանջում: Բացի այդ, նորաստեղծ Զինված ուժերը համալրվում էին զորակոչի միջոցով, իսկ հետխորհրդային շրջանին բնորոշ գաղափարական վակուումը երիտասարդության շրջանում մասամբ փոխարինվում էր կեղծ «առնականության» ենթամշակույթով, ինչը հեշտացնում էր ոչ պաշտոնական բանակային արժեքներին արագ հարմարվելը:

Այդ արժեհամակարգային թերացումները վերացնելու նպատակով արդիական դարձան և մինչ օրս քննարկվում են հայկական հին ռազմական ավանդույթները վերադարձնելու, հայ ռազմիկի պատմական կերպարը նորովի արժեքավորելու առաջարկությունը: Մեր կարծիքով՝ այդ տեսակետը չի կարող դրական արդյունք տալ: Բանն այն է, որ հետագա սերունդներին զինվորական ավանդույթների ու փորձի փոխանցումը սոցիալ-քաղաքական երևույթների անընդմիջելի էվոլյուցիայի բաղադրատարր է: Լավագույն դեպքում մենք կարող ենք ապավինել Կիլիկյան Հայաստանի ռազմական փորձին, որը, սակայն, որքան էլ որ համարվի կայացած, եվրոպական, արևելյան ու հայկական ռազմական մշակույթների խառնուրդ է[2]: Միաժամանակ, ստեղծվելով պատմական հայրենիքի հեռավոր սահմանում՝ այն զգալիորեն կտրված էր ազգի մի ստվար զանգվածի իրական խնդիրներից, հիմնվում էր դաշինքային քաղաքականության միջոցով բախումներից խուսանավելու և գոյատևման ռազմավարության վրա, մասամբ ապավինում էր վարձկան ուժերին, որոնք զինվորական այլ մշակույթի ստեղծման հիմք էին:

Բացի այդ, արդի պատկերացումներով պրոֆեսիոնալ բանակի ձևավորումը հիմնականում կապվում է Արևմտյան Եվրոպայում 18–19-րդ դարերում սկսված արդյունաբերական հասարակության աստիճանական զարգացման ու կենտրոնացված ազգային պետականության կազմավորման հետ: Այսինքն՝ մի շրջանի հետ, երբ հայ ժողովուրդը չուներ անգամ ձևարկված պետականության ստեղծման համար նախադրյալներ, իսկ զինվորական մշակույթը միայն տեղ-տեղ գոյատևում էր փոքրամասշտաբ ու շուտ մարող ազգային ազատագրական փայլատակումներով: Ճիշտ է, կա նաև Հայաստանի Առաջին Հանրապետության փորձը, սակայն դրա կարճատև գոյությանն ուղեկցած տարածաշրջանային աշխարհաքաղաքական զարգացումները, Ցեղասպանության ծանր հոգեբանական հետևանքները, Զինված ուժերի հա-

[2] Տես, օրինակ, *Լ. Այվազյան,* Եվրոպական զորային կառույցների և ռազմական արվեստի զարգացման դինամիկան պատմական հոլովույթում: «ՀԲ», 2011, 1–2:

մալրման անկանոն ու թերի համակարգը՝ հիմնված ցարական բանակի աղճատված փորձի վրա, իսպառ բացառում են այդ շրջանից հայկական ազգային կերպարանքով Զինված ուժերի կամ զինվորական մշակույթի ինչ-որ տարրեր փոխառելու հնարավորությունը:

Փոխարենը՝ այդ շրջանից ժառանգվեցին որոշ կեղծ-զինվորական բացասական երևույթներ: Օրինակ՝ Արցախյան պատերազմի սկզբնական շրջանում որոշ կիսառազմականացված խմբերի կարիքների բավարարման պատրվակով կատարված թալանը, ինքնիրավչությունը և բռնությունը նման էին Առաջին Հանրապետությունում «մաուզերիստական» շարժման դրսևորումներին: Հարկ է նկատել, որ այս խմբերի զգալի թվով անդամներ աստիճանաբար հաստատվեցին Զինված ուժերում, իսկ ոմանք, օգտվելով տիրող անկազմակերպությունից, ստանձնեցին բավական բարձր պաշտոններ: Դրա հետևանքով Զինված ուժեր ներթափանցեցին նաև կլանային շահերով առաջնորդվող և քրեական մշակույթի արժեքներ կրող տարրեր:

Զինվորական կրթություն չունեցող որոշ նախկին «դաշտային հրամանատարներ» ստանձնեցին պատասխանատու հրամանատարական պաշտոններ: Թեև հետագայում ձեռնարկվեցին այս կարգախմբի անձանց աստիճանաբար պրոֆեսիոնալացնելու փորձեր՝ զինվորական վերապատրաստման (այդ թվում՝ արտերկրում) հնարավորությունների ստեղծմամբ, բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռակա ուսուցման բաժնեմասերի (քվոտաների) սահմանմամբ և այլ միջոցներով, սակայն ծառայողական առաջխաղացման մրցավազքից հետ չմնալու, ժամանակի սղության, նաև ոչ բավարար մտավոր ունակությունների պատճառով կրթվելու այս հնարավորություններից օգտվող անձանց մի շրջանի համար դա վերածվեց դիպլոմների կամ հավաստագրերի ձեռքբերման միջոցով իրենց զբաղեցրած պաշտոններն օրինականացնելու մեխանիզմի: Որպես արդյունք՝ այս բարեփոխումային գործընթացը համակարգին մատուցեց «արջի ծառայություն»:

Առավել խնդրահարույց էր այն, որ պատերազմական և խաղաղ պայմաններում զորքերի ղեկավարման տարբերությունների վերաբերյալ զինվորական կառավարման ոլորտի գիտելիքներ չունենալու պատճառով այդ անձինք ներդրեցին զորքի հետ աշխատանքի իրենց «մշակույթը»: Ու թեև փորձ արվեց արագորեն փոխելու Զինված ուժերի անձնակազմի որակական կերպարը, սակայն իրենց ձեռքում կենտրոնացնելով վարչատնտեսական ռեսուրսներն ու ձեռք բերելով քաղաքական ազդեցության լծակներ՝ որոշ նախկին դաշտային հրամանատարներ շարունակում էին թելադրել իրենց ենթամշակույթի կանոնները՝ դրան զուգընթաց նաև արագորեն բարելավելով իրենց մերձավորների սոցիալ-տնտեսական վիճակը: Եվ պատահական չէ, որ ռազմաուսումնական հաստատությունների շրջանավարտների մի մասը, անցնելով ծառայության և աչքի առաջ ունենալով այդ բացասական օրինակները, իր սոցիալական դիրքի ամրապնդման, արագ պաշտոնեական առաջխաղացման, անձնական անվտանգության ու հեղինակության ապահովման

համար կանոնադրային զինվորական ծառայության փոխարեն նախընտրում էին այս կամ այն զինվորական կլանում նեղ մեկուսախմբային շահերով թելադրված ներգրավումը:

Այս ոչ մեծաթիվ բացասական երևույթները, այդուհանդերձ, ստվեր գցեցին նաև իրենց կյանքի գնով հայրենիքը պաշտպանող բոլոր սպաների կերպարի վրա: Դրա արտացոլումն էր նաև ռազմաուսումնական հաստատությունների մրցունակության կորուստը, հետևաբար նաև՝ դիմորդների մասնագիտական մակարդակի անկումը[*]: Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի առաջին սերնդի շրջանավարտներից մեկի խոսքով՝ ինստիտուտի հրամանատարական կազմը[**] պարբերաբար նշում էր, որ իրենց նպատակն է կուրսանտներին դաստիարակել ինչպես ցարական բանակի «հուսարների», որպեսզի նրանք, սպայական մասնագիտությունից բացի, ձեռք բերեն հասարակության լիարժեք և հասուն անդամի հատկանիշներ[***]: Դիմորդների և կուրսանտական կազմի մակարդակների հաշվառմամբ այդ ցանկությունը դժվար էր իրագործել: Ավելին. այստեղ ևս ներթափանցեցին քրեական մշակույթի տարրեր:

Հայկական Զինված ուժերի ձևավորմանն ու զինվորական կառավարման մշակույթի կազմավորմանը խոչընդոտող իրողությունները քննարկվում են հայ հասարակական-պետական կյանքի կազմակերպման փիլիսոփայական մեկնաբանություններում: Օրինակ՝ Հ. Շաքարյանը գրում է. «Հայերի առօրեական մտածելակերպը կազմավորվել է դարեր շարունակ պետականության բացակայության պայմաններում, երբ սովորական մահկանացուն ինքնապաշտպանական բնազդով մղվել է ապավեն փնտրելու սեփական օջախի, ընկերոջ ու հարևանի մոտ, ինչի արդյունքում ձևավորվել է ընտանիքի, ընկերոջ ու հարևանի, այլ կերպ ասած՝ յուրայինի կուռքն ու տեղական կլանային կենսափորձի պաշտամունքը: Բնականաբար, հայկական կլանային աշխարհընկալումը հեռու է խավային մակաշերտեր ենթադրող պետական մտածելակերպ լինելուց»[3]: Ըստ գիտնականի՝ այն պատմաբարոյահոգեբանական երևույթից վերածվել է սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական գործոնի, իսկ այդպիսի նեղլիկ աշխարհընկալումով և առավելապես յուրա-

[*] Հարկ է նշել, որ դա ռազմաուսումնական հաստատությունների մրցունակության նվազման միակ պատճառը չէր: Պատերազմի վերաբերյալ թարմ հիշողությունները մարդկանց ստիպում էին իրենց հնարավորինս հեռու վանել զինվորական կյանքից: Բացի այդ, ուսումնական գործընթացը դեռևս պատշաճ հիմքերի վրա չէր. առկա էր ուսումնական ծրագրերի, նյութերի և որակյալ դասախոսական կադրերի պակաս:

[**] Մասնավորապես՝ հիշատակվում էր ինստիտուտի նախկին պետ, գեներալ-մայոր Ս. Ս. Մարտիրոսյանի անունը:

[***] 2012 թ. ամռանը ՀՀ զորամիավորումներում անցկացվող զինվորական առաջնորդության դասընթացի շրջանակում Երևանի քաղաքամերձ զորամասում ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի նախկին շրջանավարտի արտահայտած կարծիքը:

[3] *Հ. Շաքարյան,* Փիլիսոփայություն: Ե., 2005, էջ 39–40:

յինների շահերով առաջնորդվելու պայմաններում պետականության կառուցումը ձախողման է դատապարտված:

Ինչպես պարզ է դառնում հայկական Զինված ուժերի ձևավորման ընթացքի վերլուծությունից, աշխարհընկալման այս բացասական դրսևորումից անմասն չմնացին նաև Զինված ուժերը: Այն զինվորականության շրջանում դարձավ որոշակի գաղափարական-կիրառական հենք, քանի որ բարդ, վտանգավոր և մշտական մտազգոնություն պահանջող աշխատանքային պայմաններում հրամանատարն անպայման ցանկանում էր իրեն շրջապատել հավատարիմ անձանցով, անգամ եթե նրանք չէին համապատասխանում ներկայացվող պահանջներին: Սակայն անհրաժեշտ է «կլանային» մտածողությունը տարբերել իր «թիմով» հանդես գալու կամ «թիմային կառավարման» գործելակերպից: Տարբերությունը մերիտոկրատիկ (արժանավարական) մոտեցումն է, որը հիմնվում է ոչ միայն հրամանատարի ազնվության կամ պրոֆեսիոնալիզմի, այլև գործուն վերահսկողական մեխանիզմների կիրառման վրա, ինչի շնորհիվ նվազեցվում է «թիմի» կազմում հրամանատարին հավատարիմ, բայց պաշտոնին չհամապատասխանող անձանց ընդգրկվելու հնարավորությունը: Վերջին մեխանիզմը ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության կարևոր գործառույթներից է, որի միջոցով ապահովվում են զինված ուժերի պրոֆեսիոնալիզմը և բանակի նկատմամբ վստահությունը*:

Ամփոփելով՝ հարկ ենք համարում փաստել, որ թեև մի խումբ միջին տարիքի զինծառայողների շրջանում զինվորական մշակույթի ընկալման հարցում կան խնդիրներ՝ նախկին զինվորական-կլանային պատկանելությունը որպես խմբային նույնականացման ցուցիչ դիտելու առումով, սակայն Զինված ուժերի անհարկի քաղաքական ակտիվացման միտումներ չեն նկատվում, քանի որ արդյունավետ կերպով գործում են թե՛ ներգերատեսչական ու վերգերատեսչական, թե՛ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները: Թերևս կա նաև քաղաքական կամք՝ դրանց պատշաճ կենսագործունեությունն ապահովելու համար:

Ուստի, մեր կարծիքով, Զինված ուժերի հետագա զարգացման ուղենիշների որոշման ժամանակ նպատակահարմար է հիմնվել հետևյալ սկզբունքների վրա.

- Զինված ուժերի լիակատար ապաքաղաքականացում և դրա ապահովման նպատակով ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների կատարելագործում,
- տեխնոլոգիական նորամուծությունների ներդրմամբ պատշաճ կառա-

* Այս հարցերն ավելի մանրամասնորեն վերլուծված են ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի օժանդակությամբ պատրաստված՝ զինվորական առաջնորդության վերաբերյալ ձեռնարկում (տես *Ա. Աթանեսյան, Ա. Շաքարյան, Վ. Ավետիքյան, Ա. Ավետիսյան, Դ. Հարությունյան,* Զինվորական առաջնորդություն. զինվորական կոլեկտիվի արդյունավետ կառավարման հիմնախնդիրներ: Ե., 2012):

վարման համակարգի բաղադրատարրերի աստիճանական ներմուծում՝ ինչպես կենտրոնական ապարատի, այնպես էլ զորային օղակների աշխատակարգերում,

- թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների խելամիտ ապահովման անհրաժեշտության վերաբերյալ ներհամակարգային իրազեկում,
- պաշտպանական ոլորտը կանոնակարգող օրենսդրության սոցիալական ազդեցության պարտադիր գնահատման համակարգի ներդրում,
- կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության մեծացման նպատակով ռիսկերը նվազեցնող տեխնոլոգիական գործիքակազմի անընդմեջ վերանայում և թարմացում,
- արդյունավետ կառավարումը երաշխավորելու նպատակով գաղափարական ազդեցության գործնական մեթոդների մշակում, ինչի շնորհիվ կբացառվեն կեղծ պաթոսայնությունն ու իրականությունից կտրված «բարեպաշտության» դրսևորումները,
- հերոս-զինվորականի (մասնավորապես՝ սպայի) կերպարի կերտման սկզբունքների արդիականացմանը զուգընթաց աստիճանաբար ներդրել նաև տեխնոլոգ-զինվորականի կերպարի մատուցման մեխանիզմներ,
- իրազեկման մեխանիզմների կիրառմամբ արմատապես փոխել զինծառայողների շրջանում մարդու իրավունքների գաղափարական ընկալումը որպես իրենց արժանապատվության և անձնական ազատության, սոցիալական արդարության հաստատման, արժանավարական առաջխաղացման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական կայուն վիճակի երաշխավորման գրավականի:

## ПРЕПЯТСТВИЯ К ВНЕДРЕНИЮ СИСТЕМЫ ЭФФЕКТИВНОГО УПРАВЛЕНИЯ В ВС РА В РАЗРЕЗЕ СТАНОВЛЕНИЯ ВООРУЖЕННЫХ СИЛ РА

*А. Р. АВЕТИСЯН, полковник, кандидат политических наук, доцент,*
*Начальник Центра прав человека и хорошего поведения МО РА*

РЕЗЮМЕ

Формирование Вооруженных сил РА началось в тяжелые годы войны в Арцахе, развязанной Азербайджаном против армянского народа. Но особый размах и плановый характер этот процесс получил после исторической победы армянских формирований, ознаменовавшей заключение по просьбе агрессора соглашения о прекращении огня, при этом командный состав ВС РА в основном слагался из двух компонентов: борцов за свободу, добровольно вставших на защиту своих очагов и не имевших представлений о военном деле, даже о воинской

дисциплине и иерархии, и бывших военнослужащих Советской армии, знакомых с военным делом и воинской дисциплиной, но являвшихся носителями советских воинских традиций со всеми положительными и отрицательными сторонами и тоже по зову сердца вставшими на защиту Отечества.

Оба эти пласта, заложенные в основу офицерского состава, по существу не являлись носителями национальных воинских традиций, да и не могли быть таковыми, поскольку за 6 веков отсутствия государственности эти традиции не могли сохраниться. К тому же, упоенные своей победой непрофессионалы трудно приспосабливались к нормированным и строго иерархичным армейским будням, а некоторые из них пытались навязать свои понятия и созвучные им порядки, что подчас приводило к лихоимству, панибратству и насаждению в коллективах неформальных межличностных и межгрупповых взаимоотношений и лидеров с отрицательной направленностью.

Из-за данных негативных явлений процесс формирования национальной военной культуры затягивается. В связи с этим представляется целесообразным дальнейшее развитие армянских ВС осуществлять в соответствии со следующими принципами: полная деполитизация ВС и совершенствование механизмов гражданского демократического контроля над армией; постепенное внедрение элементов системы «должного управления»; внедрение принципов транспарентности и отчетности в управлении; внедрение системы обязательной оценки социального воздействия законодательства, регулирующего оборонную сферу; непрерывный пересмотр и обновление технологического инструментария понижения рисков коррупции; коренное изменение восприятия военнослужащими прав человека как гарантии обеспечения их достоинства и личной свободы, социального равенства, меритократического карьерного роста и социально-экономического устойчивого состояния, и т.д.

## OBSTACLES TO INTRODUCING THE SYSTEM OF EFFICIENT MANAGEMENT IN THE RA ARMED FORCES IN THE LIGHT OF THE FORMATION OF THE RA ARMED FORCES

*A. R. AVETISYAN, Colonel, PhD in Political Science, Associate Professor, Head, Human Rights and Good Behaviour Centre, MOD, RA*

SUMMARY

The formation of the RA Armed Forces began during the hard years of war in Artsakh unleashed by Azerbaijan against the Armenian people. But this process especially gained in scope and was given a planned nature after

the historic victory of the Armenian formations, which marked the conclusion of the ceasefire agreement at the request of the aggressor, while the command staff of the RA Armed Forces mainly consisted of two components: freedom fighters who voluntarily stood up for their hearths and had no notion of military skills, even of military discipline and hierarchy, and former servicemen of the Soviet Army, familiar with military science and military discipline, but carriers of the Soviet military traditions with all the positive and negative sides, and who also stood up for the Homeland on the call of the heart.

Both of these layers, which laid down the basis of the officer corps, in fact, were not the carriers of national military traditions, and could not be such, since these traditions could not have survived for six centuries of absence of statehood. Moreover, the dilettantes intoxicated with their victory, found it difficult to get adapted to normalized and strictly hierarchical army routine, and some of them tried to impose their own concepts and orders tune with them, which sometimes led to extortion, cronyism, and propagation and implanting of informal interpersonal and intergroup mutual relations, and leaders with a negative orientation among the personnel.

Because of these negative phenomena, the process of forming a national military culture is being procrastinated. In these terms, it seems expedient to further develop the Armenian Armed Forces pursuant to the following principles: complete depoliticization of the Armed Forces and improvement of mechanisms for civil democratic control over the army; gradual introduction of elements of the "proper management" system; inculcating transparency and accountability principles in management; implementing a system of mandatory evaluation of the social impact of the defense sphere-regulating legislation; continuous review and update of the technological tools of minimizing corruption risks; radical change in the servicemen’s perception of human rights as a guarantee of ensuring their dignity and personal freedom, social equality, meritocratic career growth, and a socio-economic stable condition, etc.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Ս. Զ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական, ՀՀ ՊՆ ԶՍՊ վարչության պետ, էդ. Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական, ՀՀ ՊՆ ԶՍՊ վարչության ՍԻԱԽ բաժնի գլխավոր մասնագետ*

Զինված ուժերի սոցիալական ոլորտը պետության կենսագործունեության ռազմավարական ուղղություններից է:

ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների սոցիալական ապահովության ոլորտում իրականացվող գործունեությունը նպատակաուղղված է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, քաղաքացիական հատուկ ծառայողների, զինվորական ծառայությունից արձակված քաղաքացիների, ազատամարտիկների, զինվորական հաշմանդամների, զոհված (մահացած), անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամների սոցիալ-իրավական պաշտպանությանը, դրամական ապահովմանը, կենսաթոշակների և նպաստների ապահովմանը, բնակարանային և կենցաղային պայմանների բարելավմանը, բժշկական սպասարկմանը, պարտադիր պետական ապահովագրությանը, դրամական օգնության և փոխհատուցման տրամադրմանը, տեղեկատվական ապահովման որակի բարձրացմանը՝ ամենօրյա և մարտական գործողությունների ընթացքում անձնակազմի ծառայողական պարտականությունների արդյունավետ կատարումն ապահովելու համար:

Ռազմական շինարարության միջազգային և հայրենական փորձը վկայում է, որ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանվածությունը եղել և մնում է զինված ուժերին առաջադրված խնդիրների լուծումը պայմանավորող առաջնային գործոններից մեկը:

Զինծառայողների, զինծառայողներին հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների համար օրենսդրությամբ սահմանված սոցիալական երաշխիքներին վերաբերող հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, ինչպես նաև սոցիալական պաշտպանության երաշխիքներ սահմանող իրավունքի նորմեր պարունակող ՀՀ այլ օրենքներով և իրավական ակտերով:

ՀՀ Զինված ուժերի զարգացման արդի փուլում ռազմասոցիալական ոլորտում առաջնահերթ խնդիրներից է զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների, զինծառայությունից արձակված քաղաքացիների, զինվորական

հաշմանդամների սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացումը:

Այդ նպատակով վերջին տարիներին զգալի փոփոխություններ են կատարվել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում: Կատարված փոփոխությունները հիմնականում կրել են ոլորտում առկա խնդիրները կանոնակարգող և հստակեցնող բնույթ, բարելավել են սոցիալական երաշխիքները:

ՀՀ ԶՈՒ-ի սոցիալական համակարգի կատարելագործման հիմնական ուղղություններն են զինծառայողների բնակարանային ապահովումը, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովումը, զինծառայողների կենսաթոշակային ապահովումը, զինծառայողների կյանքի և առողջության ապահովագրությունը, զինվորական ծառայության հետ որևէ պատճառական կապով հաշմանդամություն ստացած նախկին զինծառայողների վերականգնողական բուժման կազմակերպումը, նախկին զինծառայողների սոցիալական հարմարեցման և զբաղվածության ապահովումը:

## 1. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի թերևս ամենաբարդ սոցիալական հիմնախնդիրներից մեկը զինծառայողների, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովումն է:

Անցած տարիների փորձը ցույց է տալիս, որ պետության տնտեսական հնարավորություններով ապահովում էին լավագույն դեպքում տարեկան մինչև 100 բնակարանի տրամադրում, այն էլ՝ ոչ ամեն տարի: Այդ իսկ պատճառով շահառուների թիվը տարեցտարի աճում էր, և զինծառայողների ընտանիքները՝ որպես մշտական բնակմակերեսի կարիքավորներ, հերթացուցակներում մնում էին միջինը 10-15 տարի:

Վերը նշված խնդրի լուծման, ինչպես նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքի կիրարկումն ապահովելու նպատակով նախատեսվում է սպայական կազմի պայմանագրային զինծառայողներին բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու նպատակով՝ արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման «Մատչելի բնակարան՝ զինծառայողներին» ծրագրի ներդրումը:

Դրա վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծի համաձայն՝ զինծառայողները կարող են բնակարաններ կամ բնակելի տներ ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու համար օգտվել 20 տարի ժամկետով հիպոտեկային արտոնյալ վարկավորման ծրագրից[1]:

[1] Տես ««Մատչելի բնակարան՝ զինծառայողներին» պետական աջակցության նպատակա-

ՀՀ ԶՈՒ-ի բնակարանային ապահովման մյուս կարևոր բաղադրիչը զինծառայողներին, նրանց հավասարեցված անձանց և նրանց ընտանիքների անդամներին ծառայողական բնակարաններով ապահովումն է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զինծառայողների և քաղաքացիական հատուկ ծառայողների ընդհանուր թվի շուրջ մեկ երրորդն ունի ծառայողական բնակարանային պայմանների բարելավման կարիք: Զինվորական ծառայությունից արձակված մեծ թվով զինվորական թոշակառուներ այլ բնակմակերես չունենալու պատճառով չեն ազատում զորամասերի մշտական տեղակայման վայրերում ծառայության ընթացքում իրենց հատկացված ծառայողական բնակարանները:

Այսպիսով՝ ծառայողական բնակարանում բնակվող և պահեստազոր արձակված զինծառայողների թվաքանակի աճման պատճառով ծառայողական բնակարանային ֆոնդը ոչ միայն չի ծառայում իր նպատակին, այլև պաշտպանության նախարարությունն ստիպված հավելյալ գումար է տրամադրում զինծառայողներին՝ նրանց վարձակալած բնակարանների վարձի փոխհատուցման համար:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ 2015–2017 թթ. բնակելի տարածքների վարձակալության դիմաց ՀՀ ՊՆ-ից փոխհատուցում ստացող զինծառայողների թիվը աճել է ամեն տարի միջինը 9 %-ով, իսկ տրամադրվող փոխհատուցումների գումարը յուրաքանչյուր տարի աճում է միջինը 10 տոկոսով:

Բնակելի տարածքների վարձակալության դիմաց փոխհատուցումներ ստացողների թվաքանակի աճումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- ծառայողական բնակարաններում բնակվող, ՀՀ ՊՆ համակարգում բնակարանային հաշվառման հերթում ընդգրկված, մշտական բնակարանային ապահովման իրավունք ունեցող և պահեստազոր արձակված նախկին զինծառայողների թվաքանակը յուրաքանչյուր տարի ավելանում է միջինը 15 տոկոսով,
- 1992 թ. նոր կազմավորված ՀՀ ԶՈՒ-ի զորամասերում սպայական, ենթասպայական և պայմանագրային շարքային կազմի զինծառայողների հիմնական մասը տեղաբնակներ էին, որոնց մեծ մասը սահմանային տարիքը լրանալու կամ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու կապակցությամբ արձակվել են ՀՀ Զինված ուժերից, իսկ թափուր հաստիքները համալրվել են արտաբնակավայրային սկզբունքով նշանակված զինծառայողներով, ինչը հանգեցրել է վարձա-

---

յին ծրագիրը հաստատելու և սպայական կազմի զինծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, 2018 (https://www.e-draft.am/projects/846/about):

կալված բնակարանների դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող զինծառայողների թվաքանակի աճմանը:

Զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման խնդրի լուծման նպատակով նախատեսվում է՝

- որպես մշտական բնակմակերեսի կարիքավոր անհատույց օգտագործման իրավունքով բնակարաններ ստացած զինծառայողներին և երկարամյա ծառայություն անցած նախկին զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին 2018 թ. սեպտեմբերի 1-ից սեփականության իրավունքով անհատույց տրամադրել ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող բնակարաններ,
- ՄԺԾԾ ժամանակահատվածում ծառայողական բնակարաններով ապահովել մոտ 600 զինծառայողների ու ՔՀԾ-ների ընտանիքների,
- առանձին նպատակային ծրագրի ներդրմամբ՝ յուրաքանչյուր ՄԺԾԾ ժամանակահատվածում բնակարան ձեռք բերելու համար բնակարանների գնման վկայագրեր տրամադրել ծառայության ընթացքում բնակարանային պայմանների բարելավման իրավունք ձեռք բերած և դրական հոդվածներով զինվորական ծառայությունից արձակված զինծառայող շուրջ 200 նախկին շահառուների,
- «Մատչելի բնակարան՝ զինծառայողներին» ծրագրի իրագործմամբ առաջիկա 10 տարիներին յուրաքանչյուր տարի շուրջ 500 զինծառայողների բնակարանային խնդրի լուծում՝ նրանց նախընտրած վայրերում,
- ծառայողական բնակարանների կառուցման և ծառայողական բնակարաններում բնակվող պահեստազոր արձակված նախկին զինծառայողներին բնակարաններով ապահովելու շնորհիվ ՀՀ պաշտպանության նախարարության վարձակալած բնակարանների դիմաց տրամադրվող փոխհատուցման գումարի նվազեցում տարեկան մոտ 15-20 %-ով,
- ծառայողական բնակելի ֆոնդի ծառայեցում բուն նպատակին:

Համեմատության համար դիտարկենք այս խնդրի լուծման արտասահմանյան փորձը: Մասնավորապես՝ Թուրքիայում բնակարաններով զինծառայողներին ապահովելու նպատակով ՊՆ-ն նրանց տրամադրում է անտոկոս վարկեր, ըստ որում՝ վարկի մի մասը (մինչև 40 տոկոսը՝ կախված զինծառայողի ծառայության ժամկետից) մարվում է պետության ռազմական բյուջեի հաշվին[2]:

Մեծ Բրիտանիայում զինծառայողների բնակարանային ապահովման նպատակով ստեղծվել է հատուկ պահուստային բնակելի ֆոնդ (կազմված 10000 բնակարանից): Այդ բնակարանները արտոնյալ պայմաններով վաճառվում են զինծառայողներին, բացի այդ, ՄԲ ՊՆ-ը ֆինանսական փոխհատուցում է

[2] Տես *С. Карельский.* Социальная защищенность военнослужащих вооружённых сил Турции. «Зарубежное военное обозрение» («ЗВО»), 2014, № 10:

տալիս զինծառայողներին սեփական բնակարան գնելու համար՝ միանվագ մուծման դեպքում փոխհատուցելով բնակարանի արժեքի 30 տոկոսը[3]:

## 2. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիրն իրականացվում է 2003 թ., ՀՀ կառավարության 2005 թ. հունիսի 9-ի հմ. 947-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:

Անցած տարիների փորձի հաշվառմամբ և հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովման գործընթացը ավելի թափանցիկ դարձնելու, ինչպես նաև բյուջետային միջոցների օգտագործումը ավելի նպատակային դարձնելու համար մշակվել ու գործարկվել է ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 10-ի «ՀՀ ՊՆ համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2005 թ. հունիսի 9-ի հմ. 947-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» հմ. 1016-Ն որոշումը:

Դրա իրագործմամբ վերջնականապես լուծվել է ՀՀ ՊՆ համակարգի 1-ին խմբի զինվորական հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանային ապահովման հարցը:

Պրոբլեմի ամբողջական լուծումը նախատեսվում է փուլայնորեն.

- 2018–2020 թթ. լուծել ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անօթևան նախկին զինծառայողների բնակարանային ապահովության խնդիրը,
- 2020–2022 թթ. լուծել բնակմակերեսի բարելավման կարիք ունեցող զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների և 2-րդ խմբի զինհաշմանդամների բնակարանավորման խնդիրը,
- 2023–2025 թթ. բնակմակերեսի կարիք ունեցող ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անօթևան և բնակմակերեսի բարելավման կարիք ունեցող նախկին զինծառայողների բնակարանային ապահովության խնդրի լուծում:

[3] Տես *Е. Нестерович.* Воинский долг и материальные стимулы. «Военно-промышленный курьер», 12 ноября 2008, № 44(260) (https://www.vpk-news.ru/articles/3307):

## 3. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Ռազմասոցիալական ոլորտի կարևոր ուղղություններից եղել և մնում է զինծառայողների կենսաթոշակային ապահովումը:

2014 թ. հուլիսի 1-ին ներդրվեց զինվորական կենսաթոշակների նշանակման ու հաշվարկման նոր մեթոդաբանություն, ինչի շնորհիվ սպաների, ենթասպաների, պայմանագրային ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմի նախկին զինծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակների միջին ամսական չափն աճեց շուրջ 14 տոկոսով: Միևնույն ժամանակ, առաջին անհրաժեշտության ապրանքների ու կոմունալ-կենցաղային ծառայությունների սակագների շարունակական գնաճի արդի պայմաններում սոցիալական ապահովման ոլորտում պետության ձեռնարկած բարեփոխումները չեն հասցնում բարելավել նախկին զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների սոցիալական վիճակը:

Զինծառայողների կենսաթոշակային ապահովման ոլորտում գերակա նպատակներից է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների և քաղաքացիական հատուկ ծառայողների արժանապատիվ կենսաթոշակի ապահովումը՝ դրա մակարդակի հետևողական և շարունակական բարձրացմամբ, ինչպես նաև որպես լրացուցիչ կենսաթոշակային երաշխիք կուտակային կենսաթոշակային համակարգում զինծառայողներին ընդգրկելու համար օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների և լրացումների կատարմամբ:

Ըստ որում, նախատեսվում է, որ մինչև 2021 թ. կուտակային կենսաթոշակային համակարգին զինծառայողները կարող են միանալ կամավոր հիմունքներով, իսկ 2021 թվականից հետո՝ առաջին սպայական կոչում ստացած զինծառայողները համակարգում կընդգրկվեն պարտադիր կարգով: Որպես արդյունք՝ զինծառայողները, իրենց դրամական բավարարման 5 տոկոսը հիմնադրամում կուտակելով, 65 տարեկանից հետո կստանան արժանապատիվ կենսաթոշակ:

## 4. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողները ծառայողական պարտականությունները կատարում են կյանքի և առողջության համար զգալի ռիսկային պայմաններում: Հետևաբար նրանց կյանքի և առողջության ապահովագրությունը զինծառայության սոցիալական երաշխիքներից մեկն է:

Մինչև 2017 թ. գործող կարգի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում հայրենիքի պաշտպանության ժամանակ մարտական գործողություններում, ինչպես նաև մարտական հերթապահության և հատուկ առաջադրանքի կատարման ժամանակ զոհվելու (մահանալու) դեպքում նախատեսված ապահովագրական գումարը կազմում էր 2000000 դրամ, իսկ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ

զոհվելու (մահանալու) դեպքում՝ 1000000 դրամ: Զինվորական ծառայության ընթացքում վիրավորվելու, խեղվելու կամ հիվանդանալու պատճառով 1-ին խմբի զինվորական հաշմանդամության համար նախատեսված էր 500000 դրամ ապահովագրական գումար, 2-րդ խմբի համար՝ 400000 դրամ, իսկ 3-րդ խմբի համար՝ 300000 դրամ:

Զինծառայողների կյանքի և առողջության պետական ապահովագրական համակարգը, որը ՀՀ-ում գործում էր մինչև 2017 թ., համարժեք չէր զինվորական ծառայության հետ կապված ռիսկայնությանը: Նախատեսված ապահովագրական գումարների փոքր չափերի հետևանքով աճում էին զինծառայողների ընտանիքների անդամների դժգոհություններն ու բողոքները, ուստի և անհրաժեշտություն էր ծագել ձեռնարկելու արմատական բարեփոխումներ:

Զինծառայողների կյանքի և առողջության պետական ապահովագրական համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացման նպատակով 2016 թ. դեկտեմբերի 15-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենք: Այդ օրենքի և դրա կիրարկումն ապահովող ՀՀ կառավարության 2017 թ. փետրվարի 2-ի հմ. 86-Ն որոշման համաձայն ստեղծվեց «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»:

Ներդրվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության, մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովող հատուկ համակարգ, որը չի զիջում միջազգային չափանիշներին: Հատուցման գումարները վճարում է «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը» հատուցման այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել 2017 թ. հունվարի 1-ից հետո՝ հետևյալ նվազագույն չափերով.

1) զոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում՝

   ա) պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներում ներգրավված՝ սպայական կազմի զինծառայողի ընտանիքին՝ 82000000 դրամ,

   բ) պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներում ներգրավված՝ ենթասպայական ու շարքային կազմերի զինծառայողի կամ տարածքային պաշտպանությունում ներգրավված կամ կամավորագրված անձի ընտանիքին՝ 70000000 դրամ,

   գ) պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի ընտանիքին՝ 58000000 դրամ.

2) առողջությանը պատճառված վնասի հետևանքով՝

ա) պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներում ներգրավված՝ սպայական կազմի զինծառայողի առաջին խմբի հաշմանդամության դեպքում՝ 82000000 դրամ,

բ) պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներում ներգրավված՝ ենթասպայական ու շարքային կազմերի զինծառայողի կամ տարածքային պաշտպանությունում ներգրավված կամ կամավորագրված անձի առաջին խմբի հաշմանդամության դեպքում՝ 70000000 դրամ,

գ) պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական ու շարքային կազմերի զինծառայողի առաջին խմբի հաշմանդամության դեպքում՝ 58000000 դրամ,

դ) պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներում ներգրավված՝ սպայական կազմի զինծառայողի երկրորդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 53000000 դրամ,

ե) պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներում ներգրավված՝ ենթասպայական ու շարքային կազմերի զինծառայողի կամ տարածքային պաշտպանությունում ներգրավված կամ կամավորագրված անձի երկրորդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 41000000 դրամ,

զ) պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական ու շարքային կազմերի զինծառայողի երկրորդ խմբի հաշմանդամության դեպքում՝ 29000000 դրամ[4]:

Ըստ որում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի վերը հիշատակված 4-րդ հոդվածի համաձայն նշված գումարները վճարվում են հետևյալ պայմաններով.

- 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 2-րդ կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված գումարից 10000000 դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական հավասար վճարումներով 20 տարվա ընթացքում,
- 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ», «ե» և «զ» ենթակետերում

[4] Տես «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ 2016 թ. դեկտեմբերի 15-ի հմ. ՀՕ-245-Ն օրենքը, հոդ. 4 (http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=110528):

նշված գումարից 5000000 դրամը վճարվում է միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական հավասար վճարումներով 20 տարվա ընթացքում[5]:

Սահմանման ենթակա են ծառայողական պարտականությունները կատարելիս, զինվորական ծառայության ընթացքում, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման հետ չկապված զոհվելու (մահանալու) կամ վիրավորվելու, խեղվելու և հիվանդանալու դեպքում ապահովագրական գումարների վճարման կարգն ու չափերը, (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը:

## 5. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՐԵՎԷ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԿԱՊ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՀՀ ԶՈՒ-ն ստեղծվել և զարգացել է պարտադրված պատերազմի պայմաններում: Դրա ստեղծման օրվանից մշտապես զգացվել է վիրավոր, հաշմանդամություն ստացած զինծառայողների առողջության վերականգնման ու բուժման ժամանակակից կենտրոնի կարիք, որը բավարարելու նպատակով Երևանի պետական բժշկական համալսարանի, «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինհաշմանդամներին» ՀԿ և պաշտպանության նախարարության համագործակցությամբ բազմաթիվ բարերարների ու անհատ քաղաքացիների տրամադրած միջոցների շնորհիվ հիմնվեց «Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնը» (ՀՊՎԿ):

Կենտրոնը մի լիարժեք վերականգնողական համալիր է, որտեղ, զինվորական հաշմանդամների առողջական խնդիրներից բացի, լուծվում են նաև հոգեբանական աջակցության, սոցիալական ինտեգրման, կրթության և աշխատանքի տեղավորման հարցեր: Այն հագեցած է գերժամանակակից վերականգնողական սարքերով և իր հնարավորություններով տարածաշրջանում միակն է: Կենտրոնի թողունակությունը կազմում է 60 հիվանդ, որից 32-ը ստացիոնար, իսկ 28-ը՝ ամբուլատոր: Մեկ զինհաշմանդամի (վիրավորի) բուժման տևողությունը կազմում է 2-3 ամիս, և նրանց հետ անցկացվում է միջինը 17 բուժմիջոցառում: ՀՊՎԿ-ում գործում է «Մեկ պատուհան» ծրագիրը, որով ապահովվում է զինհաշմանդամների, նրանց ընտանիքների և տարբեր գերատեսչությունների միջև կապը:

## 6. ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՄԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Կարևոր խնդիրներից է նաև Զինված ուժերից երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքով արձակված քաղաքացիների և զինվորական հաշմանդամների կենսակերպի նոր պայմաններին հարմարեցումը:

Աներկբա է, որ նրանք, զինվորական ծառայությունից հետո զրկվելով համեմատաբար բարձր աշխատավարձից, բոլոր տեսակի բավարարումներից

[5] Տես նույն տեղում:

և արտոնություններից, ստիպված են լինում լուծել բազում սոցիալ-կենցաղային խնդիրներ, բախվում են մեծ դժվարությունների:

Ներկայումս նախատեսված չեն նախկին զինծառայողների համար զբաղվածության ապահովմանը նպատակաուղղված պետական ծրագրեր, ինչի հետևանքով նրանց մեծ մասը չի կարողանում ինքնուրույնաբար լուծել զբաղվածության խնդիրը, հայտնվում է ծանր սոցիալ-հոգեբանական վիճակում և ստիպված մեկնում է արտագնա աշխատանքի, ինչը, ժողովրդագրական, ընտանեկան և այլ խնդիրներից բացի, հանգեցնում է որակյալ զորահավաքային ռեսուրսի և ՀՀ պաշտպանունակության նվազմանը:

Հարկ է նշել, որ զբաղվածության խնդիրը է՛լ ավելի բարդ է զինվորական հաշմանդամների համար:

Նախկին զինծառայողների զբաղվածության հարցում մեծ դժվարություն առաջացնող հիմնական գործոններից է երկրում գործազրկության բարձր մակարդակը: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ հանրապետությունում 2016 թ. գործազրկության մակարդակը կազմել էր 17,4 տոկոս[6], իսկ 2017 թ.՝ 18,6 տոկոս[7]:

Երկարամյա ծառայության համար կենսաթոշակի իրավունքով զինվորական ծառայությունից արձակված նախկին զինծառայողները, որպես կանոն, բարձրագույն կրթությամբ և կազմակերպչական հմտություններով օժտված աշխատունակ անձինք են, որոնք ծառայության ընթացքում ձեռք են բերել ղեկավարման հարուստ փորձ, բարձր աստիճանի կատարողական կարգապահություն, սկզբունքայնություն և նախաձեռնողականություն, ինչի շնորհիվ կարող են նշանակալի ներդրում ունենալ պետության կենսագործունեության հասարակական-քաղաքական բնագավառում և տնտեսության տարբեր ոլորտներում:

Այսպիսով՝ օրվա հրամայականն է քաղաքացիական կյանքում նախկին զինծառայողների և զինվորական հաշմանդամների ինտեգրելու գործում սոցիալ-հոգեբանական աջակցության կազմակերպումը, ինչը կլինի նրանց սոցիալական հարմարեցման հիմնական գործոնը:

Այս ուղղությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերած զինծառայողների համար՝ ծառայության վերջին տարում ԲՈՈՒՀ-ների բազայի վրա քաղաքացիական մասնագիտությունների վերապատրաստման քառամսյա դասընթացների կազմակերպում: Զինծառայողների մասնագիտական վերապատրաստում են անցնելու այն հաշվարկով, որ դասընթացն ավարտվի նախքան զինծառայողին զորամասի անձնակազմի ցուցակներից հանելու օրը,

[6] Տես «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ. հունվար-նոյեմբերին», էջ 49 (http://armstat.am/file/article/sv_11_17a_141.pdf):

[7] Տես «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-փետրվարին», էջ 48 (http://armstat.am/file/article/sv_02_18a_141.pdf):

- երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքով զորացրման ենթակա զինծառայողներին ծառայության վերջին տարում մասնագիտական կողմնորոշման հարցում տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն տրամադրելու, քաղաքացիական մասնագիտություն ձեռք բերելու, վերապատրաստման դասընթացներում ընդգրկելու ցանկություն հայտնողներին հաշվառելու և համապատասխան փաստաթղթերը ձևակերպելու նպատակով զորամասերում հասարակական ակտիվի կարգավիճակով տեղեկատվական-խորհրդատվական կետերի ձևավորում՝ զորամասի հրամանատարի տեղակալներից մեկի ղեկավարությամբ,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների ու ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համագործակցության միջոցով մինչև 55 տարեկան աշխատունակ, երկարամյա ծառայության կենսաթոշակառուների և մինչև 45 տարեկան զինվորական հաշմանդամների ընդգրկմամբ մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպում,
- նախկին զինծառայողների շրջանում սոցիալական լարվածության օջախների ծագմանը նպաստող բացասական գործոնների կանխատեսման և կանխարգելման նպատակով նրանց սոցիալական վիճակի մշտազննում:

Ուսումնասիրելով զինվորական ծառայությունից արձակված քաղաքացիների և զինվորական հաշմանդամների զբաղվածության խնդրի լուծման միջազգային փորձը՝ կարելի է առանձնացնել, մասնավորապես, հետևյալ օրինակները, որոնք կարող են հետագայում մեզանում կիրառելի լինել.

- Չինաստանում նախկին սպաների և ենթասպաների զբաղվածության հարցերով զբաղվում է Չինաստանի պետխորհրդին (կառավարություն) առընթեր հանձնաժողովը: Նմանատիպ հանձնաժողովներ գործում են նաև մարզերի և ինքնավար շրջանների կառավարություններին առընթեր: Դրանք բոլորն էլ շատ սերտ աշխատում են զինվորական շրջանների հրամանատարության հետ: Տեղական իշխանությունները պատասխանատու են առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ զորամասերի հրամանատարությանը տեղեկությունների ներկայացման և անհրաժեշտության դեպքում նախկին զինծառայողների մասնագիտական վերապատրաստման համար: Ըստ որում, նախկին բարձրաստիճան զինծառայողներին, մասնավորապես՝ դիվիզիաների ու գնդերի հրամանատարական օղակների նախկին անդամներին, առաջարկվում են տեղական ինքնակառավարման մարմիններում և պետական հիմնարկներում ղեկավար պաշտոններ: Հատկանշական է, որ թափուր պաշտոնների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է նախկին զինծառայողներին[8],

[8] Տես *М. Степанов.* Система социального обеспечения в Народно-освободительной армии Китая. «ЗВО», 2013, № 8:

- ԱՄՆ-ում օրենսդրությունը սահմանում է, որ պետական մարմինները պարտավոր են զինծառայողների մասին հոգ տանել նաև նրանց զորացրումից հետո: Այսպես. շարքայինները և սերժանտները, որոնք թոշակ չեն ստանում, իրավունք ունեն ստանալու անաշխատունակության նպաստ, որը վճարում է ՊՆ միջոցների հիմքի վրա ստեղծված հատուկ հիմնադրամը:

  ԱՄՆ-ում պետական ծառայության անցնելիս նախկին զինծառայողների առավելությունը ամրագրված է օրենսդրական մակարդակով, կառավարական մարմիններում աշխատանքի ընդունելիս նախապատվություն է տրվում մարտական գործողությունների մասնակիցներին, կառավարական պարգևներ ստացածներին և նրանց, ովքեր ծառայության ընթացքում ստացել են հաշմանդամություն[9]: ԱՄՆ-ում պահեստազոր արձակված զինծառայողներն ունեն կրթություն ստանալու համար օգնության իրավունք, որը կարող են իրացնել բանակից արձակվելուց հետո 10 տարվա ընթացքում[10],
- Մեծ Բրիտանիայում պահեստազոր արձակված զինծառայողներն իրավունք ունեն կրթություն ստանալու քաղաքացիական երեկոյան և հեռակա միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև բանակի վերապատրաստման կենտրոնների տարաբնույթ դասընթացներում: Մեծ Բրիտանիայի ՊՆ-ն զինծառայողներին քաղաքացիական կյանքին հարմարվելու հարցում օգնություն է ցուցաբերում նրանց պահեստազոր արձակվելուց 3 տարի առաջ և արձակվելուց հետո 1 տարվա ընթացքում: Իսկ այն զինծառայողների հետ, որոնք պետք է անցնեն թոշակի, սոցիալական աշխատանք է տարվում նրանց թոշակի անցնելուց 2 տարի առաջ, ընդ որում, թոշակի անցնելուց 6 ամիս առաջ պարտադիր կերպով զինծառայողի հետ քաղաքացիական կյանքում նրա համար ցանկալի աշխատանքային ոլորտը ճշգրտելու նպատակով անցկացվում է հարցազրույց[11],
- Գերմանիայում ստեղծված է հատուկ դաշնային ծառայություն, որն զբաղվում է զինծառայողների վերապատրաստմամբ: Ծառայությունը զորացրված զինծառայողներին օգնում է աշխատանքի տեղավորման հարցում, փոխհատուցում է բնակության վայրի փոփոխման հետ կապված

[9] Տես *В. Н. Старцун.* Зарубежный опыт социальной защиты военнослужащих и граждан, уволенных с военной службы, - проблемы использования в Российской Федерации. «Право и политика», 2005, № 9 (http://www.center-bereg.ru/e1179.html):

[10] Տես *М. Шигов.* Опыт социальной адаптации уволенных в запас военнослужащих некоторых стран НАТО. «ЗВО», 2005, № 3 (http://militaryarticle.ru/zarubezhnoe-voennoe-obozrenie/2005-zvo/7295-opyt-socialnoj-adaptacii-uvolennyh-v-zapas):

[11] Տես *П. В. Разов.* Зарубежный опыт решения проблем переквалификации и трудоустройства уволенных в запас военнослужащих. «Власть», 2014, т. 22, № 5 (http://jour.isras.ru/index.php/vlast/article/view/ 2474/2277):

հնարավոր ծախսերը: Առանձին կարգախմբերի զինծառայողների զորացրվելուց հետո ուղեգրով ուղարկում են հատուկ ամրագրված հաստիքների: Գերմանիայում զինծառայողը ծառայության ընթացքում անվճար հիմունքներով իրավունք ունի անցնելու քաղաքացիական մասնագիտական վերապատրաստման տարբեր տեսակի դասընթացներ, որոնց մասնակցությունը քաղաքացիական կյանքին ինտեգրվելու միջոց է: Համաձայն Գերմանիայի օրենսդրության՝ ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում նորակոչիկի նախկին աշխատանքային տեղը ամրագրվում է[12],

- Ֆրանսիայում օրենսդրորեն սահմանված է, որ զորացրված զինծառայողին աշխատանքի անցնելու համար պետք է առաջարկվեն ամրագրված պաշտոններ[13]:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարությունը քաջ գիտակցում է, որ Հայրենիքի պաշտպանը կարող է անմնացորդ ամբողջ էությամբ նվիրվել իր վեհ առաքելությանը, երբ չունի իր և իր ընտանիքի ներկայի ու ապագայի համար լրջորեն մտահոգվելու առիթ, երբ գիտակցում է, որ պետությունը փորձում է իր ունեցած սուղ ռեսուրսների հաշվին վերացնել նրա ուսերին բարդված սոցիալական բեռը: Ու թեպետ ՀՀ ԶՈՒ-ում կան զգալի սոցիալական պրոբլեմներ, սակայն պետությունը մեծ ջանքեր է գործադրում դրանք լուծելու ուղղությամբ: Արվում է հնարավորը՝ զինծառայողների և նրանց ընտանիքների համար բարձր մակարդակի սոցիալական երաշխիքներ ստեղծելու ուղղությամբ:

[12] Տես նույն տեղում:

[13] Տես նույն տեղում:

## ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ СИСТЕМЫ СОЦИАЛЬНОГО ОБЕСПЕЧЕНИЯ ВС РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*С. З. АРУШАНЯН, государственный советник 2-го класса СГС, начальник Управления социальной защиты военнослужащих МО РА, Эд. Р. АКОПЯН, советник 3-го класса СГС, главный специалист СПКО Управления СЗВ МО РА*

РЕЗЮМЕ

На текущем этапе развития ВС РА первостепенной задачей военно-социальной сферы является внедрение целевых программ, направленных на решение квартирного вопроса военнослужащих, бывших военнослужащих, имеющих право на военную пенсию по инвалидности, и членов семей погибших (умерших) военнослужащих; пенсионное обеспечение военнослужащих; страхование жизни и здоровья военнослужащих; восстановительное лечение бывших военнослужащих, имеющих инвалидность по причинам, связанным с военной

службой; социальную адаптацию и обеспечение занятостью бывших военнослужащих.

Целевыми программами предусматривается: предоставить военнослужащим государственный ипотечный кредит сроком на 20 лет на льготных условиях; до 2025 года полностью решить квартирный вопрос бывших военнослужащих, имеющих право на военную пенсию по инвалидности, и членов семей погибших (умерших) военнослужащих; начиная с 2021 года в обязательном порядке включить военнослужащих в пенсионную накопительную систему с отчислением 5 % денежного довольствия в пенсионный фонд; согласно закону «О компенсации вреда, причиненного жизни или здоровью военнослужащего во время обороны Республики Армения», принятому 15 декабря 2016 г., компенсировать вред, причиненный жизни или здоровью военнослужащего во время обороны РА, боевых действий, боевого дежурства или выполнения специального задания; обеспечить восстановительное лечение военнослужащих с инвалидностью в «Восстановительном центре защитника Родины»; организовать на базе вузов четырехмесячные курсы переподготовки по гражданским специальностям в конце срока службы для военнослужащих, имеющих право на пенсию после многолетней военной службы.

## PECULIARITIES OF DEVELOPING THE REPUBLIC OF ARMENIA'S ARMED FORCES SOCIAL SECURITY SYSTEM

*S. Z. ARUSHANYAN, 2nd Class State Advisor, SCS, Head, Servicemen's Social Security Department, MOD, RA, E. R. HAKOBYAN, 3rd Class Advisor, SCS, Chief Specialist, SLC Section, Servicemen's Social Security Department, MOD, RA*

SUMMARY

The primary task of the military-social sphere at the current stage of developing the RA Armed Forces is the introduction of target programs aimed at resolving the housing issue of servicemen, former servicemen, those entitled to army disability pension, and the immediate family of the fallen (deceased) servicemen; pension provision for servicemen; servicemen's life and health insurance; rehabilitation treatment of former military personnel with service-connected disabilities; social adaptation and employment guarantees for former servicemen.

The target programs envisage: to grant servicemen with a state mortgage for 20 years on favorable terms; to completely resolve the housing issue of former servicemen entitled to army disability pension, and the immediate family of the fallen (the deceased) servicemen till 2025; starting from 2021, to include servicemen without fail in the Pension Savings

System with 5 % payments of money allowances to the Pension Fund; according to the RA Law "On the Compensation for the Damages Caused to the Life or Health of the Servicemen while Defending the Republic of Armenia", adopted on December 15, 2016, to compensate for the damages caused to a serviceman's life or health while defending the RA, during combat operations, while being on combat duty or performing a special assignment; to ensure the rehabilitation treatment of military personnel with disabilities in the "Homeland Defender's Rehabilitation Center"; to organize on a university basis four-month retraining courses in civic specialties at the end of the service period for military personnel entitled to pension after years-long military service.

# ԼԵՌՆԱԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԵՂԱՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

*Ս. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, գնդապետ, ՌԴ ԶՈՒ-ի ցամաքային զորքերի համազորային ակադեմիայի ռազմաուսումնագիտական կենտրոնի հատուկ ֆակուլտետի ադյունկտ*

Պատերազմող կողմերի զորքերի գործողություններում զինված պայքարի նոր հեռանկարային միջոցների կիրառումը առաջ է բերում մի շարք պրոբլեմներ, որոնք պետք լուծի ռազմական արվեստը: Այդ պրոբլեմներից են լեռնաանտառային տեղանքի պայմաններում մարտական գործողություններին զորքերի պատրաստման և այդ գործողությունների վարման խնդիրները: Տվյալ խնդիրը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ ԶՈՒ-ի համար, քանի որ հնարավոր պատերազմի ռազմական գործողությունների թատերաբեմը (ՌԳԹ) գերազանցապես ներկայացնում է այդպիսի տեղանք: Սույն հոդվածում մենք փորձ ենք արել մասնագիտական գրականության, այդ թվում՝ կանոնադրությունների, ձեռնարկների, զորավարների հուշագրությունների, տվյալների բազմակողմանի համեմատական վերլուծության արդյունքներով մշակել լեռնաանտառային պայմաններում պաշտպանության կազմակերպման վերաբերյալ մի շարք տեսագործնական առաջարկություններ, որոնք, կարծում ենք, որոշակի օգուտ կտան նման պայմաններում մարտեր մղող՝ մարտավարական օղակի հրամանատարներին:

Հայտնի է, որ պաշտպանության պատրաստման ու վարման եղանակները ուղղակիորեն կախված են առաջիկա մարտական գործողությունների շրջանի ֆիզիկաաշխարհագրական պայմաններից և օպերատիվ-մարտավարական իրադրությունից: Լեռնաանտառային տեղանքը դժվարանցանելի է և բնութագրվում է մեծ թվով բնական խոչընդոտներով, ինչն ընդհանուր առմամբ նպաստում է կայուն պաշտպանության ապահովմանը: Այս տեսակի տեղանքին բնորոշ են փակ ռելիեֆը, լեռնաշղթաների լանջերի մեծ զառիթափությամբ, դժվարանցանելի ժայռոտ ու քարքարոտ բնահողերի առկայությամբ, անհավասարաչափ զարգացած ջրագրական ցանցով, խիտ անտառային բուսականությամբ, մեծ թվով անանցանելի խոչընդոտների առկայությամբ և տեղանքի դյուրանցանելիության առումով խիստ սահմանափակ տարածքները: Թույլ զարգացած ճանապարհային ցանցը հաճախ բացառում է ճանապարհներից դուրս ոչ միայն տեխնիկայի, այլև ստորաբաժանումների հետիոտն շարժվելու հնարավորությունը: Անտառապատ լեռնազանգվածներն ու դրանց ճյուղավորումները բնական լավ բնագծեր են, որոնք հարմար

են բազմահարկաշար *(многоярусный),* տարածապես շարակարգված և շրջանաձև պաշտպանությունների ստեղծման համար՝ ապահովելով լայն տեսադաշտ ու գնդակոծման տարածուն գոտի, ինչպես նաև տարբեր արգելափակոցների ստեղծման հնարավորություններ:

Լեռնաանտառային շրջանների ֆիզիկաաշխարհագրական պայմանները հնարավորություն են տալիս հակառակորդից թաքցնելու պաշտպանության կազմակերպվածքը, առաջին հերթին՝ զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների մարտակարգը և կրակի համակարգը, նպաստում են այնպիսի կայուն ու ակտիվ պաշտպանության կազմակերպմանը, որն ունակ լինի դիմակայելու հակառակորդի՝ բոլոր տեսակների զենքերով հասցրած հարվածներին, արդյունավետ կերպով հետ մղելու գերազանցող ուժերի հարձակումը:

Մյուս կողմից՝ գալիք մարտական գործողությունների շրջանի ֆիզիկաաշխարհագրական պայմանները դժվարություններ են ստեղծում նաև պաշտպանությունը կազմակերպելու համար, ինչը պայմանավորված է նույնպես այդ շրջանի դժվարամատչելիությամբ, ճանապարհների թույլ զարգացած ցանցով, բարդ ռելիեֆով, խոշոր անտառային զանգվածների ուղղությամբ ու մեծությամբ տարբեր ջրային արգելքների առկայությամբ, ինչպես նաև փոփոխական ջրօդերևութաբանական պայմաններով: Դա սահմանափակում է ընտրված ուղղությամբ ջանքերը կենտրոնացնելու ստորաբաժանումների հնարավորությունները, զգալի կերպով դժվարացնում է տեղանքում նրանց տեղաբաշխումը, կողմնորոշումը, տարաշարժը, ծավալումը և, վերջին հաշվով, մարտական տեխնիկայի ու ստորաբաժանումների մարտական կիրառումը: Դրանց կիրառումը պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել 1000 մ-ից ավելի բարձրություններում մեքենաների շարժունակության նվազումը շարժիչների հզորության անկման պատճառով, մաշվածության աճումը, սպասարկման ու վերանորոգման աշխատանքների բարդացումը, տարահանման միջոցների պահանջարկի 2-3 անգամ աճումը:

Քարքարոտ գետինը, զառիվեր լանջերը և անակնկալ ջրածածկումների, լեռնային փլվածքների ու փլուզումների վտանգը բարդացնում են տեղանքի ինժեներական սարքավորումը: Յուրահատուկ ֆիզիկաաշխարհագրական և օդերևութաբանական պայմանները բացասաբար են ազդում զինված պայքարի միջոցների խոցիչ գործողության, զորքերի ու զենքի կառավարման ռադիո- ու ռադիոռելեային միջոցների աշխատանքի, ինչպես նաև ռադիոէլեկտրոնային պայքարի կազմակերպման վրա՝ դրանց հնարավորությունները նվազեցնելով 1,5–2 անգամ: Կապի հաղորդալարային գծեր անցկացնելիս մալուխի ծախսը մեծանում է 30-40 և ավելի տոկոսով:

Ընդսմին մեծ անտառային զանգվածներով ծածկված լեռնային ռելիեֆի կտրտված բնույթը, զգալի թվով անտեսանելիության տարածությունների, «մեռյալ» գոտիների, ծածուկ մատույցների և բնական քողարկամիջոցների առկայությունը կնպաստեն հակառակորդի մարտարշավային և առաջավոր

ջոկատների, ինչպես նաև դիվերսիոն-հետախուզական խմբերի, հետախուզական ջոկատների, հետախուզական խմբերի կազմում ներառված փոքր խմբերի հանկարծակի ու արագընթաց գործողություններին, կիրճերում, լեռնանցքներում, լեռնային ճանապարհների ու գետերի երկայնքով նրանց դարանների կազմակերպմանը, կամուրջների ու ճանապարհների որոշ հատվածների ավերմանը: Պաշտպանության չզբաղեցված ընդմիջակայքերով այդ խմբերի աննկատ ներթափանցումը և լեռնանցքներ, ճանապարհների հանգույցներ և այլ օբյեկտներ գրավելու, անսպասելի հարվածներ հասցնելու նպատակով պաշտպանվողների հենակետերի թևերում ու թիկունքում հայտնվելը կարող են հանգեցնել պաշտպանության ուժերի ջլատմանը և դրանց հատված առ հատված ոչնչացմանը:

Այս ամենը պահանջում է հակառակորդի վրագետնյա ստորաբաժանումների տարաշարժին և նրա օդային դեսանտին հակազդեցություն գործելու համար ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ: Անհրաժեշտ է բոլոր օղակներում ստեղծել շրջանաձև պաշտպանություն, թևերի և թիկունքի հուսալի ապահովում, անընդհատ հետախուզության կազմակերպում: Մարտական գործողությունների հաջողված փորձի վերլուծությունը նաև ցույց է տալիս, որ նպատակահարմար է մեծացնել կրակային դարանների թիվը, ուժեղացնել հրետանու և ավիացիայի պլանավորված կրակը հակառակորդի առաջխաղացման ուղիներին գտնվող լեռնանցքների և լեռներում հարմարավետ անցումների ու նեղոցների, գետանցների ուղղությամբ, լեռնահովիտներ և ուժերի ծավալման ու զորէջքի համար այլ հարմար վայրեր մուտք գործելու անցուղիների, ինչպես նաև նրա շրջանցող ստորաբաժանումների գործողությունների ուղղությունների վրա:

Պետք է հիշել, որ այս պայմաններում լեռնաանտառային տեղանքի ռելիեֆի առանձնահատկությունների հետևանքով հակառակորդի կրակային խոցումը սահմանափակ է և բարդ, ուստի պահանջվում է գտնել հակառակորդի հետախուզման և կրակային խոցման արդյունավետության մեծացման ուղիներ, ինչպես նաև հրետանու մարտական կիրառման եղանակներ:

Այս պրոբլեմային հարցի լուծման հնարավոր եղանակ կարող է լինել համազորային կազմավորումներում հրետանու քանակական-որակական կազմի մեծացումը, կրակային խոցման՝ լեռնաանտառային տեղանքին համապատասխանող նոր եղանակների կիրառումը, հրետանային ստորաբաժանումների զինումը ժամանակի ռեալ մասշտաբում հակառակորդի կրակային խոցումն ապահովող արդյունավետ հետախուզական միջոցներով, դիտարկվող պայմաններում հրետանու կենսունակության մեծացման եղանակների մշակումը:

Լեռնաանտառային տեղանքը անմիջական ազդեցություն է գործում հակառակորդի օդային տեսողական, օդալուսանկարչական և ռադիոտեղորոշումային դիտումից զորքերի պատսպարման վրա, հետևաբար նաև ստորաբաժանումների պաշտպանվածության աստիճանի բարձրացման վրա, սակայն,

դրա հետ մեկտեղ, նվազեցնում է ճանապարհներից դուրս տեղանքի անցանելիությունը: Անտառապատ լեռնային զանգվածների հատվածներն զգալիորեն դժվարացնում են պաշտպանողական մարտի նախապատրաստումն ու վարումը, դիտումը, նշանացուցումը և կրակի շտկումը, հակագրոհների ժամանակ զորքի տարաշարժը հարձակման չենթարկված հատվածներից, ինչպես նաև զորքերի կառավարումը և փոխգործության կազմակերպումը, ինչի պատճառով հաճախ պետք է լինում կատարել կրակակոծության և դիտման գոտիների բուսազերծում:

Անտառում հարձակողական գործողություններ վարելու ժամանակ անտառային զանգվածները նպաստում են հակառակորդի զորքերին շրջանցող ջոկատներով և առանձին ստորաբաժանումներով աննկատ կերպով պաշտպանվող զորքերի թիկունք դուրս գալուն: Մեծ է նաև անտառային հրդեհների բռնկման հավանականությունը, ընդսմին այդ դեպքում այրման ջերմաստիճանը հասնում է 200–800$^0$C, ինչի հետևանքով կարող են առաջանալ ջերմային խոցումներ և համատարած ծխոտում՝ դժվարացնելով շնչառությունը և հրդեհի շրջանից հեռացումը:

Լերկ լեռնամեջ գոգահովիտների առկայությունն անհրաժեշտ է դարձնում պաշտպանության շրջանն զբաղեցնելու դեպքում մանրակրկիտ կերպով նախապատրաստել և իրականացնել ծածուկության ապահովման և հակառակորդի մոլորեցման միջոցառումներ:

*Աղյուսակ 1*

ՏԱՐԲԵՐ ԴԱՍԵՐԻ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՔՈՂԱՐԿՈՒՄԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| *Անտառի դասակարգում ըստ քողարկիչ հատկությունների* | *Ծառերի միջև եղած միջին հեռավորությունը, մ* | *Սաղարթների հոծությունը* | *Զորքերի և մարտական տեխնիկայի քողարկման հնարավորությունը* |
|---|---|---|---|
| խիտ անտառ | մինչև 6 | 1-0,5 | օբյեկտները հուսալի կերպով թաքնվում են առանց արհեստական քողարկամիջոցների |
| միջին խտության անտառ | 6-10 | 0,5-0,2 | հուսալի քողարկման համար առանձին դեպքերում անհրաժեշտ են արհեստական քողարկամիջոցներ |
| Նոսր անտառ | 10-15 | 0,2-0,1 | բավարար քողարկման համար անհրաժեշտ են արհեստական քողարկամիջոցներ |

Ըստ հաշվարկումների՝ զորքերի նորմալ մարտական գործունեության համար յուրաքանչյուր 100 քառ. կմ տարածքում պետք է լինի 30-40-ից մինչև 60-70 կմ ավտոմոբիլային ճանապարհ: Լեռնային ՌԳԹ-ում ճանապարհային ցանցի խտությունը 5-15 անգամ պակաս է: Քանի որ լեռնային պայմաններում ճանապարհային ցանցի մատչելիությունն ըստ ուղղությունների սահ-

մանափակ է, և առկա են մեծ բարձունքներ (լեռներ), որոնք մեծապես սահմանափակում են համազորային և հրետանային ստորաբաժանումների տարաշարժը, առանձին, իրարից մեկուսացած ուղղություններում նրանց գործողությունների ժամանակ նպատակահարմար է ականանետների և հաուբիցային հրետանու հիմնական մասը վերաենթարկել համազորային ստորաբաժանումներին, որոնց կազմով պետք է ապահովվեն դրանց գործողությունների մեծ ինքնուրույնությունը և մարտական խնդիրների հաջող կատարման հնարավորությունը: Այս դեպքում կարող են չստեղծվել առանձին հրետանային խմբեր:

Լեռնաանտառային պայմաններում ցանկալի է հրետանին կիրառել ապակենտրոնացած կերպով: Հրետանին պետք է վերաենթարկվի ստորաբաժանումների հրամանատարներին և օգտագործվի հարձակվող թշնամուն ուղիղ նշանառությամբ խոցելու համար: Իսկ դա բարդացնում է համազորային և հրետանային ստորաբաժանումների փոխգործության կազմակերպումն ու պահպանումը: Լեռներում մարտական գործողությունների վարման ժամանակ քարշակվող հրետանու համար կրակային դիրքերի ընտրությունը լուրջ պրոբլեմ է, հատկապես, երբ համազորային ստորաբաժանումներին անմիջական աջակցություն ցույց տալու համար անհրաժեշտ է այն հընթացս ծավալել կամ տեղափոխել պահեստային (ժամանակավոր) կրակային դիրքեր, կրակային խնդիրները կատարելուց հետո կրակային դիրքերը փոխել:

Այս խնդրի օպտիմալ լուծումներից է լեռնային շրջաններում գործողությունների համար նախանշանակված հրետանային զորամասերի և ստորաբաժանումների ապահովումը մեծ թվով ինքնագնաց հրետանային կայանքներով, որոնք կարող են կրակ վարել գործնականում ցանկացած տեղից՝ նույնիսկ գտնվելով լեռնային ճանապարհով շարժվող շարասյուններում, երբ դրանց միջև հեռավորությունները երթայինի համեմատությամբ կրճատվում են: Կարևոր հարցերից է լեռնային շրջաններում ձգաբանական պայմանների հաշվառումը, քանի որ այստեղ պետք է լինում կրակը վարել բարձրացման (հակման) մեծ անկյուններով որոշել արկերի և ականների ցրումների՝ տարբեր բարձրությունների պայմաններում ջերմաստիճանների տատանման և օդի նոսրության տարբերությունների հետևանքով առաջացող տարբերությունը: Սակայն այս հարցը ավելի շատ տեխնիկական բնույթի է և ըստ էության միանգամայն լուծելի է:

Տանկամատչելի ուղղությունների տարանջատվածության պատճառով նպատակահարմար է համազորային զորամիավորումներում և ստորաբաժանումներում ստեղծել երկու, իսկ երբեմն նաև ավելի մեծ թվով հակատանկային պահեստուժեր, համապատասխանաբար՝ երկու կամ ավելի շարժունակ արգելապատնեշային ջոկատներ, հնարավոր է ավելի փոքր կազմով, քան սովորական պայմաններում, և դրանք դիրքավորել առավել տանկավտանգ ուղղություններում: Դրանց գործողությունների պլանավորումն ու ծավալումը պետք է կատարվի մի քանի բնագծերում, որոնք կապահովեն

պաշտպանությունը ճեղքած հակառակորդի տանկերի և այլ զրահապատ մարտական մեքենաների դեմ հաջող պայքարը, տանկավտանգ ուղղությունների և պաշտպանական դիրքերում առաջացած ճեղքերի ծածկապաշտպանությունը, բաց զորաթևերի ու կցակետերի ծածկապաշտպանությունը, ինչպես նաև հակագրոհի պատրաստվող համազորային ստորաբաժանումների ծավալման ժամանակ դրանց թևերի ծածկապաշտպանությունը: Ներկայումս այս նպատակով առաջավոր բանակներում կիրառվում են հակատանկային ուղղաթիռների ստորաբաժանումները, իսկ զորամիավորման հակատանկային միջոցների մի մասը կարելի է կիրառել առաջին շարակարգի ստորաբաժանումների կրակային հզորացման համար՝ ուղիղ նշանառությամբ կրակով հակառակորդի նշանակետերը խոցելու նպատակով:

Այն դեպքում, երբ հակառակորդն ունի մեծ հնարավորություններ, նրա մարտակարգի տարրերը հագեցված են գերճշգրիտ զենքի միջոցներով, պաշտպանվողները պետք է ձեռնարկեն լրացուցիչ միջոցներ՝ ըստ մարտակարգի տարրերի և գերճշգրիտ զենքի համակարգերի հակառակորդի հնարավորությունները լիովին պարզելու համար: Ուստի և պաշտպանվող կողմի հրամանատարությունը, ելնելով լեռնաանտառային պայմաններում մարտական գործողությունների վարման յուրահատկությունից, իսկ երբեմն նաև դրված մարտական խնդիրը կատարելիս հաստիքային մարտական տեխնիկան կիրառելու անհնարինությունից, հատուկ դեր և արժեք է տալիս հետախուզական միջոցների արդյունավետ կիրառման, հետախուզության մարմինների ձեռնարկած գործողությունների տարաբնույթ հատուկ ձևերի ու եղանակների կազմակերպմանը: Հետախուզական տեղեկույթի հավաքման ժամանակակից միջոցներն են անօդաչու թռչող ապարատները, տարաբնույթ օպտիկական և ձայնորոշիչ միջոցները, հեռատեղակայվող հետախուզական-ազդանշանային սարքերը և այլ տեխնիկական միջոցներ, որոնք նպատակահարմար է տեղակայել հակառակորդի տեղաշարժի ճանապարհներին և կենտրոնացման հնարավոր շրջաններում: Տեղեկույթի հավաքումը սովորաբար կատարվում է ընդունիչ կայաններում, որոնք անհրաժեշտ է տեղակայել հրետանային ստորաբաժանումների հրամանատարական կետերում, ինչի շնորհիվ կրճատվում է դրանցով հայտնաբերումից մինչև խոցման հրամանի արձակումն անհրաժեշտ ժամանակը:

Մարտական ուղղաթիռների շարժունակության, տարբեր հրթիռային և հրաձգային զենքերով դրանց սպառազինման, աջակցվող ստորաբաժանման հրամանատարի հետ ուղիղ կապ հաստատելու հնարավորության շնորհիվ ավիացիոն աջակցությունը ներկայումս դարձել է պայքարի բացառիկ արդյունավետ միջոց:

Սակայն լեռնային շրջաններում պաշտպանվող զորքերին աջակցելու համար բանակային ավիացիայի մարտական կիրառումը բավականաչափ բարդ է, քանի որ թռիչքադաշտերի ցանցը սահմանափակ է, սակավ են բազավորման և թռիչքամոտեցման հնարավորությունները: Դրան գումարվում է

նաև այն, որ բավական հաճախ սահմանափակված է ակնդետ (հաճախակի մառախուղներ) և ռադիոտեղորոշումային տեսանելիությունը, սակավ են ռադիոուղեվարական համակարգերի և մոտիկ ուղեվարության միջոցների կիրառման հնարավորությունները, ինչը դժվարացնում է իրենց նախանշանակման օբյեկտներին հարվածային խմբերի թռիչքամոտեցման հավանականությունը: Փոքր բարձրություններով թռիչքը կապված է թռիչքակազմի մեծ նյարդային լարվածության հետ, ինչի հետևանքով նրանք շուտ են հոգնում, ինչն էլ հանգեցնում է հարվածների հասցման եղանակների սահմանափակությանը, փոքր չափի նշանակետերի հայտնաբերման և հարվածների արդյունավետության նվազմանը:

Լեռնաանտառային տեղանքի յուրահատուկ պայմանները զորքին ստիպում են մարտական գործողություններ վարել առանց հստակորեն նշմարվող ճակատային գծի, մեկուսի ուղղություններով, առավելապես ճանապարհների, լեռնանցքների, կիրճերի երկայնքով, հաղորդակցության ուղիների և կապի ստացիոնար միջոցների թույլ զարգացած ցանցով տեղանքում, ինչը դժվարացնում է զորքերի կառավարումը և ճակատային գծի ու յուրային մարտակարգերի նշագրումը, իսկ երբեմն անգամ հանգեցնում է յուրային ստորաբաժանումներին հասցվող սխալ հարվածների:

Մարտական գործողությունների պրակտիկայի ուսումնասիրությամբ պարզվել է, որ լեռնաանտառային շրջանների յուրաքանչյուր դիրքի հիմքը վաշտերի և առանձին դասակների հենակետերն են, որոնք միավորվելով կազմում են գումարտակային շրջաններ և մշտապես գտնվում են կրակային կապի մեջ: Ըստ այդմ էլ՝ մարտի ելքը վճռող հիմնական մարտավարական ստորաբաժանումներն են մոտոհրաձգային գումարտակն ու վաշտը: Քանի որ լեռնային շրջաններում մարտական գործողությունները մեծ մասամբ վարում են փոքր ստորաբաժանումներով, ուստի դրանց պլանավորման և անցկացման համար աճում է մոտոհրաձգային ու տանկային ստորաբաժանումների հրամանատարների պատասխանատվությունը, մեծանում է կրտսեր սպայական և սերժանտական կազմի դերը, խիստ պահանջներ են ներկայացվում զորքերի գործակցության կազմակերպմանը, կառավարմանը, գործողությունների համակողմանի ապահովմանը:

Հետևաբար սպաների բազմակողմանի պատրաստման, մարտական պատրաստման և անձնակազմի դաստիարակության տարրերին նրանց վստահ տիրապետումը, մարտի կազմակերպման և բազմակողմանի ապահովման նրանց վարպետությունը լեռնաանտառային տեղանքում ծավալված մարտում հաջողության հասնելու գրավականն են: Սակայն մարտական գործողությունների կառավարման գործում զորքերի փորձը ցույց է տալիս, որ իրականում մարտի ժամանակ հրամանատարների և շտաբների աշխատանքում հաճախ նկատվել է մարտական գործողությունների վարման դասական ձևեր և մեթոդներ կիրառելու ձգտում՝ առանց լեռնաանտառային տեղանքի յուրահատկությունները և հակառակորդի մարտավարությունը հաշվի

առնելու, ինչը շոշափելի արդյունքներ չի տվել: Ուստի պետք է, բացի գործող կանոնադրություններով և ղեկավար ձեռնարկներով հրահանգված դասական հնարներից, օգտագործել փորձով մշակված մարտավարական հնարների ամբողջ զինանոցը և լեռնաանտառային պայմաններում ստորաբաժանումների գործողությունների պրակտիկան:

Տեղային պատերազմների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ դեպքերում, անգամ ծանր զենքով ու տեխնիկայով ստորաբաժանումների հագեցածության պարագայում, լեռնաանտառային պայմաններում հրաձգային զենքի միակի ճշգրիտ կրակոցը շարունակում է խաղալ կարևոր, եթե ոչ վճռական դեր: Դա անհրաժեշտություն է դարձնում ստորաբաժանման կազմում անհատական ընտրազատմամբ լավագույն հրաձիգների ընդգրկումը, նրանց նպատակաուղղված կերպով պատրաստումը, ինչպես նաև դիպուկահարների հաստիքային ստորաբաժանումների ստեղծումը: Լեռնաանտառային պայմաններում զորքերի կիրառման փորձը ցույց է տալիս սպառազինության՝ որոշակի հատկություններով նմուշների կիրառման կարևորությունը: Խոսքը վերաբերում է ակոսավոր թնդանոթներով տանկերին, 82-մմ ականանետներին, մեծ տրամաչափի գնդացիրներին, դիպուկահարական ակոսավոր հրացաններին, «Մուխա» տիպի ձեռքի հակատանկային նռնականետներին (նախընտրելի է ֆուգասային կամ բեկորային նռնակով) և ավտոմատ հաստոցային նռնականետներին, ձեռքի հրանետներին, հետախուզության տարբեր ռադիոտեխնիկական և օպտիկական միջոցների, հետախուզական անօդաչու թռչող ապարատներին, գերճշգրիտ և ծավալային զինամթերքին:

Լեռնային պայմաններում սահմանափակ են բոլոր ուղղություններով զրահատեխնիկայի կիրառման հնարավորությունները (հնարավորությունները բերված են աղ. 2-ում):

*Աղյուսակ 2*

ԱՆՎԱՎՈՐ ԵՎ ԹՐԹՈՒՐԱՎՈՐ ՏԵԽՆԻԿԱՅՈՎ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ

| *Լանջերի տեսակները* | *Թեքության աստիճանը* | *Զառիվայրների հաղթահարելիությունը* |
|---|---|---|
| *1* | *2* | *3* |
| թեթև սակավաթեքություն | մինչև 5 | Անցանելի են ամեն տեսակի մարտական ու տրանսպորտային տեխնիկայի համար ճանապարհներով և ճանապարհներից դուրս՝ չոր բնահողի դեպքում: |
| սակավաթեքություն | 5-10 | Դժվարացնում են ավտոտրանսպորտի շարժը, բարձր դասերի ավտոմոբիլային ճանապարհների առավելագույն (սահմանային) երկայնական թեքություններ են: Լանջերին մեքենաների շարժման արագությունը նվազում է: |

| 1 | 2 | 3 |
|---|---|---|
| միջին թեքություն | 10-20 | Անվավոր մեքենաների համար հաղթահարելի են դժվարությամբ, փոքր արագությամբ և դժվարացնող են թրթուրավոր մեքենաների համար: 12° անկյունը սահմանային է լանջի լայնքով (հորիզոնական) մեքենաների շարժման համար: |
| թեքություն | 20-30 | Սահմանային են բոլոր տեսակի ավտոմեքենաների համար և դժվարությամբ հաղթահարում են տանկերն ու տրակտորները: |
| մեծ թեքություն | 30-40 | Անառիկ են բոլոր տեսակի անվավոր և թրթուրավոր տեխնիկայի համար: |

Այս կապակցությամբ կարևոր հարց է ծագում, թե որքանով նպատակահարմար է դրանց կիրառումը կրակային դարաններում, զրահախմբերի, հակատանկային ռեզերվի կազմում, հրետանու և ՀՕՊ-ի ստորաբաժանումների դիրքերի, հրամանատարական կետերի և նյութատեխնիկական մատակարարման կետերի պաշտպանությունում: Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ժամանակակից պայմաններում դրանք կիրառելու եղանակների մշակում: Բացի այդ, հնարավոր է նաև նախատեսել բազմանպատակային հարվածային ԱԹԱ-ների, բարձր անցունակությամբ ավտոմեքենաների, ինչպես նաև մոտոցիկլետների կիրառումը:

Լեռնային շրջաններում մարտական գործողությունների վարման համար հատուկ նշանակություն ունի անձնակազմի համապատասխան պատրաստումը: Բարձրության աճմանը զուգընթաց նվազում է մթնոլորտային ճնշումը և արագանում են մարդու սրտի զարկերը: Դրսևորվում է կլիմայի ուղղաձիգ գոտիականությունը. ջերմաստիճանը յուրաքանչյուր 100 մ բարձրանալուց նվազում է միջին հաշվով 0,5-0,6$^0$C-ով: Թթվածնի ստացումը նվազում է. եթե ծովի մակերևույթի բարձրության վրա (0 կետ) ներշնչվող օդում թթվածնի պարունակությունը 20-21 % է, ապա 500-1000 մ բարձրություններում՝ արդեն 18-16 %, 2500 մ-ում՝ 15,1%-ից ցածր:

Անձնակազմի էներգիական ծախսերը աճում են 2-2,5 անգամ, ինչը հանգեցնում է արագ հոգնելիության և 25 %-ով աշխատունակության անկման: Դրա հետևանքով նվազում է նաև անձնակազմի մարտունակությունը: Չմարզված մարդիկ ծովի մակերևույթից 2000–2500 մ բարձրություններում սկսում են տառապել լեռնախտով:

Ձնից արևի ճառագայթների անդրադարձումը բացասաբար է ազդում մարդու օրգանիզմի վրա, բարդացնում է դիտումը: Դժվարություններ են առաջանում լեռնային պայմաններին անձնակազմի հարմարման գործում, անհրաժեշտ են՝ անձնակազմի համար հատուկ հանդերձանք, տեխնիկայի հատուկ նախապատրաստում շահագործմանը, անձնակազմի համար տաքանալու (հատկապես՝ գիշերները) կետեր, որոնք նույնիսկ ամռանը պետք է ապահովված լիեն վառելանյութի փոխադրովի պաշարներով:

Լեռներում զինված դիմակայության բնույթը պայմանավորում են բարձր լեռնային լանդշաֆտի աշխարհագրական և կլիմայական պայմանները, իսկ մարտական գործողությունների բարդությունը հետևանք է ոչ այնքան հակառակորդի դիմադրության, որքան դժվարամատչելի տեղանքի խստաշունչ բնական պայմաններում կողմնորոշվելու, ողջ մնալու և մարտական խնդիրները կատարելու անհրաժեշտությամբ: Բազմաթիվ ուրույն առանձնահատկությունների հետևանքով նման գործողությունների վարումը, որպես կանոն, հատուկ պատրաստված լեռնահրաձգային զորքերի առանձնաշնորհն է:

Լեռնաանտառային տեղանքի պաշտպանության պրոբլեմային հարցերի վերլուծությունը ցույց է տալիս այս պայմաններում սովորական միօրինակացված մոտոհրաձգային և տանկային միավորումների ու ստորաբաժանումների կիրառման աննպատակահարմարությունը: Դրանց կազմակերպվածքը, զինումը և գործողություններ վարելու եղանակները անմիջականորեն կախված են մարտական նախանշանակման շրջանում կատարվող խնդիրների յուրահատկությունից և հիմնվում են զբաղեցրած շրջանները, բնագծերը, դիրքերն ու օբյեկտները պահելու համար գործողությունների բարձր արդյունավետության դեպքում ինքնավարության և ինքնուրույնության հասնելու վրա:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. *А. А. Гречко.* Битва за Кавказ. Изд. 2-е, дополненное. М., 1971.
2. *П. А. Иваньков, Г. В. Захаров.* Местность и ее влияние на боевые действия войск. Учебное пособие. М., 1999.
3. *С. А. Романенко, А. В. Хомутов, В. М. Моисеев, С. С. Сидоров.* Основы тактических действий бригады в горных районах. Учебное пособие. М., 2014.
4. «Особенности подготовки и ведения боевых действий в горах». «Информационный сборник Сухопутных войск», 1983.
5. «Сборник тактических примеров по организации и ведению общевойскового боя соединениями и частями». М., 1989.
6. *И. Н. Воробьев*. Тактика-искусство наступления. «Военная мысль» («ВМ»), 2003, № 5.
7. *И. Н. Воробьев*. Тактика-искусство обороны. «ВМ», 2003, № 8.
8. *И. Н. Воробьев, Н. Ф. Кузнецов.* Оборона по принципу очаговых действий. «ВМ», 2001, № 3.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

ՀՀ Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի
գլխավորությամբ Զինված ուժերի արդիականացման թեմայով
քննարկումները

Երևան, 2018 թ. հունիս

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

# ԶՈՒ-Ի ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ
# ՆՈՐԱԳՈՒՅՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

դրվագներ ՀՀ ՊՆ և «ՀայՏեք» կիբեռանվտանգության
կենտրոնի համատեղ կազմակերպած մրցույթից

Երևան, 2018 թ. հունիս

Դրվագներ «ԱրմՀայՏեք-2018» ցուցահանդեսից

Երևան, 2018 թ. մարտի 29–31

Հետախուզության և կրակի կառավարման «ԱՐՄԻ-55Մ» ԱԹԱ

«Հրեշ» մահապարտ ԱԹԱ

Հրետանուն կոորդինատներ հաղորդող «Ս-1» ԱԹԱ

# ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Դրվագներ հայկական երկու պետությունների՝ ՀՀ-ի և ԱՀ-ի զինված ուժերի փոխգործության շրջանակներում անցկացված օպերատիվ-մարտավարական զորավարժությունից

Արցախ, 2018 թ. մայիս

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՀԱՍՑՎՈՂ ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

*Ա. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,*
*ՀՀ Պաշտպանության նախարարի մամուլի քարտուղար*

Օդային հարձակման գերճշգրիտ հարվածային միջոցները առաջին անգամ փորձարկվել են Վիետնամական պատերազմում: 1982 թ. Լիբանանյան պատերազմում և դրանից հետո այդ միջոցներով ձեռնարկվող հարվածները հասցվել էին մի այնպիսի որակական մակարդակի, որ պատերազմական գործողությունների վարման տվյալ եղանակն ստացավ համընդհանուր ճանաչում և դարձավ շատ պետությունների համար ռազմական ուժի զարգացման նպատակ: Միևնույն ժամանակ, սկսվել էր նաև գերճշգրիտ հրետանային արկերի ու հրթիռների ստեղծման գործընթացը: Ռազմարվեստում հաստատվում էր հինգերորդ սերնդի պատերազմը, որի կարևոր բաղադրիչներից են գերճշգրիտ հարվածները:

Դիտարկենք այդպիսի հարվածների մի քանի օրինակ:

1982 թվականի մայիսի 1-ին «Վուլկան» (XM607) բրիտանական ռազմավարական ռմբակոծիչը կատարեց իր առաջին առաջադրանքը: Նա անցավ Պորտ Ստենլիի վրայով և ռմբակոծեց օդանավակայանը՝ կենտրոնանալով մեկ թռիչքուղու վրա և մեկ հարվածով այն դարձնելով կործանիչների համար ոչ պիտանի: Դրան արագորեն հետևեցին հարվածները ՀՕՊ-ի ենթակառուցվածքներին, որոնք ձեռնարկեցին թագավորական ռազմածովային նավերից օդ բարձրացած «Սի Հառիեր» ինքնաթիռները[1]:

Իրան-իրաքյան պատերազմի ժամանակ երկու հակամարտող կողմերը փորձում էին զանգվածաբար օդային հարվածներ հասցնել միմյանց ռազմավարական նշանակետերին: Դրանք հիմնականում նավթամշակման գործարաններ էին, նավակայաններ ու օդանավակայաններ: Սակայն այդ փորձերից քչերն էին հաջողվում: Հիշատակենք դրանցից ամենահաջողվածը:

1981 թ. ապրիլի 4-ին իրանական ավիացիան լավ կազմակերպված օդային հարված հասցրեց իրաքյան ամենահեռավոր ավիազորակայաններից մեկին: Իրանի ՌՕՈՒ-ի 8 միավոր «Ֆ-4» կործանիչ, օդ բարձրանալով Թավրիզի ավիազորակայանից, նախ թռան դեպի թուրքական սահման, այնուհետև սահմանի երկայնքով ուղղվեցին դեպի Սիրիա, այնտեղից՝ հարավ: Օպերացիան պլանավորվել էր մանրակրկիտ կերպով: Կործանիչներն օդում վերա-

[1] Տես *Chester G. Hearn.* Carriers in Combat: The Air War at Sea. London, 2007, P. 268:

լիցքավորվում էին, քանի որ հեռաթռիչությունը ավելի քան 1500 կմ էր: Կործանիչներին օդում ղեկավարում էին օդային հրամանատվական կետ ծառայող ինքնաթիռից, որը գործողություններն ուղղորդում էր անվտանգ հեռավորությունից: Իրանական հարվածային խումբը, խուսափելով իրաքյան ՀՕՊ-ի միջոցների ու կործանիչների հարձակումից, Ալ Վալիդ զորակայան հասավ ճիշտ ժամանակին և հասցրեց հուժկու հարված[2]: Ռմբակոծությունն իրաքյան ՌՕՈՒ-ի համար անակնկալ էր, իրանական կողմի համար՝ բավական արդյունավետ: Միևնույն ժամանակ, այլ կործանիչներով լարում առաջացնելով Քիրքուկի ու Բաղդադի ուղղությամբ՝ իրանական կործանիչները շեղեցին իրաքյան ՀՕՊ-ի և կործանիչների ուշադրությունը: Տարբեր տեղեկություններով՝ ավիահարվածի հետևանքով ոչնչացվել է մոտ 45 իրաքյան ինքնաթիռ, ամերիկյան տեղեկություններով՝ ոչնչացվել է 27 և վնասվել 11 ապարատ[3]:

Հաջորդ պատերազմը, որի ժամանակ օդային հարվածների տեխնոլոգիան և միջոցները ավելի են կատարելագործվել, Պարսից ծոցի 1991 թ. պատերազմն էր: Այս պատերազմում դժվար է առանձնացնել որևէ մեկ հարված, քանի որ կարճ ժամանակահատվածում հասցվել են բավական մեծ թվով օդային հարվածներ, ընդսմին տեղի է ունեցել մի շատ կարևոր առաջընթաց. գերճշգրիտ օդային հարվածների միջոցների (ՕՀՄ-ներ) տեսակարար կշիռը գրեթե զրոյից մոտեցել է առաջին տասնյակին, ինչը շեշտակիորեն մեծացրել է հասցվող հարվածների արդյունավետությունը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի «Անապատի աղվես» անվանումն ստացած օպերացիան, որը ձեռնարկվեց 1998 թ. դեկտեմբերի 20-ին:

Որպես խոցման հիմնական օբյեկտներ ընտրվել էին Իրաքի առավել կարևոր պետական ու ռազմական համակարգերը՝ ՀՕՊ-ի համակարգի օբյեկտներ, ռազմաարդյունաբերական համալիրի ձեռնարկություններ, գիտահետազոտական կենտրոններ, զինանոցներ և զինվորական օդանավակայաններ, նախագահական պալատներ, սննդի և բժշկական արդյունաբերության ձեռնարկություններ և այլն: Ընդ որում, առավել ուշագրավ է հետևյալ օրինաչափությունը. արդի օպերացիաներում, որպես կանոն, առաջին հարվածի համար ընտրվում են կայանային մակերեսային օբյեկտները, որոնց տեղաբաշխումը բազմիցս ճշտվել է տիեզերական և գործակալական հետախուզությամբ: Ընդ որում, անպայման ստեղծվում են թվային քարտեզներ:

Ի տարբերություն Պարսից ծոցի առաջին պատերազմից, երբ օրական հասցվում էր երկու-երեք հարված՝ յուրաքանչյուրը երեք ժամ տևողությամբ, 1998 թ. միավորված ուժերի խմբավորումը 73 ժամում ձեռնարկեց ընդամենը չորս հարված. մեկը՝ զանգվածային հրթիռաավիացիոն, երեքը՝ հրթիռաավիացիոն: Ընդսմին, յուրաքանչյուրի տևողությունը 6-9 ժամ էր (ծովային

[2] Տես *A. Sadik, T. Cooper.* Iraqi Fighters: 1953-2003: Camouflage & Markings. Casemate Publishers, 2008, PP. 93–97:

[3] Տես “Assault on Al-Wallid”. “Imperial Iranian Air Force” (http://www.iiaf.net/stories/warstories/s1.html):

տեղակայման թևավոր հրթիռների (ԹՀ) երկու համազարկ, օդային տեղակայման ԹՀ-ների մեկ արձակում և մի քանի ավիացիոն ռմբանետում):

Քանի որ արձակված 415 հրթիռից 325-ը ծովային ԹՀ էին, կարելի է եզրակացնել, որ օպերացիան պլանավորվել էր (հարվածների հերթականությունը որոշվել էր) ըստ ռազմանավերի հնարավորությունների և ԹՀ-ների արձակման ու հրթիռային շարակարգերի հերթականության, ՈԾՈՒ-ի խմբավորման ղեկավարման համակարգի հնարավորությունների առավելագույնս օգտագործման սկզբունքի:

Հարվածին մասնակցող ինքնաթիռների և ԹՀ-ների թվային հարաբերակցությունը որակապես այլ էր «Փոթորիկ անապատում» օպերացիայում 1/10-ից հասնելով 1/1,3-ի:

Օպերատիվ արվեստի տեսության և պրակտիկայի տեսանկյունից առավել կարևոր ու հետաքրքրական են ռազմական գործողությունների վարման նոր միտումները. օպերացիան սկսվել է առանց Իրաքի սահմանի մոտ նախօրոք լրացուցիչ ուժեր ծավալելու[4]: Ընդ որում, ծովային, օդային ու ցամաքային խմբերի աճումը կատարվել է զանգվածային հրթիռաավիացիոն հարվածներին զուգընթաց: Գործնականում երկու օրում տարածաշրջանում ծավալվել են ուժեր ու միջոցներ, որոնք թվաքանակով բազմակի գերազանցում էին օպերացիայի սկզբում եղածներին: Հետևաբար, նվազել կամ ընդհանրապես վերացել է զորախմբավորումների հարմարման անհրաժեշտությունը (ժամանակը), կատարելագործվել են ուժերի կուտակման միջոցները: Առաջին հարվածը հասցվել է այն ուժերով ու միջոցներով, որոնք այդ պահին տեղում էին: Օրինակ՝ իրաքցիների համար լրիվ անսպասելի էին հրթիռների առաջին արձակումները և ինքնաթիռների թռիչքները: Եվ առաջին հարվածը դարձել է ամենաարդյունավետը: Սա պայմանավորված էր երկու հանգամանքով. նախ՝ իրաքյան ուժերն անզգույշ էին, ապա՝ դեռ ոչ այնքան բարձր մակարդակի էին շարժական ու նոր դիրքեր զբաղեցրած նշանակետերի հայտնաբերման և խոցման ամերիկյան հարվածային միջոցները: Ակնհայտ է, որ մարտական պատրաստ խմբերով ռազմական գործողությունների վարման այդպիսի ձևերը գերակայելու են ոչ միայն տվյալ մասշտաբի ձեռնարկումներում[*]:

Աճում է գերճշգրիտ ՕՀՄ-ների կիրառման ծավալը: «Փոթորիկ անապատում» օպերացիայում կառավարվող ավիառումբերը կազմում էին 8 տոկոս (օդային ԹՀ առհասարակ չօգտագործվեց), իսկ «Անապատի աղվես» օպե-

[4] Տես *А. А. Кольтюков, А. Ф. Маслов и др.* Военное искусство в локальных войнах и в вооруженных конфликтах. М., 2009, с. 69:

[*] Առհասարակ պատերազմներում սա հեղափոխական երևույթ է: Առաջին հարվածը հասցնել առանց նախապես ուժերի կուտակման հնարավոր է միայն համապատասխան ուժերի առկայության դեպքում, որը մինչ օրս՝ հատկապես իր սահմաններից շատ հեռու, ի վիճակի է եղել իրականացնելու միայն ԱՄՆ-ը: Այս երևույթը, նախկինում ունենալով որոշակի դրսևորումներ, այստեղ կիրառվել է օպերատիվ ու մարտավարական բոլորովին նոր մակարդակով և նոր խոսք դարձավ հետագա պատերազմների համար:

ռացիայում՝ 70 տոկոս: Հետագայում այս ցուցանիշն ապահովվեց նաև Հարավսլավիայում և Իրաքում՝ 2003 թ.:

Հակառակորդի կրակային խոցման ժամանակ աճում է անօդաչու թռչող միջոցների կիրառումը: Իրաքի օբյեկտներին գերճշգրիտ ՕՀՄ-ներով հասցված 555 հարվածների 80 տոկոսը կատարվել է դրանցով:

Օդային հարձակողական օպերացիաները կիրառվող միջոցների տեսակների շնորհիվ դառնում են ավելի համալիր, որով նաև մեծանում է հարվածների ինտենսիվությունը: Այսպես՝ 1998 թ. դեկտեմբերին միաժամանակյա միասնական պլանով կիրառվում էին ծովային և օդային ԹՀ-ներ, հեռավոր օդանավակայաններից մարտավարական և ավիակիրներից՝ տախտակամածային օդուժը՝ ռադիոէլեկտրոնային պայքարի ինքնաթիռների և ինքնաթիռ-հետախույզների գործուն աջակցությամբ: Այսինքն՝ հարվածներին մասնակցում էին մի քանի զորատեսակի պատկանող տարատեսակ միջոցներ: Հարվածների էին ենթարկվել 97 թիրախներ, որոնցից 32-ը ՀՕՊ-ի դիվիզիոններ և կառավարման կենտրոններ էին, 20-ը՝ հրամանատարական կետեր, 18-ը՝ այլ զորակայաններ, 11-ը՝ զենքի արտադրությանն ու պահմանն առնչվող թիրախներ, 9-ը՝ հանրապետական գվարդիայի օբյեկտներ, 6-ը՝ օդանավակայաններ, 1-ը՝ արդյունաբերական օբյեկտ[5]:

ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ինքնաթիռները միասին անկորուստ կատարել են 650 մարտական թռիչք և, ինչպես նշեցինք, արձակել 415 ԹՀ[6]: Մարտավարական կործանիչների մեկ մարտապաշարը հաշվվում է չորս ԹՀ, քանի որ, որպես կանոն, ինքնաթիռները կրում են մինչև չորս միավոր կես տոննանոց ռումբեր կամ նույն քաշն ունեցող այլ հրթիռներ: Սակայն մարտական թռիչքների մոտ մեկ երրորդը համարվում է մարտական ապահովման թռիչք, այսինքն՝ առանց ԹՀ-ների: Ուստի 97 թիրախներին հարվածել են մոտ 2000 ԹՀ-ով: Միջին խտությունն ստացվում է՝ մեկ թիրախին մոտ 20 ԹՀ: Իհարկե, դրանք հավասարաչափ չեն բաշխվել, հիմնական թիրախների վրա արձակվել է մոտ 50 ԹՀ, ինչը զուտ մարտական լիցքի առումով կազմում է 20–25 տոննա:

Այս հարվածներից հետո 97 թիրախներից 43-ը լիովին ոչնչացվել էին կամ կրել մեծ ավերածություններ, 30 թիրախներ կրել էին միջին վնասներ, իսկ 12-ը՝ թեթև կորուստներ[7]: Այս հաջողությունն ուներ մի քանի պատճառներ.

[5] Տես *Mark Conversino.* Operation Desert Fox: Effectiveness with Unintended Effects. “Air & Space Power Journal”, July 2005 (http://www.airpower.maxwell.af.mil/airchronicles/cc/conversino.html):

[6] Տես “Secretary of Defense and Chairman of the Joint Chiefs of Staff Briefing on Operation Desert Fox”, 19 December 1998 (http://www.defenselink.mil/transcripts/transcript.aspx?transcriptid=1791):

[7] Տես *В. Степанов.* ««Лиса в Пустыне» 1998 года» (http://gazetam.ru/no120501/st10.htm):

1. առաջին անգամ մեկ կարճատև գործողության ժամանակ կիրառվեցին այդքան խիտ հարվածներ,
2. կիրառված ՕՀՄ-ների 70 տոկոսը գերճշգրիտ էին,
3. որոշակի կանոններով կատարված հարվածների բարձր մակարդակի կազմակերպվածության (ՌԷՊ-ի և այլ միջոցների կիրառություն) շնորհիվ իրաքյան ՀՕՊ-ի հակազդեցությունը չափազանց թույլ էր (տվյալ կանոններին կանդրադառնանք ստորև):

Եվ չնայած այս բոլոր նախադրյալներին, որոնք հարձակվողի համար ստեղծում էին շատ բարենպաստ պայմաններ, հարվածների արդյունավետությունը, մեղմ ասած, իդեալական չէր: Սակայն, ինչպես պարզվում է, դա նորմալ պրակտիկա է, և իդեալական հարվածներ առհասարակ չեն լինում:

Դիտարկենք ևս մի քանի օրինակ:

2017 թ. ապրիլի 7-ին, տեղի ժամանակով առավոտյան 3.42-ից մինչև 3.56 Միջերկրական ծովում՝ Սիրիայի ափերից մոտ 1500 կմ դեպի արևմուտք, գտնվող ամերիկյան ՌԾՈՒ-ի «Ռոս» էսկադրային ականակրից արձակվել է «ԲՋՄ-109 Թոմահոուկ» տեսակի 36, իսկ «Փորտեր» էսկադրային ականակրից՝ 23 թևավոր հրթիռ: Հրթիռները, ըստ ռուսական պաշտոնական տեղեկատվության, արձակվել են Կիպրոսի մոտակայքից, անցել են ռուսական Տարտուս զորակայանի մոտով ու հասել Սիրիայի Հոմս քաղաքից ոչ հեռու տեղաբաշխված Աշ-Շայրաթ ռազմական օդանավակայան: Այլ վարկածով՝ հրթիռներն արձակվել են Իսրայելի ափերից և, մեծ թռիչքային շրջան անցնելով, մտել են Լիբանանի տարածք, հետո շրջանցել Դամասկոսը և արևելքից հարվածել նշված զորակայանին:

Հրթիռներից մեկը տեխնիկական պատճառով տեղ չի հասել: Որպես հրթիռակոծման արդյունք՝ ոչնչացվել են Աշ-Շայրաթում կայանված ռազմական ինքնաթիռներ, ինչպես նաև ռադիոտեղորոշումային կայաններ, զինամթերքի պահեստներ և հանգարներ: Հոմսի նահանգապետը հայտնել է, որ շրջակա գյուղերից մեկում կան զոհված քաղաքացիական անձինք:

ԱՄՆ-ի պաշտոնական տվյալներով՝ 59 «Թոմահոուկներից» 58-ը հասել են նպատակին, ինչի հետևանքով ոչնչացվել է մոտ 20 ինքնաթիռ, տարատեսակ հրթիռներ, ինչպես նաև վառելիքի 7 ռեզերվուար, զինամթերքի 10 պահեստ, 13 երկտեղանի հանգար, ստորգետնյա հրամանատարական կետ, ինչպես նաև բալիստիկ հրթիռների արձակման իրանական «Ֆաթեհ-110» կայաններ: Ըստ իսրայելական «Իմիջսետ Ինտերնեյշենել» *(Imagesat International, ISI)* փորձագետների գնահատման և արբանյակային նկարների՝ ոչնչացել է 44 թիրախ, մնացածը կրել են տարբեր աստիճանի վնասներ: Այսինքն՝ հարվածի արդյունավետությունը կազմում էր մոտ 80-90 տոկոս, ինչը շատ բարձր է, սակայն կրկին իդեալական չէ: Իդեալական չէ անգամ չեզոքացված ՀՕՊ-ի պարագայում, որը չկարողացավ հակազդեցություն գործել հարվածներին: Հարվածից կարճ ժամանակ անց սիրիական ինքնաթիռներն այդ օդանավակայանից կատարում էին մարտական թռիչքներ:

Հրթիռների համազարկի խտությունը հարվածների վերջին քսան տարվա չափանիշներով միջին էր՝ ընդհանուր ռազմավարական մակերեսային նշանակետերին 20-25 տոննա մարտական լիցք:

2018 թ. ապրիլի 14-ի վաղ առավոտյան ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան միասին համակարգված օդային հարված հասցրին Սիրիայի տարածքում գտնվող որոշ թիրախների: Այդ թիրախները, ըստ ամերիկյան կողմի, քիմիական արդյունաբերության և բազավորման շինություններ էին: Ըստ ամերիկյան բանակի շտաբների պետերի կոմիտեի ներկայացուցիչ, գեներալ-լեյտենանտ Քենետ Մակքինզիի՝ դաշնակիցները երեք հիմնական թիրախների վրա արձակել են 105 ԹՀ, որոնք բոլորն էլ խոցել են իրենց թիրախները[8]:

30 միավոր «Թոմահոուկ» ԹՀ արձակել էր ամերիկյան «Մոնտերեյ» հածանավը, 7 միավոր այդպիսի ԹՀ՝ ամերիկյան «Լաբուն» էսկադրային ականակիրը: Երկու նավն էլ գտնվելիս են եղել Կարմիր ծովում: 23 նմանատիպ ԹՀ արձակել էր ամերիկյան «Հիգինս» էսկադրային ականակիրը Պարսից ծոցից, 6 հատ էլ ամերիկյան «ՍՍՆ Ձոն Ուոռներ» ատոմային սուզանավը՝ Միջերկրական ծովից, և 3 միավոր «ՍԿԱԼՊ Նևալ» տեսակի ԹՀ-ներ՝ ֆրանսիական «Դ653 Լանգեդոկ» ֆրեգատը դարձյալ Միջերկրական ծովից:

Ամերիկյան երկու «Բ-1Բ Լանսեր» ռմբակոծիչներն արձակել են 19 միավոր «էյԶՄ-158Բ ԶէյՍՍՄ-ԻԱ» ԹՀ, բրիտանական «Տոռնադո» կործանիչները՝ 8 միավոր «Ստորմ Շեյդոու» տեսակի ԹՀ, իսկ ֆրանսիական «Ռաֆալ» կործանիչները՝ 9 միավոր «ՍԿԱԼՊ ԻԶ» տեսակի ԹՀ:

Հիմնական հարվածը հասցվել է Դամասկոսի Բարզահ կոչվող քիմիական լաբորատորիա-արտադրամասին՝ 76 հրթիռի կիրառմամբ, որից 57-ը՝ «ԲիԶիՄ-109» հրթիռներ: Ըստ ամերիկյան գեներալի՝ Շինշար կոչվող զորակայանին հարվածել են 22 ԹՀ, որից ինը՝ ամերիկյան, ութը՝ բրիտանական, իսկ հինգը՝ ֆրանսիական: Հատկանշական է, որ թիրախները ենթարկվել են համակարգված, բարդ ու բարձր մակարդակի ներդաշնակությամբ հարվածների, այսինքն՝ մի քանի միջոց հարվածել են միևնույն թիրախին: Հարվածները հասցվել են նաև աշխարհագրորեն տարբեր վայրերից: Ամերիկյան նավերը հարվածել են ինչպես Միջերկրական ծովից, այնպես էլ Կարմիր ծովից, իսկ ինքնաթիռների թռիչքամոտեցման ուղիները հստակորեն հայտնի չեն: Այդպիսի հարվածները կազմակերպման առումով բավական բարդ են, հատկապես, եթե հարվածողները տարբեր պետությունների տարբեր միջոցներ են: Մյուս կողմից՝ այդօրինակ հարվածներին հակադարձելը ավելի դժվար է, քանի որ հարվածների ուղղությունները շատ լայն տիրույթում են, միջոցների բնութագրերը նույնը չեն և այլն:

Այս տվյալներին հակառակ ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ պետի տեղակալ, գլխավոր

[8] Տես “Syria air strikes: Trump hails “perfect” mission”. “BBC News”, 14 April 2018 (http://www.bbc.com/news/world-middle-east-43767156):

օպերատիվ վարչության պետ, գեներալ-գնդապետ Սերգեյ Ռուդսկոյի հաստատմամբ՝ արձակված 103 ԹՀ-ից սիրիական ՀՕՊ-ը խոցել է 71-ը՝ օգտագործելով ինչպես նոր ռուսաստանյան, այնպես էլ հին խորհրդային համալիրներ[9]: ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ հայտարարության համաձայն՝ ծախսվել է 112 հակահրթիռ: Հատկանշական էր, որ հատուկ գովեստով խոսվել է «Պանցիր Ս-1» ԶՀՀ-ի մասին, որը իբր 25 հակահրթիռով խոցել էր 23 ԹՀ և «Բուկ» ԶՀՀ-ի մասին, որը իբր 29 հակահրթիռով խոցել է 24 ԹՀ10: Ըստ ռուսական ԶՈՒ-ի ԳՇ տվյալների՝ օդում ԹՀ-ներ խոցել են սիրիական ՀՕՊ-ի բոլոր տեսակները բացառությամբ «Ս-200» համալիրի: Բացի առաջին երկու համալիրներից մնացած համալիրների հաջողությունները խիստ կասկածելի են, քանի որ դրանք ի սկզբանե նախատեսված չեն ցածր թռչող թիրախներ խոցելու համար:

Հենց այս խոսքերից հետո հայտնվեց Դամասկոսի լրիվ ոչնչացված գործարանային համալիրի նկարը, որի կողքին բարձրահարկ շենքեր են, և ոչ մեկը չի տուժել: Այսինքն՝ հասցվել է իրոք գերճշգրիտ հարված: Կան նաև տարբեր տեսանյութեր, որտեղ հստակ կերպով երևում են անդադար հարվածներն ու պայթյունները, սակայն ԹՀ-ների խոցման հստակ ապացույցներ չկան: Դրան հակառակ, ԱՄՆ-ի բանակի գեներալը նշել է, որ սիրիական ՀՕՊ-ը մոտ քառասուն անգամ պատասխան կրակ է բացել, սակայն, որպես կանոն, արդեն թիրախների խոցումից հետո[11]: Սիրիական տարածքին հասցված 2017 թ., 2018 թ. հարվածներից հետո ՌԴ ՊՆ-ն պաշտոնապես նշել է սիրիական ՀՕՊ-ի միջոցով մեծաթիվ ԹՀ-ների խոցման մասին, սակայն երկու դեպքում էլ ոչ մի ապացույց չի ներկայացրել անգամ մեկ ԹՀ-ի խոցման վերաբերյալ: ԹՀ-ների խոցումից հետո դրանք լիովին չեն ոչնչանում և մնում են մեծ բեկորներ, քանի որ ԹՀ-ները թռչում են ցածր և ոչ մեծ արագությամբ: Բեկորների առկայության դեպքում դրանք հեշտությամբ կարելի էր ցուցադրել, ինչը ժամանակին արել են իրաքյան և հարավսլավական բանակները:

Սրան պետք է գումարել և այն հանգամանքը, որ արձակված ԹՀ-ների հետ մեծ հավանականությամբ կիրառվում են նաև ՀՕՊ-ի հաղթահարման համար նախատեսվող կեղծ թիրախներ: Այդ միջոցները ՀՕՊ-ի կայանների համար սովորական ԹՀ-ներ են, և չի բացառվում նաև դրանց խոցումը, սակայն դրանից հետո այդ ՀՕՊ-ի միջոցները ճնշվում են և ի վիճակի չեն լինում խոցելու իրական ԹՀ-ներին: Այնպես որ, չի բացառվում այսօրինակ սցենարը, որն ավելի շատ օրինաչափություն է, քան բացառություն:

Այդ են հուշում նաև հետևյալ փաստերը: Բրիտանական և ֆրանսիական

[9] Տես *Роман Захаров.* В Минобороны показали карты нанесения ударов США по Сирии, 14.04.2018 (https://tvzvezda.ru/news/forces/content/201804141225-svm8.htm):

[10] Տես *Михаил Фомичев.* У победы сирийской ПВО над американскими ракетами есть объективные критерии. «Взгляд», 17 апреля 2018 (https://vz.ru/politics/2018/4/17/918087.html):

[11] Տես “Syria air strikes: Trump hails “perfect” mission” (http://www.bbc.com/news/world-middle-east-43767156):

ԶՈՒ-երի ներկայացուցիչները նշել են, որ, բացի հարվածային կործանիչներից, եղել են նաև ուղեկցող կործանիչներ, որոնց առաջադրանքը չի մեկնաբանվում: Հասկանալի է, որ դրանք եղել են ավելի շատ ՀՕՊ-ի հաղթահարման գործառույթներ կատարողներ, քանի որ դա է պահանջում մարտավարությունը: Այս առումով հասկանալի է դառնում նաև ամերիկյան երկու «Բ-1Բ» ռմբակոծիչներից՝ ընդամենը 19 միավոր «ՁԱՍԱՄ-ԻԱ» ԹՀ-ների արձակումը[12], թեև սովորաբար տվյալ ռմբակոծիչներից յուրաքանչյուրը կրում է 24 միավոր այդպիսի հրթիռ: Ուստի այդ փոքր թիվը կարող է ևս բացատրվել առաջին շարակարգից կեղծ թիրախների արձակմամբ: Փաստն այն է, որ հարվածը սահմանափակ թիրախների հաշվարկով հասցվել է բավական մեծ խտությամբ, ինչին դիմակայելը շատ դժվար էր: Սիրիական ՀՕՊ-ը իր անկենսունակությունը բացահայտում է հաճախակի հասցվող իսրայելական հարվածներին պատասխանելու անզորությամբ, ինչը շատ լավ գիտեն և ուսումնասիրել են նաև հրեական պետության ամերիկյան գործընկերները: Եթե սիրիական ՀՕՊ-ը ինքնին լուրջ ուժ լիներ, ապա դասական դարձած կանոնների համաձայն՝ ամերիկյան օդային հարվածի առաջնային թիրախում կլինեին ՀՕՊ-ի դիվիզիոններն ու հրամանատարական կետերը և հետո միայն՝ քիմիական թիրախները: Այս հարվածը հերթական անգամ ապացուցում է օդային հարվածների վեց կետանոց բանաձևի արդարացիությունն ու կենսունակությունը[13]:

Ակնհայտ է մի բան, որ անգամ ոչ մեծ խտությամբ և ոչ մեծաթիվ թիրախներին մոտավորապես միջին թվով ԹՀ-ներով հասցվող հարվածները կարող են լինել ոչ շատ արդյունավետ և կասկածի ենթարկվել: Փաստացի՝ նման հարվածների հաջողության կարևոր պայմաններից է հարվածների մեծ խտությունը, հատկապես՝ երբ խոսքը ոչ գերճշգրիտ միջոցներով հարվածների մասին է: Դա լավագույնս հաստատվում է ինչպես փորձով, այնպես էլ խորհրդային ավիացիայի կիրառման մարտական փաստաթղթերով: Խորհրդային Միությունում գրոհիչ ավիացիայի կիրառման մարտական կանոնադրությունում, որը հաստատել է ՊՆ-ն, գրված է, որ համազորային կամ տանկային վաշտին 0,8 % հավանականությամբ նշանակալի կորուստներ պատճառելու համար հարկավոր է, որ գրոհիչ ինքնաթիռների գունդը կամ դիվիզիան կազմակերպեն 18 ինքնաթիռով մարտական թռիչքներ, ընդսմին յուրաքանչյուր ինքնաթիռը զինված լինի 6 միավոր 500 կիլոգրամանոց տարատեսակ ռումբերով[14]: Նույն նշանակետերը ոչնչացնելու համար սովորաբար անհրաժեշտ են արդեն երկու անգամ ավելի շատ թռիչքներ և զինամթերքի ծախս: Վերը բերված օրինակներում ամերիկյան, իսրայելական և երբեմն նրանց դաշնա-

[12] Տես *Aaron Mehta, Tara Copp.* Coalition launched 105 weapons against Syria, with none intercepted, DoD says, 14.04.2018 (https://www.militarytimes.com/pentagon/2018/04/14/us-launched-105-weapons-against-syria-with-none-intercepted-dod-says/):

[13] Տես *A. Hovhannisyan.* About Wars of the Future. “Indian Defence Review”, July-September 2016, Vol 31, N 3:

[14] Տես «Тактика штурмовой авиации. Дивизия-Полк». М., 1990, сс. 212–213:

կիցները, օդուժի միջոցով հասցնում են համակարգված ու բարդ հարվածներ, որոնք ունենում են բարձր արդյունավետություն, սակայն այդ հարվածները կարող էին լինել ավելի արդյունավետ, եթե դրանց գումարվեին նաև այլ միջոցներով հասցված հարվածները:

Այժմ քննարկենք օդային հարվածների այն դեպքերը, երբ դրանք հասցվում են միայն բալիստիկ միջոցներով: Երկրորդ աշխարհամարտից հետո բալիստիկ հրթիռները ամենաշատը կիրառվել են Իրան-իրաքյան պատերազմի ժամանակ: Թեև Իրանը ԱՄՆ-ից դեռ վաղուց ստացել էր «ՄՁՄ-52 Լանս» տեսակի մարտավարական բալիստիկ հրթիռներ՝ այս պատերազմում նման հրթիռներ առաջինը կիրառեց Իրաքը[15]: Դրանք խորհրդային արտադրության «Պ-17» (8Կ14 «Սկադ-Բ») օպերատիվ-մարտավարական հրթիռներն էին: Իրանը կարճ ժամանակ անց այդ հրթիռներից ստացավ Լիբիայից, հրթիռներ և տեխնոլոգիական օգնություն՝ Չինաստանից ու Հյուսիսային Կորեայից: Տարբեր տվյալներով՝ մինչև պատերազմի ավարտը Իրանը հիմնականում Արևմուտքի օգնությամբ յուրացրեց այդ խորհրդային հրթիռի հիման վրա ստեղծված «Շահաբ-1» իրանական փոփոխակի արտադրությունը[16]: Մի քանի տասնյակ հրթիռներ արձակվել են իրաքյան քաղաքների ուղղությամբ[17]: Այդ խորհրդային հրթիռի հիմքի վրա իր փոփոխակներն էր մշակում նաև Իրաքը:

Կիրառության առումով խորհրդային «Պ-17» օպերատիվ-մարտավարական հրթիռներն աշխարհում առաջին տեղն են գրավում: Այս հրթիռն ստեղծվել է 1950-ական թվականների կեսին, սակայն 1970–1980-ական թվականներին դարձել է թույլ զարգացած երկրների հրթիռային տեխնոլոգիաների զարգացման հիմնաքարը: Ընդհանուր հաշվով՝ հիմնականում «քաղաքների պատերազմի» ժամանակ երկու կողմերը միմյանց վրա արձակել են ավելի քան 600 հրթիռ[18]: Սակայն այս թվաքանակի կիրառությունը ռազմական գործողությունների ընթացքի վրա չի գործել որևէ էական ազդեցություն, իսկ խաղաղ բնակչությունից զոհվածներն էլ շատ չեն եղել:

Բալիստիկ հրթիռների կիրառության հաջորդ նշանակալի դեպքը տեղի է ունեցել Իրաքում՝ Ծոցի պատերազմի ժամանակ, երբ Իրաքյան բանակն արդեն հարվածներ էր հասցնում նշված խորհրդային հրթիռների ձևափոխված՝ «Ալ-Հուսեին», «Ալ-Աբաս» տարատեսակներով:

Տարբեր տվյալներով՝ իրաքցիները Սաուդյան Արաբիայի և Իսրայելի ուղղութ-

[15] Տես *А. Фролов*. Иран: для чего ему ракеты? «Индекс безопасности», 2007, т. 13, № 2(82):

[16] Տես “Procurement, Iran”. “Jane’s Sentinel Security Assessment – The Gulf States”, 24 November 2004; *Robin Hughes.* Iran’s ballistic missile developments – long-range ambitions. “Jane’s Defense Weekly”, 13 September 2006:

[17] Տես ““SCUD-B” variants”. “Jane’s Strategic Weapons Systems”, 15 June 2004; “Offensive Weapons-Unclassified Projects, Iran”. “Jane’s Strategic Weapons Systems”, 26 January 2005:

[18] Տես *Duncan Lennox*. Iran’s ballistic missile projects: uncovering the evidence. “Jane’s Intelligence Review”, 1 June 1998:

յամբ արձակել են 83-98 հատ իրաքյան տարատեսակներ[19]: Այս հրթիռներով հասցված վնասները մեծ չեն եղել, ուշադրության արժանի միակ դեպքը եղել է ամերիկյան զորակայանին հասցված հարվածը, որի հետևանքով զոհվել են 28 և վիրավորվել 100 զինվորական: Բազմազգ ուժերը ևս այս պատերազմում առաջին անգամ կիրառեցին նոր ամերիկյան «ԱԹԱԿՄՍ» մարտավարական և օպերատիվ-մարտավարական բալիստիկ հրթիռներ՝ կարևոր նշանակետերի ուղղությամբ արձակելով 32 հրթիռ[20]: Հենց այդ ժամանակ մարտական պայմաններում տեղի ունեցավ պատմության մեջ առաջին մեծ հակահրթիռային մենամարտը, որն ըստ էության ժամանակային ընդհատումներով շարունակվում է հիմա էլ Սաուդյան Արաբիայի և հուսիների միջև:

2003 թ. իրաքյան երկրորդ պատերազմի ժամանակ ամերիկյան բանակը կիրառել է մի քանի հարյուր «ԱԹԱԿՄՍ» օպերատիվ-մարտավարական հրթիռ. «Մ-270» ՀԿՈՀ-ների ընդհանուր արձակումների 40 տոկոսը կատարվել է այս հրթիռներով, և միայն 60 տոկոսը՝ սովորական 227 մմ-անոց հրթիռներով[21]: Սա կարևոր թիվ է՝ քանի որ դրանք բոլորը գերճշգրիտ հրթիռներ էին, և արձակումները եղել են համակարգված օդային հարվածների շրջանակում, այն է՝ հասցվել են այլ ՕՀՄ-ների հետ զուգակցությամբ և/կամ նույն թիրախների ուղղությամբ: Արձակումների մի զգալի մասը եղել է հակառակորդի օջախային ՀՕՊ-ը ճնշելու համար: Այսինքն՝ բալիստիկ հրթիռներով այս հարվածը առարկայորեն տարբերվում է այլ օրինակներից, քանի որ տվյալ հրթիռները գերճշգրիտ են և մեծ թվով ու համակարգված կերպով արձակվել են ՕՀՄ-ների կիրառմամբ: Այդպիսի գերճշգրիտ, երբեմն առանձին կետային հարվածներ հասցրել է նաև ռուսաստանյան բանակը՝ Չեչենական, ինչպես նաև ռուս-վրացական պատերազմների ժամանակ: Դրանց արդյունավետության մասին ևս կան հակասական տվյալներ: Միակ դեպքը, երբ այդպիսիք համարվել են քիչ թե շատ արդյունավետ, Փոթիի նավահանգստին հասցված համակարգված ծովային, օդային և հրթիռային հարվածներն են: Ըստ որոշ տեղեկությունների՝ այս հարվածի ժամանակ կիրառվել են նաև ռուսաստանյան՝ նոր սերնդի օպերատիվ մարտավարական «9Կ720 Իսկանդեր» հրթիռներ[22]:

Ըստ որոշ տեղեկությունների՝ բավական մեծաթիվ բալիստիկ մարտավա-

[19] Տես *М. Первов.* Отечественное ракетное оружие. 1946-2000. М., 1999, сс. 20–112; *Е. Трембач, К. Есин, А. Рябец, Б. Беликов.* «Титан» на Волге. От артиллерии к космическим стартам. Под общей ред. В. Шурыгина. Волгоград, 2000, сс. 23–86; *А. Широкорад.* Энциклопедия отечественного ракетного оружия. 1817-2002. М., 2003, сс. 124–443:

[20] Տես “Lockheed Martin (LTV) MGM-140 ATACMS”. “Directory of U.S. Military Rockets and Missiles” (http://www.designation-systems.net/dusrm/m-140.html):

[21] Տես *C. L. Rogers.* Army Tactical Missile System: Revolutionary Impact on Deep Operations. Thesis of Master of Military Art and Science. Fort Leavenworth, 2004, P. 73; *W. Freeman.* Study of ammunition consumption. Thesis of Master of Military Art and Science. Fort Leavenworth, 2005, P. 29:

[22] Տես ««Искандеры» в войне 080808», 27.01.2012 (https://militaryrussia.livejournal.com/69818.html#cutid1):

րական հրթիռներ են կիրառվել նաև Ուկրաինայի արևելքում ծավալված պատերազմում: Տվյալներ կան ավելի քան 40-50 միավոր 9Կ79/9Կ79-1 «Տոչկա», «Տոչկա-Ու» հրթիռների արձակումների մասին, սակայն մանրամասն ուսումնասիրությամբ փաստվել է, որ դրանց արդյունավետությունը բարձր չի եղել, հաճախ այդ հրթիռներն անգամ որևէ վնաս չեն պատճառել[23]: Առհասարակ հրետանային միջոցների, այդ թվում՝ մեծ տրամաչափի ռեակտիվ համակարգերի, կիրառության ժամանակ ևս անհրաժեշտ է մեծաթիվ հրթիռների արձակում: Անգամ «9Կ58 Սմերչ» համազարկային կայանքների մեծ տրամաչափի՝ 243 կգ մարտական մասով, «9Մ55Կ» հրթիռների կիրառության դեպքում մեկ հեկտարի վրա տեղաբաշխվող տարբեր տեսակի նշանակետերը ոչնչացնելու համար հարկավոր է 30-50 հրթիռ, եթե թիրախի հեռավորությունը 60-70 կմ է[24]: Հեռահարությունը կիսելիս հրթիռների ծախսը ևս կիսվում է, քանի որ ոչ գերճշգրիտ հրթիռների պարագայում ցրումը հեռավորության համեմատ աճում է: Հաշվի առնենք, որ այս հրթիռների մարտական մասերը մարտավարական և օպերատիվ-մարտավարական բալիստիկ հրթիռների մասերից պակաս են ուղիղ երկու անգամ: Այսինքն՝ այս հրթիռների համազարկով լուծվող մարտական խնդիրները համադրելի են բալիստիկ հրթիռներով լուծվող խնդիրների հետ, եթե ուղղակի երկու-երեք «9Մ55Կ» համարենք մեկ 9Կ79/9Կ79-1 «Տոչկա», «Տոչկա-Ու» կամ «9Կ720 Իսկանդեր»: Համեմատությունն ու համադրումները կատարվում են մարտական մասերով և հեռահարությամբ:

Այս առումով հետաքրքրական են նաև հրետանային դասական միջոցներով հասցված հարվածները, որոնք արդեն դարձել են գերճշգրիտ և կարող են լուծել ինչպես առանձին մարտական խնդիրներ, այնպես էլ հանդես գալ որպես համակարգված օդային հարվածների մի մասը:

2003 թ. իրաքյան երկրորդ պատերազմի ժամանակ ամերիկյան բանակի մեքենայացված 3-րդ դիվիզիան իր հրետանային միջոցներից արձակել էր գերճշգրիտ 155 մմ-անոց ավելի քան 120 արկ[25]: ՕՀՄ-ների այս մանրաչափ միջոցները իսկական հայտնություն էին և կարող են նոր հեղափոխություն կատարել մարտավարական ու օպերատիվ մակարդակում: Դրանցով հասցվում են նաև կետային հարվածներ հակառակորդի ՀՕՊ-ի միջոցներին: Դրանով հրետանու անգամ մանրաչափ միջոցները ինտեգրվում են ընդհանուր ՕՀՄ-ների համակարգում:

Վերը բերված օրինակները ցույց են տալիս, որ զանգվածային ու համակարգված օդային հարվածներից լիարժեք պաշտպանություն այսօր դեռ

[23] Տես *Михайло Жирохов.* Каким последним аргументом владеет Украина в войне против гибридов Путина, 7 мая 2016 (https://www.depo.ua/rus/war/-tochka-u-samyy-moshchnyy-argument-06052016120300); ««Точки» над Ü». «Военное обозрение», 23 мая 2017 (https://topwar.ru/116246-tochki-nad-u.html):

[24] Տես «Боевые действия формирований РСЗО «Смерч»». Военный Артиллерийский университет. СПб., 2002, сс. 8–9:

[25] Տես *В. Целуйко.* Война в Ираке. «Чужие войны». Под ред. Р. Пухова. М., 2012, с. 211:

չկա: Սակայն հնարավոր է որոշակի միջոցառումներով նվազեցնել այդ հարվածներով պատճառվող վնասները: Առաջնահերթ են նշանակետի և դրա առանձին տարրերի ապակենտրոնացումը և քողարկիչ միջոցների լիարժեք ձեռնարկումը: Մասնավորապես՝ օդանավակայաններում, մեծ զորակայաններում և ռազմավարական նշանակությամբ այլ օբյեկտներում հարկավոր է խոցման ենթակա հիմնական առարկաները ապակենտրոնացնել՝ հեռացնել միմյանցից, անվտանգության կանոնների համաձայն ստեղծել հողային, ջրային և այլ պատնեշներ ու վնասները նվազարկող այլ սարքավորանք: Հույժ կարևոր է ճիշտ կազմակերպել քողարկումը, առաջին հերթին՝ ստեղծել կաղապարվածքներ, այսինքն՝ օբյեկտների, այդ թվում՝ ռազմական տեխնիկայի, շինծու նմանակներ, ընդսմին ոչ միայն տեսանելի, այլև ռադիոտիրույթներում[26]: Այսօր գրեթե անհնար է թաքցնել գործողություններն ու միջոցները, դրա համար պետք է ոչ թե ուղղակի քողարկել իրական միջոցները, այլ թաքցնել կեղծերի ստվար շարքերով: Դա հարկավոր է անել հնարամտորեն և իրականությանը հնարավորինս նման տարբերակներով:

Մենք արդեն հիմնավորել ենք, որ համակարգված ու խիտ օդային հարվածներից լիարժեք պաշտպանությունը գրեթե անհնար է: Հարվածների դեպքում կան որոշակի կանոններ, որոնց պահպանման դեպքում կարելի է հաղթահարել ցանկացած պաշտպանություն: Կանոնները հետևյալն են.

1. Օդային խմբավորումն ի սկզբանե պետք է 50–60 տոկոսով կազմված լինի հարվածային ԹԱ-երից և 40–50 տոկոսով՝ ապահովող հատուկ ԹԱ-երից: Դրանց թվում են առաջին հերթին հետախուզական, օդային կառավարման և ՌԷՊ-ի ԹԱ-երը: Այս տոկոսը կարող է նվազել, եթե կիրառվեն նոր սերնդի այն ԹԱ-երը, որոնք նույն հաջողությամբ մեկտեղում են հարվածային և այլ գործառույթներ:
2. Առաջին հարվածների ժամանակ, քանի դեռ օդային գերազանցությունը լիովին հաստատված չէ, հարվածող միջոցների խտությունը պետք է լինի ՀՕՊ-ի համակարգերում նշանակետերի ուղեդիտման կապուղիների թվից առնվազն 1,5-2 անգամ ավելի:
3. Առաջին հարվածները պետք է լինեն էլեկտրոնակրակային՝ 1:2-ի կամ 1:1-ի հարաբերակցությամբ, այսինքն՝ ՌԷՊ-ի մեկ ԹԱ-ին բաժին հասնի 1-2 հարվածային ԹԱ:
4. Նախնական հարվածները պետք է եթե ոչ լիովին, ապա գերազանցապես կատարվեն գերճշգրիտ միջոցներով: Ցանկալի է՝ այս փուլի հարվածները ավելի շատ լինեն ԹՀ-ներով ու հեռահար անօդաչու միջոցներով, այդ թվում՝ գերճշգրիտ ՕՀՄ-ներով ու հրետանային միջոցներով[*]: Առաջա-

[26] Քողարկման եղանակների ու տեխնիկայի մասին ավելի հանգամանորեն տես *Խ. Թ. Խաչատրյան, Ա. Հ. Բայրամյան,* Հակառակորդի հետախուզությունից յուրային ստորաբաժանումների քողարկման հարցի շուրջ: «ՀԲ», 2010, հմ. 3:

[*] Օրինակ՝ մարտավարական մակարդակում հրետանային արկերի հարվածները կարող են կոտրել գնդային ՀՕՊ-ի պաշտպանությունը:

տար պետություններում մարտավարական և մասամբ օպերատիվ ՕՀՄ-ներ, ինչպիսիք են տարատեսակ անօդաչու թռչող ապարատներն (ԱԹԱ) ու հրետանային միջոցները, ունեն ՑՋ զորամիավորումները և առանձին դեպքերում նաև զորամասերը:

5. Քանի դեռ հակառակորդի ՀՕՊ-ը հիմնականում ոչնչացված չէ, մարտական թռիչքների 70–80 տոկոսը պետք է կատարել հենց այդ նպատակով: Սա կազմում է հարվածների առաջին փուլը: Հետագա փուլերում ևս այս խնդրի լուծման համար հարկավոր է մշտապես հատկացնել ուժեր և ոչ միայն մարտական թռիչքների ձևով: Ընդսմին հարկավոր է, որ հակառակորդի վրագետնյա ԶՀՀ-ներն ու կործանիչները կորցնեն իրենց մարտական հնարավորությունների մեծ մասը և չունենան կազմակերպված ու ակտիվ հակազդեցություն գործելու հնարավորություն:

Սրանք այն հիմնական, թեև ամենևին էլ ոչ բոլոր պայմաններն են, որոնց դեպքում գրեթե ամեն մակարդակի ՀՕՊ-ի վրագետնյա համակարգ կամ դրա հիման վրա ստեղծված ՌՕՈՒ–ՀՕՊ-ի միասնական խումբ կարող է ընկճվել: Ոչ մեծ նշանակետերի համար կան նաև այլ կանոններ:

Հարվածների հերթականությունն ու կազմակերպումը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.




Նկ. 1. Արդյունավետ օդային հարձակման գծապատկեր

(ՕՀՌՀՈՒՀ՝ օդային հեռահար ռադիոտեղորոշումային հայտնաբերման և ուղղորդման համակարգ)

ՀՕՊ-ը չեզոքացնելու այս եղանակը դարձել է որոշակի առումով դասական **և** գրեթե անխափան է գործում: Այս համակարգի դեմն առնելու փորձեր շատ են եղել, ամենաէական փորձը կատարել է իրաքյան ՌՕՈՒ-ն՝ Ծոցի պատե-

ռազմի ժամանակ: Հասկանալով, որ ամերիկյան ավիացիայի հարվածային խմբերը հիմնականում գործում են ՌԷՊ-ի ինքնաթիռների ուղեկցությամբ, իրաքյան հրամանատարությունը փորձել է «ՄիԳ-25» կործանիչների միջոցով խոցել հենց ՌԷՊ-ի ինքնաթիռները: Սակայն փորձը այնքան էլ հաջող չի եղել: Թեև մեկ ամերիկյան հարվածային կործանիչ վրագետնյա ՁՀՀ-ից կրակով խոցվել է, բոլոր հարձակումները խափանվել են, իսկ ամերիկյան շարակարգերում ՌԷՊ-ի ինքնաթիռների թիվն աճել է: Ներկայումս կիրառվում են նաև այլ լուծումներ.

– հարվածային և ՌԷՊ-ի ինքնաթիռները թռչում են միևնույն հարթության վրա, որպեսզի դրանց հնարավոր չլինի տարբերել,
– առաջին շարակարգի ՌԷՊ-ի միջոցները տեղադրվում են ԱԹԱ-ների վրա,
– կիրառվում են կեղծ (ապակողմնորոշիչ) թռչող թիրախներ և այլն:

Վերոնշյալ օրինակներով փաստեցինք, որ ՀՕՊ-ը, որպես կանոն, չեզոքացվում է, իսկ չչեզոքացված միջոցները մեծ արդյունավետությամբ չեն գործում, քանի որ ենթակա են մշտական ռադիոճնշման: Վերջին հատկանշական օրինակը 2018 թ. հունվարի 6-ին էր, երբ ահաբեկիչները կարողացան ինքնաշեն ու վատ որակի 13 ԱԹԱ-ներով գրոհել Սիրիայում տեղաբաշխված ռուսական ավիազորակայանի վրա: Ռուսական գերժամանակակից ՀՕՊ-ը կարողացավ չեզոքացնել դրանց մի մասը: Այս ամենից վերջնական մեկ եզրակացություն կա, որ այդպիսի նշանակետերը օդային հարվածներից պաշտպանելու լավագույն միջոցները յուրային կործանիչներն են, որոնք կիրառվում են ընդհանուր օդային գերազանցության հայեցակարգի համաձայն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես կարող ենք վերը շարադրվածից եզրակացնել, օդային հարվածները, որոնք հասցվում են անգամ ոչ շարժական, վաղօրոք հայտնի տեղաբաշխմամբ թիրախներին, կարող են արդյունավետ լինել միայն մի քանի կարևոր պայմանների ապահովման պարագայում.

- հարվածներից առաջ պետք է կատարել լավ հետախուզություն, նշանակետերի մասին տեղեկությունները պետք է լինեն ամբողջական,
- հարվածները պետք է լինեն նշանակետերի տեղորոշման, հակառակորդի ՀՕՊ-ի հաղթահարելու տեսանկյունից լավ կազմակերպված՝ հարվածների համաժամանակության ու փոխհամաձայնեցման ապահովմամբ,
- հարվածները պետք է հասցվեն զանգվածեղ համակարգված ձևով, ցանկալի է՝ միաժամանակ բալիստիկ հրթիռներով, օդուժի այլ միջոցներով և մի քանի ուղղություններից,
- եթե հարվածները չեն հասցվում գերճշգրիտ միջոցներով, և արդյունքները չեն վերահսկվում իրական ժամանակում, ապա հաճախ կարիք է առաջանում կատարելու լրացուցիչ հարվածներ,
- հարվածներն իրական ժամանակում վերահսկելու և դրա հետ մեկտեղ հակառակորդի ՀՕՊ-ը ճնշելու համար դրանք պետք է պարտադիր

կերպով ունենան ավիացիոն բաղադրիչ, գերադասելի է բազմանպատակ կործանիչներ, թեկուզ՝ ԱԹԱ-ների տեսքով, քանի որ ոչ մի այլ միջոց չի կարող և՛ համակարգել, և՛ վերահսկել, և՛ մասնակցել հարվածին ու տեղեկությունները փոխանցել վերադասին,

- առանձին, փոքրաթիվ, մեկ տեսակի հրթիռներով հասցված հարվածները չեն կարող լինել արդյունավետ, այլ միայն եղած միջոցների անիմաստ վատնում են:

**ТАКТИКА**

## ВЛИЯНИЕ ГОРНО-ЛЕСИСТОЙ МЕСТНОСТИ НА ОБОРОНУ СОЕДИНЕНИЯ

*С. Л. САРГСЯН, полковник, адъюнкт специального факультета Военного учебно-научного центра Сухопутных войск «Общевойсковая академия Вооруженных сил Российской Федерации»*

РЕЗЮМЕ

Внедрение в практику войск противоборствующих сторон новых перспективных средств вооружённой борьбы ставит перед военным искусством ряд проблем по подготовке войск и ведению боевых действий в условиях горно-лесистой местности.

Горно-лесистая местность является труднопроходимой и характеризуется большим количеством естественных препятствий, что в целом способствует созданию устойчивой обороны. Она отличается закрытым рельефом, большой крутизной склонов горных хребтов, наличием труднопроходимых скальных и каменистых почво-грунтов, неравномерно развитой гидрографической сетью, плотной лесной растительностью, наличием большого количества непроходимых препятствий и ограниченной территорией доступной местности. Слаборазвитая дорожная сеть зачастую исключает возможность движения не только техники, но и пеших подразделений вне дорог. Горные массивы и их отроги, покрытые лесами, являются хорошими естественными рубежами, удобными для создания многоярусной, глубоко эшелонированной и круговой обороны с широким обзором и обстрелом, а также для устройства различных заграждений.

Физико-географические условия горно-лесистых районов позволяют скрывать от противника характер построения обороны, в первую очередь, боевой порядок и систему огня соединений, частей и подразделений, способствуют организации устойчивой и активной обороны, способной противостоять ударам противника с применением всех видов оружия, эффективно отразить наступление его превосходящих сил.

С другой стороны, ландшафт ограничивает возможности подразделе-

ний по сосредоточению усилий на избранном направлении, значительно затрудняет их расположение на местности, ориентирование, маневр, развёртывание и, в конечном итоге, боевое использование боевой техники и подразделений. Планируя их применение, нужно учитывать снижение подвижности машин из-за падения мощности двигателей на высотах более 1000 м, увеличение износа, усложнение обслуживания и ремонтных работ, возрастание потребности в эвакуационных средствах в 2-3 раза.

Каменистые почвы, крутые скаты и опасность внезапных затоплений, горных завалов и обвалов затрудняют инженерное оборудование местности. Специфические физико-географические и метеорологические условия оказывают негативное влияние на поражающее действие существующих средств вооружённой борьбы, работу радио и радиорелейных средств управления войсками и оружием, а также на организацию радиоэлектронной борьбы, снижая их возможности 1,5-2 раза.

Анализ проблемных вопросов обороны в горно-лесистой местности показывает о нецелесообразности применения в этих условиях обычных унифицированных мотострелковых и танковых соединений и подразделений. Их организационная структура, оснащение и способы действий находятся в непосредственной зависимости от специфики выполняемых задач в районе боевого предназначения и базируются на достижении автономности и самостоятельности при высокой эффективности действий за удержание занимаемых районов, рубежей, позиций и объектов.

## К ВОПРОСУ ОБ ЭФФЕКТИВНОСТИ УДАРОВ, НАНОСИМЫХ ПО СТРАТЕГИЧЕСКИМ ОБЪЕКТАМ ВОЗДУШНЫМИ СРЕДСТВАМИ НАПАДЕНИЯ

*А. К. ОГАНЕСЯН, кандидат исторических наук, Пресс-секретарь Министра обороны РА*

РЕЗЮМЕ

Рассмотрены многочисленные примеры применения высокоточных ударных средств воздушного нападения в войнах последних пяти десятилетий. На основе анализа приведенных примеров сделан вывод об отсутствии на данное время удовлетворительных способов и средств защиты от системных массированных воздушных ударов, сочетающих поражения ракетно-артиллерийским и авиационным вооружением. Более того, придерживаясь определенных правил воздушного нападения, можно преодолеть любую действующую систему ПВО.

В частности, для обеспечения требуемой эффективности воздушного нападения могут быть полезными следующие рекомендации: обеспечение целостности сведений о целях (качественная разведка), синхронности и взаимосогласованности ударов, желательно одновременно разными средствами и с разных направлений; наличие ударного авиационного компонента, хотя бы с применением БПЛА. При этом необходимо учитывать, что удары малыми количествами однотипных ракет малоэффективны.

**TACTICS**

## THE IMPACT OF THE WOODED UPLAND ON THE DEFENSE OF A UNIT

*S. L. SARGSYAN, Colonel, Adjunct, Special Faculty, Military Educational and Scientific Centre for Land Forces"Joint Army Academy of the Armed Forces of the Russian Federation"*

SUMMARY

Introducing new perspective means of armed struggle into the practice of the troops of warring parties challenges the military expertise in a number of problems on preparing troops and conducting military operations in a terrain wooded upland.

The wooded upland is barely passable and characterized by a large number of natural obstacles, which in general contributes to the creation of a sustainable defense. It is distinguished by a closed relief; a large slope angle of the mountain ranges; the presence of rocky and stony soils and subsoils difficult to traverse; the unevenly developed hydrographic network; dense forest vegetation; the presence of a large number of impassable obstacles; and a limited area of accessible terrain. The underdeveloped road network often excludes the possibility of the movement not only of equipment, but also of infantry units outside roads. Mountain massifs and their spurs covered with forests are good natural boundaries convenient for creating a multitiered, in-depth and circular defense with a wide view and firing, as well as for the arrangement of various obstacles.

The physical and geographical conditions of the mountainous-woody areas make it possible to conceal from the enemy the nature of the defense posture, first of all, the combat order and fire system of the formations, units and subunits. They contribute to the organization of a stable and active defense capable of resisting enemy attacks with the use of all types of weapons, effectively repulsing the offensive of his superior forces.

On the other hand, the landscape limits the abilities of units to concentrate their efforts in the chosen direction significantly complicating their location

in the terrain, the orientation, the maneuver, the deployment and, ultimately, the combat use of combat equipment and units. While planning their use, it is necessary to take into account the decrease in the machines' mobility due to power drops in engines at the altitudes of more than 1000 m, the added deterioration, the complication of maintenance and repairs, the increase in the need for evacuation facilities by 2-3 times.

Stony soils, steep slopes and the danger of sudden flooding, mountain debris and landslides make the engineering equipment of the terrain more complicated. Specific physical and geographical, as well as meteorological conditions have a negative impact on the damage effects of existing means of armed struggle, the work of radio and radio-relay facilities of command and control of troops and weapons, and on the organization of electronic warfare, reducing their capabilities 1.5-2 times.

The analysis of the problematic issues of defense in the wooded upland shows that it is inexpedient to use conventional unified motorized rifle and tank formations and subunits in these conditions. Their organizational structure, equipment and methods of action are directly dependent on the specifics of the tasks performed in the area of combat mission and are based on achieving self-sufficiency and independence with high effectiveness of actions for holding the occupied areas, borders, positions and targets.

## ON THE ISSUE OF THE EFFICIENCY OF STRIKES AT STRATEGIC OBJECTS BY AIR ATTACK MEANS

*A.K. HOVHANNISYAN, PhD in History, Press Secretary of the RA Defense Minister*

SUMMARY

The author has considers numerous examples of the use of high-precision striking weapons of air attack in wars within the last five decades. Based on the analysis of the examples given, it was concluded that currently there aren't any satisfactory methods and means of protection against systemic concentrated air strikes combining defeats by missile and artillery and aircraft armament. Moreover, adhering to certain rules of air attack, it is possible to cope with any efficient Air Defense system.

In particular, to ensure the required effectiveness of air attack, the following recommendations may be useful: ensuring the integrity of information about the objectives (qualitative reconnaissance), synchronization and inter-consistency of strikes, preferably simultaneously by various means and from different directions; availability of a strike air component, at least with the use of an unmanned aerial vehicle (UAV). It should also be taken into account that strikes in small quantities of the same type missiles have little effect.

# ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԴՐԱ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

*Ա. Ե. ԴԱՎԹՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի ֆիզիկական պատրաստության և սպորտի բաժնի ֆիզիկական պատրաստության բաժանմունքի պետ*

«Որքան շատ քրտնես
խաղաղության ժամանակ,
այնքան քիչ կարյունահոսես
պատերազմում»
*Սուն Ցզի*

## 1. Ֆիզիկական պատրաստման նպատակներն ու էությունը

Դեռ մ. թ. 1-ին դարում հռոմեացի բանաստեղծ Դեցիմ Յունի Յուվենալն ասել է՝ «Առողջ մարմնում՝ առողջ ոգի»: Հենց տվյալ խոսքն է ցայտուն կերպով արտացոլում այն միտքը, որ ֆիզիկական պատրաստումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն մարմնի ու մկանային համակարգի կազմավորման, այլև անձնավորության ձևավորման համար: Ըստ այդմ՝ ֆիզիկական պատրաստումը ներառում է ոչ միայն մարմնի և առողջության ամրապնդումը, շարժողական հմտությունների զարգացումը, այլև անհատականության, բնավորության կատարելագործումը, հոգեշարժողական մարզումը: Այդ իսկ պատճառով ֆիզիկական պատրաստումը որոշակի տեսակի մասնագիտական պատրաստում է, որը սերտորեն կապված է բարոյականային և գաղափարադաստիարակչական պատրաստման հետ[1] և ունի կիրառական ուղղվածություն (օրինակ՝ զինվորի, մարզիկի, հրշեջի պատրաստում):

Ֆիզիկական պատրաստման արդյունքն է ֆիզիկական պատրաստականությունը, կամ պատրաստվածությունը, որի ցուցանիշներն են շարժողական հմտությունների բարձր աստիճանի զարգացածությունը, բարձր մակարդակի աշխատունակությունը, լավ առողջությունը: Ըստ էության, այս պատրաստումը մարդու բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման ապահովման մասն է: Զինված ուժերում այն զորքերի պատրաստման կարևոր բաղկացուցիչ մասերից է և մարտավարական, տեխնիկական, հոգեբանական ու մտավոր պատրաստականությունների հետ մեկտեղ ընդհանուր մարտական պատրաստականության անհրաժեշտ բաղադրիչն է: Միևնույն ժամանակ,

[1] Տես *Ф. Г. Казарян.* Основы физической подготовки человека. Е., 1984, сс. 4–5:

այն զինված ուժեր զորակոչված երիտասարդ զինվորների համար զինվորական ծառայության պայմաններին և ռազմամասնագիտական ուսուցմանը հարմարման կարևոր գործոններից մեկն է: Ֆիզիկական պատրաստմամբ պետք է լուծվի 3 խնդիր.

– առողջության ամրապնդում,

– մարմնի ճիշտ կառուցվածքի ձևավորում,

– շարժողական ընդունակությունների զարգացում:

Առողջության ամրապնդում ասելով պետք է հասկանալ մարդու ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարեկեցության (առողջության) ամբողջական վիճակի բարելավումը, ինչպես նաև շրջակա միջավայրի անբարենպաստ պայմանների (ճառագայթում, աղմուկ, ցրտահարում, բարձր ջերմաստիճան, տարաբնույթ ախտածին վարակներ, թթվածնաքաղց և այլն) նկատմամբ օրգանիզմի դիմադրողականության մեծացումը: Օրգանիզմի դիմադրողականությունը գործում է նաև վնասվածքների, երկարատև անշարժության և այլ բացասական ազդեցությունների դեպքում[2]:

Մարմնի կառուցվածքի ձևավորում ասելով հասկանում ենք ոչ միայն այնպիսի կառուցվածքի ձեռքբերումը, որը համապատասխանի ընդունված չափանիշներին, այլև յուրաքանչյուր մասնագիտության համար բնորոշ կազմաբանական (մորֆոլոգիական) կառուցվածքը: Յուրաքանչյուր մասնագիտություն և նույնիսկ յուրաքանչյուր նեղ մասնագիտացում կարող է ունենալ իրեն բնորոշ կազմաբանական կառուցվածք[3]:

Շարժողական ընդունակությունների զարգացումը մկանային ուժի, արագաշարժության, դիմացկունության և այլ ընդունակությունների համար համապատասխան ֆունկցիոնալ մակարդակի ապահովումն է[4]:

Իր հերթին ֆիզիկական պատրաստումը ընդունված է տարանջատել երկու ուղղության՝ ընդհանուր և հատուկ, ընդսմին դրանք կազմում են մեկ ամբողջություն[5]:

---

[2] Տես, օրինակ, *Е. Суборов.* Как занятия спортом влияют на иммунитет человека (https://nogibogi.com/kak-zanyatiya-sportom-vliyayut-na-immunitet/):

[3] Տես, օրինակ, *В. В. Граневский.* Морфо-функциональные изменения организма и опорно-двигательного аппарата спортсменов под влиянием физических нагрузок. Учебное пособие по курсу «Анатомия человека». Тирасполь, 2012, сс. 26–42:

[4] Տես *И. В. Корельская, Н. А. Счастливый, И. Н. Кононов, А. М. Некрасов*. Особенности развития двигательных способностей юных спортсменов в возрасте 10–12 лет в циклических видах спорта. «Международный журнал экспериментального образования», 2008 №1 (https://www.expeducation.ru/ru/article/view?id=11785):

[5] Տես *Б. А. Котов.* Олимпийский спорт. Основы лёгкой атлетики. СПб., 1916; *Б. И. Бергман.* Лыжный спорт. Учебник для институтов физической культуры. М., 1940; *В. И. Шувалов.* Плавание, водное поло и прыжки в воду. Учебник для институтов физической культуры. М., 1940:

Յուրաքանչյուր ուղղություն իր հերթին ունի մասնակի խնդիրներ:

**Ընդհանուր ֆիզիկական պատրաստումը լուծում է հետևյալ մասնակի խնդիրները.**

- օրգանիզմի աշխատունակության մակարդակի բարձրացում անկախ մարդու գործունեությունից,
- բոլոր շարժողական ընդունակությունների զարգացում:

**Հատուկ ֆիզիկական պատրաստման մասնակի խնդիրներն են.**

- օրգանիզմի ֆունկցիոնալ կարողությունների մեծացումը,
- հատուկ շարժողական ընդունակությունների զարգացումը:




Նկ. 1. Ընդհանուր և հատուկ պատրաստումների հարաբերակցությունն ըստ ստաժի

Երկու ուղղությունն էլ մարզվողի համար ունեն շատ կարևոր դեր ու նշանակություն, և դրանցից ոչ մեկը չի կարող գործի դրվել ինքնուրույնաբար: Այս երկու ուղղությունների հարաբերակցությունը կախված է բազմաթիվ գործոններից՝ մարզման կոնկրետ խնդիրներից, անհատական կարողություններից, որակավորման մակարդակից, մարզման ժամանակահատվածից, ստաժից և այլ հանգամանքներից: Օրինակ՝ ըստ որակավորման մակարդակի և ստաժի՝ մարզական աշխարհում խորհուրդ է տրվում մարզումներն անցկացնել հետևյալ հարաբերակցությամբ.

*Աղյուսակ 1*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

| Ֆիզիկական պատրաստման ուղղություն | Որակավորման մակարդակ | | | |
|---|---|---|---|---|
| | նորեկներ և 3-րդ կարգայիններ | 2-րդ և 1-ին կարգայիններ | Սպորտի վարպետներ | Միջազգային կարգի սպորտի վարպետներ |
| Ընդհանուր | 80–90 % | 50–60 % | 20–30 % | 10–20 % |
| Հատուկ | 10–20 % | 40–50 % | 70–80 % | 80–90 % |

Ֆիզիկական պատրաստման գործում մեծ նշանակություն ունի տարբեր շարժողական ընդունակությունների միջև կապը: Որոշ շարժողական ընդունակությունների կապերը ներկայացված են ստորև բերվող գծապատկերում.




Նկ. 2. Շարժողական ընդունակությունների միջև կապերի գծապատկերը

Զինված ուժերի ֆիզիկական պատրաստման գործում առավել կարևոր բաղադրիչներն են հատուկ ֆիզիկական պատրաստումը և հատուկ շարժողական ընդունակությունների զարգացումը: Այս խնդիրների պարզմանն են նպատակաուղղել իրենց ուսումնասիրությունները մեծ թվով գիտնականներ, ինչպիսիք են Վ. Ա. Աբասովը, Վ. Ի. Անդրեևը, Օ. Ա. Արշինովան, Վ. Ա. Ատրոշենկոն, Ա. Ա. Գորելովան և ուրիշներ: Քանի որ զինված ուժերի յուրաքանչյուր զորատեսակի և նույնիսկ նույն զորատեսակի տարբեր մասնագիտությունների համար պահանջվում է տարբեր շարժողական հմտությունների զարգացածություն, ապա, համապատասխանաբար, տարբեր պաշտոններ զբաղեցնող զինծառայողների ֆիզիկական պատրաստումը կազմակերպվում է տարբեր կերպ՝ տարբեր վարժությունների կիրառմամբ: Այսպես. եթե հրաձիգների համար շատ կարևոր է ընդհանուր դիմացկունության և հատուկ արգելքների հաղթահարման ունակությունների զարգացումը, ապա տանկիստների համար կարևորը ուժի զարգացումն է, իսկ որոշ մասնագետների ծառայությունը կապված է տարաբնույթ բարդ սարքավորանքի երկարատև դիտման, հաղորդված տեղեկությունների արագ ընկալման և մշակման, ճշգրիտ հաշվարկումների կատարման հետ: Առաջին հայացքից նման ծառայություն տանող զինծառայողներին հարկավոր չէ բարձր մակարդակի ֆիզիկական պատրաստություն, սակայն նշված պայմաններում որակյալ և երկարատև աշխատունակություն կարող է դրսևորել միայն լավ ֆիզիկական պատրաստականությամբ անձնակազմը: Օդաչուների դեպքում կարևոր է ճկունության և տատանումների ու գերբեռնվածությունների նկատմամբ դիմացկունության զարգացումը, քանի որ թռիչքի ժամանակ երբեմն գերբեռնվածության ազդեցությամբ նրանց կշիռը աճում է մինչև

8 անգամ, ինչի հետևանքով օրգանիզմում փոփոխվում է արյան բաշխումը: Այդ պայմաններում օդաչուի ֆիզիկական պատրաստության մակարդակը պետք է նրան տա վայրկյանների ընթացքում արագ և ճիշտ կողմնորոշվելու ու գործելու հնարավորություն: Ռազմական օդաչուների ֆիզիկական պատրաստման նպատակն է նրանց այնպիսի հոգեբանական և ֆիզիկական պատրաստության ձևավորումը, որ ապահովվեն ուսումնամարտական պայմաններում բարդ ավիացիոն տեխնիկային տիրապետումն ու արդյունավետ օգտագործումը[6]: Իսկ նման մակարդակի ֆիզիկական պատրաստության հնարավոր է հասնել միայն հատուկ վարժասարքերով նպատակային մարզումների միջոցով՝ հատուկ շարժողական ընդունակությունների զարգացմամբ:

Ամփոփելով ֆիզիկական պատրաստման այս համառոտ վերլուծությունը՝ պետք է նշենք, որ տվյալ ոլորտի արդյունավետ կազմակերպումն անհնար է առանց լուրջ ուսումնասիրությունների, աշխատանքի մանրակրկիտ պլանավորման, գիտութենահենք ծրագրերի մշակման, ամենօրյա քրտնաջան գործնական աշխատանքի և, իհարկե, վերահսկման ու շարունակական վերլուծությունների և նորամուծական մոտեցումների ներդրման[7]:

## 2. ՀՀ Զինված ուժերում ֆիզիկական պատրաստության ներկայիս վիճակը

Ֆիզիկական պատրաստումը՝ որպես մարտական պատրաստման կարևոր բաղադրատարր, ՀՀ Զինված ուժերում համարվում է հիմնական առարկաներից մեկը:

Զինված ուժերում ֆիզիկական պատրաստման նպատակն է մարտական խնդիրների կատարման համար զինծառայողների՝ անհրաժեշտ մակարդակով ֆիզիկական պատրաստականության ապահովումը: Սա նշանակում է, որ ֆիզիկական պատրաստության ծառայությունների գործունեությունը նպատակաուղղված է զինծառայողների այնպիսի մակարդակի պատրաստվածության ապահովմանը, որ նրանք կարողանան մարտի պայմաններում հաջողությամբ կատարել իրենց մասնագիտական խնդիրները: Ընդսմին դրա համար անհրաժեշտ են ոչ միայն բավարար մակարդակի ֆիզիկական կարողություններ, այլև հոգեբանական ու ֆիզիկական գերբեռնվածությունը հաղթահարելու ընդունակություն:

Արաբա–իսրայելական պատերազմի՝ ֆրանսիացի մասնագետների կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հոգնածության և հոգեբանական ծանրաբեռնվածության պայմաններում զգալի անկում են ապրում անձնավորության այնպիսի ընդունակություններ, որոնք առաջին հայացքից որևէ կապ չունեն ֆիզիկական պատրաստության հետ: Օրինակ՝ կրակային

---

[6] Տես *Ф. И. Попов, А. И. Маракушин, Н. Н. Бреславец.* Физическая подготовка летного состава – компонент безопасности полетов. «Физическое воспитание студентов», 2011 № 3 (http://bmsi.ru/doc/86190477-fce8-4872-aabc-cba2dc40124b):

[7] Տես *Ֆ. Գ. Ղազարյան,* Նշ. աշխ., էջ 29–32:

պատրաստման մարզումների ժամանակ (բարենպաստ պայմաններում) զինծառայողի նշանառությունը շատ ավելի լավ է, քան, երբ նրա վրա ներգործում են տարատեսակ հոգեբանական գործոններ, օրինակ՝ նույն մարզումների ժամանակ նրա ուղղությամբ կրակ են վարում, թեև նա գտնվում է բացարձակապես անվտանգ գոտում: Զինծառայողի արդյունավետությունն է՛լ ավելի է ընկնում, երբ հոգեբանական ներգործությանն ավելանում է հոգնածությունը: Նկարագրված երևույթները առավել ուժեղ ազդում են իրական մարտի պայմաններում, երբ վտանգը ռեալ է, իսկ հոգնածությունը գնալով վերածվում է գերհոգնածության[8]: Հրաձգարաններում և պատերազմական պայմաններում կատարված արդյունավետ կրակոցների տարբերությունը որոշում է մարտի հոգեբանական ներգործության հետևանքով հոգեկան անկման գործակիցը: Խառնաշփոթության և խուճապի պայմաններում արդյունավետության գործակիցը երբեմն հասնում է զրոյի: Այդ վիճակում նրանք նույնիսկ ձեռնամարտի բռնվելիս զենքը ճիշտ չեն գործածում:

Այլ ուսումնասիրություններ ևս ցույց են տալիս, որ նման պայմաններում արդյունավետության նվազ անկում են ապրում առավել բարձր ֆիզիկական պատրաստականությամբ զինծառայողները: Ամերիկացի զինծառայողները մարտական գործողություններ վարելիս վերջին անգամ ձեռնամարտի են բռնվել Վիետնամական պատերազմի ժամանակ, և այս նկատառումով որոշ զորատեսակների մարտական պատրաստման ծրագրից հանվել են ձեռնամարտի մարզումները: Սակայն ԱՄՆ-ի ծովային հետևակի հրամանատարությունը ձեռնամարտը թողել է իր ծրագրերում՝ նկատառումով, որ այն զգալիորեն մեծացնում է զինծառայողների ինքնավստահությունն ու բարոյահոգեբանական պատրաստությունը, ինչն իր հերթին ամենատարբեր խնդիրներ կատարելիս էապես բարելավում է մարտիկի գործողությունների արդյունավետությունը: Ուստի կարող ենք եզրակացնել, որ, որքան էլ զարգանան ու հագենան զորքերի սպառազինությունն ու ռազմական տեխնիկան, միևնույն է զինված ուժերում երբեք չեն նվազի ֆիզիկական պատրաստության դերն ու նշանակությունը:

Հայտնի է, որ ՀՀ Զինված ուժերում ֆիզիկական պատրաստումը կատարվում է համաձայն «ՀՀ ԶՈՒ-ի ֆիզիկական պատրաստության ձեռնարկի» (2011 թ.): Սակայն նշված ձեռնարկը հիմնականում 1987 թ. գործողության դրված «Խորհրդային բանակի և նավատորմի ֆիզիկական պատրաստման ձեռնարկի» թարգմանված ու խմբագրված տարբերակն է և կարիք ունի վերանայման ու կատարելագործման, քանի որ դրանում հաշվի չեն առնվել ՀՀ Զինված ուժերի առանձնահատկությունները՝ տեղանքը, մարտական պատրաստման ծրագրերով ֆիզիկական պատրաստման համար նախատեսված ժամաքանակը, ազգային առանձնահատկությունները և ամենակարևորը՝ ծառայության պայմաններն ու ձևը:

[8] Տեսս *Կ. Макнаб.* Психологическая подготовка подразделений специального назначения. М., 2002, сс. 12, 80, 147:

Ներկայումս ՀՀ Զինված ուժերի ստորաբաժանումներից շատերը իրականացնում են մարտական հերթապահություն, ուստի նրանց մարտական, այդ թվում նաև ֆիզիկական, պատրաստման ծրագիրը պետք է արմատապես տարբերվի պահեստային զորամասերի ծրագրից: Այս խնդիրը կարևորվում է ոչ միայն հատկացված ժամաքանակների պակասությամբ, այլև մարզումների տեղանքի և շարժունակության սահմանափակությամբ:

Անհրաժեշտ է նաև վերանայել զորատեսակների համար նախատեսված հատուկ վարժությունների ցանկը: Հարց է առաջանում, թե մարտական հերթապահություն կատարող զորամասերի համար հատուկ վարժություններ ընտրելիս պետք է, արդյոք, հաշվի առնել պատերազմական ժամանակաշրջանում նրանց առջև դրվելիք խնդիրները: Չէ՞ որ զորքերը մշտապես պետք է պատրաստվեն պատերազմի, և այս առումով շատ կարևոր է այդ ժամանակ նրանց առաջադրվող խնդիրների բովանդակության ուսումնասիրությունը և համապատասխան ֆիզիկական որակների զարգացումը: Սակայն այսօր մեր զորքերը իրականացնում են մարտական հերթապահություն, որի ժամանակ կատարում են միանգամայն այլ խնդիր, և միգուցե պետք է շեշտը դնել ֆիզիկական պատրաստման միջոցով այլ որակների զարգացման վրա:

Ուստի այս և ֆիզիկական պատրաստման հետ կապված մի շարք այլ կարևոր հարցերի նպատակային ուսումնասիրությունը անհրաժեշտ ու հրատապ խնդիր է, որի լուծումը պահանջում է լուրջ գիտական հետազոտություն:

**БОЕВАЯ ПОДГОТОВКА**

## ФИЗИЧЕСКАЯ ГОТОВНОСТЬ И НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ЕЕ ОБЕСПЕЧЕНИЯ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

*А. Е. ДАВТЯН, подполковник, начальник отделения физической подготовки отдела физической подготовки и спорта ВС РА*

РЕЗЮМЕ

Результатом физической подготовки является физическая готовность, которая имеет следующие признаки: развитость двигательных навыков, высокий уровень работоспособности, крепкое здоровье. Физическая готовность – необходимая составляющая боевой выучки, поэтому в ВС физическая подготовка является одним из основных предметов. Цель физической подготовки в ВС – обеспечение такого уровня физической готовности военнослужащих, который необходим для полноценного решения боевой задачи.

Различают два направления физической подготовки: а) общая физическая подготовка, задачами которой являются повышение работоспособности организма независимо от рода деятельности и развитие всех двигательных навыков, б) специальная физическая подготовка, задачами которой являются увеличение функциональных возможностей организма и развитие специальных двигательных навыков. Поскольку для каждой военной специальности требуются различные двигательные навыки, та особая важность в ВС пидается специальной физической подготовке.

Для обеспечения высокого уровня физической готовности в ВС РА требуется решение ряда таких проблем, как: пересмотр и переработка пособия по физической подготовке ВС РА с учетом особенностей национальных ВС; разработка программ по физической подготовке для тех подразделений ВС РА, которые несут боевое дежурство; рассмотрение возможности пересмотра списка специальных упражнений для родов войск с учетом задач военного времени. Качественное решение указанных проблем возможно лишь на основе комплекса продуманных научных исследований.

**COMBAT TRAINING**

## PHYSICAL READINESS AND SOME PROBLEMS OF ENSURING IT IN THE ARMED FORCES OF THE REPUBLIC OF ARMENIA

*A. Y. DAVTYAN, Lieutenant Colonel, Head, Section of Physical Training, the Armed Forces Physical Training and Sports Division*

SUMMARY

The outcome of physical training is the physical fitness, which is characterized by: the development of motor skills, high level of working capacity, and good health. Physical fitness is a necessary component of warfare skills, therefore in the Armed Forces physical training is one of the main subjects. The purpose of physical training in the Armed Forces is to provide such a level of physical preparedness of servicemen, which is necessary for a full-fledged solution to the combat mission.

There are two directions in physical training: a) general physical training, the tasks of which are to increase the working capacity of the body irrespective of the type of activity and development of all motor skills, b) special physical training, whose tasks are to increase the body's functional capabilities, and develop special motor skills. Since different military skills are required for each military specialty, thus, special physical training is paid particular importance to in the Armed Forces.

To ensure a high level of physical fitness in the RA Armed Forces, a number of problems need to be solved, such as: revision and processing of the manual for physical training of the Armed Forces of the Republic of Armenia, taking into account the peculiarities of the national Armed Forces; development of programs for physical training for those units of the RA Armed Forces which are on alert duty; consideration of the possibility of reviewing the list of special exercises for combat arms taking into account the tasks of wartime. A qualitative solution to these problems is possible only on the basis of complex thought-out scientific research.

# ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

*Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու,*
*ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտական-վերլուծաբան*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կենսաթոշակային համակարգ ունեցող յուրաքանչյուր պետությունում կենսաթոշակային հիմնադրամները ոչ միայն կոչված են ապահովելու բնակչության բարեկեցությունը, այլև հնարավորություն են տալիս զարգացնելու կապիտալի շուկան: ՀՀ-ի նման միջին եկամուտ ունեցող պետության կայուն տնտեսական աճն ապահովելու համար կարևոր է կենսաթոշակային հիմնադրամներում կուտակվող միջոցների արդյունավետ օգտագործումը: Ընդսմին տվյալ արդյունավետությունը պայմանավորված է զարգացման ներուժ ունեցող տնտեսական ոլորտներում այդ հիմնադրամների միջոցներով կատարվող կապիտալ ներդրումների մակարդակով:

Ինչպես ցույց է տալիս առաջավոր միջազգային փորձը, առավել մեծ դրական էֆեկտ է ստացվում, երբ կենսաթոշակային հիմնադրամների ֆինանսական ռեսուրսները ներդրվում են երկակի նախանշանակման արտադրանքի թողարկմանը նպատակաուղղված, մեծ բազմապատկային էֆեկտ ունեցող կարճաժամկետ ներդրումային նախագծերում: Նման քաղաքականությունը, նախ, խթանում է տնտեսական ակտիվությունը, ինչը նպաստում է արտաքին պետական պարտքի աճման տեմպերի սահմանափակմանը և տեղական արտադրանքով ներմուծման փոխարինման ուղղությամբ գործադրվող ջանքերի հաջողությանը: Միևնույն ժամանակ, դա առաջ է բերում կենսաթոշակային բարեփոխումներին հասարակական աջակցության մեծացում, ինչը հույժ կարևոր է նաև օտարերկրյա կենսաթոշակային հիմնադրամների գործունեության համար:

Հարկ է նաև նշել, որ այս քայլերի արդյունավետությունը մեծապես կախված է կենսաթոշակային հիմնադրամների միջոցների ներգրավման ու պետություն – մասնավոր հատված համագործակցության ասպարեզում ներդրումային ռիսկերի կառավարման համակարգի մրցունակության աստիճանից:

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՁԱԶԳԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Վերջին տարիներին և՛ զարգացած, և՛ զարգացող պետություններում նկատվում է իրական տնտեսության մեջ կենսաթոշակային հիմնադրամների ներդրումների ծավալի մեծացման միտում: Այս երևույթը հիմնականում պայմա-

նավորված է այն հանգամանքով, որ կենսաթոշակային հիմնադրամների ակտիվներին բնորոշ է մեծ բազմապատկային էֆեկտ: Այսպես. կենսաթոշակային հիմնադրամների ներդրումները մեծացնում են ֆինանսական աղբյուրների մատչելիությունը, ուժեղացնում շուկայական մրցակցությունը և բարելավում կորպորատիվ կառավարումը[1]: Ընդ որում, իրական տնտեսական հատվածում[*] կենսաթոշակային հիմնադրամների միջոցների ներդրման եկամտաբերությունը սովորաբար ավելի մեծ է այն պետություններում, որտեղ կան կորպորատիվ արժեթղթերի ձևավորված շուկա ու բազմատարր ֆինանսական միջնորդության հաստատություն (որպես ֆինանսական միջնորդներ հանդես են գալիս ոչ միայն առևտրային բանկերը, այլև ներդրումային բանկերն ու հիմնադրամները և այլ կառույցներ), և կապիտալի շուկայում մասնավոր հատվածին պատկանում է ավելի մեծ մասնաբաժին, քան պետությանը:

Նշենք, որ կենսաթոշակային հիմնադրամների ֆինանսական ռեսուրսները ներդրվում են ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա կորպորատիվ ու պետական արժեթղթերում: Օտարերկրյա ակտիվներում ներդրումներ կատարելու անհրաժեշտություն է առաջանում, մասնավորապես, պետության ներսում միջոցների արդյունավետ ներդրման հնարավորություններ չլինելու դեպքում: Այդպիսի իրավիճակ է ստեղծվում, երբ կենսաթոշակային հիմնադրամը բավական մեծ է, իսկ կապիտալի շուկան զարգացած չէ, և պետությունն ունի դրա կարգավորման սահմանափակ հնարավորություններ[2]:

Զարգացող պետություններում և այն պետություններում, որոնք իրագործում են կենսաթոշակային բարեփոխումներ և ներդրում են պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգ, սահմանափակումները կոշտ են և թույլատրվում է ներդրումներ կատարել միայն սահմանափակ թվով ֆինանսական գործիքներում: Դրա բացատրությունն այն է, որ հիմնադրամների կառավարիչները որպես կանոն չեն ունենում կապիտալի շուկայում միջոցների ներդրման անհրաժեշտ փորձ: Ավելին. զարգացող պետությունների ֆինանսական շուկաներում ներդրումներն ուղեկցվում են մեծ ծախքերով, քանի որ շուկան թափանցիկ չէ, իսկ ներդրումային գործիքները սահմանափակ են:

Զարգացող պետություններում կենսաթոշակային հիմնադրամների արտասահմանյան ներդրումների առնչությամբ ի հայտ են գալիս նաև որոշ լրացուցիչ խնդիրներ՝ կապված դրանց տնտեսական նպատակահարմարության

[1] Տես *Ch. Meng and W. D. Pfau.* The role of pension funds in capital market development. National Graduate Institute for Policy Studies, Discussion paper: 10-17, 2010 (http://www.grips.ac.jp/r-center/wp-content/uploads/10-17.pdf):

[*] Տնտեսությունում գործում են երկու հատված՝ ֆինանսական կապիտալի ու ֆինանսական ծառայություններ առաջարկող հատվածը և իրական կապիտալի վրա հենվող, ապրանքներ ու ոչ ֆինանսական ծառայություններ առաջարկող իրական հատվածը:

[2] Տես *А. Гвозденко.* Опыт зарубежных пенсионных систем и его применение в процессе реформирования пенсионной системы России на современном этапе ее развития, 26.08.2016 (http://blogs.investfunds.ru/post/128631/):

հետ: Ի տարբերություն արտասահմանյան ներդրումներից՝ ներքին ներդրումների բազմապատկային էֆեկտն ավելի մեծ է, ինչը պայմանավորված է տնտեսական ակտիվության մեծացմամբ և ուստի պետական եկամուտների ավելացմամբ: Հետևաբար, առաջին պլան են մղվում կենսաթոշակային հիմնադրամների արտասահմանյան ներդրումների վրա դրվող սահմանափակումները, որոնք լայնորեն կիրառվում են միջազգային պրակտիկայում: Օրինակ՝ Սլովակիայում կենսաթոշակային հիմնադրամների ներդրումները թույլատրված են միայն ԵՄ-ի տարածքում: Ֆինլանդիայի կենսաթոշակային հիմնադրամների ներդրումները, բացի ԵՄ-ի անդամ պետություններից, թույլատրվում են միայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմերպության (ՏՀԶԿ) անդամ պետություններում: Ընդ որում, ՏՀԶԿ անդամ պետություններում ներդրումների ծավալը պետք է չգերազանցի ընդհանուր կենսաթոշակային ներդրումների 10 %-ը: Պորտուգալիայում այդ սահմանափակումը կազմում է 15 %, իսկ Հունգարիայում՝ 20 %[3]:

Կենսաթոշակային հիմնադրամների արտասահմանյան ներդրումների պարագայում առաջանում է նաև արժութային ռիսկի խնդիր: Օրինակ՝ եվրագոտու պետությունները կարող են իրենց կապիտալ ներդրումները բաշխել անդամ պետություններում, քանի որ այդ դեպքում արժութային ռիսկերը էապես նվազում են: Ինչ վերաբերում է այլ պետություններին, ապա արտասահմանյան ներդրումների դեպքում արժույթի փոխարժեքի տատանումները կարող են հանգեցնել զգալի կորուստների:

Կենսաթոշակային հիմնադրամների կատարած ներդրումների արդյունավետության վրա ազդում են նաև դրանց նպատակներն ու գերակայությունները: Ոչ հստակ կերպով սահմանված գերակայությունները նվազեցնում են կառավարման արդյունավետությունը, ինչն առաջ է բերում հիմնադրամների աշխատանքից հաճախորդների դժգոհությունը: Այնուամենայնիվ, նույնիսկ նպատակների ու գերակայությունների հստակ սահմանվածության դեպքում կենսաթոշակային համակարգի աշխատանքը արդյունավետ չի լինի, եթե հաշվի չառնվեն այլ գործոններ, մասնավորապես՝ կենսաթոշակային հիմնադրամների ապակենտրոնացածության մակարդակը, դրանց կազմակերպական կառուցվածքը, պետության և հիմնադրամների կառավարիչների միջև հարաբերությունները, բնակչության ներդրումային մշակույթը, կապիտալի շուկայի չափերն ու կառուցվածքը և այլն[4]:

Այսպիսով՝ կենսաթոշակային համակարգերի զարգացման միջազգային փորձը ցույց է տալիս, որ բարդ մակրոտնտեսական իրավիճակում գտնվող

[3] Տես «Особенности развития накопительной пенсионной системы: Данные по странам мира и выводы для Российской Федерации». Отделение ОЭСР по негосударственному пенсионному страхованию, 2013, с. 57 (http://pensionreform.ru/files/39227/06.2013.pdf):

[4] Տես *Е. Хотулев.* Мировой опыт инвестирования средств государственных пенсионных фондов. «Рынок ценных бумаг», 2003, N 3 (http://www.old.rcb.ru/Archive/articles.asp?id=3158):

զարգացող պետություններում կենսաթոշակային հիմնադրամների միջոցները գերազանցապես ուղղվում են ներքին ներդրումային նախագծերի իրականացմանը:

Օտարերկրյա կենսաթոշակային համակարգերի զարգացման վրա ազդում է նաև բնակչության ծերացման միտումը, որը բնորոշ է և Հայաստանին: Տվյալ պայմաններում այն կենսաթոշակային բաշխիչ համակարգը, որի դեպքում տնտեսապես ակտիվ բնակչության վրա է դրված կենսաթոշակային վճարումների բեռը, ոչ արդյունավետ է: Միջազգային պրակտիկայում բնակչության ծերացման պայմաններում ձեռնարկվում են կենսաթոշակային տարիքի բարձրացմանն ուղղված միջոցներ: Նման միջոցներից են տարեց մարդկանց համար աշխատատեղերի ստեղծումը և նրանց որակավորման բարձրացման ու մասնագիտական պատրաստականության համապատասխան կրթական ծրագրերի իրականացումը: Օրինակ՝ Գերմանիայում մասնավոր ընկերությունների ավելի քան 30 %-ը օգտագործում է տարեց մարդկանց աշխատանքը, ընդսմին նրանք իրենց մասնագիտական փորձն են փոխանցում երիտասարդ աշխատողներին, իսկ ընկերությունների 15 %-ը ձեռնարկում է տարեց աշխատողների մասնագիտական պատրաստում: Այլ եվրոպական պետություններում, օրինակ, Մեծ Բրիտանիայում, Շվեդիայում, Լեհաստանում, Իռլանդիայում և Հունգարիայում, վաղաժամ կենսաթոշակային ապահովման հնարավորությունը բացառվել է: Հունաստանում վաղաժամ կենսաթոշակի գնալու տարիքը 53-ից բարձրացվել է մինչև 60 տարեկան, իսկ Իտալիայում նվազեցվել են վաղաժամ կենսաթոշակառուներին կատարվող վճարումները[5]:

Այսպիսով՝ ակտիվ աշխատանքային ժամանակը մեծացնելու նպատակով ԵՄ-ի պետությունները իրականացնում են ազգային կենսաթոշակային համակարգերի բարեփոխումներ՝ նպատակաուղղված կենսաթոշակային համակարգերում լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավմանը:

## ՀՀ-ՈՒՄ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԻՁՈՑՆԵՐԸ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՈՒՂՂԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման մասին» օրինագծով նախատեսվում է, որ նվազագույն բազային կենսաթոշակը պետք է հավասարվի ապրուստի համար հաշվարկված անհրաժեշտ մինիմումին, իսկ հիմնական կենսաթոշակը կկազմի դրա 150 %-ը: Ամենամսյա պարտադիր վճարները կկազմեն աշխատավարձի 5 %-ը, որի վրա կավելանա նաև պետության վճարած լրացուցիչ 5 %-ը (բայց ոչ ավելի, քան 25000 դրամ)[6]:

[5] Տես *Е. Д. Заболотский.* Опыт реформирования пенсионных систем стран Европейского союза и возможности его использования в России. «Вестник СПбГУ. Экономика», 2017, т. 33, вып. 3, с. 485 (http://vestnik.spbu.ru/html17/s05/s05v3/07.pdf):

[6] Տես «2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ կմտնի կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչը՝ 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնվածների համար»: «ARMINFO», 28.02.2017 (http://finport.am/full_news.php?id=28616&lang=1):

Ներկայումս ՀՀ-ում կենսաթոշակային հիմնադրամների ֆինանսական միջոցների մոտ 40 %-ը ներդրվում է ՀՀ պետական պարտատոմսերում, իսկ 30 %-ը՝ բանկային ավանդներում (մնացած 30 %-ը ներդրվում է օտարերկրյա ներդրումային արժեթղթերում, ինչպես նաև հիպոտեկային և միջազգային պարտատոմսերում), որոնց եկամտաբերությունը տնտեսության իրական հատվածում ներդրումային նախագծերի եկամտաբերությունից ցածր է: Միևնույն ժամանակ, առևտրային բանկերը հանդես են գալիս որպես ՀՀ պետական պարտատոմսերի գնորդներ, ուստի բանկային ավանդներում կենսաթոշակային հիմնադրամների ներդրած միջոցներն ուղղվում են այդ պարտատոմսերի գնմանը (իր հերթին պետությունը նպատակ է հետապնդում պետական պարտատոմսերի վաճառքի միջոցով մարելու իր արտաքին վարկային պարտավորությունները): Որպես արդյունք՝ կենսաթոշակային հիմնադրամների միջոցները չեն ուղղվում ՀՀ տնտեսության իրական հատվածի ներդրումային ծրագրերի ֆինանսավորմանը:

Ինչ վերաբերում է արտաքին վարկային ռեսուրսների օգտագործմանը, ապա դրանք ապահովում են ՀՀ բյուջեի պակասուրդի ֆինանսավորման մոտ կեսը (օրինակ՝ 2017 թ. պետական բյուջեի նախագծով պակասուրդի գումարը ծրագրվում էր 150,1 մլրդ դրամ, որի ֆինանսավորման համար նախատեսվում էր, բացի ներքին աղբյուրներից, ներգրավել 79 մլրդ դրամ արտաքին միջոցներ)[7]: Համաձայն պետբյուջեի մասին 2018 թ. ընդունված օրենքի՝ բյուջեի պակասուրդը կազմելու է գրեթե 157 մլրդ դրամ[8], որի ֆինանսավորումը կրկին հանգեցնելու է պետական պարտքի մեծացման: Բացի այդ, արտաքին վարկային միջոցները ոչ արդյունավետ կառավարման պատճառով չեն կարող նպաստել ներդրումային նախագծերի իրականացմանը բարձր ավելացված արժեք ապահովող տնտեսական ոլորտներում:

Միջին եկամուտ ունեցող պետությունների ցանկում ընդգրկված Հայաստանի համար նաև բավական թանկացել է արտաքին պարտքի սպասարկումը (եթե նախկինում դրա տոկոսավճարները կազմում էին պետական բյուջեի ծախսերի 1,5-2,5 %-ը, ապա ներկայումս հասնում են բյուջեի 8,5-8,7 %-ի)[9]: Սա պայմանավորված է նաև արտաքին պարտքի մեծացմամբ: Դրա հիմնական պատճառներն են լողացող տոկոսադրույքներով արտաքին պարտավորությունների գերակշռությունը, արտաքին պարտքի չափի վրա արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը, ինչպես նաև պարտքի մարման միջին ժամկետի նվազումը և նախկին պարտավորությունների մարման

[7] Տես «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագիր»: Պատրաստվել է Բյուջետային գրասենյակի կողմից: Ե., 2016 (http://www.parliament.am/committee_docs_5/FV/TEXT2017.pdf):

[8] Տես «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ 2017 թ. դեկտեմբերի 8-ի հմ. ՀՕ-224-Ն օրենքը (http://www.parliament.am/law_docs6/191217HO224.pdf):

[9] Տես «Պետական պարտքի կառավարչի մտահոգությունը»: «Yerevan Today», 12.10.2016 (http://yerevan.today/all/tntesutyun/9907/petakan-partqi-karavarchi-mtahogutyuny):

նպատակով նորանոր միջազգային վարկերի ներգրավումը: Մասնավորապես՝ 1 տոկոսային կետով լողացող տոկոսադրույքների փոփոխման դեպքում ՀՀ արտաքին պարտքի գծով տոկոսային ծախսերը միջին հաշվով կփոփոխվեն տարեկան 6,8 մլն դոլարով: Բացի այդ, պարտքի կառավարման 2016–2018 թթ. ռազմավարական ծրագրով ՀՀ Կառավարությունը նախատեսում է ՀՀ դրամի նկատմամբ արտարժույթների փոխարժեքի 1 %-ով շեղման դեպքում ՀՀ կառավարության արտաքին պարտքի փոփոխում միջին հաշվով տարեկան 19,1 մլրդ դրամով[10]:

ՀՀ-ում պետբյուջեի պակասուրդի, պետական պարտքի մեծացման, բարձր մակարդակի գործազրկության և աղքատության, դեռ կապիտալի և, հատկապես՝ արժեթղթերի ձևավորված շուկաներ չլինելու, ֆինանսական միջնորդության միատարրության պայմաններում նպատակահարմար է կուտակային կենսաթոշակային համակարգի ֆինանսական միջոցները ուղղել գերազանցապես ներքին սպառման ներուժ ունեցող երկակի նախանշանակման արտադրանքի թողարկման նախագծերին, ինչպես նաև տնտեսության ճյուղային կլաստերային զարգացմանն ու կորպորատիվ արժեթղթերի շուկայի ձևավորմանը: Ընդ որում, կենսաթոշակային հիմնադրամների միջոցների ներդրում պետք է կատարել միայն ռիսկերի արդյունավետ կառավարման հաստատության գոյության պարագայում: Այս առումով հարկ է փոխել կենսաթոշակային հիմնադրամների ֆինանսական միջոցների ներգրավման ուղղությունները: Անհրաժեշտություն է առաջանում նաև փոխելու կենսաթոշակային հիմնադրամների կառավարիչներին ներկայացվող պահանջները, մասնավորապես՝ ֆինանսական միջոցների ներդրման ուղղվածությանն առնչվող հարցերում: Լավ գործիք կարող է լինել նաև պետության գերակշռող մասնաբաժնով և կենսաթոշակային հիմնադրամների միջոցներով բաց բաժնետիրական ներդրումային բանկի ստեղծումը (այդպիսով կենսաթոշակային պարտադիր կուտակային համակարգի մասնակից քաղաքացիները կդառնան այդ ներդրումային բանկի հիմնադիր բաժնետերեր): Այնուհետև այդ միջոցները պետք է ուղղվեն կարճաժամկետ ու ներքին սպառման ներուժ ունեցող երկակի նախանշանակման արտադրությունների ստեղծմանը: Մասնավորապես՝ էական նշանակություն կարող է ունենալ պետության ու մասնավոր հատվածի համատեղ որոշած և կառավարության կարևորած ներդրումային նախագծերի իրականացումը, ընդսմին դրանք պետք է վերաբերեն թեթև, սննդի և քիմիական արդյունաբերության ոլորտներին: Նշենք, որ կարևոր է ֆինանսավորել ոչ թե առանձին ձեռնարկություններ, այլ նշված ոլորտների համապարփակ զարգացումն ապահովող և առավելագույնս մեծ բազմապատկային էֆեկտ ունեցող նախագծերը: Նպատակահարմար է նաև այդ միջոցներն ուղղել «Մեղրի» ազատ տնտեսական գոտում արտադրությունների հիմնմանը:

[10] Տես «ՀՀ Կառավարության պարտքի կառավարման 2016-2018 թթ. ռազմավարական ծրագիր», ՀՀ Կառավարության 2015 թ. հուլիսի 8-ի հմ. 755-Ն որոշման հավելված (minfin.am/website/images/files/2016-2018-partqi-karavarman-razmavarutyun-am.doc):

Ինչպես վերը նշվեց, նպատակահարմար է ստեղծել գերակշռող պետական մասնաբաժնով բաց բաժնետիրական ներդրումային բանկ: Դա պայմանավորված է տնտեսական ակտիվությունն ու ներքին ներդրումները խթանելու կառավարության քաղաքականությամբ, որի հիմնական նպատակն է ներմուծումը հայրենական արտադրանքով առավելագույնս փոխարինելը: Հետևաբար՝ պետությունը պետք է հնարավորություն ստանա ուղղորդելու ներդրումային բանկի գործունեությունը:

Ավելին. ներդրումային բանկի թողարկած բաժնետոմսերի գնորդ ֆիզիկական անձինք կդառնան իրենց իսկ կենսաթոշակային վճարներով ձևավորված ներդրումային փաթեթների փայատերեր: Իրավաբանական անձինք ևս, ձեռք բերելով այդ բանկի թողարկած բաժնետոմսերը, հնարավորություն կստանան դառնալու բանկի ներդրումային փաթեթի փայատերեր: Ներդրումային բանկն իր գործունեությամբ կնպաստի նաև կապիտալի շուկայի զարգացմանը՝ չդառնալով առևտրային բանկերի շուկայական մրցակից*:

Դրա հետ մեկտեղ՝ ռիսկերի կառավարումը կկատարվի այդ բանկին առընթեր ստեղծված ապահովագրային հիմնադրամի միջոցով, որը միևնույն ժամանակ կդառնա կենսաթոշակային հիմնադրամների միջոցներին ապահովագրող մի լրացուցիչ կառույց: Դրանով իսկ կստեղծվի կենսաթոշակային միջոցների ապահովագրման ևս մեկ օղակ, ինչը կնպաստի կենսաթոշակային ակտիվների ապահովությանն ու եկամտաբերությանը, ռիսկերի տարատեսակման և համարժեք իրացվելիության ապահովմանը: Սա հատկապես կարևոր է, եթե հաշվի առնենք, որ ըստ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ պարտադիր կուտակային վճարների 20 %-ի վերադարձելիությունը երաշխավորում է ստեղծված Երաշխիքային հիմնադրամը, իսկ 80 %-ը՝ ՀՀ-ն, սակայն՝ միայն մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո[11]: Ստացվում է, որ կուտակային վճարների վերադարձելիության համակարգն սկսելու է գործել միայն 2037 թ. (2014 թ. հունվարի 1-ին ուժի մեջ է մտել պարտադիր կուտակային բաղադրիչը):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր պետությունում կենսաթոշակային բարեփոխումները պետք է ունենան ոչ միայն սոցիալական ապահովության նպատակ, այլև ուղղված լինեն ներդրումների խթանմանն ու կապիտալի առաջացմանը: Կենսաթոշակային համակարգերի զարգացման միջազգային փորձը ցույց է տալիս, որ կենսաթոշակային հիմնադրամների միջոցների ներդրման և կապիտալի շուկայի զարգացածության ու կառավարման միջև կա հստակորեն արտահայտված համահարաբերակցություն: Ընդ որում, զարգացող պետություն-

* Ներդրումային բանկն զբաղվում է արժեթղթերի առք ու վաճառքով, իսկ առևտրային բանկերը պահում են ֆիզիկական ու առևտրային անձանց դեպոզիտային հաշիվները և տրամադրում վարկեր:

[11] Տես «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ 2010 թ. դեկտեմբերի 22-ի հմ. ՀՕ-244-Ն օրենքը (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64546):

ներում գերակշռում է կենսաթոշակային հիմնադրամների միջոցները ներքին ներդրումային նախագծերին ուղղելու օրինաչափությունը: ՀՀ-ի դեպքում արտաքին պարտքից կախումը նվազեցնելու և ներքին ներդրումները խթանելու համար հարկ է միջոցներ ձեռնարկել կենսաթոշակային հիմնադրամների ֆինանսական ռեսուրսները տնտեսության իրական հատված ուղղելու նպատակով: Հետևաբար, անհրաժեշտ է հրաժարվել կենսաթոշակային միջոցները հիմնականում բանկային ավանդներում և պետական պարտատոմսերում ներդրելու քաղաքականությունից:

Այդ քաղաքականությունից հրաժարվելով և որդեգրելով երկակի նախանշանակման արտադրանքի թողարկմանը նպատակաուղղված ներդրումային ծրագրերում կենսաթոշակային միջոցների ներգրավման քաղաքականություն՝ պետությունը կարող է ՀՀ կենտրոնական բանկին հանձնարարել փոխել կենսաթոշակային հիմնադրամների կառավարիչներին ներկայացվող պահանջները՝ պարտադրելով ֆինանսական միջոցների ներդրման ուղղվածության փոփոխություն: Մյուս կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը և կենտրոնական բանկը պետք է քայլեր ձեռնարկեն, նախ՝ պետության գերակշռող բաժնեմասով և կենսաթոշակային հիմնադրամների միջոցներով բաց բաժնետիրական ներդրումային բանկի և, երկրորդ, պետական երաշխիքների հիման վրա և այդ ներդրումային բանկում մասնավոր հատվածի մասնաբաժնին համապատասխանորեն ծագող ներդրումային ռիսկերի կառավարումն ապահովելու համար ապահովագրային հիմնադրամի ստեղծման ուղղությամբ:

**ФИНАНСОВАЯ БЕЗОПАСНОСТЬ**

# ПРОБЛЕМЫ ВОВЛЕЧЕНИЯ ПЕНСИОННЫХ ФОНДОВ В ИНВЕСТИЦИОННЫЕ ПРОЕКТЫ РА

*А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, ученый-аналитик Центра региональных стратегических анализов ИНСИ НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Международный опыт показывает, что в развивающихся государствах средства пенсионных фондов преимущественно направляются в инвестиционные проекты. В случае же РА в целях минимизации зависимости от внешних долгов и стимулирования внутренних инвестиций целесообразно финанасовые ресурсы пенсионных фондов направлять в реальный сектор экономики. В данном контексте рассматривается вопрос вовлечения этих средств в краткосрочные инвестиционные проекты, имеющие большой мультипликативный эффект и нацеленные на производство продуктов двойного назначения. В качестве действенного инструмента регулирования рынком капитала предлага-

ется создание на основе средств пенсионных фондов открытого акционерного инвестиционного банка с преобладающей долей государства, а также функционирующего при нем страхового фонда для обеспечения управления инвестиционными рисками. Представляется необходимым также внесение изменений в перечень требований, предъявляемых к управляющим пенсионными фондами.

Вовлечение пенсионных фондов в инвестиционные проекты РА может способствовать развитию рынка капитала и усовершенствованию системы регулирования финансово-экономической сферы государства.

**FINANCIAL SECURITY**

## THE PROBLEMS OF INVOLVING PENSION FUNDS IN THE RA INVESTMENT PROJECTS

*A. G. DAVTYAN, PhD in Economics, Research Fellow, Center for Regional Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA*

SUMMARY

The international experience shows that in developing countries the pension funds assets are mainly directed to investment projects. As to the RA, to minimize the dependence on external debts and create incentives for domestic investments, it is expedient to direct the financial resources of pension funds to the real sector of the economy. In this context, the issue of involving these funds in short-term investment projects that have a major multiplier effect, and are targeted at the production of dual-use goods, is being considered. As an efficient tool for regulating the capital market, it is proposed to create an open joint-stock investment bank, based on the pension funds assets, with the state's predominant share, as well as an insurance fund operating within it for ensuring investment risk management. It seems also necessary to make amendments in the list of requirements presented to managers of pension funds.

The involvement of pension funds in the RA investment projects may contribute to the development of the capital market, and the improvement of the system of regulation of the state financial and economic sphere.

# «ՍՈՑԻԱԼԱՑԱՆՑԱՅԻՆ ԷԿՈԼՈԳԻԱ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՈԼՈՐՏ*

*Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի հայցորդ, ՊԱՀՀ-ի ավագ սպա, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի պատասխանատու*

Սառը պատերազմի ավարտից հետո աշխարհում տեղի են ունենում տարաբնույթ զարգացումներ, որոնք էապես փոխում են մեր պատկերացումները մեր հին աշխարհի մասին, հանգեցնում են զանազան արմատական վերափոխումների քաղաքական, տնտեսական, սոցիալական (այդ թվում՝ գիտության ու կրթության), ռազմական, բնապահպանական և այլ ոլորտներում: Դրանք ոչ միայն էապես մեծացնում են մարդկության հնարավորությունները, այլև ստեղծում են նոր բնույթի սպառնալիքներ: Եթե անցած դարի վերջում ձևավորված կապակցված աշխարհում Երկրագնդի յուրաքանչյուր կետ գործնականում հասանելի էր ցանկացած այլ կետից, ապա այսօր նպատակային ազդեցության թիրախ կարող է դառնալ ցանկացած անձ, ցանկացած առարկա, որտեղ էլ որ գտնվելիս լինի: Ընդ որում, եթե առաջներում այդ խոցումների հետևանքները «պարզորոշ կերպով երևում էին անզեն աչքով», ապա այսօր շատ մարդիկ չեն էլ գիտակցում, որ ենթարկվել են խոցման և իրենց մեջ կրում են զանազան մարմնական ու հոգեկան հիվանդությունների սաղմներ:

Հատկապես մեծ զարգացում է ապրել սոցիալ-տեղեկատվական ոլորտը: Տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների բուռն զարգացումը և ներթափանցումը պետությունների, հասարակությունների, անհատների կենսագործունեության բոլոր ոլորտներ, դրանց ներգործական, առաջին հերթին՝ ձեռնածվական, ըստ էության՝ անսահման կարողությունները հսկայական սպառնալիք են ամեն մի մարդու և ամբողջ մարդկության համար:

Պատահական չէ, որ առաջներում «մարդ–միջավայր» առնչությունների մասին խոսելիս նկատի էին ունենում բնական միջավայրը, և *“ecology”/«экология»* տերմինը հայերեն թարգմանվել է «բնապահպանություն»: Սակայն «էկոլոգիայի» ընկալումն էլ ընդհանուր զարգացումների համատեքստում ենթարկվել է լուրջ փոփոխությունների: Նախ. «միջավայր» ասելով սկսել են հասկանալ նաև այն հասարակական-սոցիալական միջավայրը, որում ապրում և գործում է մարդ-անհատը, և համապատասխանաբար շրջանառութ-

* Հրապարակվում է քննարկման կարգով: – *Խմբ.:*

յան մեջ է դրվել «սոցիալական էկոլոգիա» հասկացությունը: Այնուհետև՝ որպես տուրք իրական աշխարհին զուգահեռաբար գոյություն ունեցող երևակայական (վիրտուալ) աշխարհի գոյության և այդ երկու աշխարհների փոխադարձ ներթափանցումների հանգամանքին, ձևավորվել է «տեղեկութային էկոլոգիա» հասկացությունը:

Այսպիսով՝ էկոլոգիան գիտություն է, որն «ուսումնասիրում է օրգանիզմների տարածումն ու բազմազանությունը, օրգանիզմների միջև փոխգործությունը, օրգանիզմների և դրանց շրջապատող միջավայրի միջև փոխգործությունը, բնահամակարգերի կազմակերպվածքն ու գործառությունը»[1]: Իսկ սոցիալական էկոլոգիան և տեղեկութային էկոլոգիան դրա բաժիններից են:

«Սոցիալական էկոլոգիան» մի գիտաճյուղ է, որը, ի տարբերություն «մարդու էկոլոգիայից», կամ «անտրոպոէկոլոգիայից», ուսումնասիրում է բնության հետ ոչ թե մարդկային առանձնյակի, այլ հանրույթի՝ որպես մեկ ամբողջության առնչությունները[2]: «Սոցիալական էկոլոգիան» զարգանում է և՛ որպես գիտություն, և՛ որպես սոցիալական շարժում՝ վերջին դեպքում հանդես գալով իբրև քննադատական սոցիալական տեսություն: Բնապահպանական շարժման ռահվիրաներից մեկը՝ ամերիկացի արմատական սոցիոլոգ, քաղաքական ու սոցիալական փիլիսոփա Մ. Բուկչինը գրում է. «Սոցիալական էկոլոգիան խարսխված է այն համոզմունքի վրա, որ մեր գրեթե բոլոր ժամանակակից էկոլոգիական պրոբլեմները ծագում են արմատացած սոցիալական պրոբլեմներից: Դրանից հետևում է, որ դրանք չեն կարող հասկանալի լինել, առավել ևս՝ լուծվել առանց մեր արդի հասարակության ու նրա նկատմամբ գերիշխող անտրամաբանության զգուշավոր ըմբռնման: Ճշգրտենք այս միտքը. տնտեսական, էթնիկական, մշակութային և գենդերային, ինչպես և այլ, հակամարտությունները այն ամենալուրջ էկոլոգիական խաթարումների կենտրոնում են, որոնց մենք այսօր առանձին-առանձին բախվում ենք, իհարկե, ի տարբերություն այն խաթարումներից, որոնք պայմանավորված են տարերային աղետներով»[3]:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ թեև «սոցիալական էկոլոգիան» սկսել է որպես գիտաճյուղ զարգանալ դեռ անցած դարի 20-ական թվականներին, այդուհանդերձ մինչ այսօր չկա հստակորեն ձևավորված միանշանակ կարծիք, թե որն է նրա ուսումնասիրության առարկան[4]: Ոմանց կարծիքով՝ դա մարդկային սոցիոխմբի փոխազդեցությունն է իր բնակության միջավայրի

[1] Տես “What is ecology?” “British Ecology Society” (https://www.britishecologicalsociety.org/about/what-is-ecology/):

[2] Տես *Ю. С. Чуйков.* Социальная экология и экология человека: объекты и направления исследований. «Астраханский вестник экологического образования», 2017, № 1:

[3] *Murray Bookchin.* What is Social Ecology? “Institute for Social Ecology” (http://social-ecology.org/wp/1986/01/what-is-social-ecology/).

[4] Սոցիալական էկոլոգիայի ուսումնասիրության առարկայի քննարկումը հանգամանորեն տես *В. А. Ситаров, В. В. Пустовойтов.* Социальная экология. М., 2000, сс. 35–38:

հետ՝ փոխադարձ ներգործությամբ *(Ն. Ռեյմերս, Ա. Յաբլոկով):* Ոմանք պնդում են, թե դա «այն գիտաճյուղերի միավորումն է, որոնք ուսումնասիրում են հասարակական կառույցների (սկսած ընտանիքից և այլ փոքր հասարակական խմբերից) առնչությունը իրենց շրջապատող բնական ու սոցիալական միջավայրի հետ»[5]: Ինչպես վերը նշվեց, ոմանք էլ համարում են, որ սոցիալական էկոլոգիան ուսումնասիրում է սոցիալական միջավայրի ազդեցությունը բնության վրա:

Մենք հակված ենք ընդունելու Ակիմովայի և Խասկինի կարծիքը՝ որպես առավել ընդգրկուն, իր մեջ տարբեր մոտեցումներ ամփոփող և միջավայրը լայն իմաստով մեկնաբանող տեսակետի: Այս մոտեցմամբ մարդու համար միջավայրը հանդես է գալիս իր առավել սպառիչ տեսքով:

Սակայն, ինչպես նշվեց, ներկայիս իրողությունն այն է, որ փաստացի գոյություն ունեն երկու՝ ռեալ և երևակայական, աշխարհներ, որոնք կենսագործում են ոչ թե զուգահեռաբար, այլ ըստ էության՝ փոխադարձաբար ներթափանցելով և ակտիվորեն փոխգործելով: «Երևակայականության գաղափարի զարգացման գործում առանցքային դեր է խաղում ցանցային հասարակության յուրահատկությունը, առաջին հերթին՝ արտահայտված համակարգչային ռեալության կառուցավորման հնարավորությամբ և մի այնպիսի տեխնիկական երևույթի ռեֆլեքսային առանձնահատկություններով, ինչպիսին համակարգիչն է: Մենք չենք կարող համակարգիչը լիարժեք կերպով սահմանել «տեխնիկական սարք» հասկացության միջոցով, որովհետև այն միաժամանակ նաև խորհրդանշական, սոցիալական երևույթ է՝ և՛ նոր տարածաժամանակային դաշտում սոցիալական կառույցների կերտման իմաստով, և՛ գաղափարական իմաստով՝ որպես պատկերացում, թե ի՛նչ է իրականում համակարգիչը»[6]:

Գիտնականներից շատերը համարում են, որ ներկայումս տեղեկատվական դաշտում անվերահսկելի կերպով շրջանառում է հսկայական քանակությամբ տեղեկույթ, որի մի զգալի մասը «աղբ» է: Ահա հենց այդ «աղբից» տեղեկատվական տարածությունն ազատելու խնդիրն է «տեղեկութային էկոլոգիայի» հիմնական գործառույթներից մեկը: Եվ պատահական չէ, որ այս տերմինին որպես հոմանիշ երբեմն գործածվում է «տեղեկատվական հիգիենա» տերմինը[7]: Դա հույժ կարևոր խնդիր է, քանի որ վերջին շրջանում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ տեղեկույթը ներգործում է մարդու օրգանիզմի վրա և կարող է առաջ բերել զանազան հիվան-

[5] Տես *Т. А. Акимова, В. В. Хаскин.* Экология. М., 1998 (բերվում է ըստ՝ *Վ. Ա. Սիտարով, Վ. Վ. Պուստովոյտով,* Նշ. աշխ.):

[6] *Е. Э. Чеботарева.* Виртуальная реальность и социальная действительность: аспекты взаимодействия. Автореферат канд. дисс. по социальной философии. СПб., 2005.

[7] Տես, օրինակ, *А. П. Зеленко, В. В. Пьянкова, Е. В. Тетерина*. Информационный мусор: проблема XXI века. «Актуальные проблемы авиации и космонавтики–2014. Социально-экономические и гуманитарные науки» (https://cyberleninka.ru/article/v/informatsionnyy-musor-problema-xxi-veka):

դություններ, ինչպես նաև նպաստել առողջության ամրապնդմանը[8]: Ըստ այդմ, տեղեկութային հիգիենան սահմանվում է որպես «բժշկական գիտության բաժին, որն ուսումնասիրում է մարդու հոգեկան, ֆիզիկական ու սոցիալական բարեկեցության, աշխատունակության, կյանքի տևողության, հանրության հասարակական առողջության վրա տեղեկույթի ազդեցության օրինաչափությունները, մշակում է շրջապատող տեղեկութային միջավայրի և մտավոր գործունեության օպտիմալացման գծով նորմատիվների ու դրանց առողջացմանը նպատակաուղղված միջոցառումներ»[9]:

Ըստ էության, մարդու ընդհանուր էկոլոգիան ևս տեղեկութային պրոբլեմ է, տվյալների մշտազննման ու արժանահավատության պրոբլեմ: «Խորքային հասկացութային մտածողությունը… մարդու կռահողական մտածողությունն է: Դրա արտաուղեղային բնույթը վկայում է, որ աստիճանակարգության տեսակետից այն ավելի բարձր մակարդակի մտածողություն է, և յուրաքանչյուր մարդու կռահողական բաղադրիչը միևնույն ժամանակ մոլորակի տեղեկատվական դաշտի, նրա բանոլորտի* բաղադրիչը»[10]: Հայտնի է, որ ցանկացած օրգանական համակարգ, որում խախտված են տեղեկատվական կենսընթացները, որքան էլ անթերի այն լինի, դատապարտված է կործանման[11]: Գիտափորձերով, օրինակ, հաստատվել է, որ բացասական հույզերի ներշնչումը առաջ է բերում լեյկոցիտների թվի փոփոխություն[12], ինչպես նաև ներգործում է մարդու կենսադաշտի վրա[13]:

Այսպիսով՝ տեղեկութային էկոլոգիան կարելի է սահմանել որպես «գիտություն, որն ուսումնասիրում է մարդու, մարդկային հանրությունների և ընդհանրապես մարդկության ձևավորման ու գործառման, շրջապատող տեղեկութային միջավայրի հետ անհատական ու հասարակական փոխազդեցությունների, ինչպես նաև միջանձնային ու միջխմբային տեղեկատվական փոխազդեցությունների վրա տեղեկույթի ներգործության օրինաչափությունները»[14]:

---

[8] Տես, օրինակ, «Информационная гигиена». «Центр гигиенического образования населения» (http://cgon.ru/content/62/1897/):

[9] Նույն տեղում:

* *Բանոլորտ (ноосфера/noosphere)*՝ կենսոլորտի էվոլյուցիոն զարգացման վիճակ, երբ մարդու բանական գործունեությունը դառնում է նրա զարգացման վճռորոշ գործոն: – *Խմբ.*:

[10] Տես *V. Shaptsev, V. Algazin, S. Panov, S. Sukharev.* Omsk information window to international education, culture and science. “Proceedings of the 1st Asian INFORMATION Meeting, Hong Kong, 27–30 September 1995”. Oxford, 1995, PP. 193–209:

[11] Տես *К. Пиотрович*. Лечение восстановлением информации. Краков, 1996:

[12] Տես *П. И. Буль*. Основы психотерапии. Л., 1974, сс. 130–131:

[13] Տես *Ю. В. Гуляев, Э. Э. Годик*. Физические поля биологических объектов. «Биология и информация». М., 1984, сс. 111–116:

[14] Տես *Alexei L. Eryomin*. Information ecology - a viewpoint. “International Journal of Environmental Studies”, 1998, Vol. 54, Issue 3–4 (https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/00207239808711157); նաև՝ *А. Л. Еремин.* Ноогенез и теория интеллекта. Краснодар, 2005, с. 114:

Մեր կարծիքով՝ նպատակահարմար է տեղեկութային էկոլոգիան դիտել որպես սոցիալական էկոլոգիայի մաս, քանի որ դրա դերակատարը՝ հանրության ներկայացուցիչը, այսինքն՝ մարդը, շարունակում է մնալ նույն այդ սոցիումի շրջանակներում ու ստեղծելով կամ սպառելով տեղեկույթը՝ դուրս չի գալիս իր սոցիալական միջավայրից, իր ազդեցության և գործունեության գոտուց՝ ենթարկվելով տվյալ սոցիալական միջավայրի գրված ու չգրված կանոններին և ելնելով հասարակության ընդունված նորմերից ու սահմանափակումներից, հաճախ իրեն դրսևորելով ոչ այնպես, ինչպես ինքը կուզենար դրսևորել: Այսինքն՝ ըստ էության, սոցիալական էկոլոգիայի բարենպաստ պայմանները և դրանում տեղեկութային էկոլոգիայի լիարժեքությունը պայմանավորում ու զարգացնում են մարդու կենսագործունեության միևնույն տիրույթը՝ ռեալ կյանքը, որի սահմաններից նա դուրս չի գալիս: Որքան էլ մարդը ազդում է կամ ազդվում է տվյալ էկոլոգիայի շրջանակում, նա շարունակում է մնալ իրականության մեջ, հետևաբար՝ գիտակցել ու լինել այնպիսին, ինչպիսին ինքը ձևավորվել ու սովորել է, որ պետք է լինի:

Սակայն այսօր ստեղծվել է նաև մեկ այլ իրողություն՝ երևակայական (վիրտուալ) աշխարհի միջավայրը, որտեղ մարդն իր դրսևորումներով այնպիսին է, ինչպիսին կուզենար լինել իրական կյանքում, սակայն նախկինում չէր լինում՝ անհրաժեշտ հնարավորություններից զուրկ լինելու պատճառով: Այս իմաստով ո՛չ սոցիալական էկոլոգիան, ո՛չ էլ տեղեկութային էկոլոգիան, մեր կարծիքով, այլևս բավական չեն, որպեսզի լիարժեք կերպով ներառեն մարդու կենսագործունեության այդ նոր տիրույթը, որը թեև երևակայական է, սակայն իր ռեալությամբ արդեն չի զիջում ռեալ աշխարհին՝ նմանակային եղանակով գործակցելով մեր «սովորական» աշխարհի հետ և ձեռք բերելով նույնական էություն: Ընդսմին այստեղ յուրաքանչյուր մարդ օժտված է անսահման կարողություններով արարելու նոր իրողություն, տարբեր կեղծանուններով ու ֆեյք (կեղծ) պրոֆիլների միջոցով ձևավորելու տրամադրություններ, ստեղծելու և տարածելու տեղեկույթ, վճռականորեն ազդելու որոշակի երևույթների ու գործընթացների վրա, այսինքն՝ ունակ է այն ամենի, ինչի մասին կարող էր երազել մանուկ հասակում, սակայն այս անգամ՝ իրականության մեջ տեսնելով իր արարչության արգասիքները: Եթե նախկինում, լինելով հանրության անդամ, սոցիալական միջավայրի դերակատարը՝ մարդը, մնում և գործում էր միայն իր հանրության շրջանակներում, ապա սոցիալական ցանցերում նրա հնարավորություններն այնքան են աճել, որ անգամ տեղեկութային միջավայրի տիրույթն այլևս չի բավարարում նրան, քանի որ նա ոչ միայն տեղեկույթի սպառող է, այլև ստեղծող: Ավելին. ռեալ կյանքում իր դրսևորումներին զուգահեռաբար մարդը երևակայական աշխարհում կերպափոխվում է և ստանում գործելու ազատություն՝ գիտակցելով, որ այլևս չկան այն պատժիչ-վերահսկողական մեխանիզմներն ու պատասխանատվության դաշտը, որոնք ռեալ կյանքում կաշկանդում էին նրա «Ես»-ի անբռնազբոսիկ դրսևորումները: Տվյալ երևույթը շատերի համար դառնում է որոշակի երկատվածության պատճառ, քանի որ նրա «ռեալ» ու

«երևակայական» անձնավորությունները լինում են էապես տարբեր*: Մարդն իր օրն սկսում և անցկացնում է սոցիալական ցանցում՝ ոչ միայն այնտեղից ստանալով իրեն անհրաժեշտ տեղեկույթը, այլև այնտեղ արտահայտելով իր հույզերը, մտքերը, ապրումակցումները՝ այդպիսով կտրվելով կենդանի շփումից ու ռեալ կյանքում այդ հույզերը կենդանի կերպով արտահայտելու կարողությունից: Այսինքն՝ շատ մարդկանց համար «անիրական», երևակայական իրականությունը դարձել է իրական ու գերակա, որտեղ նա առավել ակտիվ է, նախաձեռնող, յուրատիպ:

Եթե նայենք սոցիալական ցանցերի գործիքարանի զարգացման ընթացքին, ապա կտեսնենք, որ եթե նախկինում օգտատերը որևէ նյութի նկատմամբ իր վերաբերմունքը արտահայտում էր ընդամենը հավանության նշան կիրառելու կամ չկիրառելու միջոցով *(Like),* ապա այսօր նրան է տրամադրվում իր հույզերը լայն սպեկտրով արտահայտելու հնարավորություն («սմայլիկներ»), և մարդը իր ապրումը, իր վերաբերմունքը արտահայտում է առանց որևէ ջանքեր գործադրելու և իրական հուզականության՝ մեկ կոճակի սեղմմամբ: Սա հղի է այն վտանգով, որ ժամանակակից մարդը աստիճանաբար հեռանում է կենդանի շփումից և իր հույզերը կենդանի կերպով արտահայտելուց, ասել է, թե՝ *մարդ* լինելուց, և նախապատվություն է տալիս ավելի դյուրին միջոցին՝ հետզհետե ռոբոտանալով: Բացի այդ, մարդիկ շփվում են այդ միջոցով ամենևին էլ ոչ այն պատճառով, որ ստիպված են այդպես վարվել՝ միմյանցից հեռավորության վրա գտնվելու պատճառով: Ամենևին էլ ոչ, այս երևույթը այսօր բնորոշ է անգամ զույգերից շատերին, որոնք իրար հետ շփվում ու հաղորդակցվում են երևակայական դաշտում՝ դրան բնորոշ արտահայտչամիջոցներով: Եվ ամենևին էլ պատահական չէ, որ դեռ ավելի քան 20 տարի առաջ ԱՄՆ-ի ցամաքային զորքերի շտաբի պետի՝ հետախուզության գծով տեղակալ Ռ. Փիտերսը գրել է. «Տեխնոլոգիան կարող է հասցնել միջավայրին կատարելապես տիրապետելուն, բայց կարող է նաև հասցնել մահացու կախումների: .... Տեխնիկայի պասիվ օգտագործողը հավելյալ արժեք չի ստեղծում, և նույնիսկ հնարավոր է, որ կորցնի օպերատորական կարողությունները և նախաձեռնությունը՝ դառնալով «ինքնախոշտանգող վամպիր»: .... Հասարակությունը պետք է պատրաստի «տեխնագործիչներ», և բոլոր տեխնոլոգները՝ ակտիվ, թե պասիվ, պետք է ստանան մի առողջ միասնական մակարդակ: Այլապես տեխնոլոգիայի ուժը կործանարար է...»[15]:

Ուստի կարող ենք փաստել, որ հանրության ներկայացուցիչը սոցիալական ցանցում կարող է լինել լիովին այլ անձնավորություն, քան ռեալ կյանքում, թեև կարող է մնալ այնպիսին, ինչպիսին կա «լույս աշխարհում»: Սա հուշում է, որ վաղուց արդեն ժամանակն է, որպեսզի պատշաճ ուշադրություն և

* Կարծում ենք, որ այս հանգամանքը պետք է դառնա լուրջ հոգեբանական հետազոտությունների առարկա՝ թե որն է երկատման սկզբնապատճառը:

[15] *Ռ. Փիտերս,* Ապագա հակամարտությունների կուլտուրան: «ՀԲ», 1996, հմ. 3–4:

կարևորություն տրվի մեր կյանքի ներկայիս անքակտելի, իսկ ոմանց համար՝ առաջնային ու գլխավոր տիրույթին՝ երևակայական աշխարհին, որը զետեղված է սոցիալական ցանցերում և վաղուց արդեն ապրում է իր ուրույն օրենքներով՝ անգամ դրանք փոխադրելով ռեալ կյանքի դաշտ: Շատերի համար այն արդեն կյանքն ու կենսագործունեությունը պայմանավորող ու բնութագրող իրականություն է: Այս իմաստով, կարծում ենք, պետք է կարևորել այդ իրականության առողջ ու բարեբեր միջավայրի ստեղծման ու պահպանման խնդիրը, բարենպաստ էկոլոգիան: Սոցիալական ցանցի միջավայրը այսօր մեզանում ոչ պակաս կարևոր է, քան սոցիալական միջավայրը ռեալ կյանքում, իսկ երբեմն անգամ ավելի է կարևոր, քանի որ ունի անձնավորության վրա անմիջական հոգեբանական ու սոցիալական ներազդեցություն գործելու անվերահսկելի ներուժ և հաճախ պայմանավորում է անձնավորության ինքնադրսևորման նոր ձևերն ու եղանակները:

Այս ամենի, ինչպես նաև վերջին երկու տասնամյակում համացանցի ու թվային տեխնոլոգիաների, իսկ վերջին տասը տարիներին՝ սոցիալական մեդիայի արագընթաց զարգացման հաշվառմամբ մենք հանգել ենք այն եզրակացությանը, որ նպատակահարմար է շրջանառության մեջ դնել «Սոցիալացանցային էկոլոգիա» *(«Социально-сетевая экология», «Social Network Ecology»)* և «Սոցիալացանցային էկոլոգիական անվտանգություն» *(«Социально-сетевая экологическая безопасность», «Social Network Ecological Security»)* հասկացությունները: Պետք է նշել, որ անգլերեն գրականության մեջ առկա է *«Social Network Environment»* տերմինը, սակայն խնդիրը այն է, որ սոցիալական ցանցերում, ընդհանրապես՝ սոցիալական մեդիայում, ձևավորվել է հարաբերությունների ու պրոցեսների մի յուրահատուկ և բարդ միջավայր, որը ոչ միայն բուն միջավայրն է *(Environment)* նեղ իմաստով, այլև լայն իմաստով էկոլոգիա է՝ իր մեջ ներառելով ինչպես սոցիալական ցանցում առկա միջավայրը, այնպես էլ փոխազդեցությունը մարդկային հանրության և առանձին անհատների հետ:

Հարկ է նշել, որ որքան առողջ է սոցիալական ցանցի էկոլոգիան, այսինքն՝ միջավայրը և մարդկանց հետ դրա փոխազդեցության մեխանիզմները, այնքան այդ ցանցն ավելի արդյունավետ է: Նախորդ ուսումնասիրություններում մենք արդեն խոսել ենք այն մասին, թե ինչպիսի դերակատարություն ունեն սոցիալական մեդիան ու դրա միջավայրը՝ հասարակության համախմբման առումով: Մասնավորապես՝ անդրադարձ է եղել «Ֆեյսբուք» սոցիալական ցանցին, ինչպես նաև բլոգոլորտի հնարավոր կարողություններին՝ սոցիալական համախմբվածության կամ տեղեկույթի լայն տարածման խնդիրների համատեքստում[16]: Սակայն, եթե պատերազմական պայմաններում սոցիա-

[16] Տես *Ա. Մ. Շահվերդյան*, Բլոգ-կայքերը՝ որպես սոցիալական համախմբման գործիք: «ՀԲ», 2015, հմ. 4, *նույնի*՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցում ՀՀ ռազմական տեղեկույթի և բանակային թեմաներով նյութերի տարածման հարցի շուրջ: «ՀԲ», 2016, հմ. 3:

լական մեդիայում հասարակությունը համախմբվում է արտաքին թշնամու դեմ, և սոցիալական ցանցում տիրող ընդհանուր մթնոլորտը, որպես կանոն, հիմնված է ազգային համերաշխության և ազգային շահերի ընդհանուր ընկալման վրա, իսկ կեղծ օգտատերերին էլ հիմնականում ստեղծում է թշնամին, ապա խաղաղ պայմաններում տարբեր հասարակական խնդիրների առնչությամբ տրամադրությունները ձևավորում և ուղղորդում են տարբեր, հաճախ՝ հենց կեղծ օգտատերերը, որոնք նույն հասարակության տարբեր անդամների կամ խմբերի ստեղծած և միտումնավոր կերպով տեղեկույթը խեղաթյուրող տարրեր են: Դրանք նպատակասլաց կերպով՝ երբեմն նուրբ ու աննկատ, երբեմն գռեհիկ ձևով խաթարում են հասարակության համախմբվածությունը, իսկ իրենց լայնորեն տարածած կեղծ կամ սադրիչ տեղեկույթով հաճախ հասարակության մեջ առաջ են բերում բևեռացում կամ պառակտում: Նման վիճակում այդ միջավայրը կարող է իր մեջ պարունակել այնպիսի լարվածություն, որ դառնա նույնիսկ պայթյունավտանգ ու վնասի պետության կայունությանը, վարկին ու հասարակության խաղաղ կենսագործունեությանը՝ հանգեցնելով բախումների և այլ լուրջ բացասական զարգացումների:

Այս իմաստով կարևոր է, որպեսզի ապահովվի սոցիալացանցային էկոլոգիական անվտանգությունը: Մեր կարծիքով՝ այս ապահովումը առաջին հերթին պետք է կատարվի ողջամիտ անհատների ու ՀԿ-ների ուժերով՝ սոցիալական էջերի ու հարթակների միջոցով և նպաստի սոցիալական ցանցում ներգրավված օգտատերերի շրջանում համերաշխության և համախմբվածության հաստատմանը:

Մեծ նշանակություն ունի նաև բնապահպանական կառույցների սոցիալական ցանցերի հարթակների ակտիվ գործունեությունը, քանի որ բնության նկատմամբ հոգատարության ու սիրո տարածումը էապես ազդում է հասարակության և առանձին օգտատերերի աշխարհընկալումների և տրամադրությունների վրա, ինչը բարենպաստ մթնոլորտ է հաստատում նաև սոցիալական ցանցի ներսում: Ըստ էության, էկոլոգիական անվտանգության հասկացության շրջանակներում սոցիալացանցային էկոլոգիական անվտանգության հասկացության ձևավորումը արտացոլում է էկոլոգիական անվտանգության բազմաշերտությունն ու բազմակողմանիությունը: Մեր կարծիքով՝ հասարակության յուրաքանչյուր ներկայացուցիչ, որին հատուկ են էկոլոգիական գիտակցությունը և բնության նկատմամբ հոգածությունը, դառնում է ավելի բարեկենցաղ և շրջակա միջավայրի հետ ներդաշնակ: Հենց այս իմաստով էլ պետք է կարևորել սոցիալացանցային էկոլոգիական անվտանգության ապահովումն ու անարատ սոցիալացանցային էկոլոգիայի առկայությունը:

Ամփոփելով՝ փաստենք, որ վերջին տարիներին էկոլոգիական անվտանգության հասկացությունը էականորեն ընդլայնվել է, և տարեցտարի աճում են դրա կարևորությունն ու արդիականությունը՝ կապված մարդու գործունեու-

թյան հետ[17]: Այսօր այն դարձել է համամոլորակային խնդիր՝ իր բազմաշերտությամբ ու բազմակողմանիությամբ հանդերձ ընդգրկելով մարդու կենսագործունեության ամենատարբեր ոլորտները:

[17] Տես «Экологическая безопасность. Понятие об экологической безопасности» (http://ecobez.narod.ru/ecosafety.html):

**ЭКОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ**

## ПОНЯТИЕ «СОЦИАЛЬНО-СЕТЕВОЙ ЭКОЛОГИИ» КАК НОВАЯ ОБЛАСТЬ БЕЗОПАСНОСТНЫХ ИССЛЕДОВАНИЙ*

*А. М. ШАХВЕРДЯН, подполковник, соискатель НИУО МО РА, старший офицер НИУО, ответственный за информационные и общественные связи*

РЕЗЮМЕ

После эпохи Холодной войны происходящие в мире бурные события и процессы несут в себе как беспрецедентный потенциал новых возможностей, так и качественно новые угрозы безопасности человечества. Если раньше в связанном мире каждая точка планеты была достижима из любой другой точки, то сегодня целевой мишенью для воздействия может оказаться любой индивидуум, любой субъект, где бы он ни находился. Причем если раньше последствия подобного поражения были «видны невооруженным глазом», то в настоящее время многие даже не подозревают, что подверглись атаке и носят в себе зародыши различных соматических и психических заболеваний.

Вследствие этого, такое понятие, как экология, существенно расширило свое значение и сейчас охватывает не только взаимоотношения отдельного человека с природной средой обитания, но и всего социума, человека с социальной и виртуальной средами. В связи с этим возникли такие понятия, как «социальная экология» и «информационная экология». Первая определяется как взаимоотношения со средой обитания не особи (как в антропоэкологии), а всего социума. Вторая же определяется как наука, изучающая закономерности воздействия информации на формирование и функционирование человека, человеческих социумов и вообще человечества, на индивидуальные и общественные взаимодействия с информационной средой, а также на межличностные и межгрупповые информационные взаимодействия.

В настоящее время в информационном пространстве сформировалась совершенно своеобразная среда, которая не только существует параллельно с реальным миром, но и настолько органично переплетается с

* Статья публикуется в порядке обсуждения. – *Ред.*

ним, что многие, теряя чувство реальности, проводят в этой среде больше времени, чем в реальности. Благо, здесь у них больше возможностей для самовыражения (подчас резко отличающегося от реального), поскольку здесь любой человек является не только потребителем, но и создателем и распространителем информации. Такой средой являются социальные сети в информационном пространстве. Их влияние на психику человека (а известно, что информационным воздействием можно вызывать в организме и физические изменения) не только намного сильнее, но и качественно отличаются от воздействия остального информационного поля, что создает благоприятные условия для манипулирования сознанием и подсознанием пользователя.

В связи с этим предлагаются два новых понятия: «социально-сетевая экология» и «социально-сетевая экологическая безопасность», целиком относящиеся к взаимодействию человека с информационной средой социальных сетей.

**ECOLOGICAL SECURITY**

## THE CONCEPT OF "SOCIAL-NETWORK ECOLOGY" AS A NEW FIELD OF SECURITY STUDIES*

*A. M. SHAHVERDYAN, Lieutenant Colonel, Applicant, NDRU, MOD, RA, Senior Officer, NDRU, Information and Public Relations Officer*

SUMMARY

After the Cold War era, the turbulent events and processes in the world carry both the unprecedented potential of new opportunities and qualitatively new threats to the security of mankind. If earlier in the connected world every point on the planet was accessible from any other point, today any individual, any person wherever he or she is, may be the mission target for impact. And if earlier the aftermaths of such an engagement were "visible to the naked eye", currently many of us do not even suspect that they have been attacked, and carry the germs of various somatic and mental diseases.

As a result, such a concept as ecology has significantly expanded its meaning, and at present covers not only the interrelations of the individual human being with the natural habitat, but also the entire social stratum, of a person with social and virtual media. In this regard, there emerged such concepts as "social ecology" and "information ecology". The first one is defined as the relationship with the habitat of not an individual (as it is in anthropoecology), but the entire society. The second one is defined as a

* This article is being published for substantive discussion. – *The ed.*

science studying the regularities of information impact on the formation and functioning of human beings, human societies and the mankind in general, on individual and public interactions with the information environment, as well as on interpersonal and intergroup information interactions.

At present, an absolutely unique environment has been formed in the information space, which not only exists in parallel with the real world, but is also so organically intertwined with it that a lot of people, losing their sense of reality, spend more time in this environment than in the reality. Fortunately, here they have more opportunities for self-expression (sometimes very different from the real one), because here any person is not only a consumer, but also a creator and distributor of information. Social networks in the information space are such a medium. Their influence on the human psychic setup (and it is known that the information impact can cause also physical changes in the human body) is not only much stronger, but also qualitatively different from the impact of the other information field, and that creates favorable conditions for manipulating the user's consciousness and subconsciousness.

# ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔ. ՆՈՐՄԱՏԻՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԻ ԱՅԼ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ*

*Ա. Գ. ԿԱՂԱՐՇՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ,*
*Լ. Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ*

Արդի պետութենագիտության, կամ սահմանադրական իրավունքի, ընդհանուր տեսության մեջ պետության պաշտպանության խնդրի լուծումը գերազանցապես հիմնվում է գործառութային մոտեցման վրա: Ըստ դրա՝ պետությունն իրականացնում է մի շարք արտաքին ու ներքին գործառույթներ, որոնցից մեկն էլ առաջնային նշանակություն ունեցող պաշտպանական գործունեությունն է:

Սակայն պատմական փորձը վկայում է, որ ավանդական գործառութային տեսամեթոդական հիմունքներով կառուցված պաշտպանական համակարգերը միշտ չէ, որ իրենց արդարացնում են՝ հաջողությամբ կատարելով դրված խնդիրները: Դրա վառ ապացույցն են Հայաստանի Առաջին Հանրապետության պաշտպանական քաղաքականության ուսումնասիրությամբ քաղված դասերը[1]: Երկրորդ աշխարհամարտում եվրոպական պետությունները չկարողացան դիմակայել Գերմանիայի ռազմական հարվածներին, և նույնիսկ ռազմականացված կառավարման տարրերով օժտված խորհրդային պետությունը պատերազմի սկզբնական շրջանում չէր կարողանում հաջողությամբ հետ մղել նրա լայնամասշտաբ հարձակումը: Այդ անհաջողությունների պատճառներից մեկն էլ գործառութային տեսության թերություններն են, քանի որ պաշտպանության նկատմամբ գործառութային մոտեցումը հնարավորություն չի տալիս ստեղծելու գործուն սահմանադրական կազմակերպական ձևեր և կենսունակ հաստատություններ:

---

* Հոդվածը հրապարակվում է քննարկման կարգով: – *Խմբ.*:

[1] Այդ մասին հանգամանորեն տես *Ա. Գ. Կաղարշյան,* Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Ե., 2012, էջ 231–241, *նույնի*՝ Հայաստանի առաջին հանրապետության կառավարության լիազորությունները և իրավական գործունեությունը երկրի պաշտպանության ոլորտում: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

Տվյալ մոտեցմամբ կառավարող սուբյեկտի համար ընդամենը ստեղծվում է գործելու ընդհանուր պարտավորություն, իսկ այդ ընդհանուր պարտավորության պատշաճ, որակյալ և արդյունավետ կատարման համար բավարար երաշխիքներ չեն ստեղծվում: Մյուս կողմից՝ սուբյեկտն ինքը իր կազմակերպվածքի և իշխանությանը լիակատար կերպով տիրապետելու առումով կարող է լինել անգործունակ կամ իրավականորեն կաշկանդված, որովհետև օբյեկտիվ պայմանները կամ օբյեկտիվ իրավունքը նրան հնարավորություն չեն տալիս ծավալվելու, գործելու, իր ներզոր ունակությունները լիարժեք կերպով ցուցաբերելու՝ չնայած իր ձգտումներին և ներքին մղումներին:

Քաղաքական իրականության մեջ նույնիսկ բացառված չէ, որ կառավարող սուբյեկտը չունենա գործելու ցանկություն՝ անկախ կառավարման ձևից, լինի դա միապետություն, թե հանրապետություն: Ընդսմին այդ անգործության արմատները կարող են լինել ինչպես օբյեկտիվ՝ իրադրային, այնպես էլ սուբյեկտիվ՝ հոգեբանական: Օրինակներ կարող ենք վերցնել մեր պատմությունից: Այսպես. Արշակունյաց թագավորությունում արքան միգուցե և ուներ գործելու ցանկություն, սակայն օբյեկտիվորեն ստեղծված իրադրության և կառավարման նախարարական համակարգի պայմաններում չէր կարող դա անել լիարժեք կերպով: Մեկ այլ օրինակ է Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որում կար երկիրը պաշտպանելու մղում, սակայն առաջնահերթությունների սխալ ընտրության, ինչպես նաև պաշտպանական խնդիրների լուծման նկատմամբ սովորական գործառութային մոտեցման կիրառման հետևանքով կառավարող սուբյեկտը՝ հանրային իշխանական ապարատը, չկարողացավ դրսևորել իր պաշտպանական ունակությունները: Այստեղից հետևում է, որ խորագիտական հետազոտությունների արդյունքներով պետք է մշակվի նոր, այլընտրանքային լուծում ներկայացնող մի հայեցակարգ, որում պետութենակերտման նոր սկզբունքների հիման վրա հստակ կերպով ձևակերպվեն դրա նորմատիվ իրավական բովանդակությունը, պահանջները, կանոնները:

Այս նպատակով մենք, հենվելով մեր կատարած հանգամանալից վերլուծությունների արդյունքների վրա, առաջարկում ենք այդ առաջնահերթ խնդիր-նպատակի իրագործման մի մեխանիզմ, որի հիմքում դրված է պաշտպանունակության գաղափարը:

Նախ փորձենք պարզել «պաշտպանունակություն» հասկացության իմաստը և հարաբերակցությունն այդ ասպարեզի այլ հիմնարար հասկացությունների հետ: Եթե պետության և իրավունքի տեսության, ինչպես նաև սահմանադրական իրավունքի տեսության համար այս հասկացությունը որոշ չափով անսովոր է, ապա ռազմագիտության և անվտանգության քաղաքագիտության ու անվտանգաբանության[2] մեջ այն լայնորեն օգտագործվում է: Ան-

[2] Պետահիշխանական պրակտիկայում արդեն վաղուց գոյություն ունեն պետության ռազմական պաշտպանության, ազգային անվտանգության ապահովման հիմնահարցեր: Դրան զուգահեռաբար այդ հարցերն իմաստավորվում ու վերլուծվում են տեսականորեն: Անվտանգության, այդ թվում՝ պաշտպանության ոլորտներում գործում են բազմաթիվ մաս-

վտանգաբանության մեջ «ազգային անվտանգություն», «վտանգ», «սպառնալիք», «անվտանգության դեմ ուղղված սպառնալիք», «ռազմական անվտանգություն», «պաշտպանական անվտանգություն», «ազգային շահեր» հասկացությունները լայնորեն կիրառվող, իրենց տեսական կամ նորմատիվ բովանդակությունը (բնորոշումը) ունեցող հասկացություններ են[3]: Այս կապակցությամբ առաջանում է խնդիր՝ պարզել վերը թվարկված և առաջարկվող «պաշտպանունակություն» տերմինների իմաստային հարաբերակցությունը:

Ռազմագիտության մեջ օգտագործվող պետության «պաշտպանունակություն» հասկացությունը ռազմագիտական հանրագիտարանները բնորոշում են որպես «արտաքին ագրեսիայի հետմղմանը, պետության տարածքային ամբողջականության և անկախության պաշտպանությանը նրա տնտեսության, բնակչության և ԶՈՒ-ի պատրաստվածության մակարդակը»[4]: Մեկ այլ բնորոշման համաձայն՝ «պաշտպանունակությունը պետության ընդունակությունն է հակահարված տալու արտաքին ռազմական ագրեսիային իր տնօրինության տակ եղած ուժերի, միջոցների և ռեսուրսների ամբողջ համակցությամբ»[5]:

Այսպիսով՝ անվտանգաբանության բառապաշարում առկա տերմիններից՝ «ազգային անվտանգություն», «ռազմական անվտանգություն», «պաշտպանունակություն», իմաստով ամենալայնը առաջինն է, երկրորդը՝ «ռազմական անվտանգությունը», առաջինի տեսակներից մեկն է, իսկ երրորդը բուն անվտանգության տեսակ չէ, այլ նրա մի մասն ապահովելու կարողություն: Այստեղ հարց է ծագում. արդյո՞ք կարող ենք միևնույն հարթության վրա դնել և իրար հետ բաղդատել վիճակն ու կարողությունը: Թվում է, թե՝ ո՛չ: Սակայն կա մի նրբություն: Ըստ հանրագիտարանային սահմանման՝ «պաշտպանունակությունը» պարզ կարողություն չէ, այլ՝ «պատրաստվածության մակարդակ», այսինքն՝ մի այնպիսի վիճակ, որում գտնվելով պետությունը կարող է

նագիտացված և ընդհանուր նախանշանակման պետական մարմիններ: Այս հարաբերությունների բարդ համակարգը պայմանավորեց իր իսկ հետազոտության պահանջմունքը: Որպես արդյունք՝ արդեն կարելի է փաստել իմացության երկու կայացող ոլորտների՝ անվտանգաբանության (տես *L. F. Korzeniowski.* Securitology-security of a subject. „Securitologia“, 2016, N 1) և ռազմիշխանաբանության (տես *В. Ф. Халипов.* Энциклопедия власти. М., 2005. сс. 309–321) գոյությունը:

[3] Տես *С. А. Фомин.* Обеспечение национальной безопасности: курс лекций. М., 2014, сс. 9–109; *Ю. В. Анохин, Р. И. Гадельшин.* Национальная безопасность: Теоретические и терминологические аспекты (https://cyberleninka.ru/article/n/natsionalnaya-bezopasnost-teoreticheskie-i-terminologicheskie-aspekty):

[4] Տես «Военный энциклопедический словарь», т. II. М., 2001, сс. 182–183, նաև՝ *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երգնկյան*, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 500–501:

[5] Տես *В. К. Белов, А. Ф. Воронов, Е. Н. Голенко и др.* Военное право. Серия «Право в Вооруженных Силах – консультант». М., 2004:

ապահովել իր պաշտպանությունը[*]: Առաջ անցնելով՝ նշենք, որ նման հարց ծագում է նաև «պաշտպանություն» հասկացության (տերմինի) դեպքում:

Այսպիսով՝ միանշանակ է, որ «ազգային անվտանգություն» հասկացությունը լայն է նաև պետության «պաշտպանունակություն» հասկացությունից: «Ռազմական անվտանգությունը», իր հերթին, ավելի ընդգրկուն է «պետության պաշտպանունակություն» հասկացությունից: Ռազմական անվտանգության սահմանմամբ այն «երաշխավորվում է ներքին և արտաքին (ընդգծումը մերն է.–*Ա. Վ., Լ. Բ.*) սպառնալիքներից քաղաքացու, հասարակության, ազգի ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությունը ռազմական ուժի կիրառմամբ կամ դրա կիրառման սպառնալիքով»[6]: Եթե հիշենք պաշտպանունակության վերը բերված սահմանումը, ապա կհամոզվենք, որ վերջինս ռազմական անվտանգության հատվածն է՝ միայն «արտաքին ագրեսիայի» մասով: Տվյալ երեք հասկացությունները շաղկապվում են «պաշտպանություն» հասկացության միջոցով, քանի որ արտահայտվում են որպես պաշտպանվածության վիճակ: Պաշտպանությունը պետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության զինված պահպանմանը և դրան պատրաստմանը նպատակաուղղված քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցառումների համակարգ է[7]:

Այսպիսով՝ «ռազմական անվտանգությունը» և «պաշտպանությունը» նույնական հասկացություններ չեն: Պաշտպանությունը գործունեություն է՝ նպատակաուղղված ագրեսիաներին հակահարված տալուն պետության նախապատրաստմանը և անհրաժեշտության դեպքում զինված պաշտպանությանը: Այս իմաստով «պաշտպանությունը» համընկնում է պետութենագիտության մեջ օգտագործվող «պետության արտաքին պաշտպանության գործառույթ» հասկացության հետ:

Իսկ հիմա փորձենք պարզել ռազմագիտության ու անվտանգաբանության մեջ օգտագործվող «պետության պաշտպանունակություն» և մեր առաջարկած «պաշտպանունակությունը՝ որպես պետության ու հասարակության կազմակերպման սկզբունք» հասկացությունների հարաբերակցությունը և

[*] Ի դեպ, «պաշտպանունակություն» տերմինի լեզվական վերլուծությունում ռուսերեն տրվում է՝ «свойство или состояние» (տես «Викисловарь. Обороноспособность» (https://ru.wiktionary.org/wiki/%D0%BE%D0%B1%D0%BE%D1%80%D0%BE%D0%BD%D0%BE%D1%81%D0%BF%D0%BE%D1%81%D0%BE%D0%B1%D0%BD%D0%BE%D1%81%D1%82%D1%8C)), ինչը, կարծում ենք, պայմանավորված է ոչ այնքան բառաձևական հանգամանքներով, որքան հասկացության (տերմինի) սահմանմամբ՝ «պատրաստվածության մակարդակ»:

[6] Տես «Военная (оборонная) безопасность». «Война и мир в терминах и определениях». Военно-политический словарь. Под общей ред. Д. Рагозина (http://www.voina-i-mir.ru/article/28):

[7] Տես «Պաշտպանության մասին» ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի հմ. ՀՕ-196-Ն օրենքը (http://www.arlis.am/documentview.aspx?docid=117631), Федеральный закон РФ «Об обороне (с изменениями на 29 декабря 2017 года)» (http://docs.cntd.ru/document/ 9020348):

իմաստային տարբերությունը: Ռազմագիտական տեսանկյունից պաշտպանունակությունը նշանակում է, թե որքանով է պետությունը ռազմական, տնտեսական, գիտական, սոցիալական և բարոյաքաղաքական տեսանկյուններից նախապատրաստված ագրեսիայից պաշտպանվելուն կամ զինված գործողություններ (պատերազմ) վարելուն: Այս դեպքում գլխավորը ոչ թե պաշտպանունակության սուբյեկտն է, այլ տնտեսական, ռազմական (բանակ ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսին է նրա մարտունակությունը), սոցիալական, բարոյաքաղաքական ոլորտներում նրա ունեցած կարողությունների համալիրը: Այլ կերպ ասած՝ տվյալ իմաստով պաշտպանունակությունը մատնանշում է, թե որքանով արդյունավետ է պետությունը իրականացնում իր պաշտպանական գործառույթը, թե ինչ որակական կողմ ունեն դրա բովանդակությունը կազմող բաղադրիչները, որոնց հանրագումարն էլ կոչվում է պաշտպանունակություն:

Մինչդեռ պաշտպանունակության մեր առաջարկած մեկնակերպում առաջին հերթին կարևորվում է հենց պաշտպանունակության սուբյեկտը, ընդհանուր առմամբ՝ պետությունը, դրա և դրա բաղադրիչների (պետական մարմիններ, ծառայողներ և այլն) որակական կազմակերպակառուցվածքային կողմերը, որոնք ի վերջո պետությանը վերածում են պաշտպանական գործունեությանն ընդունակ, նպատակամղված կազմակերպական կառույցի, արդյունավետ գործելու ունակ սուբյեկտի: Թե ի՞նչ ուղղություններով, ի՞նչ բովանդակությամբ գործունեություն է իրականացնելու այդ «ունակ» սուբյեկտը, մնում է անվտանգաբանության և ռազմագիտության ուսումնասիրության տիրույթում: Իրավագիտությանը, մասնավորապես՝ սահմանադրագիտությանը, այս ոլորտում հետաքրքրում են հիմնադրվող կառույցի կազմակերպական գծերը, դրա բաղադրատարրերի հարմարեցվածությունն իր առջև դրված նպատակ-խնդրի կենսագործմանը, որոնց գոյության դեպքում առաջ է գալիս պետության գործելու՝ պաշտպանվելու հատկությունը, որն էլ անվանում ենք պաշտպանունակություն:

Պաշտպանունակությունը պետական համակարգին բնորոշ որոշակի հատկություն է, որն անհրաժեշտ նախադրյալ է ինքնապահպանման, ինքնավերարտադրման, ինքնակատարելագործման համար...: Խնդիրն այն է, որ այդ հատկությունը՝ արտակարգ, պատերազմական պայմաններում գործելու ունակությունը, դրվի սովորական իրադրությունների համար ստեղծված պետական մարմինների ու իրավական հաստատությունների էության մեջ[8]: Այս կապակցությամբ երևի թե տեղին է բերել պետական կառավարման ճանաչված տեսաբաններից մեկի՝ Գ. Վ. Ատամանչուկի հետևյալ միտքը, որը նա արտահայտել է մարդկային արարքների վերաբերյալ, սակայն լիովին վերաբերելի է նաև պետությանը. «Քաջ հայտնի է, որ ցանկացած արարք սկսվում է ինչ-որ բան անելու ցանկությունից: Միևնույն ժամանակ քաջ հայտ-

[8] Տես *Ա. Վաղարշյան,* Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ: Ե., 2016, էջ 206:

նի է, որ քիչ է ցանկանալ՝ պետք է իմանալ, քիչ է իմանալ՝ պետք է կարողանալ անել, քիչ է կարողանալ անել՝ պետք է հնարավորություն ունենալ (ունենալ ուժ, ռեսուրսներ), քիչ է հնարավորություն ունենալ՝ պետք է իրապես անել, կենսագործել ցանկությունը, հետևաբար՝ խնդիրը հանգում է կառավարմանը, նաև պետական կառավարմանը»[9]:

Պաշտպանունակության վերը բերված նոր գաղափարը անհրաժեշտ է վերածել նորմատիվ բովանդակություն ունեցող պահանջների, որոնց իրավական ամրագրումը պետք է կյանք տա այդ հասկացությանը՝ որպես սկզբունքի: Ցանկացած սկզբունք, լինի դա պետական, թե իրավական համակարգի, իր կարգավորիչ դերը կատարում է ոչ թե որպես գաղափար, քարոզչական նշանակություն ունեցող դրույթ, այլ որպես սկզբունքի ընդհանուր բովանդակությունից, բանաձևից բխեցվող նորմատիվ-պարտադիր պահանջների, կանոնների համակցություն: Եթե իրավական պետության սկզբունքից բխում են մի շարք հիմնարար պահանջներ, որոնք ունեն սահմանադրական և օրենսդրական ամրագրում ու կենսագործվում են պետության իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան գործունեության ընթացքում, ապա տեսության խնդիրն է պաշտպանունակության սկզբունքի նոր բովանդակության հիման վրա ձևակերպել հասկանալի, կատարելի, արդյունավետ պահանջներ և փորձել դրանց տալ իրավական ամրագրում: Անշուշտ, պետական կառավարման տեսությունն արդեն ունի պետական կառավարման բազմաթիվ կողմերի վերաբերյալ մշակված հայեցակարգ*: Սակայն այդ հիմնահարցերը մշակվել են ընդհանրապես պետական կառավարման համար՝ հիմնականում դրա գործադիր բաղադրիչի սահմանադրական-համակարգային էական հատկանիշների ու գործառույթների հիման վրա: Հետևաբար պետական կառավարման տեսության մեջ առաջ քաշված բոլոր պահանջները և կանոններն ունեն ընդհանուր նշանակություն և բխում են պետական ապարատի կազմակերպման ու գործունեության հիմնարար և ընդհանուր սկզբունքներից: Այսպես. պետական մարմնի ներքին կառուցվածքը, ըստ Գ. Վ. Ատամանչուկի, պետք է կերտվի որոշակի պահանջների ու կանոնների հիման վրա և հատկապես.

ա) **շարժունակությունը,** համաձայն որի պետական մարմնի ներքին ստորաբաժանումների թվային կազմը և քանակը սահմանվում է ըստ կառավարելիության օպտիմալ չափանիշների,

---

[9] *Г. В. Атаманчук.* Теория государственного управления. Курс лекций. М., 1997, с. 7:

* Այդ հիմնահարցերից են՝ պետական կառավարման կազմակերպական կառուցվածքը, դրա էական գծերը, պետական մարմինը՝ որպես պետական կառավարման կազմակերպական կառույցի համակարգաստեղծ տարր, պետութենակերտության և պետական կառավարման կառուցման գործոնները, պետական մարմինների հնարավոր կառույցների հիմքերը, պետական մարմնի՝ որպես պետական կառավարման հիմնական օղակի ներքին և արտաքին կապերի համակարգվածությունը, պետական (հանրային) մարմինների կազմակերպման պահանջները և կանոնները և այլն (տես նույն տեղում, էջ 129–146):

բ) **օպերատիվությունը,** որը բնորոշում է պետական մարմնի ներքին և արտաքին կապերի բարդությունը, կառավարչական տեղեկույթի մուտքի և ելքի արագությունն ու պահպանումը, ժամանակին որոշումների ընդունումը և կատարման կազմակերպումը,

գ) **խնայողականությունը**, որը պայմանավորում է կառավարման ապարատը պահելու արժեքի (գնի) և դրա աշխատողների կառավարչական գործունեության իրականացման համար ծախսերի հաշվարկումը[10]:

Պաշտպանունակության հիմքի վրա պետական համակարգի կառուցման համար մեկ այլ հեղինակ առաջարկում է հետևյալ չափանիշները.

ա) իշխանության համակարգն այնքան օպտիմալ և հստակ է, որ ցանկացած իրավիճակում, այդ թվում նաև պատերազմական, չի առաջացնում որևէ վակուում,

բ) իշխանական բոլոր կառույցները հստակ կերպով տիրապետում են և ընդունակ են գործելու պատերազմական պայմաններում՝ ելնելով իրենց սոցիալ-իշխանական առաքելությունից,

գ) պետական-իշխանական համակարգը տոգորված է հայրենիքի պաշտպանության ոգով ու պատրաստակամությամբ[11]:

Իրավաբանորեն հիմնադրված պետական մարմինը կամ մարմինների համակարգը պետք է կառուցվի այնպես, որ կարողանա հասնել իր առջև դրված նպատակին, կատարել իր գործառույթները, իրացնել իր իրավասությունը, լիազորությունները: Կառավարման համակարգը պետք է մտածված լինի այնպես, որ կարողանա ինքնաբավ կերպով երաշխավորել հանձնարարված ոլորտի պատշաճ մակարդակի կառավարում: Դրա համար անհրաժեշտ է ճշգրտորեն և հստակ կերպով կառուցել կառավարման համակարգի տարրերի միջև իրավասության ու լիազորությունների բաշխումը, դրանց ստորակարգությունը, համագործակցությունը և փոխլրացելիությունը:

Պաշտպանունակության սկզբունքի վերը բերված պահանջներից երևում է, որ դրա ճանաչման ու կենսագործման համար պահանջվում է նոր տեսական մտածողություն, որն ունակ լինի մի կողմ թողնել քարացած, ավանդական, դասագրքային մոտեցումները և մեկնաբանությունները: Պետահիրավական մտքի և մտածողության մեջ այդպիսի հեղափոխություն կատարվեց 1990-ական թթ., երբ կենսագործվեցին մեզ համար նորույթ ներկայացնող իշխանության բաժանման, ապակենտրոնացման, ապակոնցենտրացման, ժողովրդավարացման և այլ հայեցակարգեր: Մեր հանրապետության առանձնահատկությունները հրամայաբար թելադրում են, որ ժամանակն է վեր կանգնել ավանդական մտածողությունից, իրականության փաստերը հաշվի առնելով՝ ստեղծագործաբար զարգացնել պետության կառուցման (պետութենակերտման) սկզբունքների և դրան ներկայացվող պահանջների շրջանը:

[10] Տես նույն տեղում, էջ 144:

[11] Տես *Ա. Վաղարշյան,* Պետության և իրավունքի տեսություն-1, էջ 206:

Տանք պաշտպանունակության սկզբունքից բխող խնդիրների ձևակերպումները՝

**– առաջին հրամայական խնդիրը.** պետութենակերտության ընթացքում կառավարման համակարգը՝ սկսած ընդհանուր ձևից մինչև ամեն մի պետական մարմին ու դրա իրավասություն, պետք է ենթարկվի մի յուրահատուկ միասնական, ինչպես նաև տարբերակված կարգավորման: Այդ կարգավորման արդյունքը պետք է լինի այնպիսի իրական հետևանքը, ինչպիսին է պետական կառավարման համակարգի ընդունակությունը գործելու անընդհատորեն, հաջողությանն ու նպատակին հասնելու անդադար մղումով: Միասնական կարգավորումը ենթադրում է պետական կառավարման համակարգի կառուցում սահմանադրական հիմունքներին ու պետական մեխանիզմների կազմակերպման ու գործողության հիմնարար, ընդհանուր, ճյուղային և կոնկրետ սկզբունքներին, դրանցից բխող պահանջներին ու կանոններին համապատասխան: Սակայն նույնիսկ այս դեպքում հանրային կառավարման ստեղծվող համակարգի և դրա առանձին ճյուղերի (հիմնականում՝ գործադիր) ու մարմինների տեսլականը ձևավորելիս պետք է կիրառել մշտազննում՝ ըստ պաշտպանունակության սկզբունքի պահանջների: Օրինակ՝ պարզել, թե ընդունակ է արդյոք ինչ-ինչ հանգամանքներում իշխանական համակարգի որևէ տարր առաջացնել վակուում: Կարելի է բերել ասվածը հաստատող բազմաթիվ օրինակներ, հենց թեկուզ մեր հանրապետության իրողությունից: Պատկերացնենք, թե 1998 թ. ՀՀ Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականի պարագայում ինչպիսին կլիներ ՀՀ կառավարման համակարգի կացությունը, եթե Սահմանադրությունը չսահմաներ իշխանության փոխանցման մի քանի ուղի: Իշխանական վակուումը կարող էր առաջացնել խոր քաղաքական ճգնաժամ: Եթե սովորական պայմաններում մի սովորական հանգամանք՝ Նախագահի հրաժարականը, կարող է առաջացնել բարդ ու քաոսային իրավիճակ՝ անկանխատեսելի հետևանքներով հանդերձ, ապա ինչ տեղի կունենար արտակարգ կամ ռազմական իրադրություններում: Մեր օրերի թավշյա հեղաշրջման գործընթացը ևս մեկ անգամ հաստատում է իշխանական վակուումի, հակապես՝ ռազմաքաղաքական ոլորտում, վտանգավորությունը:

**– Երկրորդ խնդիրը,** այսպես կոչված, տարբերակված կարգավորումն է: Պետական (հանրային) մարմինը (իրավական սահմանակարգը) պետք է ունենա կարգավիճակային երկակիություն (իրավական սահմանակարգի դեպքում՝ կարգավորման բովանդակություն): Առաջին. պետական մարմնի իրավասությունը կամ իրավական սահմանակարգի բովանդակությունը սովորական՝ խաղաղ պայմաններում, երկրորդ. պետական մարմնի իրավասությունը, ինչպես նաև սահմանակարգի նորմատիվ կարգավորման բովանդակությունն արտակարգ կամ պատերազմական իրավիճակներում: Ընդ որում, նման մոտեցման տարրեր առկա են ՀՀ Սահմանադրության դրույթներում: Օրինակ՝ պատերազմի պայմաններում ընտրությունների կամ հանրաքվեի անցկացման արգելքը: Պետական մարմինների դեպքում այս

խնդրի լուծումն այն է, որ Սահմանադրությունը կամ օրենքները պարունակում են դրույթներ՝ կոնկրետ մարմնի կամ մարմինների համակարգի կազմակերպման յուրահատուկ պահանջներ և իրավասություն, որոնք վերաբերում են արտակարգ և պատերազմական իրավիճակներին: Նման կարգավորումը կոչված է հանրային կառավարման համակարգում ապահովելու կենտրոնացումը և կոնցենտրացումը: Ընդ որում, այդ յուրահատուկ կարգավորումները կարող են շեղվել, այլ ընդհանուր սկզբունքներից տարբերվող վերապահումներ անել և դրանում չկա ո՛չ տեսական, ո՛չ միջազգային իրավական որևէ արգելք:

Պաշտպանունակության սկզբունքը պահանջում է այնպես կառուցել պետական ապարատը, որ այն ունակ լինի արտակարգ և պատերազմական պայմաններում կատարելու իր առջև դրված խնդիրները, արժանի հակահարված տալու հակառակորդին: Այդ ունակությունը մեքենայական հատկություն չէ, այլ պետք է դրսևորվի հատուկ պետաիրավական հաստատությունների հիմնադրմամբ և կայացմամբ, որոնք էլ պետք է հանրապետությանը ունակ դարձնեն ռազմական իրավիճակներում արագ, օպերատիվ և արդյունավետ կերպով կատարելու իր բոլոր կառավարչական խնդիրները: Այդպիսի համակարգի ներդրումը պետական ապարատին կօժտի կայունությամբ, այսինքն՝ տարբեր տեսակի քայքայիչ ներգործությունների պայմաններում իր հիմնական բնութագրերը պահպանելու և իր առջև դրված խնդիրները հաջողությամբ կատարելու ընդունակությամբ:

Իշխանության համակարգի կազմակերպման ու գործունեության սկզբունքները, կազմելով միասնական համակարգ, ներքուստ գտնվում են բարդ համակարգային փոխհամաձայնեցված և փոխպայմանավորված կապերի մեջ, ունեն կարգավորման զանազան մակարդակներ, ինչպես նաև տարբեր իրավաբանական ուժ: Այս հիմքով դրանք հնարավոր է դասակարգել մի քանի չափանիշներով: Օրինակ՝ պետության կազմակերպման ու գործունեության սկզբունքներն ըստ մակարդակի կարող են լինել. ա) հիմնարար, բ) ընդհանուր, գ) պետական իշխանության ամեն մի ճյուղին բնորոշ, դ) կոնկրետ պետական մարմնին բնորոշ[12]: Համակարգի տարրերի բաղդատման այս եղանակի համաձայն՝ պաշտպանունակության սկզբունքն իր ուրույն տեղն է ստանում հանրային իշխանության կազմակերպման ու գործունեության ընդհանուր սկզբունքների շարքում: Պաշտպանունակությունը՝ որպես սկզբունք չի կարող վերաբերել իշխանության միայն մեկ ճյուղին, կոնկրետ մեկ պետական մարմնին: Պաշտպանունակությունը պետք է դառնա ամբողջ պետության հատկություն, բնորոշ լինի նրա համակարգի բոլոր տարրերին, հետևաբար պետք է լինի առնվազն պետական ապարատի կազմակերպման ու գործունեության ընդհանուր սկզբունքներից մեկը:

Իրավական կարգավորման հաջորդական շղթայում պաշտպանունակության սկզբունքի տեղը և դերը որոշելիս պետք է նկատի ունենալ, որ և՛ հանրային

[12] Տես նույն տեղում, էջ 192:

իշխանության, և՛ իրավական համակարգի կազմակերպման ու գործունեության սկզբունքներն ունեն ամրագրման տարբեր աղբյուրներ (ձևեր): Այս դեպքում առաջ է գալիս սկզբունքների դասակարգման նոր չափանիշ, այն է՝ սկզբունքն ամրագրող իրավական ձևի՝ նորմատիվ իրավական ակտի իրավաբանական ուժը, նրա տեղը նորմատիվ ակտերի ստորակարգության մեջ: Այս չափանիշով դասակարգման պարագայում սկզբունքները կարող են լինել ամրագրված և՛ Սահմանադրությամբ (սահմանադրական), և՛ այլ նորմատիվ ակտերով, ներառյալ՝ օրենքներով (ենթասահմանադրական): Ակնհայտ է, որ պաշտպանական ոլորտի կարևորության հաշվառմամբ մեզ համար պաշտպանունակությանը պետք է վերագրել սահմանադրական իրավական սկզբունքի կարգավիճակ և համապատասխան իրավաբանական ուժ: Պաշտպանունակության սկզբունքից բխող պահանջները դրանով կստանան բարձրագույնություն, գերակայություն, այլ օրենսդրական և ենթաօրենսդրական սկզբունքների նկատմամբ անվերապահ առաջնայնություն: Այդ իրավական ուժը դրա կենսագործման-կիրառման բարձրագույն իրավական երաշխիքն է:

Այսպիսով՝ պաշտպանունակության առաջարկվող սկզբունքի ամրագրումն անհրաժեշտ է հենց այն նպատակով, որ, ի վերջո, իրավական կարգավորման երկարաձիգ շղթայում դրա կենսագործմամբ պետությունը ձեռք բերի նոր որակ՝ պաշտպանունակություն, ուստի և լինի ոչ միայն իրավական, սոցիալական, ժողովրդավարական, այլև պաշտպանունակ: Սահմանադրական ամրագրումը երաշխիք է, որ սկզբունքը կկարողանա հարթել իր ճանապարհն իրավաքաղաքական հարաբերությունների ամբողջ հորձանուտում՝ անկախ քաղաքական ուժերի ցանկությունից և այլ սուբյեկտիվ գործոններից, որոնք կառավարման գործում բավական ազդեցիկ են:

Իրավական կարգավորման մեխանիզմում ցանկացած իրավական սկզբունքի կամ դրույթի կենսագործումն սկսած իրավաստեղծագործությունից մինչև լայն իմաստով իրավակիրառում ունի ոչ միայն իրավական ակտի ուժով սահմանված երաշխիքների (իրավական երաշխիքների), այլև ընդհանուր հասարակական ու անհատական-մարդկային կամ գիտակցական երաշխիքների կարիք: Մյուս կողմից՝ պաշտպանունակության սկզբունքից բխող պահանջները վերաբերում են ոչ միայն հանրային իշխանության համակարգին, այլև հավասարապես հասարակությանը և պետության քաղաքացիներին*: Ոչ միայն հայոց պետությունը, այլև հայաստանյան ժողովուրդը և ՀՀ քաղաքացիները պետք է լինեն պաշտպանունակ: Այս պահանջն այնքան ակնհայտ է, որ դրա հիմնավորման կարիքը չենք տեսնում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սահմանադրական սկզբունքները կարող

* Քաղաքացիներին այդ պահանջների վերաբերելիությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու՝ Սահմանադրությամբ ամրագրված պարտականության կրող սուբյեկտով: Ի տարբերություն այլ պարտականություններից, այդ սահմանադրական պարտականության կրող սուբյեկտներ են միայն քաղաքացիները, իսկ ոչ քաղաքացիներն այդ պարտականության սուբյեկտ չեն:

են լինել մի քանի տեսակի. առաջին տեղում կանգնած են «սահմանադրական կարգի հիմունքները», այնուհետև՝ առանձին սահմանադրական իրավական հաստատություններին վերաբերող սկզբունքները: Որպեսզի պաշտպանունակության սկզբունքից բխող իրավական պահանջների իրավական գործողությունը կարողանանք տարածել և՛ հանրային իշխանության կառույցի, և՛ հասարակության (ժողովրդի), և՛ քաղաքացիների վրա, սկզբունքը պետք է ունենա «սահմանադրական կարգի հիմունքի» իրավական կարգավիճակ և համապատասխան իրավական ուժ: Այս հանգուցալուծումը չունի ո՛չ իրավատեխնիկական, ո՛չ իրավաբանական, ո՛չ էլ միջազգային իրավական արգելք: Հարցի նման լուծումը ՀՀ ինքնիշխանության դրսևորումն է, իսկ անհրաժեշտ հիմքեր են ՀՀ աշխարհաքաղաքական և այլ առանձնահատկություններ:

Ընդդիմախոսները կարող են պնդել, թե պաշտպանունակության և պետական կառուցակարգի կազմակերպման ու գործունեության այլ սկզբունքների միջև առկա են տեսական հակասություններ: Նման դատողությունները բացասելու համար փորձենք առաջադրել այդ սկզբունքները:

*Իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքը* պահանջում է իշխանությունների կառուցվածքային, գործառութային, անձնական տարանջատում՝ լավ մտածված արդյունավետ հակակշիռների ու զսպիչների համակարգով հանդերձ: Պաշտպանունակության սկզբունքն է՛լ ավելի հստակ է դարձնում պետության պաշտպանության ոլորտում իշխանությունների իրավասության բաժանման հարցը, ինչպես նաև պահանջում է, որ այդ ոլորտի կառավարումը լինի խիստ կենտրոնացված գործադիր իշխանության համակարգում (ցանկացած մոդելի դեպքում)՝ ուժեղ խորհրդարանական օրենսդրմամբ ու վերահսկողությամբ ապահովված, լրացված: Յուրաքանչյուր պետական մարմին իրեն կզգա հայրենիքի պաշտպանության գործի մասնակից և պատասխանատու՝ օժտված հստակ որոշարկված լիազորություններով: Այս պահանջների և իշխանությունների տարանջատման ու հավասարակշռման սկզբունքից բխող պահանջների միջև չենք տեսնում որևէ տեսական և գործնական հակասություն:

Պետական ապարատի կազմակերպման ու գործունեության հաջորդ հիմնարար սկզբունքն է *ժողովրդավարությունը, կամ ժողովրդաիշխանությունը*: Պաշտպանունակությունը չի մերժում ժողովրդավարությունը, չի նշանակում ռազմականացված պետություն ու հասարակություն: Այն ընդամենը պնդում և պահանջում է, որ ժողովրդավարական պետության կառույցները, հաստատությունները, իրավական սահմանակարգերը համապատասխանեն պաշտպանունակության սկզբունքի նորմատիվ պահանջներին, որ ժողովրդավարական պետությունը լինի նաև պաշտպանունակ, որ հայրենիքի պաշտպանությունը լինի ամբողջ ժողովրդի գործը ու նաև պարտականությունը:

Անշուշտ, սոցիալական և իրավական պետության հայեցակարգը եվրոպական ժողովուրդների պատմամշակութային նվաճումն է, հազարամյակից ավելի տևած նրանց քաղաքական-իրավական կյանքի բազմաչարչար փոր-

ձի արտացոլանքը: Եվրոպայի ժողովուրդների կյանքում բազմաչարչար փորձն ուներ ոչ թե արտաքին, այլ ներքին կողմ, ներքին խնդիր էր: Ներքին ոլորտում անհավասարության ու ազատության պայքարի արդյունքը դարձան պետության երեք հայեցակարգները, որոնք փոխանցվեցին սահմանադրական կարգավորման ոլորտ՝ որպես պետության հիմնարար սկզբունքներ: Հայաստանի և հայ ժողովրդի համար բազմաչարչարությունն ուներ արտաքին կողմ. նրա բոլոր պատմական դժբախտություններն օտարների անընդհատ հարձակումներն ու պատերազմներն էին, որոնք հետո վերածվում էին օտարի լծի, կեղեքման: Հետևաբար մեր բազմաչարչար կյանքի արտացոլանքը պետք է դառնա պաշտպանունակ պետության հայեցակարգը, որը վերածվի մեր հիմնական օրենքի սկզբունքի և դրանով իսկ իրենից բխող համապատասխան որակներ հաղորդի Եվրոպայից որդեգրված սոցիալական, իրավական, ժողովրդավարական պետությանը՝ այն դարձնելով հիրավի ազգային:

**ВОЕННОЕ ПРАВО**

## ОБОРОНОСПОСОБНОСТЬ КАК ОСНОВА КОНСТИТУЦИОННОГО СТРОЯ: НОРМАТИВНОЕ СОДЕРЖАНИЕ И КОРРЕЛИРОВАННОСТЬ С ИНЫМИ ПРИНЦИПАМИ ГОСУДАРСТВЕННОГО УСТРОЙСТВА*

*А. Г. ВАГАРШЯН, доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права юридического факультета ЕГУ,*
*Л. В. БАРСЕГЯН, соискатель Академии государственного управления РА*

РЕЗЮМЕ

В общей теории государствоведения, или конституционного права, решение проблемы защиты государства преимущественно основано на функциональном подходе. Однако, как показывает история, такой подход не обеспечивает достаточный уровень защищенности государства. В частности, в период существования Первой Республики Армения (1918–1920 гг.) именно из-за ущербности такого подхода были допущены ошибки в выборе приоритетов для оборонной политики. И в начальный период Второй мировой войны союзники именно вследствие такого подхода не смогли оказать действенного сопротивления агрессии гитлеровской Германии. Недостатком функционального подхода является отсутствие возможности создания в сфере обороны действенных конституционных организационных форм и жизнеспособных институтов.

При данном подходе для управляющего субъекта лишь обеспечивается общая обязанность действовать, но не формируются достаточные гарантии для надлежащего, качественного и эффективного выполнения

* Статья публикуется в порядке обсуждения. – *Ред.*

этих обязанностей. В исторической действительности даже не исключена возможность отсутствия у правящего субъекта желания действовать, а также наличия правовых или властных ограничений для подобной деятельности. В частности, в условиях раннего феодализма при раздробленности государства монархи были ограничены правами крупных феодалов, от благорасположенности которых во многом зависели.

На основе проведенного авторами глубокого всестороннего анализа предлагается в конституционные нормы включить понятие обороноспособности, трактуемой как «организационный принцип государства и общества». При таком осмыслении данного понятия на первый план выступает не субъект обороноспособности (государство), а комплекс возможностей в экономической, военной (есть ли армия, и если есть, то какова ее боеспособность), морально-политической сферах.

Таким образом, под обороноспособностью подразумевается некоторое свойство, присущее государственной системе и являющееся предпосылкой для ее самосохранения, самовоспроизводства, самосовершенствования.

В то же время внутренняя структура органа государственного управления должна основываться на ряде требований и правил и, в первую очередь, обеспечивать мобильность, оперативность, экономичность. Система государственной власти при этом должна быть: оптимальной и четкой, чтобы в любой (в том числе и военной) обстановке не возникало вакуума во власти; состоящей из элементов, способных в военных условиях действовать в полном соответствии со своей социально-властной миссией; пропитанной духом патриотизма и готовностью защищать Отечество.

**MILITARY LAW**

## THE DEFENSE CAPABILITY AS A BASIS FOR THE CONSTITUTIONAL LAW: NORMATIVE CONTENT AND CORRELATION WITH OTHER PRINCIPLES OF THE STATE STRUCTURE*

*A. G. VAGHARSHYAN, Doctor of Law, Professor, Head, Chair of Theory and History of State and Law, Department of Law, YSU, L. V. BARSEGHYAN, Applicant, Public Administration Academy of the Republic of Armenia*

SUMMARY

In the general theory of state studies, or constitutional law, the solution to the problems of state protection is predominantly based on a functional approach. However, as history shows, such an approach does not provide

* This article is being published for substantive discussion. – *The ed.*

for a sufficient level of state security. In particular, dating from the First Republic of Armenia (1918 – 1920), it was precisely because of the inadequacy of this approach that mistakes were made in choosing defense policy priorities. Moreover, in the first period of the World War II, the Allies, precisely due to such approach, could not effectively resist the aggression of Hitlerite Germany. The drawback of the functional approach is the lack of the possibility to create efficient constitutional organizational forms and viable institutions in the defense sphere.

With this approach, a general obligation to act is only provided for the management subject, but there are no sufficient guarantees for the proper, qualitative, and effective performance of these responsibilities. In historical reality, it is even possible that the ruling entity will not have a desire to act, as well as that there will be legal or authoritative restrictions for such activities. In particular, in early feudalism, in the fragmentation of the state, the monarchs were restricted by the rights of large feudal lords, from whose benevolence they depended largely.

Based on profound comprehensive analysis carried out by the authors, it is proposed to include the concept of defense capability in the constitutional norms, which is interpreted as the "organizational principle of the state and society". With such a comprehension of this notion, first comes not the subject of defense capability (the state), but rather the complex of opportunities in the economic, military (if there is an army, and if so, what its fighting capacity is), moral and political spheres becomes of key significance.

Thus, the defense capability implies some property inherent in the state system, and being a prerequisite for its self-preservation, self-reproduction, self-improvement.

At the same time, the internal structure of the government should be based on a number of requirements and rules, and, first of all, ensure mobility, efficiency, economy. The system of state power should be: optimal and precise so that in any (including military) situation there wouldn’t be any vacuum in power; consisting of elements capable of acting in military conditions in full compliance with their social and power-holding mission; impregnated with the spirit of patriotism and eagerness to defend one’s Homeland.

# ԱՆԲԵՐԴԻ ԱՄՐՈՑԸ

*Տ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆՑ, ՀՀ ԶՈՒ-ի պահեստազորի փոխգնդապետ,*
*Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական գրադարանի տնօրեն*

1196 թվականին Իվանե և Զաքարե Զաքարյան եղբայրները սելջուկներից ազատագրել են Այրարատ նահանգի մի հատվածը, այդ թվում՝ Անբերդ, կամ Ամբերդ, ամրոցը[1]: Ազատագրված տարածքում Հայաստանի նոր տիրակալ Զաքարեն ստեղծել է մի կողմնակալություն (կուսակալություն), կամ փոխարքայություն, և մինչև 1206 թվականը հանձնել իր զորավար Վաչե Վաչուտյանին[2]: Անտառուտի խաչքարի արձանագրությունում Զաքարեն Անբերդն անվանել է «զանառիկ ամրոցս զԱնբերդոյ»[*], իսկ Հաղարծինի արձանագրությունում Իվանեն՝ «զանառիկ դղեակն Անբերդ»[3]:

Կողմնակալ-փոխարքա Վաչե Վաչուտյանը հիմնովին վերակառուցել է այդ ամրոցը և այն դարձրել բերդաքաղաք՝ կողմնակալություն-փոխարքայության մայրաքաղաք[**]:

---

[1] Տես «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի»: Վենետիկ, Սուրբ Ղազար, 1862, էջ 138, *նաև՝* «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ պատմութիւն տիեզերական»: Ի լոյս ընծայեաց՝ Մկրտիչ էմին: Մոսկվա: Ի տպարանի Լազարեան ճեմարանի, 1861, էջ 181, «Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ.», հ. 1: Կազմեց Վ. Ա. Հակոբյանը: Ե., 1951, էջ 36: Այստեղ սխալ է ներկայացված Բջնիի գրավման թվականը. նշվել է 1201 թ. (տես «Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ.», հ. 2: Ե., 1956, էջ 136):

[2] Տես *Զաքարիա Սարկաւագ,* Պատմագրութիւն, հ. 3: Վաղարշապատ, 1870, էջ 12, *նաև՝ Հ. Մարգարեան,* Վաչուտեանների իշխանական տան պատմութիւնից: «Շողակաթ» եկեղեցական, մշակութային, բանասիրական հանդէս: Ստանպուլ, 1995, էջ 39, *Տ. Պետրոսյանց,* Քուրդ Ա. Վաչուտեան: Անձը եւ գործը: «Բազմավէպ» հայագիտական-բանասիրական-գրական հանդէս: Վենետիկ-Ս. Ղազար, 2014, թիւ 3–4:

[*] Մեր անձնական հավաքածոյից:

[3] Տես «Դիվան հայ վիմագրության», պրակ 6: Ե., 1977, էջ 22:

[**] Կողմնակալություն-փոխարքայությունների կենտրոնների համար մասնագիտական գրականության մեջ ներկայումս ընդունված է «իշխանանիստ» տերմինը, որը նշանակում է «իշխանի նստելու վայր»: Նման որակավորումը սահմանափակում է կողմնակալություն-փոխարքայությունների կենտրոնների՝ որպես քաղաքական, սոցիալական, մշակութային կենտրոնների դերը: Կարծում ենք՝ անհրաժեշտ է փոխարքայությունների կենտրոններին վերադարձնել *մայրաքաղաք* անվանումը: Ժամանակակիցները հենց այդպես էին կոչում փոխարքայությունների վարչական կենտրոնները: Օրինակ՝

***Անբերդի տեղադրությունը և ամրաշինական առանձնահատկությունները:*** Անբերդ բերդաքաղաքը գտնվում է Արագած լեռան հարավային լանջին, որտեղ Արքաշեն և Ամբերդ գետերը միախառնվելով կազմում են եռանկյունաձև հրվանդան՝ 2300 մետր բարձրության վրա: Մեր կարծիքով՝ ամրոցի համար տարածքն ընտրվել է Աշոտ Երկաթ Բագրատունի արքայի օրոք՝ 10-րդ դարի սկզբներին: Գուցե հենց դա է պատճառը, որ ժողովրդի մեջ տարածված էր այն կարծիքը, թե Անբերդը Աշոտ Երկաթի բերդն էր: Հնարավոր է, որ այստեղ մ.թ.ա. 3–2-րդ հազարամյակներում եղած լիներ կիկլոպյան ամրոց:

Անբերդ գետի կողմից հրվանդանը եզերված է գահավեժ ձորով, որը որոշ տեղերում հասնում է 50 մետր խորության և անմատչելի է: Այդ կողմում պաշտպանական պարիսպներ կառուցվել են միայն դղյակի հանդիման ժայռաելուստների, միջնամասի մի քանի ժայռային ելուստների վրա և Ամբերդաձորից մինչև հրվանդանի սուր ծայրամասը ձգվող 150 մետր երկարությամբ հատվածում:

Արքաշենի ձորն ունի մոտ 50-60 մետր խորություն, և երկու ափերը իրարից հեռու են ավելի քան 200 մետր: Այս կողմից հնարավոր չէ պարսպակործան սարքեր իջեցնել ձորը և մոտ 50 աստիճան թեքությամբ բարձրացնել մինչև բերդապարիսպ: Բայց, քանի որ անգամ նման թեքության դեպքում այս ուղղությամբ հնարավոր է հետիոտն գրոհ, ապա տվյալ կողմում ամբողջ երկարությամբ կառուցվել է պարսպապատ, որի 100-150 մետր երկարությամբ հատվածը դարձվել է առանձին պաշտպանական միավոր՝ 4 աշտարակներով: Այս հատվածի առաջին և չորրորդ աշտարակներն ունեն քառակուսի հատակագիծ և առաջ են քաշված, իսկ երկրորդ և երրորդ կլոր աշտարակները կորագծի խորքում են՝ 15-20 մետրով հետ: Սա հնարավորություն է տալիս դեպի երկրորդ ու երրորդ աշտարակները գրոհող թշնամուն հարվածելու ինչպես այդ աշտարակներից, այնպես էլ արդեն նրա թիկունքում հայտնված առաջին ու չորրորդ աշտարակներից*:

Հրվանդանի հարավային սուր ծայրից՝ գետերի ջրաբաժան գծին ուղղահայացաբար, պարիսպը դեպի հյուսիս՝ եռանկյունու հիմքը, ունի շուրջ 800 մետր երկարություն (եռանկյունու սուր ծայրի՝ Ամբերդ գետի կողմում եղած պարսպահատվածի, դղյակի աջ կողմից մինչև Ամբերդ գետի ափին եղած ժայռերին հասնող պարսպահատվածի հետ կազմում է ավելի քան 1000 մետր): Եռանկյունու հիմնային հատվածում գտնվում է եռահարկ դղյակը:

«Ի մայրաքաղաքիս Եղեգիս, ...» (տես «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»: Կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյանը: Ե., 1950, էջ 42), կամ՝ «...ի մայրաքաղաքիս յԵղեգիս, ի նոր վանս...» (տես *Կ. Մաթևոսյան,* Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները: Ե., 2017, էջ 220):

* Այս հանգամանքը նշել է Ս. Հարությունյանը, որը այս ձևի բերդաշինությունը համարել է հայկական (տես *Ս. Հարությունյան*, Անբերդի պաշտպանական սիստեմը: «Պատմա-բանասիրական հանդես», 1967, հմ. 1):

Դղյակի հյուսիսային պատը բավական հաստ է, առանց պատուհանների, կենտրոնական մասում ուժեղացված է կլոր աշտարակով:

Դղյակը կառուցված է բերդաքաղաքի հյուսիս-արևմուտքում՝ ընդհանուր հարթությունից մոտ 20 մետր բարձրություն ունեցող բլրի վրա: Այն դուրս է բերդատարածքի ընդհանուր հատակագծից: Դղյակը ավելի պաշտպանված

Նկ. 1. Անբերդ ամրոցի ընդհանուր տեսքը

դարձնելու նպատակով դրանից դեպի հյուսիս կառուցվել է երեք աշտարակ ներառող հզոր պարսպապատ, որը աջ կողմում միացել է Արքաշենի մուտքի կողմից ձգվող պարսպապատին, ձախում՝ Անբերդի նոր մուտքի շրջանաձև պարսպին:

Արքաշենի նոր մուտքը մղվել է հնից մոտ 20 մետր առաջ: Դրա աջ կողմում կառուցվել է կրկնահարկ քառահիմք աշտարակ: Մուտքի աջակողմյան պատ-աշտարակը և դեպի դղյակ ձգվող պատի վրա կառուցված երկու աշտարակներն ստեղծում էին թե՛ թևերից, թե՛ թիկունքից հարվածելու հնարավորություն և ձորից բարձրացող թշնամուն գերակա դիրք:

Ամբերդաձորի նոր մուտքը՝ նույնպես քառակուսի հիմքով և կլոր աշտարակով, նվազեցրել է այդ կողմից բերդաքաղաք թափանցելու հնարավորությունը: Եթե անգամ թշնամու սահմանափակ քանակի զինվորների հաջողվեր անցնել նեղ մուտքից ներս, նրանք կհայտնվեին նոր և հին պարսպապատերի միջև և շատ արագ կոչնչացվեին:

Հյուսիսային ամրակուռ պարսպի առաջամասի քարաժայռը կառուցման ժամանակ կտրվել է մոտ 10 մետր խորությամբ: Դա ևս նպատակաուղղված է եղել բերդի պաշտպանության ամրապնդմանը: Կտրված քարերը օգտագործվել են նոր պարիսպների կառուցման համար, իսկ տեղում առաջացած նույնքան լայնությամբ խրամը փաստորեն անհնար է դարձրել բերդա-

պարսպին թշնամու բերդակործան մեքենաների մոտեցումը: Այս պարսպապատի վրա եղած աշտարակները դեպի ձախ իրար նկատմամբ ունեն ավելի մեծ բարձրություն, ինչը ևս հնարավորություն է տվել հարձակվող թշնամու ուղղությամբ նետեր արձակելու երեք աշտարակներից միաժամանակ:

Դղյակի հարավային կողմում առկա է բուրգավոր պարիսպ, որն սկսվում է Արքաշենի մուտքից, ձգվում դղյակին զուգահեռաբար և մոտ հիսուն մետրից հասնում ժայռերին, որտեղից մոտ իննսուն աստիճանով թեքվում է աջ և կիսաշրջանաձև կազմելով միանում է Ամբերդաձորի մուտքից ձգվող պարսպին՝ դղյակը վերածելով միջնաբերդի: Փաստորեն, բերդաքաղաքը դղյակի ձախ և աջ կողմերում ունի մուտքեր, որոնք պայմանականորեն ստացել են Արքաշենի և Անբերդի դարպասներ անունները:

Դղյակն ունի մեծ մուտք՝ բացված հարավային պատի գրեթե կենտրոնում, և մի փոքրիկ մուտք՝ ձախ կողմի կենտրոնական հատվածում: Բերդաքաղաքի գրեթե կենտրոնում կանգնած է 1026 թվականին Վասակ Պահլավունու կառուցած Կաթողիկե եկեղեցին:

Ամբերդի պաշտպանական համակարգի կարևոր բաղադրիչներից է խմելու ջրով բերդի և դղյակի ապահովումը:

ա) Քաղաքը մշտական ջրով ապահովելու նպատակով ստորգետնյա կավե խողովակաշարով քաղաք ջուր է բերվել Արագածի ստորոտից՝ մոտ երեք կիլոմետր հեռավորությունից:

բ) Պալատի ներսում և պալատից դուրս կառուցվել է ջրի երկու պահեստարան, որոնք փորվել են հողի մեջ, ապա պատերը շարվել քարով և երեսպատվել կրաշաղախով, օժտվել թաղածածկ կտուրով.

- պալատի ներսում մոտ 7,5 խորանարդ մետր տարողությամբ պահեստարանն ունեցել է 2 մ երկարություն, 1,5 մ լայնություն և 2,5 մ խորություն,
- պալատից դուրս գտնվող պահեստարանը եղել է ավելի մեծ,
- այդ գաղտնի պահեստարաններից բացի, անասուններին ջրով ապահովելու համար բերդաքաղաքի կենտրոնական մասում կառուցվել է ջրի բավական մեծ ավազան:

գ) Շրջափակման և ստորգետնյա ջրագծի հայտնաբերման դեպքում բերդաքաղաքի ջրազրկումից խուսափելու համար, որպես ջրի այլընտրանքային ապահովման միջոց, անմիջականորեն պալատի պատի մոտից կառուցվել է դեպի Անբերդ գետը տանող երկու գաղտնուղի.

- առաջինն ունեցել է 1,7 մ լայնություն և նույնքան խորություն, սկսվել է Անբերդի մուտքի մոտից, իջել է գետափի ժայռով ծածկված ու անտեսանելի հատվածը, եղել է սալաքարերով երկու կողմից շարված, ծածկվել է սալաքարերով ու գաղտնապահվել հողով: Այդ գաղտնուղով հնարավոր է եղել ջուր բարձրացնել բերդաքաղաք, անգամ ավանակով,

- երկրորդ գաղտնուղին ունեցել է մոտ 0,8 մ լայնություն և նախատեսվել է միայն մարդկանց իջնել-բարձրանալու համար:

Քաղաքն ունեցել է այդ ժամանակների համար առաջնակարգ բաղնիք, որտեղ ջրամատակարարումն ապահովվել է մետաղե խողովակներով, որոնց ծայրերին եղել են պղնձե ծորակներ:

Նկ. 2. Անբերդի Սուրբ Աստվածածին (Վահրամաշեն) եկեղեցին հարավ-արևելքից

**Անբերդի կառուցապատման փուլերը**: Անբերդի ամրոցն ուսումնասիրած մասնագետները[4] թեև համակարծիք չեն որոշ կառույցների, մասնավորապես՝ ամրոցի արտաքին նոր պարսպապատերի կառուցման ժամանակի, ինչպես նաև պաշտպանական համակարգին վերաբերող այլ հարցերում, ընդունում են, որ ամրոցի հիմնական կառույցները՝ ամրոցը, հիմնական պարսպապատերը, գոյություն են ունեցել արդեն Բագրատունիների օրոք:

Ամրոցաշինության սկզբունքներից ելնելով և հենվելով 1936 թվականին, ինչպես նաև 1964 թվականից հետո կատարված հնագիտական պեղումների արդյունքների վրա՝ Նիկոլայ Տոկարսկին գրել է, որ դղյակը, նրա հյուսիսային կողմում կառուցված առանձին բուրգերով պատը, ամրոցի պարիսպները կառուցվել են Պահլավունի իշխանների օրոք՝ 10-րդ դարի վերջին կամ 11-րդ դարի առաջին կեսին: 13-րդ դարի սկզբներին՝ մինչև 1225 թ., կառուցվել են ամրոցի նոր մուտքերը և դեպի Ամբերդի ձորն իջնող պարիսպը, իսկ ավելի ուշ՝ Արքաշենի մուտքից դեպի հակառակ կողմ գնացող լայնական պարիսպը[5]:

[4] Տես *Թ. Թորամանյան,* Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1: Ե., 1942, էջ 27–28, հ. 2: Ե., 1948, էջ 230–231, *Ս. Վ. Հարությունյան,* Անբերդ: Ե., 1978, *նույնի՝* Անբերդի պաշտպանական սիստեմը, *Н. М. Токарский.* По страницам истории Армянской архитектуры. Е.,1973, сс. 23–41; *A. Alpago-Novella.* La Fortezza di Amberd sul monte Aragats (Armenia SSR). «Casellum». Roma, 1969, N 9:

[5] Տես *Ն. Մ. Տոկարսկի,* Նշ. աշխ., էջ 47–49:

Իր կատարած ուսումնասիրությունների հիման վրա Սերգեյ Հարությունյանը գրել է, որ դղյակի դիմաց գտնվող առանձին պատը, ամրոցի նոր մուտքերը, դեպի Ամբերդի ձորն իջնող պարիսպը կառուցել են Վաչուտյան իշխանները՝ 13-րդ դարի սկզբին: Նա ընդունել է, որ Արքաշենի մուտքից սկսվող լայնական պարիսպը կառուցվել է 13-րդ դարի վերջերին, ինչով Վաչուտյանները բերդաքաղաքի տարածքը սահմանափակել են դղյակ–պալատ–միջնաբերդի տարածքով[6]:

Մեզ հայտնի չէ, թե ինչ տեսք են ունեցել Պահլավունիների կառուցած դղյակն ու պարիսպները, բայց այն կանգուն ու կիսավեր շինությունները, որոնք մինչ այժմ պահպանվել են Անբերդում, բացառությամբ Վահրամաշեն եկեղեցու և որոշ տեղերում պեղումներով հայտնաբերված հին պարսպի մեծաչափ քարերով շարված մասերի, կառուցել են Վաչուտյանները՝ ժամանակի բոլոր ռազմագիտական պահանջներին համապատասխան: Նրանք վերակառուցել են Անբերդը՝ այն դարձնելով Այրարատի կողմնակալություն-փոխարքայության մայրաքաղաք, ռազմավարական տեսակետից հզոր ու լավ սարքավորված պաշտպանական կառույց:

Ս. Հարությունյանը Անբերդի կառուցվածքային զարգացումը բաժանել է երեք ժամանակահատվածի[7]: Դրանցից առաջինն ընդգրկել է Պահլավունիների տիրակալության շրջանը, երկրորդը՝ Վաչուտյանների իշխանության առաջին շրջանը, իսկ երրորդը՝ 13-րդ դարի վերջը կամ Վաչուտյանների իշխանության երկրորդ շրջանը:

Մենք, հիմնականում ընդունելով Ս. Հարությունյանի ժամանակագրությունը, Ամբերդի՝ որպես գործուն ամրոցի շուրջ 450-ամյա պատմությունը տեսնում ենք երկու փուլով: Առաջին երեք հարյուր տարին վերագրում ենք Պահլավունիներին և սելջուկներին, հաջորդ հարյուր հիսուն տարին՝ Վաչուտյաններին: Առաջին փուլից պահպանվել են միայն Վասակ Պահլավունու կանգնեցրած եկեղեցին, ինչպես նաև որոշ տեղերում պարսպի հիմնային մասերը, որոնք կառուցված են այլ քարերով և այլ շարվածքով:

Վաչուտյաններին վերագրվող հարյուր հիսուն տարին բաժանում ենք երեք ժամանակաշրջանի. առաջինը՝ 1206–1220-ական թվականները, երկրորդը՝ 1250–1260-ական, երրորդը՝ 1300–1310-ական թվականները:

Մինչև Ջալալ ադ-Դինի ասպատակություններն ու մոնղոլ-թաթարների արշավանքները Վաչե Ա Վաչուտյանն իր ավագ որդի Քուրդ Ա Վաչուտյանի համագործակցությամբ ամբողջովին ավարտել է նոր եռահարկ ամրոցի, հյուսիսային արտաքին բրգավոր պարսպի, Ամբերդաձորի և Արքաշենի նոր դարպասների, Ամբերդի գետեզր իջնող նոր պարսպապատի կառուցումը, Արքաշեն գետի կողմնային մոտավորապես 800 մետր երկարությամբ պարսպապատի վերակառուցում-ամրացումը:

[6] Տես *Ս. Կ. Հարությունյան,* Անբերդ, էջ 34:

[7] Տես *Ս. Կ. Հարությունյան,* Անբերդի պաշտպանական սիստեմը, էջ 34:

1250–1260-ական թվականներին Քուրդ Ա Վաչուտյանը վերակառուցել և ամրացրել է մոնղոլների ավերած բերդաքաղաքը:

1300–1310-ական թվականներին նոր տիրակալ Քուրդ Բ Վաչուտյանը կառուցել է Արքաշենի դարպասից սկսվող և ամրոցի հարավային կողմով ձգվող բրգավոր պարիսպը, որի շնորհիվ ամրոցը դարձել է ավելի անառիկ և փաստորեն կտրվելով նաև բերդաքաղաքի տարածությունից՝ վերածվել միջնաբերդի:

Այսպիսով՝ մոնղոլական ավերածությունները որքան էլ ծանր են եղել, Քուրդ Ա իշխանաց իշխանը, նրա թոռ Քուրդ Բ իշխանաց իշխանը դրանք վերացրել են, և Անբերդը կրկին դարձել է կողմնակալություն-փոխարքայության մայրաքաղաք:

Վաչուտյանների Ամբերդ մայաքաղաքն իր նոր ամրոցով, նոր մուտքերով, նոր պաշտպանական պարիսպների համակարգով հանդերձ կողմնակալություն-փոխարքայության վարչական մայրաքաղաքին հատուկ բոլոր ծառայություններով օժտված բերդաքաղաք էր: Բերդաքաղաքի ներսում տեսանելի են կացարանների բազմաթիվ հանգույցներ, ենթադրվում է, որ այն ունեցել է բավական հոծ հիմնական բնակչություն: Բերդաքաղաքից դուրս՝ դեպի Արագածի ստորոտի խորքը և Արքաշենի հակառակ ափին, գտնվում են երկու մեծ գերեզմանատներ, պահպանվել են սովորական ու որմնափակ խաչքարեր, մատուռների մնացորդներ, բազմաձև տապանաքարեր: Բերդաքաղաքի երկարամյա պեղումներով հայտնաբերվել են բազմաթիվ առարկաներ, զարդեր, բերովի ու տեղում պատրաստված թանկարժեք սպասքներ, զենքերի մասեր, շինարարական գործիքներ, կենցաղային առարկաներ, որոնք զարգացած քաղաքային կյանքի, ճոխ իշխանական կենցաղի ապացույցներ են[8]: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են նաև սելջուկյան, վրացական, կիլիկյան[9] դրամներ, որոնցով այդ ժամանակ կատարվում էր առևտուրը:

Այսպիսով՝ Անբերդ ամրոցն ունեցել է կարևոր պաշտպանական նշանակություն: Մասնավորապես՝ նա եղել է Անի քաղաքի շուրջ ստեղծված պաշտպանական շղթայի կարևոր օղակներից մեկը:

Ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել Ամբերդ բերդաքաղաքի ամբողջությամբ վերականգնման՝ որպես մեր փառավոր անցյալի կարևոր տարրերից մեկի վերակենդանացման համար[10]:

---

[8] Պեղումներից հայտնաբերված առարկաների մասին մանրամասն հաշվետվությունը տես *Ս. Կ. Հարությունյան,* Անբերդ, էջ 67–107:

[9] Տես *Հ. Սարգսյան, Մ. Կարապետյան,* Կիլիկյան հայկական դրամների շրջանառությունը Հայաստանում: «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, հմ. 11:

[10] Տես ««Արագածոտն. հոգևոր և մշակութային ժառանգություն» գիտաժողովի հիմնադրույթներ»: Ս. Էջմիածնի Մայր տաճարի օծման 1700-ամյակ, հոբելյանական գիտաժողով: Օշական, 2003 թ., էջ 42–43:

**ВОЕННАЯ ИСТОРИЯ**

# КРЕПОСТЬ АМБЕРД

*Т. М. ПЕТРОСЯНЦ, подполковник запаса ВС РА, директор научной библиотеки Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна*

РЕЗЮМЕ

В 1196 г. армянская армия Закарянов освободила значительную часть провинции Айрарат, в том числе, неприступную крепость Амберд, построенную на склоне горы Арагац на косе, образованной рекой Амберд и ее притоком Аркашеном. В 1206 г. или чуть ранее Закаре Б на этих территориях основал наместничество Айрарата с центром Амберд и вручил своему военачальнику, основателю рода Вачутянов Ваче А Вачутяну. В статье рассматриваются вопросы, касающиеся защитных сооружений крепости Амберд, времени их возведения и стратегических возможностей, а также их перестройки наместниками Вачутянами, которые после 1206 г. превратили крепость в свою столицу.

**MILITARY HISTORY**

# THE AMBERD FORTRESS

*T. M. PETROSYANTS, Lieutenant Colonel (ret.), the RA Armed Forces, Head, Academic Library, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan*

SUMMARY

In 1196, the Armenian army of the Zakaryans (Zakarids) liberated a significant part of the Ayrarat Province, including the impregnable Amberd fortress built on the slope of Mount Aragats on the spit formed by the Amberd River and its tributary Arkashen. In 1206 or a little earlier, in these territories Zakare B founded the Ayrarat region ruled by Governor-General with the center of Amberd, and handed it over to the Commander of his Army, the founder of the Vachutyans house Vache A Vachutyan. This article deals with the issues related to the defense installations of the Amberd fortress, the time of their erection, their strategic opportunities, as well as their reconstruction by the Governor-Generals – the Vachutyans, who turned the fortress into their capital after 1206.

# ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,*
*Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր, Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր*

## ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ազգապահպանություն – сохранение нации – national preservation, preservation of nation
ակնդետ տեսանելիություն – визуальная видимость – visual visibility
անհակադարձելի փոփոխություն – необратимое изменение – irrevocable change
անվտանգաբանություն – секьюритология – securitology
անվտանգություն – безопасность – security
ապրումակցում – сопереживание – empathy, compassion
առաջադրանքային կառավարում – принцип предоставления командиру самостоятельности при выполнении задачи – mission command
առաջանցիկ պլանավորում – опережающее планирование – advancing planning
արժանավարություն – меритократия – meritocracy
արհեստական բանականություն – искусственный интеллект – artificial intelligence
բազմահարկաշար պաշտպանություն – многоярусная оборона – layered defense
բախարգելային պետություն – буферное государство – buffer state
բանոլորտ – ноосфера – noosphere
բռնազավթում – оккупация – occupation
գժտազերծում – бесконфликтность, устранение конфликтных ситуаций – deconfliction
գիտութենահենք – наукоемкий – science-based
գոյապայքար – борьба за существование – struggle for existence
գոտիականություն – зональность – zonality, zoning
գործակցելիություն – տես *փոխգործելիություն*
դժվարամատչելիություն – труднодоступность – inaccessibility
դիմակ – маска – mask
եզրային կազմակերպություն – крайняя организация – edge organization
զառիթափ – крутизна, круча – 1. bluff, 2. cliff
զորակայան – военная база – base, military base
էսկադրային ականակիր – эскадренный миноносец, эсминец – destroyer
ընդգրկույթ – диапазон – range, scope
թաղածածկ կտուր – сводчатая крыша – vaulted roof
թաքուցում – 1. скрытие, 2. сокрытие – 1. hiding, concealment, 2. cover-up
իմացական վերափոխում – когнитивное преобразование – cognitive realignment
իշխանությունը դեպի եզր – власть к краю – power to the edge
լեռնախտ – горная болезнь – mountain sickness
լեռնամեջ գոգահովիտ – межгорная котловина – intermountain basin,

intermountain trough
«խելացի» արտադրանք – «умная» продукция – “smart” products
խնայողականություն – экономичность – economy
ծածուկություն – скрытность – security
ծավալային զինամթերք – տես *ծավալային պայթյունի զինամթերք*
ծավալային պայթյունի զինամթերք – боеприпас объемного взрыва – fuel -air bomb
կազմաբանություն – морфология – morphology
կազմհաստիքային կառուցվածք – организационно-штатная структура – organizational and staff structure, organization and establishment
կաղապարվածք – муляж – dummy
կայանքակենտրոն պատերազմ – платформоцентричная война – platformo-centric warfare
կառավարային մշակույթ – управленческая культура – managerial culture
կառավարելիություն – управляемость – controllability, manageability
կենսունակություն – живучесть, жизнеспособность – survivability, viability
կենտրոնակայան – штаб-квартира – headquarters
կրակային խոցում – огневое поражение – fire for effect
կցակետ – стык – junction
համակարգաստեղծ կազմակերպություն – системообразующая организация – system-forming organization, system-building organization
համակցում – комбинация – combination
համատարած ծխոտում – сплошное задымление – continuous screening with smoke
համընդհանրացման միտում – тенденция глобализации – globalization tendency
հանձնառություն – տես *պարտավորություն*
հանձնարարությունների մարտավարություն – тактика поручений – Auftragstaktik, mission-type tactics
հաստատութենական միջոցառում – институциональное мероприятие – institutional arrangements
հաստոցային հավաքակազմ – станочный парк – machinery, machine tool holding
հավելուրդային փուլ – избыточная фаза – excess phase
հենակետ – опорный пункт – 1. initial point, 2. strong point, stronghold, 3. control point
հեռաթռիչություն – дальность полета – flight range
հեռահարություն – дальнобойность – range
հիմնակազմիչ – основообразующий – base-forming
հրամանատրում առաջադրանքով – տես *առաջադրանքային կառավարում*
հրթիռակոծում – ракетный обстрел – rocket fire
հրվանդան – мыс – cape
հումքանյութական ռեսուրս – материально-сырьевой ресурс – raw material resources
ձգաբանական պայման – баллистическое условие – ballistic condition
ձեռնածվական կարողություն – манипулятивная способность – manipulation capability
մաշվածության աճում – возрастание износа – increasing wear
մասնավորեցում – 1. детализация, 2. приватизация – 1. detailing, 2. privatization
մատչելիություն – доступность – availability, accessibility
մարդկայնացում – гуманизация –

humanization
մարտակարգ – боевой порядок – battle deployment, combat formation, order of battle, tactical formation
մարտապաշար – боезапас – basic load, reserve ammunition
մեկնակերպ – версия – version
ներքին ղեկավարում – внутреннее руководство – internal leadership, innere Führung
նորամուծական մոդել – инновационная модель – innovative model
շարակարգ – эшелон – 1. echelon, 2. serial
շարժունակ արգելապատնեշային ջոկատ – подвижный отряд заграждений – mobile obstacle detachment, mobile obstacle unit
շարժունակություն – 1. мобильность, 2. подвижность – mobility
շրջանաձև պաշտպանություն – круговая оборона – all-around defense
պահանջմունք – потребность – requirement, need
պահուստային ֆոնդ – резервный фонд – emergency fund, reserve fund
պարտավորություն – обязательство – commitment, obligation
պաշտպանվածություն – защищенность – protectability
պաշտպանություն – 1. оборона, 2. защита – 1. defense, 2. protection, 3. shield
– պաշտպանության ընդմիջակայք – промежуток обороны – defense interval
– պաշտպանության կազմակերպվածք – построение обороны – defense posture, structure of defense
պաշտպանունակություն – обороноспособность – defense capacity
պետութենագիտություն – государствоведение, конституционное право – constitutional law
պետութենակերտություն – государственное строительство, построение государства – state-building
ջերմային խոցում – тепловое поражение – thermal defeat, thermal impact
ջրածածկում – затопление – inundation, flooding
ռազմական – ставка – headquarters
ռազմական գործողությունների թատերաբեմ – театр военных действий – theater, theater of operations
ռազմիշխանաբանություն – военная кратология – military cratology
սահմանադրական իրավունք – տես *պետութենագիտություն*
սարքավորանք – оборудование – equipment, hardware, installation
սարքավորում – оборудование – equipping, equipment
սկզբունք – принцип – principle
– արտաբնակավայրային սկզբունք – տես *արտատարածքային սկզբունք*
– արտատարածքային սկզբունք – экстерриториальный принцип – away-from-home principle
սոցիալացանցային էկոլոգիա – социально-сетевая экология – social - network ecology
սպառազինությունների սանձազերծված մրցավազք – развязанная гонка вооружений – launched arms race
ստորակարգություն – порядок подчиненности – chain of command, command channel
վարչարարական ընթացակարգ – административная процедура – administrative procedure
վերապրուկ – пережиток – remnants, vestiges
տանկամատչելի ուղղություն – танкодоступное направление – possible avenue of tank approach
տեղանքի անցանելիություն – проходимость местности – terrain passability
տեղեկութային էկոլոգիա – информа-

ционная экология – information ecology
ցանցակենտրոն պատերազմ – сетецентричная война – network centric warfare
ցանցային հասարակություն – сетевое общество – networked society
փլվածք – завал – steep slope, avalanche
փլուզում – 1. обвал, 2. развал – 1. landslip, landslide, 2. breakup, collapse
փոխգործելիություն – интероперабельность, оперативная совместимость – interoperability
փոխգործություն – взаимодействие – interaction
փոխլրացելիություն – взаимодополняемость – complementarity
քողարկամիջոց – маска – camouflage
քողարկում – маскировка – camouflage, screen

## ՌՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

административная процедура – վարչարարական ընթացակարգ
баллистическое условие – ձգաբանական պայման
безопасность – անվտանգություն
бесконфликтность – գժտազերծում
боевой порядок – մարտակարգ
боезапас – մարտապաշար
боеприпас объемного взрыва – ծավալային պայթյունի զինամթերք, ծավալային զինամթերք
борьба за существование – գոյապայքար
буферное государство – բախարգելային պետություն
версия – մեկնակերպում
взаимодействие – փոխգործություն
взаимодополняемость – փոխլրացելիություն
визуальная видимость – ակնդետ տեսանելիություն
власть к краю – իշխանությունը դեպի եզր
внутреннее руководство – ներքին ղեկավարում
военная база – զորակայան
военная кратология – ռազմիշխանաբանություն
возрастание износа – մաշվածության աճում
горная болезнь – լեռնախտ
государственное строительство – պետութենակերտություն
государствоведение – պետութենագիտություն, սահմանադրական իրավունք
гуманизация – մարդկայնացում
дальнобойность – հեռահարություն
дальность полета – հեռաթռիչություն
детализация – մասնավորեցում
диапазон – ընդգրկույթ
доступность – մատչելիություն
живучесть – կենսունակություն
жизнеспособность – см. *живучесть*
завал – փլվածք
затопление – ջրածածկում
защита – պաշտպանություն
защищенность – պաշտպանվածություն
зональность – գոտիականություն
избыточная фаза – հավելուրդային փուլ
инновационная модель – նորամուծական մոդել
институциональное мероприятие – հաստատութենական միջոցառում
интероперабельность – փոխգործելիություն, գործակցելիություն
информационная экология – տեղեկութային էկոլոգիա
искусственный интеллект – արհեստական բանականություն

когнитивное преобразование – իմացական վերափոխում
комбинация – համակցում
конституционное право – см. *государствоведение*
крайняя организация – եզրային կազմակերպություն
круговая оборона – շրջանաձև պաշտպանություն
крутизна – զառիթափ
круча – см. *крутизна*
манипулятивная способность – ձեռնածվական կարողություն
маска – 1. դիմակ, 2. քողարկամիջոց
маскировка – քողարկում
материально-сырьевой ресурс – հումքանյութական ռեսուրս
межгорная котловина – լեռնամեջ գոգահովիտ
меритократия – արժանավարություն
многоярусная оборона – բազմահարկաշար պաշտպանություն
мобильность – շարժունակություն
морфология – կազմաբանություն
муляж – կաղապարվածք
мыс – հրվանդան
наукоемкий – գիտութենահենք
необратимое изменение – անհակադարձելի փոփոխություն
ноосфера – բանոլորտ
обвал – փլուզում
оборона – պաշտպանություն
– построение обороны – պաշտպանության կազմակերպվածք
– промежуток обороны – պաշտպանության ընդմիջակայք
обороноспособность – պաշտպանունակություն
оборудование – 1. սարքավորանք, 2. սարքավորում
обязательство – պարտավորություն, հանձնառություն
огневое поражение – կրակային խոցում
оккупация – բռնազավթում
оперативная совместимость – см. *интероперабельность*
опережающее планирование – առաջանցիկ պլանավորում
опорный пункт – հենակետ
организационно-штатная структура – կազմհաստիքային կառուցվածք
основообразующий – հիմնակազմիչ
пережиток – վերապրուկ
платформоцентричная война – կայանքակենտրոն պատերազմ
подвижность – շարժունակություն
подвижный отряд заграждений – շարժունակ արգելապատնեշային ջոկատ
порядок подчиненности – ստորակարգություն
построение государства – см. *государственное строительство*
потребность – պահանջմունք
приватизация – մասնավորեցում
проходимость местности – տեղանքի անցանելիություն
развал – փլուզում
развязанная гонка вооружений – սպառազինությունների սանձազերծված մրցավազք
ракетный обстрел – հրթիռակոծում
резервный фонд – պահուստային ֆոնդ
сводчатая крыша – թաղածածկ կտուր
секьюритология – անվտանգաբանություն
сетевое общество – ցանցային հասարակություն
сетецентричная война – ցանցակենտրոն պատերազմ
системообразующая организация – համակարգաստեղծ կազմակերպություն
скрытие – թաքուցում
скрытность – ծածուկություն
сокрытие – թաքուցում
сопереживание – ապրումակցում
сохранение нации – ազգապահպանություն
социально-сетевая экология – սո-

ցիալացանցային էկոլոգիա
сплошное задымление – համատարած ծխոտում
ставка – ռազմական
станочный парк – հաստոցային հավաքակազմ
стык – կցակետ
тактика поручений – հանձնարարությունների մարտավարություն
танкодоступное направление – տանկամատչելի ուղղություն
театр военных действий – ռազմական գործողությունների թատերաբեմ
тенденция глобализации – համընդհանրացման միտում
тепловое поражение – ջերմային խոցում
труднодоступность – դժվարամատչելիություն
«умная» продукция – «խելացի» արտադրանք
управленческая культура – կառավարային մշակույթ
управляемость – կառավարելիություն
устранение конфликтных ситуаций – см. *бесконфликтность*
штаб-квартира – կենտրոնական
экономичность – խնայողականություն
экстерриториальный принцип – արտատարածքային սկզբունք, արտաբնակավայրային սկզբունք
эскадренный миноносец – էսկադրային ականակիր
эсминец – см. *эскадренный миноносец*
эшелон – շարակարգ

## ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

accessibility – see *availability*
administrative procedure – վարչարարական ընթացակարգ
advancing planning – առաջանցիկ պլանավորում
all-around defense – շրջանաձև պաշտպանություն
artificial intelligence – արհեստական բանականություն
Auftragstaktik – հանձնարարությունների մարտավարություն
availability – մատչելիություն
avalanche – see *steep slope*
away-from-home principle – արտատարածքային սկզբունք, արտաբնակավայրային սկզբունք
ballistic condition – ձգաբանական պայման
base – զորակայան
base-forming – հիմնակազմիչ
basic load – մարտապաշար
battle deployment – մարտակարգ
bluff – զառիթափ
breakup – փլուզում
buffer state – բախարգելային պետություն
camouflage – 1. քողարկում, 2. քողարկամիջոց
cape – հրվանդան
chain of command – ստորակարգություն
cliff – զառիթափ
cognitive realignment – իմացական վերափոխում
collapse – see *breakup*
combat formation – see *battle deployment*
combination – համակցում
command channel – see *chain of command*
commitment – պարտավորություն, հանձնառություն
compassion – see *empathy*
complementarity – փոխլրացելիություն
concealment – see *hiding*
constitutional law – պետութենագիտություն, սահմանադրական իրավունք

continuous screening with smoke – համատարած ծխոտում
control point – հենակետ
controllability – կառավարելիություն
cover-up – թաքուցում
deconfliction – գժտազերծում
defense – պաշտպանություն
– defense interval – պաշտպանության ընդմիջակայք
– defense posture – պաշտպանության կազմակերպվածք
– structure of defense – see *defense posture*
defense capacity – պաշտպանունակություն
destroyer – էսկադրային ականակիր
detailing – մասնավորեցում
dummy – կաղապարվածք
echelon – շարակարգ
economy – խնայողականություն
edge organization – եզրային կազմակերպություն
emergency fund – պահուստային ֆոնդ
empathy – ապրումակցում
equipment – 1. սարքավորանք, 2. see *equipping*
equipping – սարքավորում
excess phase – հավելուրդային փուլ
fire for effect – կրակային խոցում
flight range – հեռաթռիչություն
flooding – see *inundation*
fuel-air bomb – ծավալային պայթյունի զինամթերք, ծավալային զինամթերք
globalization tendency – համընդհանրացման միտում
hardware – see *equipment 1*
headquarters – 1. ռազմական, 2. կենտրոնական
hiding – թաքուցում
humanization – մարդկայնացում
inaccessibility – դժվարամատչելիություն
increasing wear – մաշվածության աճում
information ecology – տեղեկութային էկոլոգիա
initial point – հենակետ
innere Führung – see *internal leadership*
innovative model – նորամուծական մոդել
installation – see *equipment 1*
institutional arrangements – հաստատութենական միջոցառում
interaction – փոխգործություն
intermountain basin – լեռնամեջ գոգահովիտ
intermountain trough – see *intermountain basin*
internal leadership – ներքին ղեկավարում
interoperability – փոխգործելիություն, գործակցելիություն
inundation – ջրածածկում
irrevocable change – անհակադարձելի փոփոխություն
junction – կցակետ
landslide – see *landslip*
landslip – փլուզում
launched arms race – սպառազինությունների սանձազերծված մրցավազք
layered defense – բազմահարկաշար պաշտպանություն
machine tool holding – see *machinery*
machinery – հաստոցային հավաքակազմ
manageability – see *controllability*
managerial culture – կառավարային մշակույթ
manipulation capability – ձեռնածվական կարողություն
mask – դիմակ
meritocracy – արժանավարություն
military base – see *base*
military cratology – ռազմիշխանաբանություն
mission command – առաջադրանքային կառավարում, հրամանատրում առաջադրանքով
mission-type tactics – see *Auftragstaktik*

mobile obstacle detachment – շարժունակ արգելապատնեշային ջոկատ
mobile obstacle unit – see *mobile obstacle detachment*
mobility – շարժունակություն
morphology – կազմաբանություն
mountain sickness – լեռնախտ
national preservation – ազգապահպանություն
need – see *requirement*
network centric warfare – ցանցակենտրոն պատերազմ
networked society – ցանցային հասարակություն
noosphere – բանոլորտ
obligation – see *commitment*
occupation – բռնազավթում
order of battle – see *battle deployment*
organizational and staff structure – կազմհաստիքային կառուցվածք
organization and establishment – see *organizational and staff structure*
platformo-centric warfare – կայանքակենտրոն պատերազմ
possible avenue of tank approach – տանկամատչելի ուղղություն
power to the edge – իշխանությունը դեպի եզր
preservation of nation – see *national preservation*
privatization – մասնավորեցում
protectability – պաշտպանվածություն
protection – պաշտպանություն
range – 1. հեռահարություն, 2. ընդգրկույթ
raw material resources – հումքանյութական ռեսուրս
remnants – վերապրուկ
requirement – պահանջմունք
reserve ammunition – see *basic load*
reserve fund – see *emergency fund*
rocket fire – հրթիռակոծում
science-based – գիտութենահենք
scope – see *range 2*
screen – see *camouflage 1*
securitology – անվտանգաբանություն
security – 1. անվտանգություն, 2. ծածուկություն
serial – շարակարգ
shield – պաշտպանություն
“smart” products – «խելացի» արտադրանք
social-network ecology – սոցիալացանցային էկոլոգիա
state-building – պետութենակերտություն
steep slope – փլվածք
stronghold – see *strong point*
strong point – հենակետ
struggle for existence – գոյապայքար
survivability – կենսունակություն
system-building organization – see *system-forming organization*
system-forming organization – համակարգաստեղծ կազմակերպություն
tactical formation – see *battle deployment*
terrain passability – տեղանքի անցանելիություն
theater – ռազմական գործողությունների թատերաբեմ
theater of operations – see *theater*
thermal defeat – ջերմային խոցում
thermal impact – see *thermal defeat*
vaulted roof – թաղածածկ կտուր
version – մեկնակերպ
vestiges – see *remnants*
viability – see *survivability*
visual visibility – ակնդետ տեսանելիություն
zonality – գոտիականություն
zoning – see *zonality*

**ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

*Ռ. Վ. Աղուզումցյան,* հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
*Ն. Հ. Առաքելյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Լ. Ս. Արզումանյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, *Գ. Ե. Բաղդասարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
*Ս. Ա. Գալստյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Ս. Գ. Գալստյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Հ. Ա. Գևորգյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Կ. Ս. Դանիելյան,* կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
*Բ. Ն. Հարությունյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Վ. Մ. Հարությունյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Հ. Մաթևոսյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
*Ա. Հ. Մանթաշյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Մ. Մ. Մարգարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Մ. Միրիջանյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Կ. Ս. Մոսոյան,* տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Հ. Յ. Սայադյան,* աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Ռ. Ա. Սաֆրաստյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Հ. Սիմոնյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
*Հ. Ս. Սիսակյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

*Р. В. Агузумцян,* кандидат психологических наук, профессор;
*Н. У. Аракелян,* академик НАН РА; *Л. С. Арзуманян,* доктор филологических наук;
*Б. Н. Арутюнян,* доктор медицинских наук, профессор; *В. М. Арутюнян,* академик НАН РА; *Г. Е. Багдасарян,* академик НАН РА; *С. А. Галстян,* доктор филологических наук, профессор; *С. Г. Галстян,* доктор медицинских наук, профессор; *Г. А. Геворкян,* академик НАН РА; *К. С. Даниелян,* кандидат биологических наук, доктор географических наук; *А. А. Манташян,* академик НАН РА; *М. М. Маргарян,* доктор политических наук, профессор;
*Г. Г. Матевосян,* член-корреспондент НАН РА; *Э. Г. Минасян,* доктор исторических наук, профессор; *М. М. Мириджанян,* доктор медицинских наук, профессор;
*К. С. Мосоян,* доктор технических наук, профессор; *Р. А. Сафрастян,* академик НАН РА; *О. Я. Саядян,* доктор географических наук, профессор; *А. Г. Симонян,* член-корреспондент НАН РА; *А. С. Сисакян,* доктор медицинских наук, профессор

**ACADEMIC-ADVISORY COUNCIL:**

*R. V. Aghouzoumtsian,* Candidate of Psychological Sciences, Professor;
*N. H. Arakelian,* Full Member, NAS RA; *L. S. Arzumanyan,* Doctor of Philology;
*G. Y. Baghdassarian,* Full Member, NAS RA; *K. S. Danielyan,* PhD in Biology, Doctor of Geography; *S. A. Galstyan,* Doctor of Philology, Professor;
*S. G. Galstyan,* Doctor of Medical Sciences, Professor; *H. A. Gevorkian,* Full Member, NAS RA; *B. N. Harutyunyan,* Doctor of Medical Sciences, Professor;
*V. M. Haroutyounian,* Full Member, NAS RA; *A. H. Mantashian,* Full Member, NAS RA;
*M. M. Margaryan,* Doctor of Political Sciences, Professor;
*H. H. Matevosyan,* Corresponding Member, NAS RA; *E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor; *M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor;
*K. S. Mossoyan,* Doctor of Technical Sciences, Professor; *R. A. Safrastyan,* Full Member, NAS RA; *Hov. Y. Sayadyan,* Doctor in Geography, Professor;
*A. H. Simonyan,* Corresponding Member, NAS RA;
*H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor

## Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

## К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

## For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more tham 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Խմբագրման բաժնի պետ՝ *Տ. Մ. Անտոնյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*
Թարգմանչության խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ա. Հ. Սարուխանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի, Ք. Վ. Փիրոյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Մ. Ա. Դավթյանի, Ա. Ա. Խաչատրյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի և համացանցային*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայք՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. փոստ՝ haykakanbanak@mil.am

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2018 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 264 էջ + 8 էջ ներդիր: Պայմանական տպագրական 20,5 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat», «Russian Baltica», «Times» և «Times New Roman»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում

ՀՀ Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը
Ադրբեջանի հետ հարավարևմտյան սահմանի
մարտական հենակետերից մեկում

2018 թ. հուլիս

ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ պետ գեներալ-մայոր Արտակ Դավթյանը
և Արցախի Հանրապետության Պաշտպանության նախարար
գեներալ-լեյտենանտ Լևոն Մնացականյանը հետևում են
դաշտային երթի պլանով նախատեսված միջոցառումներին

Արցախ, 2018 թ. հունիս

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 1–2 (95–96). 2018